

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Սուաշարկվող ձեռնարկը ընդգրկում է արևմտյան հինգ մեծ տերությունների՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և Խոալիայի նորագույն պատմությունը՝ 1918 թ. մինչև մեր օրերը։ Այսպիսով, ձեռնարկը ամփոփում է նորագույն պատմության մի մասը, թեև շատ կարևոր մասը։ Տեսադաշտից դուրս են մնում ԽՍՀՄ-ի (հետագայում Խոսաստանի), Եվրոպայի, Ասիայի, Աֆրիկայի ու Ամերիկայի մյուս երկրների պատմությունը, որը շատ ուսանելի բաներ է պարունակում մեզ համար։ Սակայն նման ընտրությունը պատահականորեն չի արված, պատճառաբանված է, և ունի իր սույն պատճենագործությունները։

Նախ, բացառված չէ, որ նորագույն պատմությունը (կամ պատմությունն առհասարակ), մինչև իսկ դասագրքերի ու ուսումնական ձեռնարկների ձևով, հրամցվի ուսանողությանը և ընթերցողների լայն շրջանակներին, առանձին աշխարհամասերի կամ մինչև իսկ մեծ տարածաշրջանների պատմության ձևով։ Դա հնարավորություն է տալիս խոսափել հարկադրական կարճառությունից, օգտագործել նոր փաստեր ու փաստաթղթեր, խորանակ առանձին, հանգուցային նշանակություն ունեցող խնդիրների մեջ, նորովի մեկնաբանել երևոյթները՝ օբյեկտիվուն, ձերբագատված քաղաքական և գաղափարախոսական կաղապարներից ու նախապաշտումներից, ցուց տալ այն պատմական ընդհանրությունները, որոնք միավորում են տվյալ հաշխարհամասի կամ տարածաշրջանի երկրներին։ Այսուհետև, նման եղանակը թույլ է տալիս նեղ մասնագետներին ձերբագատվել ընդհանուր, ընդգրկուն բնույթի դասագրքերին ու ձեռնարկներին հատուկ գրելաձևի ընդհանրության մամլիչից, մնալ սևիական ստեղծագործական չափանիշների շրջակում և դրսևորել անհատականություն։ Եվ, վերջապես, եթե տվյալ ձևը ինչ-որ տեղ մերժելի է դասագրքի համար, ապա միանգամայն ընդունելի է և առավել հարմարը ձեռնարկի առումով։

Ի դեպ, բազմաթիվ են արտասահմանում հրատարակված գրքեր, որոնք ամենատարբեր հարցերի քննարկման առիթով խմբավորում են հենց այս հինգ երկրներին։ Ինչպես գրում, է Փրանսիացի քաղաքագետ Խվ Մենին, այդ հինգ երկրներին նվիրված «Համեմատական քաղաքա-

կանուքուն» (Փարիզ, 1993 թ.) գրքում, նման ընտրությունը առաջարկում է միաժամանակ միատեսակ, էական և նմուշ, որը ներկայացնում է միաժամանակ միատեսակ, էական նշանակության, միևնույն արժեքները բաժանող ու համանան հիմնարկություններ ունեցող, բայց նաև իրենց պատմությամբ, ավանդությանը ու մշակույթով միմյանցից տարրերվող հասարակություններ: ԽՍՀՄ-ի լուծարումից հետո, եթե առանձնահատուկ, բացառապես կենական նշանակություն են ստացել ժողովրդավարության, մարդու իրավունքների, սոցիալական արդարության, մարդու սոցիալական պաշտպանվածության հարցերը, եթե անցումը մեզանում շուկայական հարաբերություններին տեղի է ունենում հիվանդագին, բիոտ, անքաղակիր, ասիական ձևերով ու մեզ թերադրում են կամ առնվազն խորհուրդ են տալիս նայել դեպի Արևմտյա և ընդորինակել այդ «նմուշներ», կարծում ենք, թե օրինաչափ է և օգտակար մեկ ձեռնարկում խընթափորեկ այդ հինգ երկրները իրենց նորագույն պատմությամբ, որի որոշ հմատով, ժամանակակիցները և ականատեսներն ենք մենք:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ 1918—1939 թթ.

ԱՄՆ-ի ճերքին և արտաքին քաղաքականությունը
1918—1939 թթ.

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ուսումնական գործողությունները չշոշափեցին ամերիկյան մայրցամաքը, իսկ ԱՄՆ-ը պատերազմի մեջ մտավ դրա ավարտից միայն մի քանի ամիս՝ 1918 թ. ամառն: Անհամեմատ ավելի փոքր էին նաև ԱՄՆ-ի զոհերի թիվը՝ շուրջ 120 հազար սպանված ու հիվանդություններից մահացած, մոտ 230 հազար վիրավոր, և նցոյթական վճանները: Դրա հետ մեկտեղ ԱՄՆ-ը հասցել էր աննախադեպ չափով հարստանալ իբրև ուսումնաթերթի հիմնական մատակարարող և ուսումնական փոխառությունների ձևով կապիտալ արտահանող երկիր: Պատերազմի շնորհիվ ամերիկյան մոնոպոլիաները ել ավելի ընդարձակեցին արտադրությունը՝ ԱՄՆ-ը դարձավ աշխարհի հզորագույն տնտեսական տերությունը, որը 1920 թ. տալիս էր քարածիքի համաշխարհային հանույթի մոտ կեսը, չորրորդի և պողպատի 3/5-ը, արդյունահանվող ճավթի 2/3-ը և արտադրվող ավտոմեքենաների 85 տոկոսը:

Պատերազմից հետո ԱՄՆ-ը դարձավ խոշորագույն վարկասուր պետությունը: Այս ամենը ատեղծում էր տնտեսական հիմք համաշխարհային քաղաքականությանը ամենաեռանդագին ձևով միջամտելու համար: Դեմքրատական կուսակցության անդամներից կազմված վարչակազմը՝ նախագահ Վլադրո Վիլսոնի գլխավորությամբ 1917 թ. վերցրեց միջազգային ասպարեզում առաջատար և ղեկավար տերության դերը ստանձնելու ուղեգիծ, որն արտահայտվեց Փարիզի հաշության խորհրդադողություն ԱՄՆ-ի նախագահի արտակարգ եռանդուն գործունեության մեջ:

Իր ծրագիրը՝ պատճեն կոչված «14 կետերը» Վիլսոնը շարադրեց 1918 թ. հունվարի 8-ին կոնֆրենին հղած ուղերձում, որտեղ քննարկվում էին հետապերազմյան կարգավորման հարցերը: ԱՄՆ-ի նախագահի առաջ քաշած դրույթները առաջին հայացքից չափազանց ժողովրդական էին, քանզի առաջարկում էին վերացնել Անտանտի

պետությունների կերպ գաղտնի պայմանագրերը, ճանաչել գաղութային երկրների ժողովորդների ինքնորոշման իրավունքը, վերացնել մաքսային արգելքները, ճանաչել «բաց դռների» և «հավասար հնարավորությունների» անհրաժեշտությունն արտաքին առևտուում: Այս «ժողովրդավարությունը» միջազգային ասպարեզում բացարիվում էր շատ պարզ: ԱՄՆ-ի ֆինանսատնտեսական հզորությունը թույլ էր տալիս նրան ներթափանցել Սսիալի, Սֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրները՝ հակառակ գաղութատեր պետությունների շահերի և առանց դասական գաղութատիրական միջոցներ կիրառելու: Առև թե ինչու ԱՄՆ-ը պահանջում էր «բաց դռների» ակզրունքը կիրառել Գերմանիայի և օսմանյան կայսրության բաժանման ենթակա նախկին բոլոր տիրություններում: Այդ իսկ նպատակով Փարիզի հաշտության խորհրդաժողովում Վիլսոնը պաշտպանում էր բավականաշափ ուժեղ Գերմանիա պահանջելու տեսակետը և հանդես էր գալիս Ազգերի Լիգայի ստեղծման շատագովի դերում: Դա հակառակ էր Անգլիայի և Ֆրանսիայի շահերին, որոնք ձգտում էին առավելագույն չափով օգտվել հաղթանակած տերությունների իրավիճակից՝ աշխարհն իրենց օգտին վերաբաժնելու համար:

1919 թ. Փարիզի հաշտության խորհրդաժողովի արդյունքները, չընայած Վիլսոնի շանքերին, նպատակով չեղան ԱՄՆ-ի համար: Աշխարհի առաջին մեծ վերաբաժնումն ավարտվեց հօգուտ Անգլիայի և Ֆրանսիայի: Միացյալ Նահանգները ոչ մի մանդատային տարածք չառացան, իսկ առաջարկված՝ Հայաստանի մանդատից հրաժարվեց ամերիկան կոնգրեսը: Հետպատերազմյան Եվրոպայում Գերմանիայի իրավիճակի (ստատուի) վերաբերյալ ամերիկան առաջարկները հավանության չարժանացան: Ազգերի կիգայում դեկավար դիրք գրավեցին Անգլիան ու Ֆրանսիան:

Փարիզի հաշտության խորհրդաժողովում Վիլսոնի կողմանակիցների դիրքերի ամրապնդում և ԱՄՆ-ի հրաժարվելով Ազգերի կիգայի անդամակցությունից

«Մեկուսացման» կողմանակիցների դիրքերի ամրապնդում և ԱՄՆ-ի հրաժարվելով Ազգերի կիգայի անդամակցությունից

ցույցանն Ազգերի կիգային: Լոջի գլխավորած խումբը առաջարկում էր վարել «ձեռքերի ազատության» բաղաքականությունն, որը կաշկանդված չէր լինի Ազգերի կիգայի շրջանակիցներում ստանձնած պարտավորություններով: «Մեկուսացման» կողմանակիցները, սակայն, ըստ էության ոչ միայն դեմ չեն ԱՄՆ-ի միջազգային դերի ընդլայնմանը իրեն գերիշխող տերության, այլև ձգտում էին սույն այդ նպատակին հանդելու ուղիների և միջոցների ընտրության հարցում՝ ապավինելով ԱՄՆ-ի ֆինանսատնտեսական հզորությանը և միջազգային պարտավորություններից ազատ, անկաշկանդ վարելու գործելակերպին:

Սակայն «մեկուսացման» շարժումն ընդգրկեց լայն շրջանակներ՝ իր մեջ ներառնելով ֆերմերներին և քաղաքի մասն ու միջնին խավերին: Նրանք ազդեցիկ ներկայացուցիչներ ունեին հանրապետական կուսակցության ժողովրդավարական թեր մեջ, որը հանդես էր գալիս ընդդեմ կայսերապետական բաղաքականության, միլիտարիզմի, գաղութային զավթումների, դեմ էր ԱՄՆ-ի միջամտությանը Եվրոպայի գործերին: Դրանով նրանք բացառում էին նաև Եվրոպայի միջամտությունը ամերիկան մայրցամաքի գործերին և, ինչպես 19-րդ դարի սկզբին աշխարհի բաժանման ժամանակ (Մոնրոյի դոկտրինան), հոյս ունեին պահպանել այց իրեն ԱՄՆ-ի տնտեսական և քաղաքական ազդեցության մեջաշնորհային ոլորտ, չկորցնելով մնացած աշխարհի շահագործելու հնարավորությունը, որը ապահովված էր ֆինանսական և տնտեսական մեծ ուժի առկայության շնորհիվ:

«Մեկուսացման» կողմանակիցները հասան հաջողության՝ 1920 թ. մարտին սենատը մերժեց Վերսալյան պայմանագիրը՝ Ազգերի կիգայի կանոնադրությամբ հանդերձական մատնելու նաև վիլսոնյան Ամերիկայի ուղղամատական ներխուժումը Խորհրդային Ռուսաստանի տարածքը 1918 թ.:

**Հետպատերազմյան
տնտեսական ճգնաժամության
ԱՄՆ-ում**

Պատերազմի հետևանքով գգալիորեն խորացավ ԱՄՆ-ի արդյունաբերության մեծաշնորհացումը. 20-ական թվականների սկզբին արդյունաբերական բանվորների կեսից ավելին և երկրի արդյունաբերական արտադրության ավելի քան 2/3-ը գտնվում էին խոշորագույն մոնուպլիաների տրամադրության տակ: Պատերազմի ժամանակ առեղծված ուղման-արդյունաբերական վարչությունը և զուրացին ուղմանտեսական վարչությունները պատերազմի կարիքների համար մորթիզացրին և շրջանառության մեջ դրեցին վիթխարի մարդկա-

յին և Այուշական պաշարներ, ընդլայնվեց տնտեսության ուղղակի պետական կարգավորումը:

Պատերազմի ավարտից հետո՝ ռազմական պատվերների խիստ կրծատման հետևանքով ԱՄՆ-ի արտադրական հզորությունները չեն կարող շարունակել աշխատել նախկին ծանրաբեռնվածությամբ, պատվիրառուն պետությունը այլևս կարիք չուներ ռազմական արտադրանքի սպառման այն չափերով, որոնք կային պատերազմի ժամանակ և դրա հետ կապված պետական կարգավորման համակարգը կորցրել էր իր նախկին դերն ու ճշանակությունը: Այս հանգամանքներն էլ հանձնցրին հետպատերազման արտադրության անկմանը և գործազրկության աճին: 1920 թ. ամսանը սկսվեց այսպես կոչված «ունկններսիայի ճգնաժամը», որը կապված է ռազմական տնտեսության խալար գարգացման անցնելու հետ: Արտադրության կրծատումը և գործազրկության աճը սրեցին սոցիալական հակասություններն ամերիկյան հասարակության մեջ: Դա իր արտահայտությունը գտավ գործադրության ելույթներում, որոնց ընթացքում բանվորները և արհմիութեական դեկավարները ավանդական տնտեսական պահանջներից բացի առաջարկում էին ազգայնացնել արդյունաբերության և տրանսպորտի մի շարք ճյուղեր: Ստեղծված կացության մեջ իր ճշանակությունն ունեցավ նաև Հոկտեմբերյան հեղափոխությունը Ռուսաստանում, որի ազդեցության տարածմանը նպատեցին ականատես ամերիկացիների: Չոն ՈՒԴԻ, Արեւտ Ռ. Ուիլյամսի, Լուիզա Բրայանտի գրքերի հրատարակումը ԱՄՆ-ում և ճախ սոցիալիստական մամուլը: Ի պատասխան սոցիալ քաղաքական ելույթների կառավարությունը դիմեց բռնությունների՝ 1919 թ. վերջին և 1920 թ. սկզբին արդարադատության նախարար Պալմերի կարգադրությամբ ԱՄՆ-ի տարածքում ձերբակալվեցին և բանտ նետվեցին կամ երկրից արտաքսվեցին «արմատական» համարվող մտավորականներ և բանվորներ:

**Հանրապետական
կուսակցության հաղ-
թանակը 1920 թ. նա-
խագահական ընտրու-
թյուններում և նոր
վարչակազմի ներքին
քաղաքականությունը**

գերշահույթների վրա պատերազմի ժամանակ սահմանված հարկը և նվազեցրեց բարձր եկամուտ ստացող ամերիկացիներից գանձվող հար-կերը: Խիստ բարձրացվեցին ԱՄՆ ներմուծվող կարևոր ապրանքների համար պահանջվող մաքսերը: Հետևանքը եղավ ապրանքների թան-կացումը ներքին շոկայում, որը դիտվում էր իբրև արտադրությունը խթանող հականգնաժամային միջոց: Հարդինգի կառավարությունը վերադարձավ «Առումալ կարգերին»՝ կենացագործելով տնտեսական գոր-ծունեությանը չմիջամտելու և պետական կարգավորման վերացման ակքրունքը: Վերացվեցին պետական կարգավորման մարմինները և տնտեսության կարևորագույն ճյուղերի նկատմամբ վերահսկողություն իրականացնող ֆեդերալ գործակալությունները: Դրա հետ մեկտեղ Հարդինգի վարչակազմի մի շարք բարձրատափական գործիչներ խոչոր կապիտալի ներկայացուցիչների հետ մերձենալով գրաղվում էին կա-շառակերտությամբ ու դրամաշորթությամբ, որը չեր կարող չագրել հենց նախագահի հեղինակության վրա, և միայն Հարդինգի անսպասելի մա-հին 1923 թ. օգոստոսին փրկեց նրան խպատակությունից: Նախագահի պաշտոնը գրադեցրեց փոխնախագահ Կալվին Կովիչը, որը նոյնքան անշուր էր, որքան իր հախորդը:

**Հանրապետականների
արտաքին քաղաքա-
կանությունը**

Հանրապետականների կառավարությունը հրա-
ժարվեց Ազգերի լիգայի շրջանակներում «մի-
ջազգային հանգարձակցություն» վիճական
լոգունիցից, եւլուպական երկրների հետ ուսմա-
քաղաքական դաշինքի քաղաքականությունից՝ գերադասելով այլ ճա-
նապարհով հասնել ԱՄՆ-ի համաշխարհային հեգեմոնիային:

1921 թ. օգոստոսին պալմանագիր ստորագրվեց ԱՄՆ-ի և Գերմա-
նիայի միջև, որտեղ արված էր վերապահում այն մասին, որ ամերիկյան կառավարությունը ոչ մի ձևով իրեն կապված չի համարում Վե-
տայան պայմանագրի հոդվածների հետ: «Զեռքերի ազատության» այս քաղաքականությունը էր նաև ԱՄՆ-ի դիրքորոշմանը Վերապահն պայմանագրով Գերմանիայի համար նախատեսված սահ-
մանափակումների նկատմամբ: Մյուս կողմից, միջազգային պարտավո-
րություններից ձերբագատված ԱՄՆ-ը ավելի հեշտությամբ և արագո-
րեն էր ներդրվում Կենտրոնական և Հարավային Ամերիկայի տնտե-
սության մեջ և ոժեղացնում էր ներթափանցումը Հեռավոր Արևելք՝
գլխավորաբեն Հինաստան: Նման քաղաքականությունը հարցածում էր Անգլիայի շահներին, ուստի և 20-ական թվականներին անգլ-ամե-
րիկյան հակասությունները դարձան կենտրոնական խմբիր միջազգա-

ին հարաբերությունների համար: Զգալի լարվածություն առաջացավ նաև ամերիկա-ճապոնական հարաբերություններում: Վերսալում անհաջողություն կրած ամերիկյան դիվանագիտությունը ձգտում էր ուսանցի և 1921—1922 թթ. Վաշինգտոնի կոնֆերանսում կարողացավ հասնել առաջին հաջողությանը. հենվելով իր տնտեսական հզորության վրա և օգտագործելով ուազմական պարտքերի պարագան, ԱՄՆ-ը ստիպեց մյուս մասնակիցներին գնալ զիջումների: Նրանք ընդունեցին Հինաւտանի վերաբերյալ «բաց դոների» սկզբունքը, ծովային սպառագինությունների սահմանափակման և մասնակից երկրների Խաղաղ օվկիանոսում գտնվող կղզային տիրուցների անձեռնամինելության վերաբերյալ պայմանագրերը:

«Ռեկոնվերսիայի ճրգ-
ճամանի» պարտը և
տնտեսական կայու-
նացումը

1920—1921 թթ. տնտեսական ճգնաժամի հետեւ վանքները ԱՄՆ-ը հայթահարեց համեմատաբար ավելի արագ, քան Եվրոպան: 1924 թ. նա թևակոյնեց տնտեսական կայունացման ժամանակաշրջանը: Բնականաբար, տնտեսական կայունացումը ուներ ժամանակավոր բնույթ, քայլ այն հանգեցրեց սոցիալական հակասությունների մեջացմանը և լիցքարթավեց քաղաքական լարվածությունը: Տնտեսական վերելքը շարունակվեց մինչև 1929 թ., մինչև համաշխարհային տնտեսական ճգնաժամի բռնկումը, որը, ի դեպ, պետք է ամենից ավելի ուժգին հարվածեր ԱՄՆ-ին: Ճգնաժամի նախօրյակին՝ 1929 թ. ԱՄՆ-ը կայստայիտական աշխարհի հզորագույն տերությունն էր, որը տախու էր ավելի արտադրանք, քան Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան և Շապենիան միայն վերցրած: Արտադրությունը հատկապես արագորեն զարգանում էր այն բնագավառներում, որոնք կապված էին գիտության ու տեխնիկայի առաջընթացի հետ: Դրանք էին ավտոմոբիլային, էլեկտրատեխնիկական, քիմիական, ավիացիոն, ուսդիուրդյունաբերության և կինոարդյունաբերության ճյուղերը: 20-ական թվականների վերջին ԱՄՆ-ը արդեն վաստակել էր «ավտոմոբիլային թագավորության» համբավը. այսուղ շահագործվում էր 26,5 մլն ավտոմեքենա, այսինքն՝ մի քանի անգամ ավելի, քան աշխարհի մնացած երկրներում միայն վերցրած: Ավտոմոբիլ դարձավ մատչելի «միջին ամերիկացու» համար և համարվում էր ամերիկյան «բարեկեցության» («փրոսփերիթի») չափանիշը:

Քսանական թվականների արդյունաբերական վերելքը հիմքում ընկած էին արտադրության լայն մեքնայացումը և ստանդարտացումը,

տիպային դետալների զանգվածային պատրաստումը և դրանց հաջորդական հավաքումը հուքային գծերում, որոնք առաջին անգամ գործարկվեցին Ֆորդի ձեռնարկություններում դեռևս առաջին աշխարհամարտի նախօրեին:

Տնտեսական կայունացմանը նպաստեց իրական աշխատավարձի բարձրացումը (միջին հաշվով 25 տոկոսը), որն իր հերթին՝ ընդունելով գնողունակ պահանջարկը, նպաստեց արդյունաբերական վերելքին:

ԱՄՆ-ի տնտեսական իրավիճակի կայունացումը 20-ական թվականների երկրորդ կեսին չէր կարող չներազդել երկրի սոցիալ-քաղաքական մթնոլորտի վրա. տեղի ունեցավ քանինետումների արժեքի վիթխարի աճ, խիստ նվազեց գործադրուզին շարժումը, արհմիությունների դերը բանվորական շարժման մեջ և դրանց անդամների թիվը: Ակվեց շարժում հօգուտ ձեռնարկատերների և բանվորների համագործակցության արտադրության ուսցինակացման գործում: Մամուլում և գրականության մեջ մեծ շափերի հասավ բիզնեսի շատագովությունը, իսկ բիզնեսները դարձավ «ամերիկացիների բարձրագույն հեղինակությունը էթիկայի ու վարքագծի հարցերում» (Սույարտ Չայզ): Դրան նպաստեց նաև «կապիտալի դեմքրատացման» քայլոցությունը, որը վերաբերում էր բանվորների՝ քանինետումներ ձեռք բերելու միջոցով ձեռնարկությունների փայտառեր դառնալու հնարավորությանը: Այս երևույթը բնութագրեցին իրեւ «տնտեսական հեղափոխություն», թեև այն ոչ մի կերպ չէր վերացնում սոցիալական անջրակետները բիզնեսի սարագըլուխների և բանվորների միջև և չէր միավորում նրանց միևնույն հասարակական խավի մեջ: Այնուամենայնիվ, նշանակած երևույթների հոգեբանական և գաղափարական ազդեցությունը շատ մեծ էր ամերիկյան հասարակության մեջ. խոսում էին «հավերժական փրոսփերիթի» հեռանկարի, «հարստությունների խաղաղ վերաբաշխման, ամերիկյան բացառիկության» մասին:

Քսանական թվականների արդյունաբերական վերելքը իր ազդեցությունն ունեցավ նաև ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության համար: Նա առաջին երկիրն էր արտահանության չափերով: Աննախանեկ չափով ընդունվեց կապիտալի արտահանությունն ԱՄՆ-ից: Հատկապես ուժեղացավ ԱՄՆ-ի տնտեսական և ուսմաքաղաքական ազդեցությունը Լատինական Ամերիկայի երկրներում: Ամերիկյան արտաքին քաղաքականության մյուս կարևոր երկրաբարական ստանդարտը Հեռավոր Արևելքն էր, առաջին հերթին Հինաւտանը, չնայած չինական

շուկայում առաջիկ պես գերիշխում էր Ծապոնիան: Սակայն 1924 թ. պատված չինական նեղափոխությունը ստիպեց մրցակիցներին՝ ԱՄՆ-ին, Ծապոնիային և Անգլիային միավորվել ընդդեմ Չինաստանում գոյս քարձրացրած վտանգավոր ուժի, որը սպառնում էր առհասարակ ոչնչի հավասարեցնել հրանց ազդեցությունը:

Քանական թվականներին ԱՄՆ-ը ուժեղացրեց իր դիրքերը նաև Եվրոպյում մասնակցելով ռազմատուգնիքների հարցի լուծմանը: Ամերիկան փոխառությունների ներհոսք Գերմանիա ոչ միայն նպաստում էր առաջին աշխարհամարտում գլխավոր պարտված տերության ուժերի և դիրքերի վերականգնմանը, այլև ԱՄՆ-ին թույլ էր տպիս ակտիվ դեր ստանձնել Եվրոպյում ընթացող տնտեսական ու միջազգային քաղաքական գործընթացներում և կարևոր դեր խաղալ իրադարձությունների գարգացման խնդրում:

**ԱՄՆ-ը համաշխարհային տնտեսական ճգնաժամի ժամանակաշրջանում
(1929—1933 թթ.)**

1929—1933 թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը
և ԱՄՆ-ը

1929—1933 թթ. տնտեսական ճգնաժամը լայնությամբ և խորությամբ ամենաավելի շացումն էր կապիտալիզմի պատմության մեջ: Գերարտադրության այդ ամենամեծ ճգնաժամը առավել անողորոշյամբ հարվածեց կապիտալիզմի ամենազարգացած և ամենահարուստ երկրին՝ ԱՄՆ-ին: 1932 թ. արդյունաբերական արտադրության մակարդակն ԱՄՆ-ում 1929 թ. մակարդակի համեմատությամբ կրճատվեց գրեթե 50 տոկոսով: Գործազրկների թիվը հասավ 17 միլիոնի: Ամերիկյան արհմիութեանական կազմակերպությունների տվյալներով 1932 թ. լիովին գրավված էր քանիվորների միայն 10 տոկոսը: Նոյն արհմիությունների տվյալներով քանիվորների իրական աշխատավարձը նվազեց միշին հաշվով 35 տոկոսով: Արեւադի վիճակի հասան ֆերմերական տնտեսությունները՝ երեք-չորս անգամ ընկան հրանց արտադրանքի գները: Չորս տարում սնանկացան և պարտքերն ու հարկերը չվճարելու համար հարկադիր վաճառքի ենթարկվեցին 897 հազ. ֆերմերական տնտեսություններ:

ԱՄՆ-ի ողջ ֆինանսական համակարգը նույնպես գալարվում էր

ճգնաժամի հիրաններում, սրբնթաց գահավիժմեց քամենտոմների կուրսը: Չորս տարում սնանկացավ բոլոր բանկերի մեկ հիմնգերորդը՝ շուրջ 5 հազ. բանկ:

Նախագահ Հովերի համբաւետական կառավարությունը ի սկզբան է ի գորու չգտնվեց ճիշտ գնահատելու իրադրության լրջությունը և մինչև իսկ ժխտում էր ճգնաժամի առկայությունը՝ համարելով այն սուկ ժամանակավոր լճացում: Խեցը՝ Հովերը հավատախացնում էր, թե «քարգավաճումը հեռու չէ, այլ փողոցի մյուս կողմում է»: Նա քացարձակացեն անթույլատրելի էր համարում պետության միջամտությունը տընտեսական կյանքին, գոնես գործազրկությունն ինչ-որ չափով նվազեցնելու համար ապավիճելով կապիտալիստական տնտեսության ինքնակարգավորման մեխանիզմների գոյության տեսակետին: 1929—1933 թթ. ճգնաժամի տարիներին համեմատաբար թուղացան ԱՄՆ-ի միջազգային դիրքերը՝ 70 տոկոսով կրճատվեց արտաքին առևտուի շրջանառությունը, արթեզրկվեցին ամերիկյան կապիտալ ներդրումները ԱՄՆ-ի և մրցակից տերությունների միջև և պայքարը շուկաների ու կապիտալների ներդրման ողորտների համար: Անգլիային հաջողվեց ամերիկացիներին էականորեն դուրս մղել Լատինական Ամերիկայից և Կանադայից:

ԱՄՆ-ը, սակայն, հաջողության հասավ ռազմածովային շինարարության ասպարեզում: 1930 թ. լոնդոնի ծովային կոնֆերանսն ԱՄՆ-ի ու Անգլիայի հավատարության մկրունքը տարածեց ոչ միայն գծային նավատորմի վրա, ինչպես որոշվել էր 1922 թ. Վաշինգտոնի կոնֆերանսում, այլ նաև հածանավերի, էակադրացին ականակիրների և սուզանավերի վրա:

Միաժամանակ Հովերի կառավարությունն իր արտաքին քաղաքականությամբ նախատում էր նոր համաշխարհային պատերազմի օշակների առեղմանը Եվրոպյում և Հեռավոր Արևելքում: 1931 թ. Հովերի առաջարկությամբ մեկ տարով դադարեցվեցին միջավետական պարտքերի և ռազմատուգնիքների մուծումները: 1932 թ. ռազմատուգնիքներն իրավա վերացվեցին: Դա էլ Գերմանիային թույլ տվեց արտգայիւմ քափով վերականգնել երկրի ռազմա-տնտեսական պոտենցիալը և նախապատրաստվել ուսանչի՝ հրահրելով նոր համաշխարհային պատերազմ:

Հեռավոր Արևելքում Հովերի կառավարությունը ձեռնպահ մնաց,

Երբ Շապոնիան բռնազավթեց Մանջորիան՝ մույնիսկ ձևականորեն շդատապարտեց այդ ագրեսիվ գործողությունը: Նա հույս ուներ, թե Շապոնիայի կողմից Մանջորիայի գրավումը կհանգեցնի պատերազմի նրա և Խորհրդային Միության միջև, որին, խմբիալյոց, դիվանագիտուրեն ճանաչել Հույվերի կառավարությունը ոչ մի կերպ չէր ցանկանում: Սակայն, երբ ճապոնական բանակները ներխուժեցին Չինաստան, պետական քարտուղար Հ. Ստիմսոնը դատապարտեց բոլոր այն գործողությունները, որոնք հակասում էին Չինաստանում «քաց դոների» սկզբունքին: Այս երրոր, որը նայում է իրեն «չճանաչելու դոկտրինա», Հեռուավոր Արթելքում ամերիկա-ճապոնական հակասությունների սրման վկայությունն էր: Սակայն Մանջորիայի բռնազավթումն արդեն դրել էր Հեռուավոր Արթելքում նոր պատերազմի օջախի ստեղծման հիմքը:

Սոցիալական ծանր կացության արձագանքները եղան գործազրկության դեմ բողոքի գանձվածային ցույցերը, գործազրկությունների համագոգային առաջին համագումարը 1930 թ. Չիկագոյում, գործազրկությունների առաջին ազգային սովոր արշավը դեպի Վաշինգտոն 1931 թ. վերջին, պատերազմի վետերանների արշավը դեպի Վաշինգտոն 1932 թ. ամսանը: Կառավարությունը վետերանների դեմ նետեց կանոնադր գործըն՝ գինաված տանկերով, գնդացիրներով, գազի ռումբերով: 1932 թ. դեկտեմբերին Վաշինգտոն մտան երկրորդ սովոր արշավի մասնակիցները, որոնք պահանջեցին արտակարգ միջոցներ ձեռնարկել օգնելու համար բանկութերին և ֆերմերներին: Մյուս կողմից, գործադրության շարժումը դանդաղ էր զարգանում, քանի որ գործազրկությունների վիճակը բանակը ճնշում էր զբաղված աշխատումի վրա՝ ստիպելով աշխատողներին հաջուկ աշխատանքի և վճարման իրենց պարտադրված պայմանների մետ:

1932 թ. Այդու նահանգում սկսվեց ֆերմերների գործադրությունը, որը հետո տպածվեց շատ նահանգներում: Ֆերմերական շարժումը իր բարձրակենտին հասավ 1933 թ. գարնան մոտերքին:

Այս պայմաններում ընթացավ 1932 թ. ընտրարշավը: Հուվերի հանրապետական վարչակազմը, որի հեղինակությունը խփառ ընկել էր ճգնաժամի հետևանքով, ծանր պարտություն կրեց: Դեմոկրատների թեկնածու Ֆրանկլին Ռեզան Ռուզվելտը շահեց 22,8 մլն քվե, Հուվերի ստացած 15,8 մլն քվեի դիմաց: Հանրապետականները իշխանությունը զիշեցին դեմոկրատներին:

ԱՄՆ-ի Ֆ. Ռուզվելտի «Նոր կուրսի» ժամանակաշրջանում (1933—1939 թթ.)

Ֆ. Ռուզվելտի «Նոր կուրս»

1933 թ. մարտի 9-ին գումարվեց ԱՄՆ-ի կոնգրեսի հատուկ նատաշրջան, որը տևեց ավելի քան երեք ամիս: Ռուզվելտի կառավարման առաջին 100 օրվա ընթացքում ընդունվեց ավելի քան 80 օրենք, որոնք ել ձևավորեցին նոր նախագահի «Նոր կուրս»: Դրա հիմքում ընկած էր կապիտալիստական տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտության գաղափարը: Նրա գլխավոր խնդիրն էր պետքանիւն եռանդուն միջամտությամբ տնտեսությունը դուրս բերել ճգնաժամից և հասնել երկրի ներսում տցիալ-քաղաքական լարգածության վճռական թուլացման:

«Նոր կուրսի» գլխավոր բաղկացուցիչ մասը դարձավ արդյունաբերության վերականգնման օրենքը, ըստ որի արդյունաբերական բոլոր միավորումներին կարգադրվեց մշակել այսպես կոչված «ազնիվ մրցակցության կողերսներ», որոնք սահմանում էին արտադրության պայմաններն ու ծավալը, իրացման շուկաները, գների այն մակարդակը, որից ցածր չէր կարելի վաճառել պատրաստի արտադրանքը:

Միջոցառումների մի մասը, վերաբերում էր աշխատանքային հարաբերություններին: Պահանջվում էր «ազնիվ մրցակցության կողերսներում» սահմանել աշխատավարձի նվազագույն մակարդակը և աշխատանքային շաբաթվա առավելագույն տևողությունը, հոչակվում էր արմատակցությունների մեջ միավորվելու և կողեկիրվելու պայմանագրեր կնքելու բանվորների իրավունքը:

Արդյունաբերության վերականգնման օրենքի երրորդ մասը վերաբերում էր գործազրկության հարցին: Գործազրկության դեմ պարբեր նպատակով ծավալվեցին հասարակական աշխատանքներ, որոնք 1933—1934 թթ. զբաղմունք ստեղծեցին 2,5—3 մլն գործազրկությունների համար: Նրանց ողարկում էին աշխատանքային ճամրաներ և զբաղեցնում խճողիներ, ավտոճանապարհներ, կամուրջներ, օդանականաներ կառուցելու աշխատանքներում, որոնք ֆինանսավորվում էին պետական բյուջեի հաշվին:

«Նոր կուրսի» շրջանակներում ընդունվեց օրենք նաև ֆերմերներին օգնելու վերաբերյալ: Գյուղատնտեսական արտադրանքի գները բարձրացնելու նպատակով կրատվեցին ցանքատարածությունները և նախանձների գիւղաքանակը: Ֆերմերներին տրվեցին կառավարական

նպաստներ՝ արտադրության կրծառման համար պարզեացին վճարումների ձևով: ԱՄՆ-ի կառավարությունը կատարում էր գյուղատնտեսական մթերքների զանգվածային ոչնչացում, շնայած բնակչության չունեվոր խավերի թերանմանը:

Ընդունվեց նաև բանկային արտակարգ ակտ, որի համաձայն կառավարական փոխառություններ բացելու և ստանալու թուլլովություն ստացան «առողջ», այսինքն՝ առավել խոշոր բանկերը: Որովհետք հաստուկ միջոցառումներով մեծացրեց պետության ֆինանսական պաշարները և ուժեղացրեց նրա կարգավորող դերը: Զենքարկվեցին միջոցառումներ մասն ավանդառուների և փայտերերի օգտին:

«Նոր կորսի» արդյունքը եղավ ճգնաժամային երկույթների որոշակի թուլացումը: Ճգնաժամին հետևեց լճացումը, որը ոչ միայն ԱՄՆ-ում, այլև ողջ կապիտաֆաստական աշխարհում արտասովոր երկարատև եղավ: Արտադրության ծավալը 1935 թ. մոտեցավ նախաճգնաժամային մակարդակի 80 տոկոսին և 1936 թ. միայն սկսվեց որոշ աշխատացում: Բայց 1937 թ. արդեն ծայր առավ նոր տնտեսական ճգնաժամ, որը վերջ գտավ երկրորդ համաշխարհային պատերազմի բոնկրման հետևանքով:

Ֆ. Ռուզվելտի «Նոր կորս» չգնահատվեց միանշանակ ոչ ԱՄՆ-ում և ոչ Էլ Ջուս երկրներում: Մասնագետներից ունաք այն համեմատում էին բարձր ջերմությունից տառապող հիմանդրին բուժելու համար սառնարանում փակելու հետ: «Նոր կորսի» երկրորդ փուլում ընդունվեց սոցիալական ապահովության վերաբերյալ գեղերազ օրենքը, որը նպաստեր էր սահմանում գործազրկության, ծերության, հաշմանդամության համար, նպաստեր կարիքավոր մայրերին ու նրանց երեխաներին: 1935 թ. ընդունված օրենքով խոշոր հատկացումներ (մոտ 5 մլրդ դոլար) էին արվում հասարակական աշխատանքներ կատարելու համար: Կազմակերպից օգնություն ֆերմերներին, ճանաչվեց աշխատավորների դրության համար կառավարության «սոցիալական պատասխանատվության» սկզբունքը: «Նոր կորսի» ոեփորմանական քաղաքականությունը վճռաբար ներազդեց 1936 թ. ընտրարշավի վրա, որը կրկին հաղթանակ բերեց դեմոկրատներին Ֆ. Ռուզվելտը երկրորդ անգամ ընտրվեց ԱՄՆ-ի նախագահ: «Նոր կորսի» հեղինակի արտաքին քաղաքական բոլորական տարբերում էր իր նախորդի՝ Հովերի արտաքին քաղաքական կորուսից: Որովհետք վարչականը ճանաչեց ԽՍՀՄ-ը և 1933 թ. նոյեմբերի 16-ին դիմանագիտական հարաբերություններ հաստատեց նրա հետ: Հատիճական Ամե-

րիկայի համար Ֆ. Ռուզվելտը հոչակվեց «քարի դրացու» քաղաքականությունը և ի հաստատում լատիճասամերիկյան պետությունների ներքին գործերին չմիջամտելու վերաբերյալ հանդիսավոր հայտարարությունների, 1934 թ. զորքերը դորս բերեց Հայթիից, Կուբայի հետ կը նքաղաված նոր պայմանագրով վերացրեց 1901 թ. ընդունված «Պատուի ուղղումը», որը Կուբան դարձնում էր ամերիկյան կեսագաղոթ և ԱՄՆ-ին թույլ էր տալիս գինական ներխուժում կատարել Կուբա՝ «նրա անկախությունը պաշտպանելու նպատակով»: Կենտրոնական ու Հարավային Ամերիկայի շատ երկրների հետ կմքվեցին նրանց համար պետք նըպատավոր առևտորական համաձայնագրեր: Այս մկոն քաղաքականությունը ամրապնդեց ԱՄՆ-ի տնտեսական դիրքերը Սրբամոյան կիսագնդում:

Ինչ վերաբերում է Եվրոպային և Հեռուային Արևելքին, ապա այստեղ Ռուզվելտի վարչակազմի դրությունն ավելի բարդ էր: ԱՄՆ-ի կառավարող շրջաններում Ֆ. Ռուզվելտի կողմնակիցները գտնում էին, թե Գերմանիայի, Խոախայի և Շապոնիայի ֆաշիստական բլոկի կազմակերումը լուրջ սպառնալիք էր ԱՄՆ-ին և այդ բլոկի հետ բախումն ի վերջո անխուսափելի է: Այս հոդի վրա արվում էր այն հետևողությունը, թե մերձնեցումը Անգլիայի և Եվրոպայի մյուս դեմոկրատական պետությունների հետ անհրաժեշտություն է: Բայց կային և գործիչներ, որոնք պահանջում էին վարել «չեզոքության», Եվրոպայի գործերին «չմիջամտելու» կորու:

1935 թ. օգոստոսին Ռուզվելտի կառավարությունը ստիպված եղավ զիջումների գնալ և ընդունվեց «չեզոքության» օրենքը, որն արգելում էր զենքի և ռազմամթերքի մատակարարումները կովող պետություններին: Դա գրկում էր Եթովպիային, հանրապետական Խոպանիային և Հինաստանին ԱՄՆ-ում ուագնական նյութեր ձեռք բերելու հնարավորությունից, որոնք անհրաժեշտ էին Խոախայի, Գերմանիայի և Շապոնիայի ազգեստայից պաշտպանվելու համար, խոհսուտելով վերջիններին զալուղական քաղաքականությունը:

Սակայն կյանքը ստիպեց ամերիկացիներին հրաժարվել «չեզոքության» քաղաքականությունից: 1937 թ. հոկտեմբերի 5-ին Զիկագոյում Ֆ. Ռուզվելտը ճառ արտասանեց, որի մեջ նա կոչ միավորությունների շուրջ պարտավորությունների շամքերը ազդեսիվ տերությունների շուրջ «կարանտին» առենձելու համար: 1939 թ. հունվարին Ռուզվելտն առաջարկեց վերանայել «չեզոքության» մասին օրենքը: Սակայն նոյն թվականի հունիսին «մեկուսացման» կողմնակիցների ճնշման ներք կոն-

գրեսը մերժեց այս առաջարկը: Միաժամանակ, ԱՄՆ-ի կառավարությունը կարճատեսրեն պաշտպանում էր նոյն եվրոպական դեմոկրատիզմի՝ ագրեսորեն «խաղաղներելու» քաղաքականությունը, քաղաքականություն, որը մարմնավորվեց 1933 թ. սեպտեմբերին Մյունիխի հայտնի գործարքում ողջակի նպատելով երկրորդ համաշխարհային պատերազմի տաճագերծմանը:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅՅԱԼ ՆԱԳԱՆԳՆԵՐԸ 1939—1998 ԹԹ.

ԱՄՆ-Ը ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՐԻՑԵՐԻՆ

Երկրորդ համաշխարհային պատերազմը լուրջ փոփոխություններ մտցրեց ԱՄՆ-ի մերքին և արտաքին կյանքում: Պատերազմի սկզբում ԱՄՆ-ը չեղոք դիրք գրավեց պատերազմող երկրների նկատմամբ, որի մասին պաշտոնական հայտարարությամբ համերս եկավ 1939 թ. սեպտեմբերի 5-ին: Սակայն նոյն թվականի նոյեմբերի 4-ին կոնգրեսը փոփոխություն մտցրեց չեղորորդան մասին օրենքում, որը ԱՄՆ-ին հնարավորություն էր տալիս գենք և ուզմամթերք մատակարարել պատերազմող երկրներին: Անգլիայիների կողմից շրջափակված Գերմանիան չէր կարող զենք ս զինանթերք գնել ԱՄՆ-ում: Ուստի հիշալ փոփոխությունը նպաստավոր էր Անգլիայի և Ֆրանսիայի համար և արդեն ինքնին վկայում էր ԱՄՆ-ի կողմնորոշումը, թեև ԱՄՆ-ը չէր մասնակցում պատերազմին: Այդ կողմնորոշումն ավելի որոշակի դարձավ այն բանից հետո, եթե ԱՄՆ-ը ընդունեց լենդ-թօվի մասին օրենքը, որով Միացյալ Նահանգները փոխառությամբ և վարձակարությամբ պետք է գենք տրամադրենին հիտչերյան Գերմանիայի դեմ պատերազմող երկրներին: Այս օրենքը հեշտացնում էր հատկապես Անգլիայի խնդիրը, քանզի իսկառ նվազել էին նրա ուկու և տարադրամի պաշարները և, հետևապես, կանխիկ միջոցներով զինամթերք ձեռք բերելու հնարավորությունները:

Ծովով դեպքերի գարգացումը հանգեցրեց ԱՄՆ-ի անմիջական մասնակցությանը պատերազմին. 1941 թ. դեկտեմբերի 7-ի վաղ առավոտյան ճապոնական ուզմանավերը և ալիքացիան հանձնարակի գրության Հավայան կղզիներում գտնվող Պիրլ Հարբոր ամերիկան ուզմածովային բազայի վրա՝ ոչնչացնելով ամերիկան խաղաղօվկիանոս-

յան ուժերի գգալի մասը (18 ուզմանակ, այդ թվում Պիրլ Հարբորում խարսխավորված բոլոր 8 գծանավերը, որոնցից 5-ը ջրասույզ արվեցին, իսկ 3-ը լորջ վնասվածքներ ստացան, և 128 ինքնաթիռ): Պիրլ Հարբորը թաղեց «մեկուսացման» քաղաքականությունը: Դեկտեմբերի 8-ին ԱՄՆ-ը պատերազմ հայտարարեց Ճապոնիային, շուտով նաև նրա դաշնակիցներին: Գերմանիային և Խոսկիային, որոնք դեռևս դեկտեմբերի 11-ին արդեն պատերազմն էին հայտարարել Միացյալ Նահանգներին:

Պիրլ Հարբորը ԱՄՆ-ում առաջ բերեց որոշակի խուճապ և վախ, որ ԱՄՆ-ի տարածքը կարող է ներարկվել օդային հարձակումների, որը սակայն տեղի չունեցավ: Այնուամենայնիվ, երկու օվկիանոսով բաժանված լինելով պատերազմի ուզմաքենարից, ԱՄՆ-ը կարող էր իրեն հարաբերականորեն ապահով գցալ և, ինչպես առաջին աշխարհամարտի ժամանակ, հանգիստ կատարել պատերազմի հիմնական գինանցի դերը:

Ֆ. Ռուգվելտի կառավարությունն ամենակտիվ մասնակցությունն ունեցավ հականիտերյան կոպիցիայի կազմավորմանը: Ֆ. Ռուգվելտը ԽՍՀՄ պատերազմի մեջ ներքաշվելու հաջորդ օրը՝ 1941 թ. հունիսի 23-ին հայտարարեց (Ռ. Շերչիլց անմիջապես մետով), որ իր երկիրը կպաշտպանի Խորհրդավիճ Միության ընդդեմ հիտչերյան Գերմանիայի: Դրան հետևեցին ամերիկա-խորհրդային բանակցությունները Մուկվայում և ապա ԱՄՆ-ի կառավարության հայտարարությունը ԽՍՀՄ-ին օգնելով պատրաստականության մասին: Նոյն թվականի օգոստոսի 14-ին Ռուգվելտը և Շերչիլը Նյուֆառմելինդ կղզում ստորագրեցին նշանակոր «Ալլանտյան խարտիան», որտեղ երկու տերությունները հայտարարում էին, որ տարածքային հովանումների չեն ձգտում և չեն համաձայնի որևէ տարածքային փոփոխության, որը հաստատված չի-նի ժողովորդների համաձայնությամբ, որ նրանք հարգում են ժողովորդների իրավունքը՝ կամովին ընտրելու կառավարման ձևը և ձգտում են հասնել այն բանին, որպեսզի բռնի միջոցներով ինքնիշխան իրավունքներից ու ինքնավարությունից գրկված ժողովորդները վերատանան այդ իրավունքները: «Ալլանտյան խարտիան» դիմուեց իրու միջպետական ակտ, որով ճամաչվում էին հետևյալ չորս ազատությունները. 1) խոսքի ազատությունը, 2) կրոնի ազատությունը, 3) ազատագրությունը սարսափի պարտադրած լծից, 4) ազատագրությունը թշվառության պարտադրած լծից:

Այս դրույթները Ֆ. Ռուգվելտը շարադրել էր դեռևս Պիրլ Հարբո-

ից շատ առաջ՝ 1941 թ. նունիարի 6-ին իբրև պատերազմի նպատակներ, որտեղ ԱՄՆ-ը մկնել էր աջակցել «Բեռլին—Տոկիո—Հոնու» անանցքի հակառակորդներին: «Աստվանուան խարտիան» գաղութային երկրների ժողովուրդներն իրավամբ ընկաեցին իբրև գաղութակալության լուծը թորափելու իրավունքի ճամաչում: Ինչպես ցուց տվեց կյանքը, նման ընկարումը հակառակ էր բրիտանական կայսրությունը պահպանելու Շերժի Ալբրտումներին և «Աստվանուան խարտիայի» այս արմատական դրույթները արդյունք էին գլխավորապես Ֆ. Ռուզվելտի նուանդուն շանքերի:

1941 թ. սեպտեմբերի 24-ին ԽՍՀՄ-ը պաշտոնապես միացավ «Աստվանուան խարտիային»:

1941 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին Մոսկվայում կայացավ ռազմական մատակարարությունների հարցերին նվիրված անգլո-ամերիկա-խորհրդային կոնֆերանս, որտեղ համաձայնեցվեց փոխադարձ մատակարարությունների ծրագիրը: Մատակարարությունների գլխավոր ծանրությունն ԱՄՆ-ը վերցրեց իր վրա: Խոկ նոյեմբերի 7-ին Ֆ. Ռուզվելտը ԽՍՀՄ-ի վրա տարածեց լենտ-լիգի մասին օրենքը:

1942 թ. նունիարի 1-ին Վաշինգտոնում ավարտվեց հականիտերյան կուռիշիայի ձևավորումը 26 պետությունների աշխամակցությամբ՝ ԱՄՆ-ի, ԽՍՀՄ-ի և Անգլիայի գլխավորությամբ: Դրանով փաստորեն դրվեց ապագա Միավորված Ազգերի Կազմակերպության հիմքը: Կուռիշիայի մասնակիցները ստորագրեցին «Միավորված Ազգերի Հոգակագիրը» և պարտավորվեցին իրենց բոլոր հնարավորություններին ի սպաս դնել պատերազմին՝ ընդդեմ «առանցքի» երկրների: Եվ վերջո, նոյն թվականի հունիսի 11-ին Վաշինգտոնում ստորագրվեց ամերիկանորդային համաձայնագիր, որը սահմանում էր ազգեստիայի դեմ պատերազմ մղելու գործում միմյանց փոխադարձարար օգնելու սկզբանքները: Ընդ որում, բանակցությունների վերաբերյալ կոմյունիկուում ավագ էր, որ «ձեռք է բերվել լիակատար պարմանավորվածություն 1942 թ. Եվրոպայում երկրորդ ճակատ բացելու անհետաձգելի խնդիրների վերաբերյալ»: ԽՍՀՄ-ին օգնելուն Ֆ. Ռուզվելտը տալիս էր բացարձակ գերապատվություն, որովհետև գտնում էր «որ «ոռուական բանակները սպանում են այնպի շատ նացիստների և ոչնչացնում ավելի շատ թշնամական զինամթերք, քան Միավորված Ազգերի մնացած 25 անդամները միասին վերցրած»:

ԱՄՆ-ի գինաված ուժերը մասնակցեցին ռազմական գործողություն-

ներին Խաղաղ օվկիանոսում, Եվրոպայում և Աֆրիկայում: Խաղաղօվկիանոսյան ճակատում սկզբում իրադարձությունները զարգանում էին հօգուտ Շապոնիայի: 1942 թ. ամռան մոտերքին ճապոնացիները գրավեցին Ֆիլիպինները, Բիրման, Հոնդուրասն Հնդկաստանը և ընդհուպ մոտեցան Ավստրալիային: Չնայած դրան, ամերիկացիների ուագնական ակտիվությունը Խաղաղօվկիանոսյան ճակատում մեծ չէր: 1943 թ. վերջին ամերիկացիները այնուղիւ ունեին 13 ոդիզիա և 4254 ինքնաթիռ, մինչդեռ Եվրոպական ռազմաքենում նրանց դիվիզիաների թիվը հասնում էր 17-ի: Սակայն ոչ ԱՄՆ-ի և ոչ Էլ Մեծ Բրիտանիայի կողմից չեր նկատվում Եվրոպայում երկրորդ ճակատ բացելու գործնական ցանկությունը ոչ 1942 և ոչ Էլ 1943 թվականներին: Դրա փոխարեն անգլիական և ամերիկյան ուժերը համեմատաբար ակտիվ գործողություններ ծավալեցին Հյուսիսային Աֆրիկայում ամերիկյան գեներալ Դ. Լյութենհամերի ընդհանուր համամատարությամբ:

Ստալինգրադի մոտ խորհրդային գործերի խոշոր հաղթանակը բեկում մտցրեց երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքի մեջ՝ հենցտացնելով դաշնակիցների խնդիրները արևմտուրում: Սակայն Անգլիան և ԱՄՆ-ը, դարձյալ հետաձգելով երկրորդ ճակատի բացումը, որոշեցին ակտիվացնել իրենց գործողությունները Հյուսիսային Աֆրիկայում և 1943 թ. մայիսի սկզբին իտալա-գերմանական գորքերին ստիպեցին անձնատուր լինել: Նոյն թվականի հունիսի 10-ին անգլ-ամերիկյան գորքերը ափ դուրս եկան Սիցիլիա կղզում: Սեպտեմբերի 8-ին Ալբանիայի ԱՄՆ-ի և Անգլիայի ուժերի ափինանումը հարավային Խոտակայում: Ե պատասխան գերմանական բանակները ներխուժեցին Խոտակայա: Նրանց բախումը ամերիկյան և անգլիական ուժերի հետ տեղի ունեցավ Նեապոլից հարավ: Սուածացալ իտալական ռազմաճակատը: Եվ չնայած այն բանին, որ այս ռազմաճակատում գործում էր ընդամենը 10 գերմանական դիվիզիա, ռազմական գործողությունները զարգանում էին շատ դանդաղ և դաշնակիցները Հոռոմ հասան միայն 1944 թ. ամռան մոտերքը: ԱՄՆ-ը և Ազգիան ճապատկ ունեին Խոտակայի ու հայ Բավլանների վրայով ներխուժել Եվրոպայի կենտրոնը և դրանով կանխարգելել խորհրդային ուժերի առաջխաղացումը դեպի Եվրոպայի սիրտը: Նրանք ձգտում էին փրկել կենտրոնական և Արևմտյան Եվրոպան կոմունիզմի վտանգից, եթե խորհրդային գորքերի հաղթանակները Սովորինգրադի, դրան հաջորդած Կորսիկի ճակատամարտերում և Արևելյան ռազմաճակատում իրադարձությունների հետագա ընթացքը ապացուցեին, որ ԽՍՀՄ գինաված ուժերը ընդունակ էին շախացնելու

հիտլերյան Գերմանիային: Սակայն մինչև պատերազմի վերջը ԱՄՆ-ի և Անգլիայի ուժերը չկարողացան կոտրել հիտլերականների դիմադրությունն Ապենինյան թերակղղում:

1943 թ. օգոստոսին Քվերեկում տեղի ունեցած հանդիպման ժամանակ Ֆ. Ռուզվելտը և Ու. Չերչիլը նախնական որոշում ընդունեցին 1944 թ. երկրորդ ճակատ բացելու վերաբերյալ, իսկ վերջնական վճռող կայացվեց ԱՄՆ-ի, Անգլիայի և ԽՍՀՄ-ի կառավարությունների դեկավարների կողմից Թերթանի կոնֆերանսում 1943 թ. նոյեմբեր-դեկտեմբերին: Չերչիլը պնդում էր, որ երկրորդ ճակատը բացվի Բալկաններում: Սակայն Ֆ. Ռուզվելտը պաշտպանեց այն հյուսիսային Ֆրանսիայում բացելու խորհրդային առաջարկը, որն էլ ընդունվեց Թերթանի կոնֆերանսում:

1944 թ. հունիսի 6-ին անգլո-ամերիկյան ուժերը գեներալ Դ. Էյզենհաուների հրամանատարությամբ ափ իջան Ֆրանսիայի հյուսիսում Նորմանդիայում: Երկրորդ ճակատը բացված էր: Ամերիկյան զինված ուժերը՝ անգլիական և գեներալ դր Գոլի ֆրանսիական ուժերի համագործակցությամբ և Ֆրանսիայի դիմադրության շարժման աշակցությամբ մինչև 1944 թ. սեպտեմբերն ազատագրեցին Ֆրանսիան և ընդհուպ մոտեցան Գերմանիայի սահմաններին:

Խաղաղօվկիանոսյան ռազմաբեմում 1942—1944 թթ. ամերիկացիներին հաջողվեց շախչախել Ծապոնիայի նավատորմը և նշանակացի կորուստներ պատճառել ճավոնական օդային ուժերին: Արդեն 1944 թ. ամոնանք հրանք հնարավորություն ստացան օդից հարվածներ հասցել բուն Ծապոնիայի տարածքին: ԱՄՆ-ի հրամանատարությունը ռազմական գործողություններում գերադասում էր հենվել գլխավորակներ ռազմածովակին և ռազմաօդային ուժերի վրա, ուստի «առանցքի» պետությունների դեմ ցամաքային գործողություններում առաջիկ պես վճռական դերը կատարում էր Խորհրդային Միությունը: Իսկ պատերազմի եզրափակիչ փուլում ցամաքային գործողությունները դարձան որոշիչ: Այսպես, ամերիկյան և անգլիական ուժերի վիճակը լրջորեն ծանրացավ 1944 թ. դեկտեմբերին, երբ Արդեններում գերմանական գորքերը հաճակարծակի հարձակման անցան և միայն խորհրդային ուժերի Արևելյան ճակատում ժամանակից շոտ սկսած հարձակումը փրկեց դրույթունը: Հեռավոր Արևելյում, 1944 թ. երկրորդ կեսին, Ծապոնիան տիրելով Զինաստանի ողջ ծովեգերթին և վերահսկելով ցամաքը մինչև Սինգապուր՝ լորջ խնդիրներ դրեց ամերիկացիների առջև՝ ցամաքային գործողությունները ակտիվացնելու հմաստով, մասնավայր, որ նա շարու-

նակում էր պահպանել իր հիմնական ուժերը՝ 5 մլն զինծառայող ցամաքային ուժերում, այդ թվում Կվանտունյան խոշոր խմբավորումը Մանչժուրիայում և 1,5 մլն զինծառայող ռազմածովակին ուժերում: Բացի դրանից, Ծապոնիան կարող էր մոշիխզացնել 2 մլն պահետապահների: Չնայած օդում և ծովում կրած կորուստներին, նա շարունակում էր օկուպացնել Զինաստանի զավթած մասը, Կորեան, Ֆիլիպինները, Հրոց-կաշինը, Բիրման, Մալայան, Խնդրնեղիան: Այս ժամանակ ամերիկացիները դիմեցին Խորհրդային Միությանը: Եվ 1945 թ. փետրվարին Յալթայի կոնֆերանսում Ռուզվելտը, Չերչիլը և Ստալինը ստորագրեցին համաձայնություն, որով ԽՍՀՄ-ը պարտավորվում էր Գերմանիայի դեմ պատերազմի ավարտից 2—3 ամիս անց Ծապոնիայի դեմ պատերազմական գործողություններ ծավալել Հեռավոր Արևելյում:

Մինչ այդ Եվրոպայում պատերազմը մտավ իր ավարտական փուլը: 1945 թ. մարտի վերջին դաշնակիցները անցան Հռենուր և մտան Գերմանիա: Մայիսի Ակգրին ԱՄՆ-ը ներուական ճակատում ուներ 3021 հազար զինվոր և սպա: Ամերիկյան ուժերը շարժվում էին դեպի Արևելյան Գերմանիայի տարածքով առանց շոշափելի կորուստների, գրեթե չհանդիպելով դիմադրության և 1945 թ. ապրիլի 25-ին Եվրա գետի վրա Տորգաույում հրանք հանդիպեցին խորհրդային զորքերին: Մայիսի 8-ին Բեռլինի Կառլսբորստ արվարձանում ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչների ներկայությամբ գերմանական ֆելդմարշալ Վելյուլը ստորագրեց Գերմանիայի անձնավոտության (Կապիտուլյացիայի) ակտը:

Հեռավոր Արևելյում մինչև 1945 թ. ամոնանք ԱՄՆ-ի զինված ուժերը կարողացան գրավել Ֆիլիպինները, Օկինավա կղզին ու մի քանի այլ կղզիներ և 1945 թ. օգոստոսի 6-ին և 9-ին կատարեցին հրեշտակ արարք՝ ատոմային ռումբեր նետելով Ծապոնիայի Հիրոսիմա ու Նագասակի քաղաքների վրա՝ ոչնչացնելով մի քանի հարյուր հազար խաղաղ բնակիչների, մոխրի ու ավերակների կույտի վերածելով այդ քաղաքները: Չնայած ամերիկացիների հավատիացումներին այն մասին, թե ատոմային ռումբերությունները մոտեցրին պատերազմի ավարտը և, նետեաբար, կրճատեցին հնարավոր զոհերի թիվը, այդ խորապես հակամարդկային գործողությունը ռազմական տեսանկյունից ոչնչով արդարացված չէր և հետապնդում էր հեռուն գնացող քաղաքական նախատեսակ՝ անարեկել Խորհրդային Միությանը և թելադրել հրանքապատճենը, քանզի ԱՄՆ-ը իր այդ պատերազմական դաշնակցի մեջ տեսնում էր իր գլխավոր ախտյակին ետպատերազմյան աշխարհարագը

հաստատելու խնդրում: Առաջին ատոմային ուժակոծությունը դրեց այսպես կոչված «ատոմային դիվանագիտության» սկիզբը, որի պահանջները հետպատերազմյան շրջանում՝ «սառը պատերազմի» տարիներին պետք է առաջ բերեն կատաղի և անզուսակ մրցավազք միջոկային սպառազինությունների ասպարեզում Սրբամութիւն և Սրբելքի միջև:

Ինչու, ամերիկան զինված ուժերի գործողությունները Խաղաղ օվկիանոսում և 1945 թ. օգոստոսի 9-ին Ծապոնիային պատերազմ հայտարարած ԽՍՀՄ-ի զորքերի կողմից Կվանտունյան բանակի ջախչախումը Ծապոնիային ստիպեցին վայր դնել գենքը: 1945 թ. սեպտեմբերի 2-ին ստորագրվեց Ծապոնիայի անմերապահ անձնատվության ակտը: Ավարտվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը և «առանցքի» տերությունների լիակատար պարտությամբ: Թեև առ այս ջախչախման հիմնական ծանրությունը իր վրա վերցրեց Խորհրդային Սիությունը, ԱՄՆ-ի դերը հաղթանակը կուրու գործում շոշափելի էր: Շիշու է, ԱՄՆ-ի մարդկային կորուստները մյուս պատերազմող երկրների, հատկապես, ԽՍՀՄ-ի և Գերմանիայի համեմատությամբ աննշան էին: 292 հազար սպանված և 114 հազար վերքերից մահացած, թեև պատերազմի ամենաթեժ պահին ամերիկյան զինված ուժերում կար 15 մլն մարդ, որից 2,4 մլն՝ օրուժում և 3,4 մլն՝ նավաստրմում: ԱՄՆ-ը շենքարկվեց մինչև իսկ օդային ուժակոծությունների և պատերազմի ավերիչ հետևանքներին, դրա փոխարեն ամերիկյան ավիացիան ավելացների և մոխրի կուտերի վերածեց Գերմանիայի և Ծապոնիայի շատ քաղաքներ ու քաղաքավայրեր, ընդհուպ մինչև առաջին ատոմային ուժերի գործադրումը Ծապոնիայի դեմ, քարուքանդ արեց հրանց արդյունաբերական ձեռնարկությունները: Այս տեսակետից մեծ եղանակար դերը թշնամու ուզմա-տնտեսական պոտենցիալը կործանելու և անձնատվության հարկադրելու գործում: ԱՄՆ-ը մեծ նյութական ու ուզմական օգնություն ցուց տվեց դաշնակիցներին, գլխավորապես Լենդ-լիզի միջոցով, որի գծով մատակարարությունները կազմեցին 50 մլրդ դոլար (շորոշ 70%-ը՝ Անգլիա): Դա երկրորդ համաշխարհային պատերազմի վրա ԱՄՆ-ի ծախսած ընդհանուր գումարի (425 մլրդ դոլար) 1/8-ն էր:

Պատերազմի տարիներին ամերիկյան ժողովուրդը սպառ կանգնեց Ֆ. Ռուզիլելտի քաղաքականությանը, որի ապացուցն է հրան 1944 թ. չորրորդ անգամ նախագահի պաշտոնում ընտրելը, որը բացառիկ դեպք է ԱՄՆ-ի պատմության մեջ:

Ամերիկանականության
մասնակցությունը
երկրորդ համաշխար-
հային պատերազմին

Սամերիկանայի գաղութն ամենաեռանդուն մասնակցությունն ունեցավ պատերազմին՝ անվերապահորեն կանգնելով կառավարության կողմը «առանցքի» տերությունների դեմ պայքարում: Ամերիկանայի ճնշող մեծամասնության համար այդ պայքարին լինելը ընդհանուր համարդկային դրդապատճեններից բացի պայմանավորված էր հետևյալ առանձնահատու գործուներով.

1. Մեծ եղենից մազապործ ամերիկանայի և հրանց սերունդների գիտակցության մեջ առաջին աշխարհամարտում կրած պարտության համար ուսանցի ձգուղ ֆաշիստական Գերմանիայի ագրեսիվ նկրտությունները զուգորդվում էին կայզերական Գերմանիայի քաղաքականության հետ, որն իբրև օսմանյան կայսրության դաշնակից, ողղակի մեղակից էր հայերի ցեղապահությանը:

2. Հայության հայրենիքը՝ Խորհրդային Հայաստանը մտնում էր ԽՍՀՄ-ի կազմի մեջ, որը պատերազմում էր հիտլերյան Գերմանիայի դեմ, և այս հանգամանքը ինքնին կանխորշում էր ամերիկանայության քաղաքական կողմնորոշումը: Դեռևս 1941 թ. արտասահմանի հայերը արձագանքեցին Խորհրդային Հայաստանի մշակույթի ականավոր գործիքների օգոստոսյան կոչին՝ միավորվել ֆաշիզմի դեմ պայքարելու համար: Հենց պատերազմի տարիներին Սփյուռքի տարբեր գաղութերում ատեղծվեցին կազմակերպություններ, որոնք մեծ աշխատանք տարան խորհրդային զինված ուժերին և Հայաստանի հետ կապերն ամրապնդելու ուղղությամբ: Ադպիսի կազմակերպություններ էին Հայ ազգային խորհրդները, որոնցից առաջնանիրից մեկը և անհագործունյան ու ազդեցիկը 1943 թ. ստեղծված ամերիկանայ ազգային խորհրդն էր:

Ամերիկյան բանակի շարքերում պատերազմին մասնակցեցին 18,5 հազար հայեր: Ամերիկանայությունը ակտիվորեն մասնակցեց «Սաստինի Դավիթ» տանկային շարայան կառուցման համար միջոցների հանգանակմանը:

3. Սփյուռքի ոչ մի գաղթօջախում հայությունը այդքան ազատ և անկաշխանդ չէր իր քաղաքական կողմնորոշումը արտահայտելու համար, քանզի այն համընկետում էր ԱՄՆ-ի պետական կողմնորոշման հետ և, բացի դրանից, պատերազմի ուզմաբեներից հեռու գտնվող ԱՄՆ-ում պարմանենքը դրա համար շատ ավելի նախատավոր էին,

քան օկուպացված Արևմտյան Եվրոպայի երկրներում, օրինակ՝ Ֆրանսիայում:

4. Եվ, վերջապես, ամերիկահայությունը ֆաշիզմի դեմ պատերազմի հաղթական ավարտի հետ կապում էր մեծ հույսեր Հայ Դատը լուծելու առնչությամբ, մասնավոր որ պատերազմի ժամանակ Թուրքիան իր առերկույթ «չեզոքությամբ» հարում էր «առանցքի» տերություններին և պատրաստ էր մինչև իսկ ողղակի մտնել պատերազմի մեջ՝ ներխուժել Ամերիկական, եթե գերմանացիները հաղթանակի հասնեին Ստալինգրադի մոտ: Ուստի պատերազմից հետո Թուրքիային պատելու հեռանկարը թվում էր բավական իրապաշտ՝ և հայությունը կրկին ակնկալում էր, ինչպես դա եղել էր բազմից անցյալում, որ հաղթանակած տերությունները արդարացի լուծում կուտ Հայ Դատին: Նրան ոգեշնչում էին նաև Արևմտյան խարսիայի գաղափարները: Սա հույսով էլ նույն ամերիկանայ ազգային խորհուրդը 1947 թ. Նյու Յորքում հրավիրեց հայկական համաշխարհային կոնֆերենս, որի ջամակարգը, սակայն, անցան ապարդյուն: հենց ԱՄՆ-ի երկրաքաղաքական շահերը թույլ չեին տախի արդարացիորեն լուծել Հայ Դատը, քանզի պատերազմից հետո Արևմտյան և Արևելյան միջև սկսած «առը պատերազմ» պայմաններում Թուրքիայի նկատմամբ ամեն մի տարածքին պահանջ Վաշինգտոնում և մուս արևմտյան մայրաքաղաքներում դիտում էին իբրև «կոմունիզմի ծալվալում»:

Բոլոր դեպքերում, պատերազմի ժամանակ ամերիկահայությունը ցուցաբերեց մեծ օրինապահություն ԱՄՆ-ի կառավարության նկատմամբ՝ պատշաճը փոխառությունը ոչ միայն ֆաշիզմի դեմ նրա վարած արդարացի բաղաքականությանը, այլև նրան մատուցեց երախտագիտության իր տուրքը՝ Մեծ Եղեռնի վերապրած զոհերին պատուաբարելու և կյանքի վերածնաման հնարավորություններ ընձեռելու համար:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԾԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՏԱՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

(1946—1998 թթ.)

ԱՄՆ-ի դիրքերի ամրապնդումը համաշխարհային մասշտաբով

Երկրորդ համաշխարհային պատերազմից ԱՄՆ-ը դուրս եկավ ֆինանսա-տնտեսապես և քաղաքականապես նպարացած: ԱՄՆ-ի տեսակարար կշիռը կապիտալիստական աշխարհի արդյունաբերական արտադրանքի մեջ 1948 թ. հասավ 56,4%-ի՝ 1937 թ. 41,4%-ի փոխարեն, իսկ Գերմանիայի, Անգլիայի, Ֆրանսիայի ու Շապոնիայի բաժինը իշակ 31%-ից մինչև 20%-ի: ԱՄՆ-ը հասավ մենաշնորհային դիրքի կապիտալիստական աշխարհում ոչ միայն արտադրության և արտահանության աննախներաց ընդլայնման ու ուկու վիթխարի պաշարների կուտակման շնորհիվ, այլև այն պատճեռով, որ պատերազմը բարձրաց էր արևմտավկորպական պետությունների տրնտեսությունը, հասցրել ֆինանսական կրախի, երանք կորցրել էին իրենց կապիտալ ներդրումների մեծ մասը գաղութներում:

Եվ, այնուամենապես, պատերազմից հետո ԱՄՆ-ը կանգնեց լուրջ տնտեսական խնդիրների առջև: Դա, ամենից առաջ, ուեկոնվերսիաֆ, արփերը՝ տնտեսությունը ուղղմական վիճակից խաղաղ գործունեության տեղափոխելու պրոբլեմն էր, որը կապված էր ոչ միայն արտադրական նպարագությունները խաղաղ արտադրության պահանջարկի հաշվին ծանրաբեռնության դժվարության, այլև գործազրկության շեշտակի աճի վտանգի հետ: Պատերազմի ժամանակ գործազրկությունը խիստ կրճատվել էր ոչ միայն ուղղմական արտադրության ընդլայնման, այլև մորիխիզացիայի հետևանքով: Ուստի, ԱՄՆ-ի գինուած ուժերը որոշակի իմաստով իրենցից ներկայացնում էին գործազրկությունի պոտենցիալ բանակ: Մեկ տարվա ընթացքում զինված ուժերի շարքերը թողեցին ավելի քան 12 մլն զինվոր և սպա, և վիճակը կարող էր դառնալ աղետալի, եթե ԱՄՆ-ում ի զորու չիմենին արագորեն լուծել ուկոնվերսիաֆ պորդ լեմները:

Սակայն ԱՄՆ-ը կարողացավ կարճ ժամանակամիջոցում հաղթարել ուկոնվերսիաֆ հետ կապված դժվարությունները: Հակառակ որոշակի ուժերի դիմադրությանը, որոնք ձգտում էին վերացնել «նոր կորսի» տարիներին կուտակված տնտեսավարական փորձը, ԱՄՆ-ում

պահապանվեց պետական կարգավորման համակարգը, որը հետապնդագման առաջին տարիներին օգնեց խոսափել ճգնաժամից: 1946 թ. փետրվարին կոնգրեսը ընդունեց ԱՄՆ-ի պատմության մեջ ամենակարևոր օրենքներից մեկը՝ զբաղվածության մասին օրենքը և նախագահին առընթեր ստեղծեց Տնտեսական խորհրդականների կոմիտե՝ օրենքով հաստատելով պետության ղեկավարի պատասխանատվությունը տնտեսության վիճակի համար: Խելացիորեն օգտագործվեց այն հանգամանքը, որ պատերազմի ժամանակ գոյացել էր ժողովրդական սպառման արտադրանքի շրավարարված պահանջարկ, որի դիմաց բնակչությունը կարող էր վճարել իր կուտակած միջոցներով: Եվ պետության օժանդակությամբ հնարավոր եղավ պատերազմի տարիներին գոյացած նույալական միջոցները օգտագործել տնտեսական անկումը կանխելու համար: Տնտեսական լորջ անկումը հնարավոր եղավ բացառել նաև կապիտալի արտահանության շնորհիվ դեպի պատերազմից ավերված և քայլարված երկրները: Հնարավոր եղավ գործարկությունը 1947—1948 թթ. պահանձել աշխատումի 3,8%-ի մակարդակի վրա, որը մինչև իսկ ավելի ցածր է, քան այն, ինչ տնտեսագետների կարծիքով հնարավում է բնական և անհրաժեշտ՝ մըրցակցության միջոցով աշխատումի որակը ապահովելու համար:

Ճգնաժամը հնարավոր եղավ կանխել նաև այն պատճառով, որ ամերիկյան ուազմական մեթենան սպատերազմից հետո ամբողջովին չապատճեց, և տնտեսական ու քաղաքական կյանքի ուազմականացումը դարձավ ակնրախ փառ հետապնդերազման առաջին իսկ տարիներին: Բավական է ասել, որ ողջակի ուազմական ծախսերը անփոփոխ գներով 1948 թ. գրեթե չորս անգամ գերազանցեցին 1940 թ. մակարդակը: Մինչեւ 1948 թ. ցուցանիշը հետպատերազման բոլոր տարիների համար ամենացածր ցուցանիշն է: Ուազմականացումը ներթափանցեց ԱՄՆ-ի պետական պարագան, 1947 թ. ստեղծվեց նախագահին առընթեր Ազգային անվտանգության խորհուրդը հետևյալ կազմով նախագահը, փոխնախագահը, պետական քարտուղարը, պաշտպանության նախարարը, պաշտպանական մորթիֆօրացիայի տնօրենը: Խորհրդի նախարարին սովորաբար հրավիրվում են շուրջների պետքի միացյալ խմբի նախագահը, կենտրոնական հետախուզական վարչության տնօրենը, որը, ի դեպ, սկսեց գործել նոյն 1947 թ., քանակի, նավատորմի և օդուժի նախարարները: Ազգային անվտանգության խորհուրդը նախագահին նաև նախարարականներ է տալիս կապիտալ ազգային անվտանգության մշակում է ուազմական ծրագրեր, որոշում է

սպառազինությունների մակարդակը, մշակում է ուազմական քաղաքականությունը և գուգորդում է ու ղեկավարում ուազմական ու քաղաքականությունների գործունեությունը:

ԱՄՆ-ի արտաքին քաղաքանակությունը հետապնդազմից հետո չեր բացարկվում սուկ ունկնդերսիայի ճգնաժամը կանխարգելու միտումով: Այն կապված էր նաև նախագահ Տրումենի վարչակազմի արտաքին քաղաքականության հետ:

Բանն այն է, որ 1941—1945 թթ. դաշնակիցների ստորագրած դիվանագիտական փաստաթյուրում ամրագրված կոլեկտիվ պարտավորությունները՝ հետապնդազման աշխարհակարգի հաստատման խնդրում կորցրել էին իրենց նշանակությունը և անկարող էին Արևմուտքը և Արևելքը, առաջին հերթին ԱՄՆ-ը և բերել ընդհանոր հայտարարի: Այդ աշխարհակարգի հովանումը կողմերը ըմբռնում էին միանգամայն հակառակ դիրքերից: Արդեն պատերազմի ժամանակ, հատկապես նրա վերջին փոլում առկա էին ապագա սկզբունքային առանձինության նախադրյալները. արևելքում Արևելյան և Կենտրոնական նվյոպայի երկրները ազատագրած խորհրդային գինված ուժերը անձանաբարակշիռ գործուն էին իշխանության դեկի մոտ դնելու Խորհրդային Սիոնիան համար ընդունելի ուժերի և հաստատելու կոմունիստական վարչակարգերը: Դա նշանակում էր, որ պատերազմի առաջել կարեն քաղաքական արդյունքներից մեկը լինելու էր կապիտալիզմի նախանշը՝ հօգուտ կոմունիզմի առաջխաղացման, որը անհանդուրժելի էր Արևմուտքի, մասնավորապես ԱՄՆ-ի համար: Խորհրդային Սիոնիան կուսակցական ու պետական դեկավարները և կոմունիզմի գաղափարախուսները չեն ել թաքնում այս իրողությունը՝ բացելիքաց հայտարարելով կապիտալիզմի համբնդիանոր ճգնաժամի երկրորդ փուլի մասին, որը անհուսափելիորեն տանում էր դեպի համաշխարհային սոցիալիստական հեղափոխության ծավալման և կապիտալիզմի ուժերի ներդրման ոլորտների կրնառունան:

Արևմուտքում անգր-ամերիկյան գինված ուժերը Խոտայիա ներխուժելուց և հատկապես երկրորդ ճակատը բացելուց հետո, ինչպես նաև Սախայի երկրներում ատիպիկ էին առնչվել կազմակերպված գինված դիմադրության շարժման հետ, որի շարքերում հաճախ առաջարար դերը խաղում էին կոմունիստական կուսակցությունները: Ավելին, դիմադրության շարժումը առավել գորեղ էր, կազմակերպված և քաղա-

քականակես հասուն այն երկրներում, որտեղ դրա գոլիս կանգնած էին կոմունիստները, ինչպես Ֆրանսիայում, Հարավսլավիայում, Վիետնամում և այլն: Այս պայմաններում ԱՄՆ-ը չէր կարող անտեսել կոմունիզմի որոշակի վտանգը նաև աշխարհի այլ մասերում, մասնավորապես Արևմտյան Եվրոպյում: «Կոմունիստական վտանգի» կանխումն էլ դարձավ հետպատերազմյան ամերիկան արտաքին քաղաքականության կարևորագույն խնդիրը: Մշամանական, դեռևս պատերազմի սկզբին ԱՄՆ-ում որոշակի քաղաքական շրջաններ գտնում էին, որ հետպատերազմյան աշխարհակարգը ներկայացնելու է «Ամերիկայի դարը», այսինքն՝ սահմանվելու է քայլ ամերիկյան ըմբռնումների և տնտեսական, քաղաքական ու քարոյական չափանիշների:

Այսպիսով, դեռևս պատերազմի ավարտից առաջ քայլեցին երկու իրարամերժ, հավակնորդ և անզիջում դիրքորոշումներ, թեև սրողված, իրերի բերումով խացված ձևով: Նախագահ Ֆ. Ռոզվելտը այդ երեսուցիմ վերաբերիվ էր խելամտորեն, գերադասելով խուսափել Խորհրդային Միության հետ հարաբերությունները սրկուց հանուն պայքարի ընդհանուր թշնամու դեմ: Սակայն 1945 թ. ապրիլին վախճանվեց Ֆ. Ռոզվելտը և ինքնաբերաբար հախագամի պաշտոնը ստանձնեց փոխնախագամ Հ. Տրումենը, որը որդեգրեց այսպես կոչված «զավման դոկտորինան», որի իմաստը պետական դեպարտամենտի աշխատող Տ. Քենանը ձևակերպեց հետևյալ կերպ: «Խորհրդային Միության հանդեպ Միացյալ Նախագների ցանկացած քաղաքականության գլխավոր տարրը պետք է լինի ուստական քրսպանակոնիստական միտումների համբերատար, երկարատև, բայց հաստատում ու գգոն զավման տարրը»: Մինչ Ստալինը հետևողականորեն արտահանում և խորհրդային ուժերի հսկողության ներքո գտնվող Կենտրոնական, Արևելյան և Հարավ-Արևելյան Եվրոպյան երկրներում ներդնում էր սոցիալիզմի խորհրդային մոդելը՝ որոշ ձևավոխումներով և ձևավորում այսպիս կոչված «սոցիալիզմի համաշխարհային համակարգը», Վաշինգտոնում մահրակրկիտորեն մշակում էին «զավման» քաղաքականության տարրերը:

Առաջին տարրը հանդիսացան 1947 թ. մարտի 12-ին հրապարակված «Տրումենի դոկտորինան», որը նախատեսում էր խորհրդային «ագրեսիայի վտանգին ենթակա» Թուրքիային և Հունաստանին «օգնություն» ցույց տալու անհետաձեկի միջոցառումներ, և նոյն թվականի հունիսի 5-ին հրապարակված «Մարշալի պլանը»: Վերջինիս հեղինակը՝ պետական քարտուղար գեներալ Ջ. Մարշալը առաջարկում էր շու-

տափույթ տնտեսական և ուսումնական օգնություն պատերազմից քայլացած երկրներին, վերականգնելու հրանց արտադրությունը և բարելավելու կյանքի պայմանները, եղելով այն կանխադրությունը, որ սովոր այերածություններն ու աղքատություններ մարդկային զանգվածներին դարձնում են ավելի ընկալումնակ կոմունիզմի գաղափարների նկատմամբ: Ի զարգացում «Մարշալի պլանի» կոնգրեսը 1948—1951 թթ. 12,5 մլրդ դոլար հատկացրեց Եվրոպային օգնելու համար: Հետևաբար, «Տրումենի դոկտորինան» և «Մարշալի պլանը» ողջիած էին ոչ միայն ԽՍՀՄ-ը գագելու նպատակին, այլև պետք է կանխարգելեն կոմունիստական ուժերի հաղթանակը հետպատերազմյան Եվրոպյում ծավալված քաղաքական գոտեմարտությունն էլ ստացավ «սառը պատերազմ» պայմանական անվանումը, պայմանական, բանզի նրանում առկա էին նաև «սառը պատերազմի» պոռթկումներ, ինչպես կորեական պատերազմը, թեև այդ պոռթկումներում անմիջապես չեն բախվում ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի զինված ուժերը, բայց ընդհարվում էին նրանց զինատեսակները, ուսումնական և քաղաքական դոկտորինաները և այլն:

«Սառը պատերազմը» բնդգրկեց Արևմտյան Հարավի բոլոր կողմերը՝ գաղափարախոսությունը, տնտեսությունը, որը հարմարեցվեց սպառագինությունների անսահմանափակ և անզուսպ մրցավագրի խնդիրներին: Փոխադարձ կապերի, առևտի և գիտատեխնիկական համագործակցության բնագավառում հարանուն տահմանափակումները և խորականության կորուսի հետևողական կիրառությունը դարձան ավելի բան բնութագրող նույն համար: «Սառը պատերազմը» ընդգրկեց դիվանագիտությունը, ներքին և արտաքին քաղաքական կամքը, ուսումնական քաղաքականությունը, քարոզչությունը և այլն: «Սառը պատերազմին» էին նպատակամղված «աստոմային դիվանագիտությունը» և «դուլարի դիվանագիտությունը»:

1948 թ. նախագահական ընտրություններում Հ. Տրումենը հաղթանակ տարավ, որը վկայում էր, թե ամերիկյան հասարակությունը հավանալիքուն է տայիս նրա արտաքին քաղաքականությանը: «Սառը պատերազմի» առավել ընդհանրացված արտահայտությունը եղավ բլոկների քաղաքականությունը: ԱՄՆ-ին նաշողվեց ստեղծել ԽՍՀՄ-ի և սոցիալիստական նախարարի շուրջը բլոկների մի ամրող շղթա՝ Հյուսիսային Ստանդարտյան պայմանագրային կազմակերպությունը (ԽՍՀՍՕ), Հարավ-Արևելյան Ասիայի պայմանագրային կազմակերպությունը (ՄԵՍՀՕ), Բաղդատի պակտը, որը նրաքի դրուս գալուց հետո կոչվեց Կենտրոնա-

կան Ասիայի պարմանագրային կազմակերպություն (ՍԵՆՏՕ): Բլոկներից միակ կենտրոնակը եղավ ՆՍ.ՏՕ.-ն, որը ստեղծվեց 1949 թ. պարիվի 4-ին արևմտա-և վրոպական մի շարք երկրների և ԱՄՆ-ի ու Կանադայի մասնակցությամբ և գործում է առ այսօր, եթե «սառը պատերազմը» այևս չկա, փլուզվել է ԱՄՆ-ի ախտան Խորհրդային Միությունը և լուծարվել ՆՍ.ՏՕ.-ի հակակշիռ Վարչակայի պակտը: ԱՄՆ-ի ստեղծած մյուս ուսումնա-քաղաքական բլոկները ժամանակի ընթացքում դադարեցին գոյություն ունենալ:

ՆՍ.ՏՕ-ում գյանավոր կազմակերպող և կառավարող ուժը դարձավ ԱՄՆ-ը: «Սառը պատերազմը», ուսկայն, ընթանում էր որոշակի եղանակով: Իրադարձությունների գարգացումը «երկարեւ վարագույր» ետևում, մասնավորապես ատոմային ռումբի հաջող փորձարկումը ԽՍՀՄ-ում և կուտունատական հեղափոխության հաղթանակը Չինաստանում, չին կարող անտարբեր թողնել ԱՄՆ-ի դեկավարներին: Հակառակությունները երկու հակադիր ճամբարների միջև երբեմն այն աստիճան էին սրբում, որ թվում է, թե երրորդ համաշխարհային պատերազմը դառնում է օրակարգի հարց: Այսպես եղավ կորեական պատերազմի ժամանակ, երբ 1950 թ. հունիսի 24-ին Հյուսիսային Կորեայի ուժերը անցան երկու կորեաները միմյանցից բաժանող 38-րդ զուգահեռականը և շարժիցին դեպի Հարավային Կորեայի մայրաքաղաքը՝ Սեուլ: Այն ժամանակ ԱՄՆ-ը միշտամուց նախօրոր ստանալով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հավանությունը: Վերջինս հունիսի 25-ին պահանջեց հետ քաել Հյուսիսային Կորեայի ուժերը: Քանի որ այս պահանջը չըկատարվեց, Անվտանգության խորհրդը ՄԱԿ-ի անդամներին կոչ արեց ուսումնական միջոցների դիմել հյուսիս-կորեական ագրեսորներին հետ շարտերու համար: ԱՄՆ-ը իրավունք ստացավ միջամտելու կորեական պատերազմին ՄԱԿ-ի դրոշի ներքո: Գեներալ Մակարթուրը նշանակվեց ՄԱԿ-ի զորքերի հրամանատար Կորեայում: Անվտանգության խորհրդում Հյուսիսային Կորեայի գործողությունները դատապարտող բանակներ ընկանալ հաջողվեց սուս այն բանի շնորհիվ, որ ԽՍՀՄ-ը չէր կարող գործադրել «վետոյի» իր իրավունքը, քանզի բոյկոտում էր խորհրդի հիաները, որովհետև անտեսվում էր նրա պահանջը՝ Չինաստանի տեղն Անվտանգության խորհրդում Տայվանում ապաստանած չանկալիական վարչակարգից Չինաստանի ժողովրդական Հանրապետությանը փոխանցելու վերաբերյալ: Ամերիկյան ուժերը կարողացան Հյուսիսային Կորեայի զորքերը հետ մեջ 38-ող զուգահեռականից այն կողմ: Ավելին, ՄԱԿ-ի գյանավոր առամբեկան 47 ձայնով (ընդդեմ

5-ի և 5 ձեռնապահի) գեներալ Մակարթուրին արտոնեց պատերազմական գործողությունները փոխադրել Հյուսիսային Կորեայի տարածքը: Միայն այն քանից հետո, եթե ամերիկյան զորքերը մոտենում էին Մանչուրիայի սահմաններին, պատերազմին միջամտեցին չինական կամավորները: Չինաստանի միջամտությունը կարող էր պատերազմը դարձել երկարատև և հոգություն կողմերի համար, նույնիսկ սպառնում էր վերաճել Յ-րդ համաշխարհային պատերազմի ԽՍՀՄ-ի մասնակցությամբ: Գեներալ Մակարթուրը բացեիբաց պահնաջում էր պատերազմ սկսել Չինաստանի և ԽՍՀՄ-ի դեմ ատոմային գենքի կիրառմամբ: Սակայն Տրումենի վարչակազմը խոհեմ գտնվեց և պաշտոնաթող արեց ծայրահեղական գեներալին: ՄԱԿ-ի ուժերի նոր հրամանատար Կորեայում նշանակվեց ամերիկյան գեներալ Ռիչունը:

1951 թ. ամռանը վիճակը կորեական ուսումնակատում կայունացավ և պարզ դարձավ, որ կողմերից ոչ մեկը չի կարող հասնել առավելության առանց նոր խոշոր ուժեր հավամարտության մեջ մտցնելու: Այս իրողությունը կողմերին մղեց բանակցությունների, որոնք ընթանում էին մեծ դժվարությամբ և ավարտվեցին 1953 թ. հունիսի 27-ին ստորագրված համաձայնագրով, որը, ըստ Էլիֆան, վերականգնեց ստատու-բվուն, այսինքն՝ մինչ պատերազմը եղավ վիճակը Կորեայում: Այսպես, հնարավոր եղավ շրջանցել նոր համաշխարհային պատերազմը և «սառը պատերազմ» առաջին լուրջ փորձությունից դորս գալ խոհեմությամբ ու արժանապատվորեն:

Կորեական պատերազմը վճռաբար խթանեց տնտեսական և քաղաքական կյանքի հետագա ուսումնացումը ԱՄՆ-ում: Պատերազմը լրջորեն ներազդեց նաև 1952 թ. նախագահական ընտրությունների ելքի վրա: Հ. Տրումենը նույնիսկ չառաջադրվեց: Դեմոկրատական կուսակցությունը գերաշանց Խլինուրի նախագահական է. Ստիլինենստմին: Սակայն ընտրություններում հայթանակ տարավ հանրապետականների թեկնածուն՝ գեներալ Դ. Էլցենիառենը, որը մեծ հեղինակություն էր վայելում երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ իր ունեցած դերով և խոստանում էր վերջ տալ կորեական պատերազմին: Դ. Էլցենիառենի վարչակազմում արտակարգ ակտիվ դեր էին կատարում փոխնախագահ Ռ. Նիքոլսը (որպես կանոն, անսովոր երևույթ ԱՄՆ-ի կյանքում) և պետական քարտուղար Զ. Դալեսը: Այս գործիշները կոմունիզմը «զապելու» դոկտորինան համարելով արատավոր և ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը նախաձեռնությունից գրկող, առաջարկեցին «խորհրդային տիրապետության» տակ գտնվող ժողո-

վորդներին կոմոնիզմից «ազատագրելու» կուրս: Զ. Դալեսը հետագայում զարգացրեց այս դրվագին և նայտարարելով, որ ցանկացած «ճգնաժամային իրադրության մեջ» ԱՄՆ-ը կրիմի «զանգվածային հատուցման անարեկիշ ուժին» և գործելու է «անհասկաղ» իր ընտրած միջոցներով ու տեղերում: Սա միշտկային պատերազմի սպառնալիք էր, որը հիմք էր անկանխատեսելի հետևանքներով, եթե նկատի ուժենանք, որ ԽՍՀՄ-ը նույնական որոշակի հաջողությունների էր հասել միշտկային գեների արտադրության ասպարեզում:

Ի. Աստվածի մահը 1953 թ. մարտի սկզբին և դրան հետևած փոփոխությունները ԽՍՀՄ-ում հեռանկար բացեցին ամերիկա-խորհրդային հարաբերությունների նորմալացման համար: Ինքը՝ Զ. Դալեսը հանդես եկավ պատերազմի խնդիրներին անդրադառնախում «ճկունություն» և «զգուշություն» ցուցաբերելու օգտին: 1954 թ., երբ ֆրանչազինները հեռացան Հնդկաշխից, Դ. Էյգենհաուտերը, հակառակ Դալեսի և Նիքոլսի առաջարկության, որշեց գնալ բանակցությունների: Հնդկաշխից վերաբերյալ Ժնևի կոնֆերանսը որոշեց Հնդկաշխը բաժանել կոմոնինական և ոչ կոմոնինական գոտիների, որը նշանակում էր պարտություն ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության համար: Սակայն հեշտ չէր կորեական պատերազմից միանգամից ցատկել վիետնամական պատերազմի մեջ, մասնավանդ, որ անկարելի էր ժխտել, որ վիետնամցիները կովում էին ֆրանչական գաղութային լծի դեմ: Դրա հետ մեկտեղ Դ. Էյգենհաուտերի կառավարությունը շարունակում էր «զսպելու» քաղաքականությունը, որի արտահայտությունն էր ամերիկյան գինված միջանությունը Գվատեմալայում և Լիբեռանում: Այս քաղաքականության տեսանկյունից էլ ԱՄՆ-ը արդարացնում էր իր թուլացած պարտնյութերի դիրքերի զավումը աշխարհի տարբեր մասերում: Դա է վըկայում «Էյգենհաուտերի դոկտրինան», որով հանդես եկավ ԱՄՆ-ի նախագիր Սուլեյ պատերազմից հետո: Թույլ տարվ, որ Անգլիան և Ֆրանչան խորը միարնեն այդ արկածախնդրության մեջ և պարտություն կրելով արտաքալեն Մերձավոր Արևելքից, Էյգենհաուտերը հայտարեց աշխարհի այդ մասում Անգլիայի և Ֆրանչայի հեռանալոց հետո գոյացած վակուումի մասին, որը ԱՄՆ-ը պետք է շտապեր լցնել իրենով՝ թույլ շտալու համար կոմոնիզմի ներխուժումը այստեղ:

Սակայն առավել կարևոր ամերիկա-խորհրդային հարաբերությունների վիճակն էր: ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահ Ն. Խրոչչովի այցը ԱՄՆ 1959 թ. սեպտեմբերին և հանդիպումը Դ. Էյգենհաուտերի հետ Քեմփ-Դեմիլում նպատեցին այդ հարաբերությունների

բարեկավմանը և միջազգային ընդհանուր մթնոլորտի առողջացմանը: Որոշվեց 1960 թ. մայիսի Փարիզում նրավիրել չորս տերությունների՝ ԱՄՆ-ի, ԽՍՀՄ-ի, Անգլիայի և Ֆրանչայի կառավարությունների դեկավարների խորհրդակցություն: Սակայն խորհրդակցությունը, թեև գումարվեց, բայց, ըստ Էության, տեղի չունեցավ, քանզի մինչ այդ ԽՍՀՄ-ի օդային տարածքում խփված Ռ-2 ամերիկյան լրտեսական ինքնաթօնի միջադեպը կտրականապես սրել էր ամերիկա-խորհրդային հարաբերությունները:

1960 թ. ընտրությունները հաղթանակ բերեցին դեմոկրատներին: Հանրապետականները 8-ամյա կառավարություն հետո ստիպված են նրանց գիշել իշխանության ղեկը: Հանրապետականների թեկնածուն՝ նախկին փոխնախագահ Ռ. Նիքոլսը Էյգենհաուտերի վարչակազմում իր ցուցաբերած արտակարգ ակտիվության համար լավ ծանոթ էր ամերիկյան ընտրողներին: Սակայն նրանք գերադասեցին ձայնը տալ դեմոկրատների թեկնածուին՝ Զ. Ֆ. Քենեդիին, որը Անգլայացնում էր երկրորդ աշխարհամարտին մասնակցած ամերիկացիների սերնդին և խոստանում էր երկիրը տանել դեպի «նոր բնագծեր»: Նիքոլսի ուղմատենչությունը, նաև Ռ-2 լրտեսական ինքնաթօնի միջադեպի տպավորությունը չէին կարող չնպաստել նրա պարտությանը:

ԱՄՆ-ի ներքին քաղաքանությունը և տնտեսական զարգացումը 1950-ական թվականներին

Դեռևս 1949 թ. հունվարին նախագահ Հ. Տրումենը ամերիկացիներին խոստացավ բարենորդգումների լայն ծրագրի իրականացնել, որը հայտնի դարձավ իրուն «արդարացի կուրս»: Սակայն նրան հաջողվեց կատարել այդ ծրագրի կետերից միայն երեքը. միջոցներ հատկացվեցին նվազ եկամուտություղու ընտանիքներին 810 հազար բնակչան կառուցելու համար, ժամանակար աշխատավարձի նվազագույնը 40 ցենտից հասցվեց 75 ցենտի և 10 մլն մարդու ավելացավ սոցիալական ապահովության օրենքի գործողությանը ենթակա ամերիկացիների թիվը ու ավելացվեցին թոշակային վճարումների չափերը: 1948 թ. աշնանը ի հայտ եկան հետապնդերազմյան առաջին նախանշանները: Արդեն սպառվել էին, թեև ոչ ամբողջությամբ, արտադրության աճը խթանող այնպիսի գործուները, ինչպես պատերազմի ժամանակ շրաբարարված պահանջարկը և կուտակված միջոցները, քաղաքացիական արտադրության զուղերի զարգացումը, սպասարկման ընդլայնումը, արդյունաբերության նոր ճյուղերի և արտադրանքի նոր տեսակների ստեղծումը, համաշխարհային շուկայի պահանջարկը, հիմնական կա-

պիտակի նորոգումը: Արտադրության անկումը 1949 թ. հանգեցրեց գործազրկության աճի: 1949—1960 թթ. ԱՄՆ-ի տնտեսությունը չորս անգամ նվազամային անկում ապրեց (1948—1949 թթ., 1953—1954 թթ., 1957—1958 թթ. և 1960—1961 թթ.): Սակայն դրանք կարճատև անկումներ էին և հաջողվում էր տնտեսությունը շուտով դորս բերել ճրգանաժամային վիճակից: Պատճառը պետական մոնոպոլիատական զարգացման խորացումն էր, թեև ի տարբերություն Արևելյան Եվրոպայի ԱՄՆ-ի տնտեսության մեջ չկար պետական հատված: Պետությունը կարգավորիչ դեր էր կատարում տնտեսության մեջ: Ծգմաժամերի արագ հաղթահարմանը մեծապես նպաստեց ռազմական ծախսերի գրեթե հարածում ավելացումը:

Հիսունական թվականները բնութագրվում են նաև հակակոմունիստական արշավով երկրի ներսում: Ասումային ոումի ստեղծումը ԽՍՀՄ-ում և կոմունիստական հեղափոխության հաղթահարմակը Շինանուանում մեծապես խթանեցին այդ արշավը: Փետրուս էին մեղավորներին, որոնք ասումային ոումի գաղտնիքը հանձնել են ԽՍՀՄ-ին և ուժ քաղաքականությունը հանգեցրել էր Շինաստանի կորստյանը: Հանրապետական սենատոր Զ. Մակկարտին, ոչը գլխավորում էր կառավարական մարմինները հետաքանոյն ենթահանձնաժողովը, պեղում էր, թե կոմունիստական գործակալները ներթափացել են ԱՄՆ-ի պետական պարագաները՝ պահանջելով հետաքանություն անցկացնել ընդհուպ մինչև զինված ուժերում և պետական դեպարտամենտում: Այս կապակցությանը ԱՄՆ-ում 50-ական թթ. առաջին կետին ծավալված իրադարձությունները ստացան «մակկարտիզմ» անվանումը: Մակկարտիզմի ամենամեծ ակտիվությունը նկատվեց 1952—1954 թթ.: Կոմունիստական վտանգը երկրի ներսում կանխելու և ԱՄՆ-ի ներքին անվտանգությունը ապահովելու պատճառարանությամբ կազմակերպվեցին հետաքանություններ և դատավարություններ: Դ. Էլզենհաուերը մակկարտիզականների ցուցումով աշխատանքից ազատեց պետական ծառայության ուլորտում աշխատող 8808 մարդ, իրքու «անհուսալի տարրերի», մահապատժի ենթարկվեցին Ռոգենբերգ ամուսները՝ ասումային ոումի գաղտնիքը ԽՍՀՄ-ին հայտնելու մեղադրանքով, Հոլիվուդում կինոյի գործիչների հետաքանության հետևանքը եղավ 2. Չապլինի արտաքսումը ԱՄՆ-ից, աշխատանքից հետացվեց ֆիզիկոս Ռ. Օպենհայմերը, որը ամենամեծ ծառայություններ ունեցողներից մեկն էր ամերիկյան ասումային ոումի ստեղծման գործում և այն: Մակկարտիզմը ընդունեց հիստորիկ չափեր, ստացավ «վինուկների որս» մականունը և դատա-

պարտվեց ամերիկյան որոշ պաշտոնական շրջանակների կողմից: 1954 թ. դրա դեմ հանդես եկավ Դ. Էզգենհաուերը, եթե Մակկարտին փորձեց կոմունիստներ գտնել նաև Պետուագոնում ԱՄՆ-ի պաշտպանության գերատեսչությունում:

ԱՄՆ-ը 1960—1970 թթ.

Գիտա-տեխնիկական հեղափոխությունը և ԱՄՆ-ի սոցիալ-տքնական զարգացումը
1960-ական թվականներին

Կապիտալիստական աշխարհի արտադրողական ուժերի զարգացումը 60-ական թթ. սերտորեն կապված էր գիտա-տեխնիկական հեղափոխության մեջ, գիտության ժողովրդական գործունեության որորությունում վերածելու հետ, որը ունեցավ անհասանեալ սոցիալական հետևանքներ: ԽՍՀՄ-ում հրթիռային տեխնիկայի և տիեզերագնացության այնպիսի լուրջ նվաճումներից հետո, ինչպիսին էին երկրի առաջին արհեստական արբանյակի 1957 թ. հոկտեմբերի 4-ին արձակումը և 3ու. Գագարինի՝ մարդու առաջին թոփշքը 1961 թ. ապրիլի 12-ին, ԱՄՆ-ը ձեռնամուխ եղավ տիեզերագնացության իր ծրագրի իրականացմանը, որի առավել ցնցող արդյունքը եղավ Ն. Արմենունցի և է. Օլդրինի վայրէջքը Լուսնի վրա 1969 թ. հունիսի 20-ին: Թեև գիտատեխնիկական հեղափոխության ամենակարևոր արդյունքներից մեկը՝ միջուկային եներգիայի բացահայտումը ԱՄՆ-ում նշանավորվեց ասումային ոումի ստեղծմար և հրթիռային տեխնիկայի զարգացումը և տիեզերագնացությունը սերտորեն առնչվում էին ուղմամասն խնդիրների հետ, սիալ է պեղել, թե ԱՄՆ-ի համար գիտատեխնիկական հեղափոխության միակ խթանիչը սպառագինությունների մրցավազը էր: Ուստի, միանգամանց օրինաչափ է, որ գիտատեխնիկական հեղափոխության կարևոր դրասերումները՝ ավտոմատացումը և էլեկտրոնային հաշվիչ մեքենաները ամենալայն կիրառումը գտան ԱՄՆ-ի քաղաքացիական տնտեսության մեջ: Եթե 1960 թ. երկրում գործում էր 4267 էլեկտրոնային հաշվիչ մեքենա, ապա 1970 թ. 45000: Դա մի քանի անգամ ավելի էր, քան մյուս կապիտալիստական երկրներում միասնի վեցըրած: Գիտատեխնիկական հեղափոխության շնորհիվ քարձագավ աշխատումի որակավորումը, աճեց արտադրության կառավարողների՝ մենեջերների ինստիտուտը, արգագլիքը գյուղատնտեսության ինդուստրացումը: Այս խթանեց արտադրողականության աճը և

հնարավորություն տվեց բարձրացնել կենսամակարդակը՝ ապահովելով հմամաշատախան գնողունակություն ընդլայնվող Կրտադրության համար: Գիտատեխնիկական հեղափոխությունը թափանցեց մարդկանց կենցաղի մեջ, փոխեց մտածելակերպը, ընդլայնեց պյապես կոչված «միջն ամերիկացիների» խավը, որը ամերիկան հասարակության մեծամասնությունն է կազմում և ապրում է բարեկեցիկ լյանքով ու զերծ է բազմաթիվ կենցաղին ու կենսական պրոբլեմներից, որոնցից արդարեն էլ չձերբազաւովեց «սոցիալիստական հասարակարգը»:

Գիտատեխնիկական հեղափոխությունն արագացրեց արտադրության աճի թափը: Դրան համընթաց պահպանվեցին շատ սոցիալական խնդիրներ. ուսայական խորականությունը աշխատանքի ու վարձատրության ասպարեզում, գործազրկության համեմատաբար բարձր մակարդակը նեգրերի, պուրառողիկացիների և լատինամերիկացիների (չիկանու) շրջանում, բուժապատրիման դժվարանաշելիությունը զառամյաների համար, կնոջ և տղամարդու վարձարության տարբերությունը և այլն: Առկա էր նաև լուսավեճարությունների պահանջմանը գիտատեխնիկական հեղափոխությունը և նրա ստեղծած բարձր արտադրողականության արդյունքը՝ հարտության աճը և բարեգործությունը (կրոնական և ոչ կրոնական) բոլոր են տալիս կերակրել այդ խավը և ապահովել հասարակական անդրությունը:

1960 թ. ընտրություններում դեմոկրատները հաղթեցին «նոր բնագծերի» լոգունգով: Նախագահ Զ. Քենեթին, որը նագումով իրավանացի էր և կաթոլիկ, անսպաս եռանդի տեր էր, համարեակ և նորարար: Նա ավարտել էր Հարվարդի համալսարանը և մերտորեն կապված էր մըտավորականության հետ: Քենեթին համարվում էր ինտելեկտուալ նախագահ և նրա օրոք Սահմանականությունը և ամերիկան նշանավոր մտավորականների հավաքատեղի (այսուղ նաև ընդունեց նաև հյուրախաղերով ԱՄՆ-ում գտնվող Կոմիտասի անվան լարային քառակին):

Քենեթին իր առջև երկու խնդիր էր դրել. պայքարել տնտեսական ճգնաժամի դեմ և արագացնել տնտեսական աճի թափը: Որպես հականաժամային միջոցառումներ նա առաջարկեց ընդլայնել գործազրկության գծով ապահովագրությունը, «վերլառուցել» խրոնիկական անհնարինության շրջանները, բարձրացնել աշխատավարձի նվազագույնը, բնակարանային շինարարություն ծավալել և այլն: 1961 թ. կոնգրեսն ընցունեց նրա ծրագիրը: Քենեթին կունամտածված ձևով գնաց բյուջեի պակասորդի մեծացման կրճատելով կորպորացիա-

ներից և անձնական նկատուաներից գանձվող հարկերը: Դրանով նա խրախուսեց ձեռնարկատիրության ընդլայնումը: 1964 թ. վետրվարին, արդեն Զ. Քենեթիի եղեռնական մասից հետո, կոնգրեսն ընդունեց նրա առաջարկած «նոր տնտեսական քաղաքականությունը», որը ձեռնարկատերի համար հեշտացնում էր ֆեդերալ ուղղերվածին համակարգի վարկերից օգտվելը: Այս ամենը խրախուսում էր նոր կապիտալ ներդրումները: Միաժամանակ արգելվում էր բարձրացնել գները նշանավագայի ուղղեցներից, որը չէր կարող չվատթարացնել հարաբերությունները թիգնենի ներկայացուցիչների հետ: Հիշյալ միջոցառումների շնորհիվ անեց տնտեսության զարգացման թափը և նոր ստեղծվեց սոցիալական բարենորոգումների համար: Զ. Քենեթիի սպանությունը չխանգարեց բարենորոգումների անցկացմանը: Ավելին, նախագահի եղեռնական մանվան ազդեցությամբ երկրում ստեղծված բարոյա-հոգեբանական մթնոլորտը նույնական նպատակն էր դրա համար և նեղաներապես ամրապնդեց դեմոկրատների դիրքերը: 1964 թ. ընտրություններում դեմոկրատների թեկնածուն՝ Լ. Ջոնսոնը հաղթանակ տարավ հանրապետական կուսակցության թեկնածու, ծայրանեղ հետաքեմ հայցըների տեր Բ. Գոլդութերի նկատմամբ: Դեմոկրատները ստացան կոնգրեսի երկու պալատների տեղերի ամելի քան երկու երրորդը: Դա նման էր Ֆ. Ռուզվելտի հաղթանակին 1936 թ. ընտրություններում:

Լ. Ջոնսոնը շարունակեց Զ. Քենեթի բարենորոգման կորուրը: 1964—1965 թթ. ընդունվեց ծրագիր, որը ընդորվում էր սոցիալական ապահովության, կրթության պետական ֆինանսավորման, աղետայի վիճակում գտնվող շրջաններին օգնելու, նվազագույն աշխատավարձի բարձրացման, նեգրերի քաղաքացիական իրավունքների պաշտպանության և մի քանի այլ խնդիրները: Քաղաքացիական իրավունքների պաշտպանության խնդիրը կապված էր ԱՄՆ-ի պատմության մեջ ուսայական խորականության դեմ ուղղված ամենալայն և զորեղ շարժման հետ, որի հաջողությունը մեծապես պետք է նպաստեր ամերիկյան հասարակության դեմոկրատացմանը: Այդ շարժումը, որը սկիզբ առավ 50-ական թթ. երկրորդ կեսին, պատմության մեջ մտավ իրեն «Անգրական հեղափոխություն»: Եվ այդ երևույթի գլխավոր առանձնահատկությունն այն էր, որ նրան մասնակցում էին ոչ միայն նեգրերը, այլև բազմահազար սփիդերները ամերիկացիներ: Ավելին, Քենեթիի վարչակազմը դրական վերաբերմունք ուներ «Անգրական հեղափոխության» նկատմամբ և շահորդոված էր ուսայական հարցի դրական լուծմամբ ԱՄՆ-ում, թեև սոցիալ-քաղաքական պայթյունից խուսափելու համար փողոցային

երթերի, ցուցների դեմ, գործադրվում էր նաև ոճ՝ ոստիկանությունը և ազգային գվարդիան, հատկապես «սև հովազներ» նեգրական ծայրահեղական կազմակերպությունը ճնշելու նպատակով։ Գլխավոր պատճառն այն էր, որ 50—60-ական թվականներին բուռն կերպով զարգանում էր պայքարը գաղութատիրության դեմ և արդեն համակել էր այսպես կոչված «սև Աֆրիկան»։ Արևոտոքի և Արևելքի միջև գնում էր սուր պայքար գաղութային լուծք թոթափած երկրներին իրենց ազդեցության որորություններին համար և ԱՄՆ-ի՝ կապիտալիստական աշխարհի առաջնորդ գերտերության համար ամենամեծ էլ միևնույնը չեղ, թե դեպի որ կգնան այդ երկրները։ Մակայն ավելի քան պարզ էր, որ ԱՄՆ-ը չի կարողանա իր ազդեցությանը ենթարկել Աֆրիկայի նորաստեղծ պետություններին այնքան ժամանակ, քանի որ ու աֆրիկացիները կմնային իրավազորկ վիճակում և ենթակա ուսայական խորականության խայտառակ իրավակարգին բուն ԱՄՆ-ում։ Զ. Քենեթին հրաշալի համանում էր այս նրբությունը և նրա վարչակազմը հակված էր վերացնել նեգրերի նկատմամբ խորականությունը տևանության, կրթության, սոցիալական բնագավառներում, կենցաղում և ստեղծել ինտեգրացված հասարակություն, որտեղ սպիտակամորթ ամերիկացիները և ներգերն ու մյուս գունամորթ ժողովորդները ապրեն կողք-կողքի՝ խառը համայնքներով և ոչ թե մաշկի գույնով միմյանցից տարանջատված, իբրև առաջին և երկրորդ կարգի քաղաքացիներ։ Դրա համար բավարար չեղ օրենսդրությամբ վերացնել սեգրեգացիան (անջատ գոյությունը) բնակության վայրի (որը նեգրերին ժողովում էր հետևախորչացին թաղամասերում՝ գետոներու), փոխադրամիջոցներից օգտվելու, կրթության, աշխատանքի վարձվելու և վարձատրության և այլ հարցերուն։ Անհրաժեշտ էր կոտրել սպիտակամորթ ամերիկացիների ուսախտական մուայնությունը, ինչի դատաստանը և կու-կուկս-կլանը բնականոն երևույթներ դիտելու հրա մուածելակերպ, պետք էր առեղծել բարոյանոգերանական նոր մթնոլորտ։ Դա իսկապես հեղափոխություն կիմեր և ոչ միայն նեգրերի համար, քանզի ամերիկյան հասարակությունը և ապրելակերպը կձերքազատեր իր ամենաամորթալի, ամենախայտառակ արատներից։

Դուկ դա իսկատ դժվարին խնդիր էր, եթե նկատի ունենամք, որ ԱՄՆ-ի պատմական ավանդույթները գործում էին հակառակ ուղղությամբ։ Հիշենք, որ «Անկախության հոչակագրի» ընդունումից գրեթե 100 տարի անց ԱՄՆ-ը վերացրեց սորկությունը և պատմության մեջ

մնաց իբրև վերջին սորկատիրական հասարակությունը, թեև հոչակագրում ամերիկյան հեղափոխության «հայրերը» գրանցել էին, թե Աստված բոլոր մարդկանց արարել է հավասար և օժտել միևնույն իրավունքներով։ Հայտնի է նաև, որ 1861—1865 թթ. քաղաքացիական պատերազմից առաջ ԱՄՆ-ում իշխում էր նեգրական հարցը աֆրիկացիներին Աֆրիկա վերադարձնելու միջոցով լուծելու տեսակետը (Լիբերիա աշխատությունը դրա արդյունքն է), և մինչև իսկ սկզբում հախագահ Սքրանիան Լինքոլնը հակված էր դեպի այդ տեսակետը։

ԱՄՆ-ի նեգր բնակչության ճնշող մեծամասնությունը պահանջում էր ինտեգրացված հասարակություն։ Այդ շարժումը, որը գիշակորում էր բոլորական հովվապես Մարտին Լյութեր Քինգը, ընդուրկում էր, գրեթե գլխովին, քիստոնյան նեգրերին։ Մահմետական նեգրերը, որոնք փոքրամասնություն են կազմում ԱՄՆ-ի մասմորթ բնակչության մեջ, իրենց առաջնորդ Մալքոլմ Նրսի գիշակորությամբ գտնում էին անօգուտ սպիտակամորթ ամերիկացու խոճին և գիտակցությանը դիմելը, ինտեգրացված հասարակությունը համարում էին անհնարին և պահանջում էին ԱՄՆ-ի ողջ մասմորթ բնակչությանը առանձնացնել հարավային 5—6 նահանգներում, ստեղծել այնտեղ առանձին պետություն և լուրաբանչուր մասմորթ բնակչի ներգերի 200-ամյա շահագործման դիմաց վճարել փոխհատուցում։ Թե՛ Մարտին Լյութեր Քինգը, թե՛ Մալքոլմ Նրսը զոհ գնացին ուսիստ ամսաթեմիչների գնդակներին։ Բացառված չե, որ Զ. Քենեթին սպասության մեջ ուսախտական ահաբեկչությունն իր մասն է ունեցել։ Սակայն հայտեց ինտեգրացված հասարակության տեսակետը։ 1954 թ. Գերագույն դատարանը հակասամանադրության ճանաչեց նեգր երեխաների անշատ ուսուցումը։ 1965 թ. նեգրերի ընտրական իրավունքների պաշտպանության մասին, իսկ 1968 թ. բնակարան վարձելիս խորականությունն արգելելու մասին օրենքների ընդունումը բարելավեց նեգրերի և պուերտոռիկացիների դրությունը։

Կարևոր էին նաև 60-ական թթ. իրականացված մյուս սոցիալական բարենորդումները՝ 1966 թ. վարձակալման արդարացի պայմանների մասին 1938 թ. օրենքի հերթական փոխհատությունը, ժամավճարի նը-վագագումը 1961 թ. 1,25 դոլարի, իսկ 1968 թ. փետրվարի 1-ից 1,6 դոլարի հասցնելը։ Ավելացվեցին ֆերմերներին տրվող նպատակները և վարկերը՝ գները ցածր մակարդակի վրա պահպանելու համար։ 1968 թ. Փերմերները որպես հարկ պետությանը մուծեցին 2,4 մյոդ դոլար, բայց

նրանից ստացան 3,5 մլրդ դրամ: Դա օգնեց կասեցնելու մանր ֆերմերների եկամուտների աճը կույտը:

Դեմոկրատների ներքին քաղաքականությունը՝ Լ. Զոնսոնի «մեծ հասարակության» և «աղքատության դեմ պարարի» ծրագրի շրջանակներում կիրառված միջոցառումները, անշուշտ, չկարողացան և չին կարող մեկնելիք լուծել ԱՄՆ-ի բոլոր պրոբլեմները. ուսապական խորականությունը խպառ չվերացվեց, խպառ չվերացան նաև գետուները, հետևախորշերը, 1966 թ. տվյալներով մոտ 30 մլն մարդ ամերիկյան չափանիշներով շարունակում էր ապրել աղքատության եզրագծից ցած կենամակարդակով: Սակայն հիշյալ սոցիալական միջոցառումների նշանակությունն անժամանի էր թե՛ ամերիկյան հասարակության հետագա դեմոկրատացման և թե՛ ամերիկյան ապրելակերպի հետագա կատարելագործման տեսանկյունից, եթե մանավանդ նկատի ունենամք, որ ամերիկյան անելը դժվար էր, քանզի ԱՄՆ-ի անմիջական մասնակցությունը պատերազմին Վիետնամում խլում էր տարեկան 25—30 մլրդ դրամ: Հենց 60-ական թթ. մկրին ԱՄՆ-ում ձևավորված «հեղուստրիալ հասարակության» տեսության հեղինակ Ու. Ռուտոնի ԱՄՆ-ը բնութագրեց իրու միակ հասարակությունն աշխարհում, որը թևակոյսել է «հնդուստրիալ հասարակության» բարձրագույն՝ «բարձր սպառման հասարակության» փուլը:

Զ. Քենեդիի և Լ. Ջոնսոնի արտաքին քաղաքանությունը կերպում էին նաև արտաքին քաղաքականությանը, որտեղ դեմոկրատները սկզբից ներկանգնեցին հանրապետականների «զանգվածային հատուցման» դրսության վերանայելու անհրաժեշտության առջև: Քենեդին խոստացավ սոցիալիստական երկրների նկատմամբ վարել «ճկուն վերաբերմունք» քաղաքականություն: Սակայն «սառը պատերազմի» ծայրատիճանի սրման երկու պահեր բաժին ընկան հենց Քենեդիի-Ջոնսոնի կառավարման ժամանակամիջոցին, պահեր, որոնք կարող էին մարդկությանը ներքաշել ջերմամիջուկային պատերազմի մեջ: Դրանք էին այսպես կոչված «Կարիբյան ճգնաժամ» և ԱՄՆ-ի անմիջական մասնակցությունը վիետնամական պատերազմին: Դեռևս 1961 թ. ապրիլին ԱՄՆ-ը կազմակերպեց կուրայական վտարանդիների գինված ներխուժումը Կուրա, որը, սակայն, ավարտվեց նրանց կատարյալ պարտությամբ Պայա-Խիրոնում: Վրդոված Քենեդին պաշտոնանկ արեց Կենարտոնական հետախուզական վարչության դեկանարությանը՝ Կուրայում իշխող վիճակի վերաբերյալ ապակողմ-

արուշող տվյալներ տալու համար: Սակայն 1962 թ. հոկտեմբերին Քենեդիի կառավարությունը շրջափակման ենթարկեց Կուրա, եթե հայտնի դարձավ, որ Խորհրդային Միությունը Կուրայի տարածքում տեղադրել է միջին հեռահարության միջուկային հրթիռներ և ուժակոծիչներ, որոնց գործողության շառավիղը թույլ էր տալիս հարվածներ հասցնել ԱՄՆ-ի տարածքին և Կենարտոնական Ամերիկային՝ մինչև Պերովի մայրաքաղաք կիմա: Քենեդին ամերիկյան ուսպանավերին հրաման տվեց նաև բաց ծովում որսալ դեպի Կուրա գնացող խորհրդային նավերը և սուուել դրանց բեռները, իսկ չենթարկվողներին՝ շրասուզ անել:

Այսպես ծագեց «Կարիբյան ճգնաժամը» խորչչովան արտաքին քաղաքականության այդ կատարյալ արկածախնդրությունը, որը սպառնում էր վերանել հրթիռամիջուկային արհավիրքի Արևմուտքի և Արևելքի միջև: Հետաքատերազմյան ժամանակաշրջանում համաշխարհային պատերազմի վտանգը երբեք այդքան իրական չէր եղել: Սակայն կողմերը ամենամժաման պահին, գիտակցելով իրենց պատասխանատվությունը մարդկության ճակատագրի հանդեպ, կարողացան ցուցաբերել զարգածություն և ձկունություն: Ճգնաժամը փոխգիշմամբ լուծելու համար Հավանա և այնտեղից Վաշինգտոն մեկնեց Ս. Ի. Միկոյանը, խորհրդային այն գործիչը, որի ճայնին կարող էին հավասարապես անսալ թե՛ Կուրայում, և թե՛ ԱՄՆ-ում: «Կարիբյան ճգնաժամն» ավարտվեց նրանով, որ ԽՍՀՄ-ը Կուրայից հեռացեց իր հրթիռներն ու ուժակոծիչները, իսկ փոխարենն ԱՄՆ-ը խոստացավ չանհանգատացնել Կուրային:

«Կարիբյան ճգնաժամը» հարթելոց հետո նշմարվեց որոշ բարեկալում Արևմուտքի և Արևելքի հարաբերություններում: 1963 թ. օգոստոսի 5-ին ԽՍՀՄ-ը, ԱՄՆ-ը և Անգլիան Սովորված պահմանագիր ստորագրեցին միջուկային փորձարկումները մթնողորտում, տիեզերական տարածության մեջ և ջրի տակ արգելելու վերաբերյալ:

Քենեդիի օրոք ԱՄՆ-ը ներքաշվեց վիետնամական պատերազմի մեջ: Բայց նրան վիճակիված չէր տեսնել այդ գաղութային պատերազմի հատաֆեար: 1963 թ. նոյեմբերի 2-ին Տեխաս նահանգի գլխավոր քաղաքում Դ. Քենեդիին դավադրաբար սպանեցին: Բայց ամերիկյան արդարադատությունը, ընդուու մինչև Գերագույն դատարանը (հինգ տարի անց՝ 1968 թ. նախագահական ընտրարշավի ժամանակ), նոյնպես դավադրաբար սպանեցից Զ. Քենեդիի եղբայրը՝ Ռ. Քենեդին), չբացահայտեցին ԱՄՆ-ի 40-րդ նախագահի՝ երկրի առաջին քաղաքացու եղենական մահվան դականական պարագաները և առ այսօր «դարի հանցագործությունը» հորչորչված այդ չարագործության շուրջը շարու-

նակում են հյուսել նորանոր վարկածներ: Ամերիկան լրագրողները մինչև իսկ առաջ քաշեցին միտմիկական բացատրություն, վերհիշելով, որ «Օ»-ով վերջացող տարեթվերին ընտրված նախագահները (Քենեթին ընտրվել էր 1960 թ. նոյեմբերին և սկսել պաշտոնավարել 1961 թ. հունվարի 20-ից) չեն ապրու մինչև իրենց պաշտոնավարության ժամկետի վերջը, ինչպես, օրինակ, դարձալ ահարեկչության զոհ դարձած Սրբահամ Լինքոլնը և մի քանի այլ նախագահներ:

Զ. Քենեթին հաջորդի՝ Լ. Չոնսոնի օրոր ԱՄՆ-ը այն աստիճան խոր միտրներց վիետնամական պատերազմի մեջ, որ ամերիկացիները այն անվանեցին ամենաերկարատն և «կեղտոտ» պատերազմը երկրի պատմության մեջ: Չոր չէ, որ վիետնամական պատերազմին նվիրված հուշարձանը Վաշինգտոնում, որը կառուցվել է այդ պատերազմի վետերանների համամակած միջոցներով, հիշեցնում է արցունքի սրա: Այն ախտանիքի ու զջումի հուշարձան է: Աև, հղկված գրանիտից շարված այդ սոր անկյուններով ողորապտույտ պատը, որի վրա փորագրված են Վիետնամում զոհված կամ անհետ կորած 60 հազար ամերիկացիների անունները և երկրի տարբեր մասերից գալիս են ողբարու հարազատների կորուստը, ամեննեին չի ներդաշնակվում մայրաքաղաքի մյուս հուշարձանների հետ, որոնք ամերիկան մասշտաբայնության ոգով և առանց չափի զգացումի շատագովուն են ԱՄՆ-ի մեծությունը և նրա պետականության «անհասանելի կատարելությունը»:

Կառավարությունը հուշարձանի ողբերգական տպավորությունը թուլացնելու միտումով հետագայում նրա առջև կանգնեցրեց խրոխտ կեցվածքով երեք բրոնզե ֆիգուրներ (մեկը նեղոյի), որոնք խորհրդանշում են երեք զրուտեսակները՝ օրալին, ծովալին և ցամաքալին ուժերը: Պատերազմը ընդլայնելու և խորացնելու մեջնակետ ծառայեց արսակ կոչված «Տոնկինյան միջադեպ», երբ պատրիակ ընդունելով ամերիկան ուղմանավի գնդակոծումը Հյուսիսային Վիետնամի կողմից Տոնկինի ծովախորշում, կոնքուար 1964 թ. օգոստոսի 7-ին ընտունեց բանաձև, որը նախագահին լիազորում էր ԱՄՆ-ի անվտանգությունն ապահովելու նկատառումով ամերիկան զինված ուժերը օգտագործել Հարավ-Արևելյան Ասիայում: Դա թույլ տվեց Լ. Չոնսոնին սեփական նախաձեռնությամբ ԱՄՆ-ը ներքաշել պատերազմի մեջ՝ թեկուզ չըհայտարարված, քանզի պատերազմ հարտարելու իրավունքը, ըստ սահմանադրության, պատկանում է կոնգրեսին: Ամերիկան ողուժը և ուղմանավերը 1965 թ. սկզբին սկսեցին Վ.Դ.-ի տարածքին հարվածել հասցնել, իսկ նոյն թվականի հունիսին Լ. Չոնսոնը Հարավային

Վիետնամ ողարկեց ամերիկան խոշոր ուժեր: Երեք տարի անց այն տեղ կույող ամերիկան գորքերի թվաքանակը հասավ 550 հազար մարդու:

Պատերազմը Վիետնամում առաջ բերեց բողոքի բուն ալիք: Հակապատերազմական շարժումը մեծ ծավալ ընդունեց, հատկապես համարատանական ուսանողության և դասախոսների շրջանում: 1964 թ. պատերազմի ընդլայնման մկրթին հակապատերազմական տրամադրությունները դեռևս թույլ էին և չին կարող ներազդել ընտրությունների վրա: Բացի դրանից, Լ. Չոնսոնի ախոյանը ծայրահետ աշակերմյան գործիչ, հանրապետական Բ. Գորդոնութերն էր, որն, այնուամենամեծվ, հավաքեց 27 միլիոն քվե: Բաց սա արդեն լորջ նախագործացում էր: Եվ 1968 թ. ընտրություններում Լ. Չոնսոնը հրաժարվեց ներկայացնել իր թեկնածությունը:

Հանրապետականների հաղթանակը 1968 թ. ընտրություններում և Ռ. Նիքոնի կառավարությունը (1969—1974 թ.)

Ռ. Նիքոնի կառավարության ստիլը և անհատական բարձրագույնը

1968 թ. ընտրություններից հետո դեմոկրատիներին հաջողվեց պահպանել մեծամասնությունը ներկայացուցչների պատում և սենատում, բայց նախագահի պաշտոնն անցան նիքոնի կառավարության ներկանական պատումը:

Օգոստոսի 1-ին Նիքոնը մասնավոր նախաձեռնության պաշտպան և ստիլական քաղաքականության հարցերում՝ պահպանական: Այլ կերպ ասած, նա հավատարիմ էր հանրապետական կուսակցության ավանդությներին ու մկրունքներին: Սակայն գնածամի վտանգը ստիլից նրան ակտիվորեն միջամտել տնտեսության գործերին: Սղաճը կանխարգելու համար Նիքոնի կառավարությունը առաջին 2,5 տարվա ընթացքում գիտակցարար արգելակում էր տնտեսական աճը՝ նպատելով գործազրկության ավելացմանը:

1971 թ. օգոստոսին Ռ. Նիքոնը սկսեց իրականացնել իր «Նոր տնտեսական քաղաքականությունը», որի առաջին փուլը նախանական էր 90 օրվա համար: Կիրառվեցին մի շաբաթ արտակարգ միջոցառումներ:

90 օրվա ընթացքում սառեցվեցին աշխատավարձը և գները: Արդեկվեց 353 գործադրություն: Հարկային գեղշ արվեց ձեռնարկատեղերին՝ կապիտալ ներդրումները խրախուսելու հայտարկություն:

1971 թ. նոյեմբերի կեսերին մկավեց «նոր տնտեսական քաղաքականության» երկրորդ փուլը: Կառավարությունը աշխատավարձի սառեցումից անցավ դրա կարգավիրտանը: Ներքին քաղաքականության մեջ Նիքոսիա ավելի անհանդուրժական դիրք գրավեց հակապատերազմական շարժման և նեգրերի քաղաքացիական իրավունքների համար պայքարի մկանամբ: Սակայն նաև ստիպված եղավ մինչև իսկ բրուգեում ավելացնել սոցիալական ծախսերը: Ծգնաժամի պայմաններում դա անհրաժեշտ էր գնողունակությունը բարձրացնելու և ապրանքաշանառությունը աշխատացնելու համար:

Ռ. Նիքոսիա արտաքին քաղաքականությունը:
«Սարք պատերազմը»
մեղմելու միտումը

1969 թ. աշնանը ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը քանակություններ ակտեցին ատրատեգիական գենքի արտադրությունը սահմանափակելու միջոցառումների շուրջը: 1970 թ. փետրվարի 18-ին կոնգրեսին հողած ուղերձում Ռ. Նիքոսիա առաջարկեց «ուշադիր վերանայել որոշ հիմն դիրքորոշումներ» և ցուցաբերել «նոր մոտեցում»— Արևելք-Արևմուտք հայաբերություններում «առմավառումից» անցնել «երկխոսության»: Նկատելի դարձավ «սարք պատերազմ» մեղմելու միտումը: Դրա համար կային տարբեր դրդապատճեններ. սպառազինությունների անզուսպ մրցավացրի բեռք անտանելի էր դարձել մինչև իսկ աշխարհի ամենահարուստ և ամենազարգացած տերության համար, որպիսի ԱՄՆ-ն էր: Նրա բյուջեն չափից ավելի պակասության էր, պետական պարտքի գումարը հասել էր վիթխարի չափերի, իսկաւ նվազել էր պետական ուկու պաշարը՝ զգալի չափով ստրատեգիական հումք ձեռք բերելու վրա ծախսելու հետևանքով: 1971 թ. սարտաքին առևտությունների հաշվեկշիռը առաջին անգամ 20-րդ դարում դարձավ պակասության: Երկրի ֆինանսական վիճակը թիեզագեներու նկատառումը Նիքոսիա վարչակազմը 10 տոկոսով բարձրացրեց ներմուծման մաքսը, 10 տոկոսով կրճատեց օտար երկրներին ցուց տրվող օգնությունը, 5 տոկոսով կրճատեց պետական ծառայողների թիվը: Նա դադարեցրեց դոլարի փոխանակումը ուկում՝ խախտելով դեռևս 1944 թ. Բրետոն-Վուդսում կապիտալիատական պետությունների կնքած համաձայնությունը, որով բոլոր տարադրամները խզում էին իրենց անմիջական կապը ուկու հետ՝ ճանաչելով այն իրեն դոլարի մանաշնորհը: Այսուհետ, այդ տարադրամները պետք է կայլ ուկու

նետ իրականացնեն միայն դոլարի միջոցով և այդ ձևով որոշեին իրենց ուկու պարիստությունը, որը ճշանակում է, թե դոլարի հետ տեղի ունեցած ամեն մի փոփոխություն ազդելու էր բոլոր մնացած տարադրամների վրա: Դոլարը, այսպիսով, ճանաչվում էր իրեն գլխավոր միջազգային փոխանակելի ոեզերվային տարադրամ: Փոխարենը ԱՄՆ-ի կառավարությունը պարտավորվում էր պայմանագրին մասնակցող երկրների կենտրոնական բանկերում կուտակված դոլարի որոշակի քանակությունն նրանց պահանջով փոխանակելու ուկում՝ մեկ ունիշիա (31,1 դրամ) զուտ ուկի 35 դոլարի դիմաց հարաբերությամբ:

1971 թ. ԱՄՆ-ում մնացել էր ընդհանունը 10 մլրդ դոլարից մի քիչ ավելի պետական ուկի, մինչդեռ ԱՄՆ-ից դուրս շրջանառության մեջ գտնվող դոլարի քանակությունը 1973 թ. սկզբին 80 մլրդ դոլար էր, որից 19 մլրդ ծապնիայում: Միաժամանակ, 10 մլրդ դոլարի ուկու պաշարը չէր թույլատրվում ծախսել՝ այն պետք էր ներքին դրամաշրջանառության մեջ գտնվող դոլարի քանակությունը ուկու պահանջերու համար: Ուստի, Նիքոսիա կառավարությունը այլ ելք չուներ, թեև նրա որոշումը խիստ վրդովեցուիցի էր պարտևյունների համար և հարվածում էր դոլարի մեղմանակության: Եթե Բրետոն-Վուդսում ԱՄՆ-ի ֆինանսատնտեսական գերիզորացման ապացույցն էր, ապա Նիքոսիա կառավարության որոշումը նրա դիրքերի խարիսխան վկայությունը: Ավելին, հակառակ դոլարի արժեքը արհեստականորեն պահպանելու իր փորձերին, ԱՄՆ-ի կառավարությունը ստիպված եղավ 1971 թ. վերջին, առաջին անգամ 1934 թ. ի վեր, արժեգրկել դոլարը՝ նրա ուկու պարունակությունը նվազեցնելով 8,6 տոկոսով, իսկ 1973 թ. փետրվարին՝ 10 տոկոսով:

Արտաքին քաղաքական կուրսը բարեփոխելու համար կային նաև այլ պատճառներ. ԳՖՀ-ն և Ֆրանսիան հանդես էին գալիս միջազգային լարվածության թույլացման օգտին, զարգանում և խորանում էր զաղութատիրության փողոցման գործընթացը՝ նոր խնդիրներ դնելով ամերիկյան արտաքին քաղաքականության առջև, արարական երկրներու ուժեղանում էին հակամերիկյան տրամադրությունները, որովհետև ԱՄՆ-ը սատար էր կանգնում Խարայելի քաղաքականությանը: Վիետնամում Նիքոսիա կրճատեց ամերիկյան զորքերի թիվը մինչև 100 հազարի, բայց շեշտը դրեց օդային ուժքակոծությունների վրա: Դա պատերազմը «վիետնամականացնելու» նրա թեզի իրականացումն էր, որի մասին նաև հայտարարեց Գուամ կղզում (թող վիետնամցիները կովեն

վիետնամցիների դեմ): ԱՄՆ-ը Վիետնամում գործադրում էր զենքի բոլոր ժամանակակից տեսակները, այդ թվում նապալմ և թունալոր գազեր, բացի միջուկային զենքից:

1970 թ. ամերիկյան զորքերը ներխուժեցին Կամպուչիա: Սակայն պատերազմը Հնդկաշխնում հաղթանակով պարտելու հեռանկարները չեն երևում: Հնդկականակը, 1972 թ. գարնան-ամռան ընթացքում հարավ-վիետնամական ազատագրական ուժերը մի քանի նշանակալից հարգածներ հասցրին Սայգոնի վարչակարգի զորքերին և ամերիկյան ստորաբաժնումներին: 1972 թ. վետրվարին Ռ. Նիքոլսն այցելեց Չինաստան և երկու երկրների միջև սկավերի շփոմներ, երկարատև ընդմիջումներու, թեև այն ժամանակ գործը շհասավ դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը: Ծառ ավելի շոշափելի արդյունքներ տվեց Ռ. Նիքոլսի այցը ԽՍՀՄ: Ստորագրվեցին կարեւոր համաձայնագրեր, որոնց մի մասը վերաբերում էր խորհրդա-ամերիկան հարաբերություններին, ինչպես ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի փոխհարաբերությունների հիմունքները, հականիշտուային պաշտպանության համակարգի սահմանափակման պարմանագիրը, ստորագրական հարձակողական զենքի ասպարեզում մի քանի միջոցառումների վերաբերյալ ժամանակավոր համաձայնագրից և այլ փաստաթղթեր: Համաձայնագրերի մոտս խումբը վերաբերում էր միջազգային պուրելներին, ինչպես եվրոպական անվտանգությունը, Մերձավոր Արևելքը, Հնդկաշնը, գինարթավումը, ՄԱԿ-ի ամրավորումը: Ավելի ուշ դրանք լրացվեցին նոր համաձայնություններով երկու երկրների քաղաքական հարաբերությունների կարգավորման և առևտու-տնտեսական համագործակցության վերաբերյալ: Լ. Ի. Բրեժենի այցը ԱՄՆ, որը տևեց 1973 թ. հունիսի 18-ից 25-ը, ավարտվեց նոր համաձայնագրերի ստորագրմանք, որոնք վերաբերում էին խորհրդային-ամերիկյան համագործակցությանը գույղատնտեսության, համաշխարհային օվկիանոսը հետազոտելու, տրանսպորտի զարգացման, առողմային էներգիան խաղաղ նպատակներով օգտագործելու բնագավառներում: Ստորագրվեցին նաև փաստաթղթեր ստրատեգիական հարձակողական սպառազինությունների հետագա սահմանափակման բանակցությունների հիմնական սկզբունքների, միջուկային պատերազմը կանխելու վերաբերյալ և եզրափակիչ կոմբինիկե:

Ռ. Նիքոլսի նոր քաղաքականությունը նրան երկրորդ անգամ հայրանակ բերեց 1972 թ. նոյեմբերի նախագահական ընտրություններում: Տեղի ունեցավ շրջադարձ նաև ԱՄՆ-ի դիրքորոշման մեջ Հնդկա-

շինի հարցում: 1973 թ. հունվարի 27-ին Փարիզում ԱՄՆ-ը ստորագրեց «Վիետնամում պատերազմը դադարեցնելու և խաղաղությունը վերահսկութելու մասին համաձայնագիրը», իսկ մեկ ամիս անց՝ Վիետնամի վերաբերյալ միջազգային կոնֆերանսի «Սկզբ»: Համաձայնագիրը ստորագրելուց հետո, երկու ամսվա ընթացքում ԱՄՆ-ը հեռացրեց իր զորքերը Հարավային Վիետնամից՝ կատարելով Վիետնամի անկախությունը, ինչնորույնությունը, միասնությունը և տարածքային ամբողջականությունը հարգելու իր խոստումը:

1974 թ. հունիսի 27-ից հուլիսի 3-ը Ռ. Նիքոլսնը կրկին այցելեց Խորհրդային Միություն, որի ընթացքում ստորագրվեցին համաձայնագրեր էներգետիկայի, բնակարանային և այլ շինարարության, արեստական սրտի ստեղծման, տնտեսության, արդյունաբերության և տեխնիկայի բնագավառներում համագործակցությունը հեշտացնելու վերաբերյալ: Ստորագրվեցին նաև հակարականիկ հրթիռային համակարգերը սահմանափակների վերաբերյալ ամերիկա-խորհրդային պարմանագրին կից արձանագրությունը, ստորգետնելային միջուկային փորձարկումները սահմանափակող պարմանագիրը ու արձանագրությունը, և համատեղ հարաբերությունը:

Ռ. Նիքոլսի վարչակազմի արտաքին քաղաքականության ձևավորման և իրականացման գործում խոստ ընդգծված դեր ուներ Հենրի Քիսինշերը, որը համատեղում էր պետական քարտուղարի և ազգային անվտանգության գծով նախագահի պահանջմանը:

Ամերիկա-խորհրդային ոչ միայն քաղաքական և սպասազինությունների սահմանափակմանը վերաբերող պարմանագրերն ու համաձայնագրերը, այլև առևտորի, տնտեսական, գիտության ու տեխնիկայի, շրջակա միջազգային պահպանության բնագավառներում համագործակցելու մասին փաստաթղթերը կարող էին մեծապես նպաստել երկու երկրների հարաբերությունների նորմալացմանը և միջազգային մթնությունի ընտանագիր քաղաքամանը: Դրանք երկու երկրների միջև ստեղծում էին ընդհանուր շահագրգուկածություն, որը չէր կարող դրականապես շանդրադառնալ նրանց քաղաքական հարաբերությունների զարգացման վրա: Բայց նաև է անել, որ էներգետիկ արդյունաբերությունը ԱՄՆ-ում, որի նավթի և գազի պաշարները սպառվելու վտանգի տակ էին, խարսխվելու էր զգայի չափով ԽՍՀՄ հումքային քազայի վրա: Սակայն դեպքերի հետագա զարգացումը հիմնականում արժեգույն այդ փաստաթղթերը և դրանք մեծ մասամբ կորցրեցին իրենց ոժը՝ շիացնելով իրականություն դառնալ:

1974 թ. Նիքոնը ինչիշմենթի ենթարկվեց, այսինքն՝ պաշտոնակարության ժամկետը լրանալուց առաջ հեռացվեց Սպիտակ տեղ, այսպես կոչված «Ուղղութեայի» խայտառակրության պատճառով. պարզվեց, որ Նիքոնի գիտությամբ և համաձայնությամբ, եթա մարդիկ 1972 թ. նախագահական ընտրաշաբի ժամանակ ծածուկ ներթափանցել էին դեմոկրատների շտաբ-կացարանը, որը գտնվում էր Վաշինգտոնի Ուղղութեայի հյուրանոցում և այնտեղ գաղտնի ունկնդրման սարք տեղադրել:

Նիքոնից հետո էլ ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը առորագրեցին մի քանի կարևոր փաստաթղթեր: ԱՄՆ-ը մասնակցեց եվրոպական անվտանգության և համագործակցության համակարգի ստեղծմանը: Սակայն 1977 թ. իշխանության եկած դեմոկրատների օրոք ամերիկա-խորհրդային հարաբերությունները սկսվեցին արագորեն վատթարանալ: Սպառազինությունների մրցավազքը նոր թափ վերցրեց: Նախագահ Ջերալդ (Զիմնի) Քարտերը հասավ այն քանին, որ կոնգրեսը թույլ տվեց վերականգնության գենք և զինամթերք մատակարարելը, որ արգելել էր 1974 թ. թուրքական բանակների Կիարոս Անդրյումելու կապակցությամբ: Քարտերը կրկնում էր այն պնդումը, թե Թուրքիային ամերիկան գենք ստանալը արգելելը թուլացրել է ՆԱՏՕ-ի հարավ-արևելյան թևը և դարձրել անկարող դիմագրավելու խորհրդային հնարավոր ագրեսիստին: ԱՄՆ-ի միջամտությամբ ՆԱՏՕ-ի երկրները 1978 թ. որոշեցին ավելացնել իրենց ռազմական ծախսները: 1979 թ. Արևմտյան Եվրոպայում տեղակալվեց միջին հեռահարության ամերիկան նոր հրթիռամիջուկային գենք: Այնուամենայնիվ, Զ. Քարտերը 1979 թ. հունիսի 18-ին Վիեննայում Լ. Բրեժենևի հետ ստորագրեց սահմանափակման երկրորդ պայմանագիրը, որը կոչված էր նշանակալից քայլ լինել միջուկային զինաթափման ճանապարհին:

Սակայն այս պայմանագիրը նոյնպես շնանգեցրեց ամերիկա-խորհրդային հարաբերությունների վճռական նորմալացման, որովհետո 1979 թ. դեկտեմբերի վերջին խորհրդային զինված ուժերը ներխուժեցին Աֆղանստան սիժք դեկտով երկարատև ու արյունահեղ երրայրապան պատերազմի և այդ հարաբերություններում վրա հասավ նոր մոռայ ժամանակաշրջան:

Քարտերի կառավարման օրոք առաջ եկավ առաջին լորջ տեղաշարժը Մերձավորարելլան խնդրում: ԱՄՆ-ի միջնորդությամբ Խորայլը և Եգիպտոսը, որը կտրուկ շրջադարձ էր կատարել ԽՍՀՄ-ից դեպի

ԱՄՆ-ը, ստորագրեցին հայտնի Քեմփ-Դեվիթի համաձայնագրերը (1979 թ. մարտ), որով դրվեց խրայելա-արաբական երկարատև և բարդ խնդիրը ամերիկյան մոտեցմամբ կարգավորելու սկիզբը: Քեմփ-Դեվիթը ապացուցեց, որ ԽՍՀՄ-ը անխունեմորեն խզելով հարաբերություններն Խորայելի հետ, նախաձեռնությունը Մերձավոր Արևելքում զիշել էր ԱՄՆ-ին, որը պահպանում էր համակողմանի կապերը թե՛ Խորայելի և թե՛ արաբների հետ, ուստի և գործնական ակտիվությունը և խնդիրը լուծելու բանալին: ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության ղեկավարները գործում էին լիովին գիտակցելով այս իրողությունը և այսօր էլ էական դեր ունեն խրայելա-արաբական հակամարտության ամենաբարդ պրոբլեմը՝ Պաղետատինի արաբների հարցը կարգավորելու գործում: Միևնույն ժամանակ Քարտերը լիակատար ձախողում կրեց Իրանի Խորամական հեղափոխության դեմ պայքարում, երբ տապալվեց ամերիկյան պատանդներին ուժով Իրանից առևանգելու արկածախընդրական փորձը:

Ամերիկայի Միացյալ Նահանգները

1980—90-ական թթ.

1980 թ. նախագահական ընտրություններում հաղթանակ տարավ հանրապետական կուսակցության թեկնածուն՝ Ռ. Ռեյգանը, նախկին հոլիվուդյան կինոդերասանը և կինոաշխատողների արհմիության ղեկավարը, որը երկու ժամանակամիջոց եղավ էր ԱՄՆ-ի խոշորագույն նահանգի՝ Կալիֆորնիայի նահանգագլուխությունը՝ 1981 թ. հունվարից մինչև 1989 թ. հունվարը: Սոցիալ-տնտեսական ասպարեզում Ռեյգանի քաղաքականությունը հայտնի դարձավ «ուշգանումիկա» անունով: Դրա առավել կարեւոր առանձնահատկություններն էին՝ պետության դերի առավելագույն սահմանափակում տնտեսության կարգավորման խնդրում և ազգային ձեռնարկատիրության լիակատար ազատություն, ձեռնարկատիրական շահույթից գանձվող հարկերի առավելագույն կրծատում և սոցիալական ապահովության խնդրում մասնավոր բարեգործության ապահովությունը: Ռեյգանը դեմ էր կարգավորվող կապիտալիզմին և այսպես կոչված «դասական», ոչնչով շահմանափակվող կապիտալիզմի երդիցաւ:

Կողմնակիցն էր, թեև չեր խորշում պետական միջամտովյունից, ասենք, հաշվարկային դրույքը (բանի կողմից տրվող վարկերի համար պահանջվող տոկոսը) բարձրացնելու կամ իշխենելու միջոցով կարգավորել դրամաշրջանառությունը և սղաճը: Հայտնի է նաև, որ այդ ձևով, ինչպես հանձնարարել է անգիտած հայտնի տնտեսագետն Քենար, կարգավորվում է նաև գործարար ակտիվությունը: «Ռեզանոնի կան» գործողության մեջ դրվեց հենց սկզբից և լորջ արդյունքների հասավ Ռեզանի կառավարման առաջին ժամանակաշրջանի վերջում՝ 1983—1984 թթ.: Այդ շրջանում կրթատվեց նաև պետական ապարատը, տասնյակ սոցիալական ծրագրեր վերացվեցին: Պետական մեխանիզմը օգտագործվեց ազգային եկամտի մի գգալի մասը պետական բյուջեի միջոցով հօգուտ խոշոր կապիտալի և ուղարկություններական համալիրի վերաբաշխման:

Տնտեսության ամենատարբեր ճյուղերում լայնորեն ներդրվում էին գիտատեխնիկական նեղափոխության նորագույն նվաճումները: Հարկերի կրճատումը կորպորացիաներին և ֆերմերներին հնարավորություն տվեց այդ ճանապարհով նորոգել հիմնական կապիտալը: Կիրառվեցին նաև նեղապահութանական տեսությունների մի շարք հանձնարարականներ, օրինակ՝ գրադասության աճը սպասարկման ոլորտի ընդլայնման հաշվին սպասովելու գաղափարը: Գործազրկությունը նվազեց, ընկապ արժեքորման մակարդակը: Հետևաբար, աճեց զնարունակ պահանջարկը, որը նպաստեց գործարար ակտիվության վերելիքն: Դրան համընթաց ավելացավ ներքին և արտաքին պարտը: Հարկերի կրճատումը չեր նպաստում բյուջեի ծախսերի ու եկամուտների կարգավորմանը, և ոչ սոցիալական ծրագրերի վերացումը, ոչ էլ պետական ապարատի կրճատումը չին կարող փակել բյուջեի պակասորդը (դեֆիցիտը) և փոխհատոցել պետության վիթխարի ծախսերը սպառագինության վրա, որոնք կազմեցին գրեթե 2,5 տրիլիոն դրամ: Միևնույն ժամանակ ամերիկան տնտեսությունը մեծ քանակական և որակական աճ ապրեց՝ հաստատելով գերտերության համբավը և ապահովելով ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության գորակ հավակնությունների տնտեսական հիմքերը:

Իր արտաքին քաղաքականության մեջ Ռեզանի վարչակազմը կոչտ դիրք էր գրավում Խորհրդային Միության և մյուս սոցիալիստական երկրների նկատմամբ: Նա երդվագ հակառամության էր և Խորհրդային Միությանը անվանում էր «չարիքի կայսրություն», «մարդ-

կության պատմության տխոր և պատահական գրությը»: «Խորհրդային Միությունում չեն հավասում գրան, ինչին հավասում են Միացյալ Նահանգներում,— պնդում էր Ռեզանը:— Նրանք չեն հավասում հանդերձալ կյանքին, Աստծուն, կրոն չունեն, այդ պատճառով ընդունակ են ամեն ինչի»: Հանդեմ գալով բրիտանական պատշաճենուում, ևս «խաչակրաց արշավանքի» կոչ արեց ընդդեմ կոմունիզմի: Ռեզանը պնդում էր, թե ինքը ԱՄՆ-ը դորս է բերել թմրության վիճակից և «վերականգնել է Միացյալ Նահանգների նկատմամբ հարգանքն աշխարհում», որ իր նախորդները քամարել են ԱՄՆ-ի պաշտպանության շահերը «մինչև աստամերը զինված Խորհրդային Միության դեմ հանդիման»: Եվ Ռեզանը ձեռնամուխ եղավ ԱՄՆ-ի վերազինմանը միջուկային և սովորական գենքի նոր կատարելագործված համակարգերով: Հինգ տարում՝ 1984—1988 թթ. ուազմական նախատակներով ևս ծախսեց շուրջ 2 տրիլիոն դոլար, որի այդուհի բաժինը՝ միջմարդցամաքային ՄՀ և Միջիամեռն նորինմերի, Օհայո տիպի աստոնային սուզանավերի, ԲՖԲ ոմբակոծիչների և թևավոր նորինմերի արտադրության ու տեղաբաշխման վրա: Ռեզանը ԱՄՆ-ի հզորության հիմքը համարում էր սորտեգիական եռյակը՝ հրթիռամիջուկային զենքը, առատեգիական ոմբակոծիչ օդուժը և սուզանավային նավատորմը: Սպառազինությունների մրցավագրին Ռեզանը հաղորդեց նոր որակ: Նա զինված ներխուժում իրականացրեց Գրենադայում, օգնում էր աղքանական մոշանեներին, ուժողացրեց ԱՄՆ-ի միջամտությունը կենտրոնական Ամերիկայում (Նիկարագուա, Սալվադոր, Գվատեմալա, Պանամա), ընդհուպ մինչև Նիկարագուայի ջրերի ականապատումը և այլն: Աֆրիկայի նարագուում Անգոլայում ու Սոուամբիկում զորավիճ էր ընդիմադիր հոսանքներին և նրանց զինված ուժերին: Բայց ԱՄՆ-ը մասնակցում էր նաև Հարավ-Աֆրիկյան Հանրապետության ուսիստական վարչակառգի դեմ կիրառվող տնտեսական սպառամիջոցներին: Միաժամանակ, ԱՄՆ-ը օգնում էր Եթովպիայի սովորակին, չնայած իր անհամաձայնությանը այնտեղ հաստատված վարչակարգին: ԱՄՆ-ը իր օգնությունը սովոր տառապող միջունավոր աֆրիկացիներին պայմանավորում էր որոշակի պահանջներով՝ թեղադրելով հրաժարվել տնտեսության պետական հատվածից, լիովին ապավինել ազատ շուկային, իզել սոցիալիստական երկրների հետ կապերը և այլն:

Ռեզանը անցած թագավառուում, ի տարբերություն ԽՍՀՄ-ի, որը գրեթե մշտապես տիեզերագնացներ էր պահում երկրամերդ ուղ-

ծրում, ամերիկացիները գեղադասում էին թոխքները բազմակի օգտագործման տիեզերանավերով (Ծառլ):

Սպիտակ տաճը գտնվելու առաջին իսկ ժամանակամիջոցում Ռեյգանը վաստակեց ԱՄՆ-ի պատմության մեջ առավել հաջողակ նախագահներից մեկի համբավը: Նրա կանքի դեմ կատարված անհաջող մահափորձը մինչև իսկ հերոսացրեց նրան:

Իր կառավարման երկրորդ շրջանում Ռեյգանի վարչակազմը սկսեց վարել ավելի մկոն քաղաքականություն: Ամերիկան հասարակությունը զգալիորեն շեղվել էր դեպի կենտրոն, վախճառում էր միջուկային պատերազմից, տրամադրված էր Արևելք-Արևմուտք հարաբերությունների բարելավման օգտին: Արևածագ կոնսուլտմերը, մասնավորապես Ռեյգան-Գորբաչով հանդիպությունը ժնևում և Ռեյգանիկում, Վաշինգտոնում և Մոսկվայում, հուսադրող արդյունքներ տվեցին: Երկու տերությունները հասան միշտին հեռահարության միջուկային հրթիռները ոչնչացնելու որոշման, որը կիրառվեց գործնականում: ԽՍՀՄ-ը փաստորեն ընդունեց Ռեյգանի առաջարկը («գրոյական տարբերակ»):

Փ. Ռեյգանի կառավարությը գերծ չեղավ աղմկոտ խալսառակության դրվագներից, ինչպես «իրանգելյթ», երբ պարզվեց, որ ԱՄՆ-ը զարտողի ճանապարհներով զենք էր վաճառել Իրանի նախական Հանրապետությանը և վաստակած փողը օգտագործել Կենտրոնական Ամերիկայի ազատագրական ուժերի դեմ: Արևածագ ամբողջ հետպատերազմյան շրջանում ամերիկան վարչակազմների ու նրանց դեկավարների գործունության գնահատականի գլխավոր չափանիշը եղել և մնում էր ամերիկա-խորհրդային հարաբերություններում ձեռք բերված արդյունքները: Այս իմաստով Ռեյգանի ձեռքբերությունները պարզապես ցնցող էին: Նրա օրոք, ոչ առանց Մ. Գորբաչովի եռանդուն ջանքերի, դրվեցին Խորհրդային Միության փլուզման հիմքերը և ահոյան գերտերությունը շուտով տանու տվեց «սառը պատերազմը»՝ ԱՄՆ-ին զիշելով հրամանատարական բարձրությունները համաշխարհային քաղաքականության մեջ: Արևմուտքը առանց կրակոցի հասակ նրան, ինչին համոզված չէր, թէ կիսանի իր ողջ տնտեսական ու ուսագմական հզորությամբ հանդերձ:

Ռեյգանի օրոք ձեռք բերված մակարդակը և գոյություն ունեցող այրոբլեմները փոխանցվեցին նրա հաջորդին՝ Զ. Բուչին, որը Ռեյգանի վարչակազմում վարում էր փոխնախագահի պաշտոնը:

**Զ. Բուչի և Քլինթոնի կառավարությը:
ԱՄՆ-ի տնտեսական և քաղաքական զարգացումը
20-րդ դ. վերջին տասնամյակին**

Զ. Բուչը իներցիայով շահեց 1988 թ. Ամիսագահական ընտրությունները և սկսեց պաշտոնավայրել 1989 թ. Բունակարից: Նա փաստություն քաղեց Ռեյգանի կառավարման պատությունը, որի մասնակիցն էր եղել: Սակայն առաջին պես նախագահի կուսակցությունը՝ հանրապետականները չունեին մեծամասնություն կոնցրենտ նայելու պալատներում: Արդեռ Ռեյգանի ժամանակ հաջողվում էր հաղթահարել այդ նոյնի վրա ծննդող դժվարությունները: Այսպես կոչված «քածանված կառավարում» Զ. Բուչը իրականացնում էր փոխաշխումների դիմերով: Նա հաճախ էր հանդիպում ընդդիմության ղեկավարների նետ կույսների և ուսումնականների մեծամասնության վրա ճնշում գործադրելու նպատակով և գերադասում էր խուսափել բախտություններից՝ դիմելով քանակցելու տակտիկային: Նա հենվում էր երկուսակցական կոնսենսուսի (համաձայնության) վրա, բայց և պաշտպանում էր իր սահմանադրական լիազորությունները:

Ռեյգանի վարչակազմում հանդես բերած արտակարգ օրինականությունը, համեմատաբար պասիվ կեցվածքը և այս տակտիկան նրա մասին ստեղծել են թույ, զգուշակոր գործիչ համբավ: Ներքին քաղաքականության մեջ Բուչը մեծ ուշաբրություն էր նվիրում թմրամոլության դեմ պաշտամբին, կրթության, բժշկության, շրջակա միջավայրի պաշտպանության հիմնախնդիրներին: Նա համարձակ քայլերի դիմեց, մասնակիութավես Պահամայում, փակելու և ոչնչացնելու համար ԱՄՆ ներհուսող թմրադելերի արտաքին աղբյուրները և ուղիները:

1989—1990 թթ. ԱՄՆ-ի արտադրությունը շարունակում էր զարգանալ բարձր տեխնականությունում և առաջ տեխնոլոգիական վերագիտնումը գիտատարողության մեջ շափով ներդրվում էր նաև առևտություն, ֆինանսների, սպասարկման և ոչ արդյունաբերական արտադրության մյուս ոլորտներում: Սպասարկման ոլորտում բանվորական ուժի աճող պահանջարկը նպաստում էր գործազրկության կրճատմանը: Ընդհանուր առմանք գրադադարյան մակարդակը բարձր էր և նպաստավոր բնակչության եկամուտների աճի համար, որն իր հերթին դրականորեն էր անդադասում

գործարար ակտիվության վրա: Աշխատանքի վարձասրության համար չպահանջի էին ծառայում արտադրողականությունը և արտադրանքի որակը:

Հարկերի ցածր մակարդակը, հետևաբար, բիզնեսի բարձր չափութաբերությունը ԱՄՆ-ում, և միաժամանակ ցածր հաշվարկային դրույթի պատճառով էման վարկը Արևմտյան Եվրոպայում խթանում էին կապիտալի ներթափառությունը ԱՄՆ-ում, որը թույլ էր տալիս լրացնել ֆինանսական միջոցների պակասը: Այսպիսով, օտարերկրյա կապիտալի ներդրումը ԱՄՆ-ի տնտեսության մեջ բարերար ազդեցություն ուներ գործարար ակտիվությունը բարձրացնելու հիմաստով:

Սյու երկուցները փոխանցվել էին Ռեյզանի ժամանակներից: Սակայն դրանց կողքին առկա էին նաև անցյալից նկած պրոբլեմները՝ բուշեի պակասորդը (դեֆիցիտ), վիթխարի պետական պարտը և դրա ամենամյա տոկոսները, արտաքին առևտորի պասխիվ հաշվեկշիռը: Զնայած արտահանության ավելացմանը ԱՄՆ-ի ներմուծումը շարունակում էր գերազանցել արտահանությանը: Արտաքին առևտորի բնագավառում ԱՄՆ-ի գիտակոր ախտյանը շարունակում էր մնալ կապիտախառնա աշխարհի տնտեսական երկրորդ հզոր տերությունը՝ Շապոնիան: Զնայած սեփական շուկան պաշտպանելու բոլոր տնտեսական և վարչական միջոցառումներին, ԱՄՆ-ին շրաջողվեց այնուեղից փոքրիշատէ շոշափելիորեն արտանելել Շապոնիային, որը հատկապես հաստատում դիրքեր էր գրավելու ուսդիուելուրնիկայի, օպտիկայի, ավտոմեքենաների և հագուստների շոկայում: Այդպես էր ԱՄՆ-ի արտաքին առևտորի պասխիվ հաշվեկշիռը, որը հետևանք էր ավելի բիշ ապահով:

Քաղաքական առավարեզում Բուշի կառավարման ժամանակամիջոցի առավել կարևոր և տարրութեակ փաստը «ասոր պատերազմ» ավարտն էր՝ ԽՍՀՄ-ի փողօքան պատճառով: Բուշն այն գնահատեց իրեն ԱՄՆ-ի հաղթանակը: ԱՄՆ-ը ըստ ամենային խրախուսեց և արագացրեց Կենտրոնական և Հարավ-Արևելյան Եվրոպայում կոմունիստական վարչակարգերի անկումը և ԽՍՀՄ-ի փլոգումը, որը, ըստ էության, գործաշուան «վերակառուցման» քաղաքականության և միջազգային հարաբերություններում համարդիկային արժեքների վրա հենվող և դասակարգային պաշքարի գերակայությունից հրաժարվող «նոր փիլիսոփայության» կատարյալ սեանկացումն էր: Դա ստեղծում է ԱՄՆ-ի համար մենաշենորհային վիճակ աշխարհում տեղի ունեցող

գործընթացները կառավարելու և ամերիկյան երկրաբաղաքական շահեր անհափան ապահովելու հմաստով: Բուշի և նա շահագրգուլած չեն, որ նախակին Խորհրդային Միության գերտերության բոլոր ատրիբուտները անցեն ՍՍԿ-ի անվտանգության խորհրդում նրա տեղը գրադեցրած Ռուսաստանին: Ավելին, նա ձգում է կառավարել նախկին ԽՍՀՄ-ի տարածքի ներկային ԱՊՀ երկրներում, ամենից առաջ Ռուսաստանում տեղի ունեցող գործընթացները և տնտեսական ձևավանագիտության ոգով: Բուշը աշխատում էր դրան հասնել օգտագործելով ԱՄՆ-ին ներարկելող միջազգային տարադրամային ֆոնդը և միջազգային բանկը՝ տրամադրվող վարկերը և օգնությունը ողենցելով քաղաքական պայմաններով: Նոյն ձևով վարկում է դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչ Բիլ Քինցերնը, որը 1992 թ. նախագահական ընտրություններում պարտության մատնեց Բուշին և 1993 թ. հունվարից գրադեցնում է նախագահի թիվնաթոռը Սպիտակ տանը: ԱՊՀ երկրներին, այդ թվում ելցինյան Ռուսաստանին ներկայացվող գլխավոր պահանջը նախկին, կոմունիստական վարչակարգը Փինչ վերջ ապահարելն է: Ե՞վ Բուշը, և՛ Քինցերնը սատար են Բ. Ելցինի ունդորմիստական քաղաքականությանը իրեն կոմունիստների վերադարձը բացառող կորուսի: Նոյնքան բացասաբար են վերաբերվում նրանք ազգայնական ուժերին Ռուսաստանում, որոնք կորականապես դևան են: Նախկին գերտերության ատրիբուտներից հրաժարվելուն և կրցանելամային վերականգնելու ուսական կայսրությունը՝ փլուզված Միությունը վերատեղադրելու կամ մեկ այլ ձևով:

Վաշինգտոնում ոչի-ուշով հետևում են այն ամենին, ինչ տեսի ոնի ԱՊՀ-ում և չեն բավարարվում վերլուծությամբ ու ընդհանացումներով՝ ձգտելով մինչև իսկ ընթացքից, մշակել և իրականացնել գործնական բաղներ, իրադարձությունների զարգացումը ԱՄՆ-ի համար ընդունելի հունի մեջ մղերու նպատակով:

Զ. Բուշի վարչակարգի արտաքին քաղաքական առավել ակնառու քայլերից էր պատերազմը Իրաքի դեմ, որը կարող է ցրել նրա մասին իրեն «յուրը» և «զգուշավոր» գործիչի կարծիքը: Ինարկե, ԱՄՆ-ը չէր գործում միայնակ: Քումեյի տարածքի բռնազավումն Իրաքի կողմից 1990 թ. օգտառում զայրույթով ընդունվեց համաշխարհային համարակայնության կողմից և ՍՍԿ-ը պահանջեց Իրաքից զորքերը դուրս բերել Քումեյից: Քաղդատը հրաժարվեց: Այն ժամանակ ՍՍԿ-ի որոշմամբ Իրաքի նկատմամբ կիրառվեցին պատմամիջոցներ՝ նրան շրջափակեցին Պարսից ծոցի կողմից և զրկեցին նպավար արտահանելու հնա-

րավորությունից: Բոլոր պատժամիջոցները կիրառելիս ԱՄՆ-ը ամենավախիվ նաևնակիցն էր: 1990 թ. օգոստոսին նախագահ Բուշը մի քանի տասնյակ հազար զինծառայողներ ուղարկեց Արարտական Արարի՝ այն Իրաքի հնարավոր հարձակումից պաշտպանելու պատրիակով: Այդ երկիրը ԱՄՆ-ի առավել կարևոր դաշնակիցներից է արարական Արևելքում, նրա հետ ունի սերտ տնտեսական և քաղաքական հարաբերություններ և գլխավոր նավթ մատակարարողն է ոչ միայն Միացյալ Նահանգների, այլև արդյունաբերապես զարգացած մյուս տերությունների համար: Միաժամանակ Բուշը ամերիկյան նախառորմի ռազմանավերին կարգադրեց ծովից շրջափակել Իրաքը և իրականացնել նրա նկատմամբ ՄԱԿ-ի մոցքած առևտրական էմբարգոն, որպեսզի ստիպէր Իրաքին ներանալ Քովետից մինչև Աշվածամկետը՝ 1991 թ. հունվարի 15-ը: Սակայն ոչնայ չեր ներազդում Իրաքի կառավարության վրա և այն ժամանակ զինված ուժով իրարյան գործերը Քովետից դուրս մղելը դարձավ անհուսահետի: ՄԱԿ-ի որոշմամբ 1991 թ. փետրվարին ամերիկյան, բրիտանական, ֆրանսիական, սիրիական, եգիպտական և մի քանի այլ արարական երկրների զինված ուժերից կազմված բազմազգ կոալիցիան (ընդամենը 28 երկիր), պատերազմական գործողություններ ծավալեց Իրաքի դեմ:

Արդեն հունվարի 17-ին ԱՄՆ-ի և նրան միացած երկրների ավիացիան ուժակոծեց և հրթիռակոծեց հակառակորդի Աշանակետը Իրաքում և Քովետիցում: Պատերազմն Իրաքի դեմ ստացավ «Անապատահող» անվանումը: Փետրվարի 4-ին սկսվեցին ցամաքային ուժերի գործողությունները, որոնց մասնակցում էին հակահրաբրան կոալիցիայի կողմից 670 հազար զինծառայող՝ Իրաքի 350 հազար քանակի դեմ, որը տեղակալված էր Քովետիցում և հարավային Իրաքում: Ամենաբարձրագանգակ ԱՄՆ-ի ուժերն էին: Իրաքի դեմ նետվեց 3500 տանկ, 1800 մարտական ինքնարիչ, 200 ռազմանավ, որոնցից 6-ը ամերիկյան ավիակիրներ էին: Իրաքն ուներ 4500 տանկ, այսինքն՝ ավելի շատ, քան կոալիցիան, բայց օրուժի հարցում շատ էր զիշում: Նա ուներ 550 մարտական ինքնարիչ: Ամերիկյան տվյալներով կոալիցիայի կորուստները կազմեցին շուրջ 370 սպանված և 467 միրակլոր՝ Իրաքի 100 հազար սպանվածների դիմաց, որոնց մի մասը խաղաղ բնակչներ էին: Ավելի ուշ Իրաքի քաղաքացիական բնակչության մեջ զոհներ եղան այն պատճառով, որ նախագահ Բիլ Քինցթոնը հրթիռարի հարված հասցրեց Բաղդատին այն պատրիակով, թե իբր Իրաքի դեկալարությունը մտադիր է եղել մահափորձ կազմակերպել նախագահին նախագահի՝ Զ.

Բուշի կյանքի դեմ: Պատերազմը Իրաքի դեմ վերականգնեց ստառություն: Պարսից ծոցի շրջանում: Սակայն այն շրարձագրեց ոչ ԱՄՆ-ի և ոչ էլ նրա նախագահի հեղինակությունը, ինչու և Բուշը պարտություն կրեց 1992 թ. նոյեմբերին և իր տեղը զիշեց Բիլ Քինցթոնին:

Վերջինիս նախագահության առաջին 4 տարիներին ԱՄՆ-ի տրնտեսության զարգացումն ընթացավ որոշակի եղանակությունով: ՄԱԿ-ի տրվայլերով ԱՄՆ-ի համախառն ազգային արդյունքի աճը 1994 թ. նախորդ տարվա համեմատությամբ կազմեց 3,5 տոկոս, սակայն հաջորդ երկու տարիներին սկսեց իշնել: Գործազրկությունը, որը 1994 թ. նովիսին կազմում էր ողջ աշխատությի 6,1 տոկոսը, հաջորդ տարին արդեն հազար 5,5 տոկոսի, որն ընդհանուր սումամբ համարվում է բնակչանոն, նոյնին անհրաժեշտ իրեն աշխատող բնակչության վրա նեչում գործադրելու միջոց, հանուն աշխատանքի որակի և արդյունավետության պահպանման: 1995 թ. վերջին և 1996 թ. սկզբին տնտեսական ակտիվության որոշ նվազումը բնորոշ էր ոչ միայն ԱՄՆ-ին, այլև արևելյան մյուս խոշոր տերություններին, և ավելի շուտ միջցիկային տեղատկություն էր, քան որ անկման նախանշան և հիմք կար կանխատեսվում, որ 1996 թ. վիճակը կշռվի, իսկ 1997 թ. կգրանցվի չափավոր աճ (շուրջ 2,5 տոկոս), շնորհիվ նոր աշխատանքային տեղերի ստեղծման: Իրականացնեցին գլխավորապես սպասարկման ոլորտում, բայց 1993 թ. 2-րդ կեսից սկսած նաև շինարարության բնագավառում: Հետագայում ավտոմեքենաների պահանջարկի աճի հետևանքով նոր աշխատանքային տեղեր ստեղծվեցին նաև մեքենաշինության մեջ: ԱՄՆ-ի տնտեսությունը շարունակում է ընդլացնել, — ընդ որում, սպառման առարկաների գների ցածր ստաճի պայմաններում: 1998 թ. հունվարի 27-ին հանդես գալով կոնգրեսում ամենամյա ավանդական ոլերձով, Քինցթոնը հայտարարեց, որ «Ամերիկայի համար լավ ժամանակներ են եկել» և նշեց, որ 1997 թ. ընթացքում ԱՄՆ-ում ստեղծվել են 14 մին նոր աշխատանքային տեղեր, վարչակազմը հասել է վերջին 24 տարվա ընթացքում գործազրկության ամենացածր ցուցանիշին և 30 տարվա ընթացքում՝ դղյարի արժեգրկման ամենացածր մակարդակին: Դրանով համերձ ԱՄՆ-ի արտաքին առևտորը մնում է պակասորդային (դեֆիցիտային), վճարման հաշվեկշիռը՝ պասիվ:

Արտաքին քաղաքականության բնագավառում ԱՄՆ-ի առջև ծառացած գլխավոր խնդիրը 1993—1997 թթ. ՆԱՏՕ-ն դեռի արևելք ընդլայնելու և այդ կապակցությամբ Ռուսաստանի դիմադրությունը հաղթարելը էր: 1996 թ. նոյեմբերին նախագահական ընտրություններում

Բիլ Քինթոնը հայտանակ տարավ հանրապետական կուսակցության թեկնածու Ռոբերտ Դոուլի Ակատոմաք, առանձով քվեների 50 տոկոսը, եղինակորդ անգամ պաշտոնավայրելու իրավունք առացավ և նոր եռանդով ձեռնամուխ եղավ ՆԱՏՕ-ն ընդդաշտելու գործին:

ԱՄՆ-ը շարունակում է մնալ Հյուսիս-Աստվածայան դաշինքի ղեկավարն ու կազմակերպիչը և պատահական չե, որ նախագահական ընտրարշավի պատճառով գործնական հետաքրքրության որոշ մարտիմից հետո, Ավիտոսկ տունը և Պետրեպարտամենտը նոր եռանդով ձեռնամուխ եղան դաշինքը ընդդաշտելու և ամրացնելու գործին: Համեանակի է, որ ՆԱՏՕ-ն կարող է հավաքագրել նոր անդամներ, գիշավորապես փոլոզված սոցիալիստական համակարգի և քայլարձած ԽՍՀՄ-ի անկախ պետությունների հաջիկն: Անուարակոյս, ԱՄՆ-ի պետական գործիչները ձևացնում են, որ կողմնակից չեն Հյուսիս-Աստվածայան կազմակերպությունը հախուտն կերպով ընդդաշտելու՝ մեծ թվով նոր անդամներ ընդունելու միջոցով: «ՆԱՏՕ-ի ընդդաշտումը թոշակներ բաշխելու ծրագիր չե, — հայտարարում է ԱՄՆ-ի նոր պետական քարտուղար Մարթն Օլբրայթը: — Նրանք հարկադրության կիմեն իրենք վճարել իրենց համար»: Նա նկատի ունի ՆԱՏՕ-ի նոր անդամներին, քանի ըստ պետքարտուղարի այդ կազմակերպության տեղաշարժը դեպի արևելք ԱՄՆ-ի վրա կամու 100—150 մն դոլար:

Ի դեպ, Օլբրայթն, նաև նախագահ Քինթոնն ինչպես Ռուսաստանի արտօրծնախարար Եվգենի Պրիմակովի և նախագահ Բորիս Ելցինի հետ ունեցած մի քանի հանդիպուների ժամանակ կուրել Ռուսաստանի դիմադրությունը և հասնել այն քանին, որ 1997 թ. մայիսի 27-ին Փարիզում Ռուսաստանի նախագահը ստորագրեց համաձայնություն ՆԱՏՕ-ի հետ: Ռուսաստանի կառավարությունը փաստորեն հաշուվեց ՆԱՏՕ-ն դեպի արևելք տեղաշարժելու որոշման հետ, թեև վերապահումներով, որոնցից առաջինը վերաբերում էր ՆԱՏՕ-ի պարտավորությանը միջուկային գեները չտեղադրել նոր անդամների տարածքում, որոնք բնականաբար արևելյան Եվրոպայի երկրներն են: Բացի դրամից, Ռուսաստանը դեմ է, որ ՆԱՏՕ-ին անդամակցեն նախկին ԽՍՀՄ-ի միութենական հանրապետությունները: Համեանակի է, որ խոսքը վերաբերում է, առաջին հերթին Մերձավորական հանրապետություններին, նաև Ուկրաինային:

ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության ակնառու դրվագներից մեկը, դարձալ կարգավոր ՆԱՏՕ-ի հետ, «գործընկերություն հանուն խաղաղության» ծրագիրն է, որը առաջարկեց Վարչավայրի պաշտամագրի

նախկին անդամներին և Եվրոպայի չեզոք երկրներին դեռև 1994 թ. հունվարին: Ակգրում այն ընկարվեց որպես այլնատրանք Հյուսիս-Աստվածայան դաշինքի ընդդաշտում: Սակայն ավելի ուշ, երբ Արևոտքի ուշադրությունը սկսելովեց Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի պետությունները ՆԱՏՕ-ի մեջ ընդգրկելու խնդրին, այդ ծրագիրը հայտնվեց արժեգրկման վտանգի առջև, մասնավանդ, որ 1997 թ. հունվարին ՆԱՏՕ-ի գագաթնաժողովում՝ Մարդիում, ՆԱՏՕ-ի նոր անդամները դարձան Լեհաստանը, Չեխովլովակիան և Հունգարիան: Հաջորդ թվականուները են Ռումինիան և Սլովենիան:

Հիշալ ծրագիրը հայտնվեց արժեգրկման վտանգի առջև այն պատճառով, որ բացարձակացն չի պարունակում կոլեկտիվ անվլուտանգության երաշխիք և նախատեսում է միայն ՆԱՏՕ-ին չանդամակցող երկրների մասնակցությունը ուսումնական պահավորություններին, ինչպես նաև քաղաքական որոշումների կայացմանը՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

«Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին մասնակցում են 20 երկրներ, այդ թվում Վարչավայրի պայմանագրի համեմին մասնակիցներ, չեզոք Շվեյցարիան, Ավստրիան, Ֆինլանդիան ու Շվեյցարիան, նաև Ռուսաստանը (թեև խորհրդաշական ձևով) և նախկին ԽՍՀՄ-ի հանրապետությունները, բացի Տաջիկստանից: Այս իրողությունները կարելի է համարել ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հաջողությունները: ԱՄՆ-ը ճագում է մինչև վերջ օգտվել «ասոր պատերազմում» տարած հայտանակի պատումներից և զրկել Ռուսաստանը գերտերության կարգավիճակից: «Նոր աշխարհակարգի» կամ առանց «ասոր պատերազմի» աշխարհի ամերիկյան ըմբռնումը գրեթե հանգում է այն քանին, որ ԱՄՆ-ը իրեն վերապահում է միջազգային ժամանակի դեր, ընդ որում, բոլոր քնազականներուն: Այդ են վկայում Վաշինգտոնի գործողությունները Բուսնիայի աերքերի դեմ, երբ ամերիկյան ինքնարդիունները և Արդիատիկ ծովում գտնվող ուսումնավերը, առանձույլ Անդամագության խորհրդի հանձնարարականը և ՆԱՏՕ-ի գինումի անվան տակ ուրակուեցին ու հրթիռակուուեցին նրանց բնակավայրերը, որպեսզի ատիպեն ընդունել Բուսնիայի և Հերցոգովինայի բաժանման արևմտյան պլանը:

Իր նախականներն իրագործելու համար ԱՄՆ-ի վարչակազմը լանուեն կիրառում է ֆինանսական և տնտեսական ճնշումը, որը հայտնի է իրուն «գործարային դիմանագիտություն»: Այսուղ նա հանդես է գալիս արդեն միջազգային ֆինանսական ժամանակի դերում օգտագործելով

միջազգային արժույթային հիմնադրամն ու միջազգային բանկը և պահանջելով բաղաքական զիշումներ վարկերի ու փոխառությունների դիմաց:

Չոգամնուարար ԱՄՆ-ը շարունակում է կատարելագործել ու համարել իր միջուկային զինանոցը: 1989—1997 թթ. այս ասպարեզում նրա գլխավոր ձեռքբերում «B—61» միջուկային ռումբն է, որը նախատեսված է ստրգետնյա թիրախները՝ աշխատանոցները, բուներները և գործարանները ոչնչացնելու համար:

Սպառագինությունների կրճատման հարցում ԱՄՆ-ի և Ռուսաստանի հրարաերրություններում վերջին տարիներին լուրջ տեղաշարժեր չկան: Ավելին, 1990 թ. Բուշի և Գորբաչովի ստրոգրած պայմանագիրը քիմիական գենը ոչնչացնելու վերաբերյալ մնում է օդից կախված: Քիմիական առաջարկեց նախապատրաստել այդ զինատեսակի կիրառման, պահպանման, արտադրության և ընդունման մասին միջազգային պայմանագիր, որին հետո միացան 65 երկրներ: Դա բավարար էր, որպեսզի այն առանար միջազգային պայմանագրի կարգավիճակ: 1997 թ. ապրիլի 29-ին այդ պայմանագիրը նույզ ուժի մեջ: Ստորագրած երկրները պարտավորվել են ոչնչացնել իրենց քիմիական սպառագինությունները: Բայց ամենամեծ զինանոց ունեցող երկրները ԱՄՆ-ը և Ռուսաստանն են: Քիմիատոնի վարչակազմը կարողացավ հասնել այն բանին, որ ԱՄՆ-ի Սենատն ի վերջո վավերացրեց այդ պայմանագիրը: Սակայն Ռուսաստանի պետական դրումն հարցը հետաձեց մինչև 1997 թ. աշունը: Ռուսաստանը ունի 400 հազար տոննա քիմիական սպառագինություն և եթե հրաժարվի ոչնչացնել այն, ապա ԱՄՆ-ը ամեն կերպ հասնել Ռուսաստանի նկատմամբ պատճամիշոցների կիրառման, որը նշանակում է արգելել նրան իր քիմիական արդյունաբերության արտադրանքը համեն միջազգային շուկա, իսկ դա Ռուսաստանի արտահանության 40 տոկոսն է, որից ստացված վճառը կկազմի շորջ 60 մլրդ դոլար: Իսկ եթե Ռուսաստանը վավերացնի պայմանագիրը, ապա պետք է վերացնի իր քիմիական սպառագինությունները մինչև 2005 թվականը, որը պահանջում է վիթխարի ծախսեր: Այդ կապակցությամբ կդրվի Ռուսաստանը ֆինանսավորելու հարցը, որը չի կարող իրականացվել առանց ԱՄՆ-ի մասնակցության:

1998 թ. ակդրին կրկին սրվեց իրարրությունը Պարսից ծոցի շրջանում՝ կապված իրարում զանգվածային բնաշնչման միջոցների (քիմիական և բակտերիոֆիական գեների) արտադրության առկայությունը պարզելու հետ: Իրաքի դեկավարությունը արգելում էր ՄԱԿ-ի փորձա-

գետներին իրականությունը բացահայտելու համար ստուգել այսպէս կոչված «նախագահական օրենքները»: Մինչ այդ Իրաքից մասմբ հանվել էր տնտեսական շրջափակումը, թույլատրելով նրան որոշ քանակությամբ նավթ վաճառել միջազգային շոկայում՝ սովոր բնակչության համար սննդամթերք հայցացնելու համար:

Իրաքի շորջ սկսած նոր ճգնաժամի կապակցությամբ կրկին բարձրացավ այդ երկիրը լիակատար շրջափակման ենթարկելու հարցը: Նրան նոր ուսումնական հարված հասցնելու նպատակով ԱՄՆ-ը Պարսից ծոցի շրջան ուղարկեց զգայի ուժեր՝ ավիակիրներ, իդրիֆույնին տեխնիկա, ցամաքային ուժեր և այլն: Նրան միացավ Անգլիայի նոր՝ լեյտրիատական կառավարությունը: Իրարում ծավալվեցին ինքնապաշտամական միջոցառություններ: Պաշտոնական Վաշինգտոնի շրջանակության վահանգությունը և նորանոր ուժերի առարումը ծոցի շրջանը կարծեն թե նոր պատերազմը դարձնում էին անխուսափելի: Սակայն այս անգամ հարցը պատերազմի միջոցով լուծելու դեմ հանդեն եկան Անվտանգության խորհրդի նինգ մշտական անդամներից երեքը՝ Ռուսաստանը, Չինաստանը և Ֆրանսիան: Արարական երկրների ճշշող մեծամասնությունը նոյնական կողմնակից էր ճգնաժամը բաղաքական միջոցներով լուծելուն: Առանձնապես ակտիվ էր Ռուսաստանը, որի հատուկ ենրկայացուցիչը Բաղրատում վարեց բավականաշահ արդյունավետ բանակցություններ իրաքի ղեկավարության հետ՝ համոզելու նրան թույլատրել «նախագահական օրենքների» ստուգումը: Գործին միջամտեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանը: Նրա այցելությունը Բաղրատ և հանդիպությունը նախագահ Սադամ Հուսեյնի ու փոխարքաներ Թարիք-Ազիզի հետ թույլ տվին խնդրի լուծումը տանելու բաղաքական ուղիով՝ իրաքի ղեկավարությունը համաձայնեց թույլատրել ՄԱԿ-ի փորձագետներին ստուգել «նախագահական օրենքները», նաև կարևորները, որոնք թվույթ ունի են: Միջազգային հանրության կողմից սա ընկարվեց գորունակությամբ իբրև ՄԱԿ-ի և նրա գլխավոր քարտուղարի հաջողությունը, որը թույլ տվեց առնվազն ժամանակավորապես հեռացնել նոր արյունահեղության սարտնալիքը, ժամանակավորապես, բանզի ամերիկյան, անգլիական և նրանց միացած մի քանի այլ պետությունների ուժերը շարունակում են հերթապահել Պարսից ծոցի շրջանում՝ սպառնալով հարվածել Իրաքին, եթե նրա ղեկավարները դրժեն իրենց խոստումը:

Հայերը ԱՄՆ-ում

Ներկայում ԱՄՆ-ի հայ գաղութը ամենամեծն է Սփյուռքում: ԱՄՆ-ում ապրում է մոտ մեկ միլիոն հայ:

Սուաշին հայերը Հրուսիային Ամերիկայում հաստատվել են 17-րդ դ. սկզբին: 17-18-րդ դդ. շատ հայեր արտագաղթել են Ամերիկա գրիխալքապան Լեհաստանի և Հռոմեական հայ գաղթօջախներից: Մինչև 19-րդ դ. վերջը հայերի արտագաղթը ԱՄՆ կապված է եղել գլխավորակես ամերիկյան միմիներների քաղոզական գործունեության հետ Արևոտյան Հայաստանում, կյանքի և ապրուսի անապահովության հետ օմանան կայսրության մեջ:

19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին հայերի մուտքը ԱՄՆ աշխատավայր կապված հայկական կոտորածների և Մեծ եղեռնի հետ: 1920 թ. հայերի թիվը ԱՄՆ հաւանում էր 100 հազարի, երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ 1945 թ. 215 հազարի, 70-ական թվականների սկզբին՝ 450 հազարի: Հետագայում հայերի արտագաղթը ԱՄՆ անհամընթաց չափերի հասակ Մերձավոր և Միջին Արևմերից՝ կապված քաղաքական իրադարձությունների հետ (քաղաքացիական պատերազմը Լիբանանում, խալամական հեղափոխություններ Երանում, Երարիանյան պատերազմը, Խորայելի ներխուժումը Լիբանան): 70—80-ական թթ. քաղմատիվ հայեր ԱՄՆ արտագաղթեցին Խորհրդային Հայաստանից, Բուլղարիայից և Ռումինիայից: Հայերի ներքուան հպատեց, իհարկե, ամերիկյան հայ գաղութի «հայացմանը», որը խիստ կարևոր է, եթե նկատի ունենալը, որ ուժացման վտանգը շատ ավելի մեծ է և իրական Արևմտութիւն քաղաքական երկրներում: Սակայն սա ժամանակուր երևոյց է, մինչդեռ հայերի հեռանալը Մերձավոր ու Միջին Արևելքի հայաշատը և հայեցի կյանքով ապրող գաղթօջախներից ու հատկապես Հայաստանից, որն ուժեղացել է վերջին տարիներին՝ կենսամակարդակի ծայրատիճամի անկան և կյանքի պայմանների ծայրանեղ վատթարացման հետևանքով, յորորինակ աղետ է, իրական հայաթափություն: Նախկինում, ԱՄՆ արտագաղթած հայերը հաստատվում էին գլխավորակես Նյու Յորք, Մասաչուսեթս, Ռոտ Այլենդ, Նյու Ջերսի, Վերջինիա, Փենսիլվանիա, Իլլինոյս, Ինդիանա, Նյու Հեմփշիր, Օհայո, Կալիֆորնիա և մի քանի այլ նահանգներում: Վերջին երկու տասնամյակում նրանք մեծ մասամբ բնակություն են հաստատում Կալifornիայում, որտեղ ներկայում գտնվում է ամերիկահայության ամենահոգ զանգվածը: Կալիֆորնիայում հաստատված

հայերը դեռևս անցրա դարից հայտնի են իրեն լավ երկրագործներ, պարտիզաններ և այգեաններ, որոնք վշակում են խաղող ու մրգեր: Մեծ քաղաքներում նրանք աշխատում են իրեն բանվորներ գործարաններում, գրադպում էին արհեստներով ու առևտրով: Ավելի ուշ հայերը հայտնվեցին թիգնեսի բնագավառում: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին և հետո հայ թիգնեսնեններ երևացին մեքենաշխալույթան, սարքաշինության, էլեկտրոնիկայի, սպասարկման, առևտրի, ֆինանսական կապիտալի ողբարներում: Զգայի է հայերի մասնակցությունը ամերիկյան հասարակույթյան հոգևոր կյանքին: այնպիսի անոններ, ինչպես գրող Ռիլյամ Սարոյանը, կինոռեժիսոր Ռոբեր Մանլյանը, նկարիչ Գորկին (Ուտանիկ Սորոյան), քանդակագործ Ռոբեր Նարյանը հայտնի են ամբողջ աշխարհին: Հայերը կարեւոր վասակ ունեն նաև ճարտարապետության, օպերային վոկալ արվեստի և սիմֆոնիկ երաժշտության բնագավառներում: Ամերիկահայ գիտնականները նշանակալից դեր են կատարել ամերիկյան գիտության աշխափի կարևոր զուղերի գարգացման մեջ, ինչպես տիեզերական հետազոտությունները, բժիշկագիտությունը, բիուրան, կենսաբանությունը, մաթեմատիկան, բրդիտաշխանությունը և այլն: Հայ գիտնականները պաշտոնավորում են հայագիտական ամբիոններում և վարում են դրանքացներ Հարվարդի, Կոլումբիայի, Կալիֆորնիայի, Փենսիլվանիայի, Չորջատանի, Ֆրեզնոյի և մի շարք այլ համալսարաններում: 1955 թ. Բուստոնում հիմնադրվեց Հայագիտական ուսանուց և հետազոտությունների ազգային ընկերակցությունը: Հայերը մասնակցում են նաև ԱՄՆ-ի հասարակական-քաղաքական կյանքին և պետական գործունեությանը: Իրավագետ Չորջ Դյուքսեյանը երկու ժամանակամիջոց (1982—90 թթ.) ընտրվել է ԱՄՆ-ի խոշորագույն նահանգի՝ Կալիֆորնիայի նահանգապետ: Ամերիկահայ եկեղեցին բաժանված է երկու թեմի՝ Արևելյան (Կենտրոն Նյու Յորքում) և Արևմտյան կամ Կալիֆորնիայի (կենտրոն Լոս Անջելեսում): Հայերի մեծ մասը հայ Սուարելական եկեղեցու հետևողներ են, կամ նաև այտարանականներ ու կաթոլիկներ: 1970-ական թթ. սկզբին արդեն ԱՄՆ-ում գործում էր շուրջ 130 հայկական եկեղեցի, այդ թվում Նյու Յորքի Սուրբ Վարդան Մայր տաճարը: Եկեղեցիներին կից կամ նրանց հովանու ներքո գործում են կիրակնօրյա կամ ամենօրյա հայկական դպրոցներ:

Ամերիկահայ գաղութիվ կյանքին մասնակցում են հայ քաղաքական կուսակցությունները: Գործում են հայոնակցական միություններ և ազգային հասարակական կազմակերպություններ. 1938 թ. գործում է Ամե-

իրկանայ առաջադիմական միությունը, 1943 թ. առեղծվեց Ամերիկահայ ազգային խորհուրդը, որի նախաձեռնությամբ 1947 թ. հրավիրվեց Հայկական համաշխարհային կոնֆերացիաը: 1950 թվականից Նյու Յորքում է գտնվում Հայկական բարեգործական ընդհանուր միության Կենտրոնական վարչությունը, որի նախագահն է Լոնդ-Սիտոն Սանուկյանը, այդ Միության երկարամյա նախագահի, ապա պատվավոր նախագահի, այժմ նաևգուցյալ Արեք Մանուկյանի դուստրը:

Ներկայում գործող կազմակերպություններից պես է հիշատակել Հայ դատի հանձնախումբը, որը պատկանում է Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցությամբ և զքաղվում է Հայ Դատի խնդրով, դիմումներ է հղում կոնֆերենսի պարագներին, կազմակերպում է զանազան միջոցառումներ: Ունի հետազոտական կենտրոն, որը պատրաստել և հրատարակել է մի շարք աշխատանքներ Մեծ եղեռնի, Արցախի իրավիճակի, Աղբքաշանում հայերի դրության մասին: 1989 թ. Լու Անջելեսում առեղծված Հայ իրավաբանական միությունը բացի ԱՄՆ-ի հայ համայնքի շահերը ներկայացնելուց, պաշտպանում է նաև հայ ժողովրդի իրավունքը Արցախի խնդրի առնչությամբ:

Մեծ գործունեություն է ծավալել Ամերիկայի Հայկական համագումարը, որը ստեղծվեց 1972 թ. անկուսակցական հիմքի վրա: Ծովակացարանը գոնվում է Վաշինգտոնում: Նպատակն է հաստատել կապեր ԱՄՆ-ի հայ համայնքի և կառավարության միջև և ունի հատուկ ծառայություն, որը զքաղվում է կոնֆերենսի և վարչակազմի հետ կապերով: Զգում է ամերիկան և համաշխարհային հասարակականության ուշադրությունը հրավիրել Հայ Դատի և հայերի ցեղասպանության վրա: Համագումարը ունի կենտրոններ նաև Լու Անջելեսում և Երևանում, օգնում է երկրաշարժից տուժած Հայաստանին: Այժմ գործող նախագահն է Հրայր Հովհաննյանը: Այս կազմակերպության ղեկավարության մեջ են մտնում ԱՄՆ-ի հայ համայնքի ականավոր ներկայացուցիչներ, նաև խրախուսում է հայերի, մասնավորապես, երիտասարդության մասնակցությունը ԱՄՆ-ի բաղաքական կյանքում, ձգում է առեղծել ակտիվ և ազդեցիկ հայկական լորրի: Ժողովում է Հայ Դատի և հայերի ցեղասպանության հետ կապված արժեքավոր փառաւորդներ և գրականություն: 1982 թ. պայքար է տանում այն բանի համար, որպեսզի ԱՄՆ-ի կոնֆերենը և կառավարությունը ճանաչնեն հայերի ցեղասպանության փառար, թեև առաջմ ապարդյուն:

ԱՄՆ-ի պաշտոնական շրջանները ելեղով ամերիկան երկրաքաղաքական շահերից և ՆԱՏՕ-ի խնդիրներից, շարունակում են համե-

րաշխությունը Թուրքիայի հետ և չեն ցանկանում ճանաչել ցեղասպանության փաստը: Ինչպես ապացուցեց ԱՄՆ-ի նախկին պետական քարտուղար Ջ. Շուլցի պատասխանը Արեք Մանուկյանի հուշագրին, 1987 թ. հունիսին, նրանք ժխտում են ցեղասպանության փաստը՝ կը կեղով Թուրքիայի պաշտոնական շրջանների փարկածը: ԱՄՆ-ի վարչակազմը Ռեյգանի և Շուլցի օրոք ամեն ինչ արեց թոյլ չտարու Աերշայցուցիչների պալատին և սենատին ընդունելու հայանպատ բանաձները: Շուլցը խստվանելով է, որ ցեղասպանության ճամաչումից կրիսեն տարածքային հարցեր Արևելյան Անատոլիայում, որտեղ ամերիկյան ուղղմական բազաներ կան, որը անթույլատրելի է ԱՄՆ-ի ուղմական շահերի տեսանկյունից:

ԱՄՆ-ը հակահայկական դիրք է գրավում նաև Արցախի հարցում պաշտպանելով Սորբեզանի տարածքային ամբողջականության թեզը և մերժում է արցախահայության ինքնորոշման իրավունքը: Արևելյան, պետական դեպարտամենտի նախկին աշխատակից Հորլը առաջարկել է պլան, որը նախատեսում է Աղբքաշանին, որոշ տարածքային փոխհատուցման դիմաց Արցախում, տալ Հայաստանի շրջանը, որպեսզի նախիշևանը տարածքային կապ ունենա Սորբեզանի հետ: Դա նշանակում է վերացնել պանթուրանիզմի իրականացման ճանապարհին գոնվող խոշնոտությունը, ինչպես պանթուրանիզմի գաղափարախոսներն են ասում «հայկական ամրարտակը», թոյլ տաղով, որ թորքալեզու ժողովուրդները միավորվեն մեկ կայսրության մեջ՝ Թուրքիայից մինչև Յակուտիա և Չինաստանի խուսիսային տահմանը: Նման պլանի իրականացումը ձեռնառու է ԱՄՆ-ին նրա երկրաքաղաքական շահերի տեսանկյունից, քանի որ պանթուրանական կայսրությունը Ռուսաստանը մեկնարկմիշու կանչափ թորքալեզու ժողովուրդներին, կմինճինի միջև Պովոլյանի ու Միքրու խորքերը և անդամահատելով Ռուսաստանը թոյլ կրու ԱՄՆ-ին հարավ-արևմուտքից և հարավից Ռուսաստանը պաշարող գոտի ատեղձել Թուրքիայի առաջնորդությամբ, հետևաքար, ԱՄՆ-ի ազդեցության ոլորտում գոնվող: Այդ գոտին ոչ միայն Կաղումի Ռուսաստանին՝ սահմանափակելով նրա հավակնությունները, զրկելով նրան իր վերջին երեք հարյուր տարիների արտաքին բաղաքականության ձեռքբերումներից, այն կարող է օգտագործվել Չինաստանի դեմ: Բացաված չէ, որ պանթուրանական կայսրությունը որոշակի սպառնալիք ներկայացնի կամ առնվազն ահարեկման միջոց ծառայի ընդդեմ Սրևնոյան Եվրոպայի ու Շապոնիայի:

Հրաժարվելով ճանաչել հայ ժողովրդի օրինական իրավունքներ,

ԱՄՆ-ը իրոն գերտերություն, որը որոշից դեռ է խաղում համաշխարհացին քաղաքականության մեջ և միջազգային հասարակայնությանը ներկայանում է իրոն ժողովրդավարության շատագով և մարդու իրավունքների պաշտպան, ծանր հարված է հասցնում ոչ միայն ամերիկահայության, այլև ողջ հայ ժողովրդի շահերին և ամենավիրական զգացմունքներին, մասնաւոր, որ հայերի ցեղասպանությունը վաղոց փառված է հենց ամերիկյան միտիներների, դիվանագետների և ականատես լրագրողները վկայություններով: Այդ տարիներին Թոքքիայում ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաուն մինչև իսկ գրել է, որ Թալենաթը պարծեցել է, թե հայերական հարցը լուծելու համար ինքը երեք անում ավելին է արել, բայ սովորան Արդու Համբեր երեսուն տարում:

Սամերիկահայությանը դժվար է տանել այս հարվածը, քանի որ շնորհ իր համեմատաբար փոքր թվին, նա ըստ ամենավճի նպատել է ԱՄՆ-ի Հցութական և հոգևոր քարդավաճմանը: Սամերիկահայերը եղել են օրինապահ քաղաքացիներ, թեև հեշտ բան չէր, եթե նկատի ունենանք, որ հրանք եղել են նաև հավատարիմ իրենց հայրենիքին՝ Հայաստանին, որը ԱՄՆ-ի գլխավոր ախոյանի «սառը պատերազմի» բարիկադների մոտ կողմում գտնվող ԽՍՀՄ-ի մասն է կազմել:

Հայաստան-Սփյուռք կապերը մշտապես կարևորինք են հայ ժողովրդի ընդհանուր բարօրության և արտերկրում հայապահպանական տեսանկյունից: Այս խնդիրն առանձնահատուկ հշանակություն է առացել ՀՀ անկախության հոչակումից հետո՝ ինչպես նրա տնտեսական վերականգնմանն ու զարգացմանը, այսպես էլ անվտանգության ամրապնդմանը նպատելու իմաստով: Միաժամանակ անկախությունը, հասարակության դեմոկրատացումը և անցումը շուկայական հարաբերություններին, շատ լայն հնարավորություններ են ստեղծում Հայաստան-Սփյուռք կապերի ընդացման և խորացման համար: Դա առաջին ենթին վերաբերում է Սփյուռքի ամենաբազմանդ և հնարավորություններով ամենահարուստ ամերիկյան գաղութին: Կարևորվում է առանձնապես «ամերիկահայ» կապիտալի ներխուր Հայաստան, մասնակցությունը ներդրումների քաղաքականությանը, որպեսզի այն նպաստի քայլայիսած արդյունաբերության վերականգնմանն ու զարգացմանը, գյուղատնտեսությունը ուրի կանգնեցնելուն, ատեղի նոր աշխատանքային տեղեր, իշեցնի գործազրկության մակարդակը և երկրից արտագողթածներին օգնի վերադառնալու Հայաստան: Ամերիկահայերի մասնակցությունը Հայաստանի տնտեսական կյանքին պետք է մկրուեր-

ԱՄՆ-ի դիրքորոշումն Արցախի հարցում կանոնով է հանաւությունը և հանաւության անվտանգ մոնուպղաների մեծ հետաքրքրությամբ դեպի կասպիալան հավթը: Դրանց մեծ բաժին ստանալու համար ԱՄՆ-ը սպազուանում է Ստրեչանը: ԱՄՆ-ի շրու հավթահանող ընկերություններ մեծ շահութաբաժիններ են ստացել կասպիալան հավթի շրու հավթադաշտերի առողջի ժամանակ և հարցուր միլիոննավոր դոլար են ներդրել աղբեկացանական հավթի հանույթը կազմակերպվում, ասպազա հավթամուղները հախազելու և կառուցելու հախապատրաստական աշխատանքների մեջ: ԱՄՆ-ի հակահայկական դիրքորոշումն Արցախի հարցում, վերտոնի իր արտացոլումը գուայ առավել կոչված ութեալի հանդիպման ժամանակ, 1977 թ. հունիսին Դենվերում (ԱՄՆ-ի Կողորդո համաճ), որտեղ Եվրոպական անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Մինակի խմբի համախագահներ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և Ռուսաստանի պետությունների դեկանական նորից (1996 թ. դեկտեմբերի 2—3-ը Լիսարբունում տեղի ունեցած գագաթաժողովից հետո) հարցարարեցին Լեռնային Ղարաբաղը Աղբեկացանի կազմում թղթնելու իրենց որոշման մասին: Վաշինգտոնի քաղաքականությունը Կովկասում հետաքննում է հան Ռուսաստանը տարածաշրջանից արտաքսելու նպատակ:

ԱՄՆ-ի դիրքորոշումը իր արտացոլումը գտնվ Հակ Հայաստանի Հանուպետությունում ամերիկյան դեսպան Դիտեր Թոմասընի 1997 թ. հունիսի 5-ին Հայաստանի Ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտում կարդացած գեկուցման մեջ, որը վերնագրել էր «տա-

ուածաշրջանային համագործակցությունը՝ Կովկասում»: Պ. Թումարնը հայտարարեց հետևյալը. «Կովկասյան հանրապետությունները, մասնավորապես Հայաստանը ու Աղբքանարդ պետք է իրենց մեջ մեծ ոժ գունեն մոռանալու անցյալն ու փոխադարձ վիրավորանքները և հանուն իրենց սերունդների բարօրության ու տարածաշրջանային խաղաղ զարգացման, գունեն հակամարտության լուծման փոխադարձումային տարրերակ»:

Այսպես, ամերիկյան պաշտոնական ըմբռմամբ պատմական անարդարությունը և ցեղասպանությունն ավելին չեն, քան վիրավորանք, այն էլ փոխադարձ, որը պետք է մոռանալ հանուն «սերունդների բարօրության և տարածաշրջանի խաղաղ զարգացման»:

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

Մեծ Բրիտանիան 1918—1939 թթ.

Մեծ Բրիտանիայի քաղաքանությունը պատրազմից հետո Եվրոպացում իր դիրքերն ամրապնդելու համար պայպատճենության մեջ հաջողության առաջարկության մեջ առաջատար է Անգլիան:

Երբեք խոշորագույն գաղութաներ տերություն և լինելով հայողուների թվում, Անգլիան չեղ կարող երկրորդական դեր խաղաղ աշխարհի վերաբաժանման պայքարում: Եվ նրան հաջողվեց պարմանագրերի Վերապ-Վաշինգտոնյան համակարգից կորզել ամենամեծ պատառը: Անգլիան ձեռք բերեց նոր գաղութային տիրուցներ 2619 հազար կմ² տարածքով և 9 մլն բնակչությամբ: Նա որոշակի առավելություններ ուներ իր պարտնյուների նկատմամբ: Եվրոպայում Անգլիան համել էր իր նպատակին դեռևս Վերապի հաշտության կոնֆերանսի գումարումից առաջ: Նա իր Ակապա Ֆոռ նավահանգատում ներկայած պահում էր Գերմանիայի նավատորմը: Զեար այլևս գերմանական մրցակցությունը համաշխարհային շոկայում: Գերմանիան վտարված էր գաղութներից ու ծովերից: Նրա գաղութները և փլուզված օտանեան կայսրության նախկին տիրուցները զավթել էին Մեծ Բրիտանիայի և նրա դոմինիոնների զորքերը: Ենթադրվում էր նաև, որ պարտված Գերմանիայի տնտեսությունը դեռ երկար ժամանակ կմնա քայլայված: Հետևաբար, բրիտանական դիվանագիտության խնդիրն էր պահպանել ձեռք բերվածը, թեև Գերմանիայի գաղութների և օտանեան կայսրության ժառանգությունը բարցում անխուսափելի էր բախումը Ֆրանսիայի և Անգլիայի մեջ: Միաժամանակ անգլիացի առաջնորդությունը անհաջող էր առաջարկել անգլիացի առաջնորդությունը կամ անգլիացի առաջնորդությունը անգլիացի առաջնորդությունը:

Են էր մեկ այլ, թերևս ավելի բարդ խնդիր՝ թույլ չտալ, որ Ֆրանսիան, ունենալով ամենատօնելի ցամաքային բանակը և օգտվելով Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի պարտությունից պատերազմում և Անտանտից Փուստառանի դուրս գալուց, գերիշխող դիրք գրավի մայրամաքային Եվրոպայում: Եվ դա հեշտ չեղ անել, քանի որ Ֆրանսիայի գույն էին կանգնած այնպիսի ազգայնական գործիքներ, ինչպես վարչապետ Ռոբեր Կանը և Ֆրանսիան ստրատեգիական տեսակետից շատ կարևոր դիրքեր եր գրավում Հոնդուրասը, Բալկաններում ու Մերձական Արևելքում:

Սակայն սրանք Մեծ Բրիտանիայի առջև ծառացած միակ արտաքին քաղաքական խնդիրները չեն: Հոկտեմբերյան նեղափոխության պատճենով Անգլիան զրկվեց Ռուսաստանի տարողութակ շուկայից, որը դադարեց նաև լինել նրա համար կապիտալի արտահանման ոլորտ: Միաժամանակ, Անգլիայի իշխող շրջանների համար Խորմրային Ռուսաստանը նեղափոխության արտահանման օջախ էր, որը պետք էր հետարագորդն չափ արագ մարել: Ինչու և առ դարձավ հակախորհրդային զինված ներխուժման նախաձեռնողներից մեկը: Գերմանիայի արտաքսումը համաշխարհային շուկայից «աշխարհի արևելատանցի» համար, ինչպիսին էր Անգլիան մինչև 19-րդ դ. վերջը, դեռևս չեղ ստեղծում մենաշնորհային վիճակ: Կապիտալիզմի անհամաշակ զարգացման հետևանքով հայտնվել էին այնպիսի պարտնյուներ, ինչպես ԱՄՆ-ը և Շապենիան, որոնց արտադրանքի հետ անգիտական ասքանքները դժվարությամբ էին մրցում: ԱՄՆ-ի վարեկատուից Մեծ Բրիտանիան վերածվեց գրա սրատապահի: Նա ԱՄՆ-ին պարտը էր 5,5 միլի դրամ:

Մյուս պյուրենք ազգային ազգատագրական շարժման խորացումն էր բրիտանական գաղութային կայսրությունում և Կենտրոնախույս միտումների ուժեղացումը: Միաժամանակ, մյուս երկրները, հատկապես ԱՄՆ-ը և նույնապես ներքափանցում էին բրիտանական տիրությունները, մինչդեռ պատերազմի ժամանակ իր առևտրական նավատորմի 70 տոկոսը կորցրած Մեծ Բրիտանիայի կապերն անդրծովյան տարածքների հետ թույլացել էին: 1918 թ. նրա արտաքին առևտուրը կրծատվեց ավելի քան երկու անգամ: Դա ծանր հետևանք էր կղզի սենության համար, որի կենսագործունեությունը կախված էր առավելական արտաքին տնտեսական կապերից:

Հայշանական Անգլիան ձերբագալված չեղ նաև ներքին բարդ խնդիրներից, որոնք կախված էին պատերազմի ավարտի հետ: Խիստ կրծատվեցին ուազմական արտադրանքի կառավարական պատվերները:

րը, որոնք 1914—1918 թթ. ապահովում էին արտադրության և զբաղվածության բարձր մակարդակը: Ռեկոնվերսիայի ճշնաժամի երլույթը ները, կարված տնտեսությունը խաղաղ գարգացման պահանջներին հարմարեցներու հետ, անհուսափելի էին: Ուստի հետպատերազմյան առաջին տարիներին առեց գործազրկությունը: Աշխատավորների դրությունը վատրարանում էր նաև նրանով, որ նրանց էր վիճակիած կրել պետական պարտի վճարման հիմնական բեռը, պետական պարտի, որն անել էր անհամարեակ չափով՝ 1914 թ. 650 մը ֆունտ տեղովնեցից հասնելով 8 մըրդ ֆունտ տեղովնեցի: Ստեղծված իրավիճակը համգեցրեց սոցիալական հակասությունների և դասակարգային պայքարի սրբան: Ամրապնդվեցին ձախակողմյան ուժերի դիրքերը: Լեյբորիստները, որոնք արդեն զգալի կշռ ունեին, 1918 թ. նոյեմբերին դրու եկան պատերազմի ժամանակ ձևավորված կառավարական կույիցիալից՝ պահանջնելով դադարեցնել ինստերվենցիան Ռուսաստանի դեմ և միջոցառումներ իրականացնել հօգուտ բանվոր դասակարգի շահերի պաշտպանության: Նրանք իրապարակեցին «Աշխատանքը և սոցիալական նոր կարգը» ծրագիրը, որում իրքի անգիտական հասարակությունն արմատապես վերակառուցելու միջոց, առաջարկվում էր ազգանացնել նոյրը և արդյունաբերության մի շարք ճյուղեր: Լեյբորիստական (Աշխատանքային) կուսակցության կողեւութիվ անդամության կարգը թույլ էր տալիս ամրող տրեն-յունինների (արհմիությունների) անդամագրվել նրան: Մի կողմից տրեն-յունինների գանգվածային մասնակցությունը լեյբորիստական կուսակցությանը, իսկ մյուս կողմից տրեն-յունինների դեկավանների ակտիվ դերը կուսակցության քաղաքականությունը մշակելիս ամրապնդում էին այդ կուսակցության դիրքերը, որոնք անընդեմ ուժեղացնել էին նրա կազմավորումից, այսինքն՝ 1900 թ. ի վեր:

Այս իրողությունը ստիպում էր անգիտական խոշոր բորժուազիալին համախմբվել և 1918 թ. դեկտեմբերին կայսցած պաղամենտական ընտրություններում պահանջնական կուսակցությունը նաև նայեն եկավ իրերազների մի մասի հետ բրոկ կազմած: Հատկապես ակտիվ էր Լոյդ Չորջը: 1918 թ. ընտրություններին առաջին անգամ մասնակցեցին կանայք (30 տարեկան հասակից, 1929 թ. կանանց տարիքային ցենզը իջեցվեց մինչև 21 տարեկան): Դրա շնորհիվ ընտրողների թիվը հասավ 8-ից 21 միլիոնի: Պահպանդականների ու իրերազների բրոկին հաջողվեց, օգտագործելով հաղթանակի ստորած ազգայնական տրամադրությունները և քարոյա-հոգերանական վերելքը, շահել ընտրություն-

ները: Կառավարությունը գլխավորեց լիբերալ Լոյդ Չորջը, սակայն հիմնական պաշտոնները նրանում գքաղեցնում էին պահպանդական Ռ. Չերչիլը (նախկին լիբերալ), Օ. Չեմբլոնը, Բոնար Լոուն, Քերգոնը և ուրիշներ:

Նոր կառավարության օրոք գործադրության պայքարն էլ ամենի սրբեց: Առջևից ընթանում էին ածխահատները: Նրանց գորավիզ էին երկարուղայինների ու տրամադրությայինների արհմիությունները, որոնք ածխահատների հետ միավորվեցին «Եղանակ միության» մեջ՝ սպառնալով ընդհանուր գործադրության հայտարարել: Գործադրության պայքարը տրվեց իր արդյունքները՝ մի շարք ճյուղերում սահմանվեց 8 ժամյա, իսկ ածխահանքներում 7 ժամյա աշխատանքային օր: Ալեյացավ աշխատավարձը, մասնակիորեն բավարարվեցին 1919 թ. աշնանը գործադրության երկարուղայինների պահանջները:

Ազգային-ազատագրական շարժման վերելքը և անգիտական գաղութներում

Մեծ Բրիտանիայի ներքին պրոբլեմներին ավելացան գաղութներում ծավալված ազգային-ազատագրական շարժման հարուցած դժվարությունները: Հնդկաստանում չկարողանալով բրունուրայի խնդրելու ազգատական շարժուագիտությանը՝ 1918 թ. մոցվեց «ասմանադրություն», որը ստացավ Մոնֆորդի սահմանադրություն անվանումը՝ Հնդկաստանի գործերով նախարար Մոնթեգուի և Հնդկաստանի փոխարքա Չելմսֆորդի անուններից: Սահմանադրությունը հնդկական բորժուազիայի վերնախավին մասնակիորեն թույլ էր տալիս մտնել իշխանության կազմի մեջ: Այնուամենավեհիվ, բռնությունները շարունակում էին գործադրվել: 1919 թ. ապրիլի 13-ին Ամրիտսար քաղաքում գեներալ Դայերի գորքերը գնդակութեցին անգեն ամրության: Ապահովեց 400 և վիրավորվեց շուրջ 1200 մարդ: Անգլիացինները դամանորեն ճընշեցին գյուղացիական ապատամբությունը Մալաբարյան օկրուգում:

1919 թ. ապատամբություն ծագեց նաև Եգիպտոսում: Անգլիական գորքերը ճնշեցին այն: Սակայն 1921 թ. ապատամբությունը նորից բրունվեց: Անգլիան կրկին ուժ գործադրեց, բայց ի վերջո հարկադրված էր զիջումներ անել: 1922 թ. փետրվարին վերացվեց 1914 թ. հատատված անգլիական պրոտեկտորատը և ճանաչվեց Եգիպտոսի անկախությունը: Անգլիան իրեն իրավունք վերապահեց գորքեր ունենալ Կանիրենը, Սուեզի ջրանցքի շրջանում, Սուդանում և բոլոր այն կետերում, որոնք կարևոր կամարդկան բրիտանական կայսրության կապերի տեսանկյու-

մից: Դա անգլիացիներին թույլ էր տալիս վերահսկել Եգիպտոսի պետական ապարատը, նրա արտաքին քաղաքականությունը և տնտեսությունը:

Ազգային ազատագրական շարժումն ընդգրկեց նաև Անգլիայի հրանագոյն գաղութը՝ Իոլանդիան: Մնջ Բրիտանիան կրակի ու արյան մատնեց «Լանաչ կղզին»: Ծանր ու արյունահետ պաշտպահից հետո իլլանդացիները Մնջ Բրիտանիային ստիպեցին 1922 թ. երկրի 26 կոմսություններին տալ դոմինիոնի իրավայիշճակ՝ «Իոլանդական սպառ պետություն» անունով: Սակայն հյուսիսային Յ առավել զարգացած կոմսությունները, որոնց կոչում են Օլտեր ընդհանուր անունով, անջատեցին Իոլանդիայից և միացրեցին Անգլիային: Այսպես, հիմք որվեց Օլտերի որբերգությանը, որը ժամանակակից Անգլիայի ծանրագոյն պրոբլեմն է: Միաժամանակ «Իոլանդական սպառ պետության» տարածքում Անգլիան պահպանեց իր ռազմածովային բազաները: Դոմինիոնը մնում էր կապված Անգլիային տնտեսական պարտավորություններով, նրա դեկավարները պետք է հավատարմության երդում տային Անգլիայի գահակալին:

Անգլիայի արտաքին քաղաքականությունը առաջին համաշխարհային պատերազմից հետո առաջին տարիներին

Եթե հետպատերազմյան առաջին տարիներին Անգլիան ատիրված էր հանդուրժել Ֆրանսիայի ժամանակավոր գերիշխանությունը և վրոպական մայրցամաքում, ապա ԱՄՆ-ը եվրոպական գործերից մեկուսացնելու խնդիրը նաև կարողացավ կատարել: Վաշինգտոնի կառավարող շրջանում ու որոշումը ԱՄՆ-ը եվրոպական գործերից մեկուսացնելու մասին ընդունվեց ոչ առանց անգլիական դիվանագիտության շանքերի: Լուսունում չեն ցանկանում, որ Անգլիայի հզոր մրցակիցը ակտիվ մասնակցություն ունենա հետպատերազմյան կարգավորման Եվրոպայում:

Քենարական Թուրքիայի մետ ունեցած հարաբերություններում Անգլիան նույնպես հաջողակ դուրս եկավ, ընդ որում, գործերով որիշի ձեռքով կրակից շագանակ հանելու ավանդական ոգով: Կործանված օսմանյան կայսրության ժառանգությունից առանալով նրա այցուի բաժինը, նաև ամենանիշ շահագրգուստ չեր Թուրքիայի մասնատմաք, որը Ռուսաստանի առջև կրացեր ճանապարհը դեպի Միջերկրական ծով և Մերձավոր Արևելք: Հույն-թուրքական պատերազմը այս տեսակետից ձեռնուու էր Անգլիային քենարական կառավարությանը զիջող դարձնելու, բայց ոչ կործանելու համար: Ուստի Անգլիան շահագրգուստ պատերազմում և փաստորեն չօգ-

նեց հովաներին, թողնելով, որ նրանք պարտվեն: Նույն ձևով նաև շահագրգուստ չեր հայերի հաղթանակով 1920 թ. աշնան հայ-թուրքական պատերազմում: Անգլիան նաև հանցավոր էր Սկրի պայմանագրի ձախողման համար, որը այդպես էլ չվավերացվեց և ուժի մեջ չմտավ, որովհետև Թուրքիայի մասնատումը ձեռնուու չեր կրան: Քենար անուն էր այն, ինչ պետք էր Անգլիային՝ ձգտում էր պահպանել Թուրքիան, որը Անգլիայի համար միակ պատմեշն էր Ռուսաստանի առաջինադարձ մաս դեմ: Եվ ի բարերահանություն Անգլիայի այս անգամ Ռուսաստանի ինըը՝ Լենինի կամքով բարձրացնուու էր իր դեմ այդ պատմեշը Քենարի մետ սերտ համագործակցությամբ, բոլոր միջոցներով ստար լինելով «համաշխարհային հեղափոխության» շինձու զինվորին:

ԱՄՆ-ի պարագայում Անգլիան ստիպված էր ի վերջո նահանջել և գնալ զիջումների իր արագորեն հզորացող մրցակցին: 1921—1922 թթ. Վաշինգտոնի կոնֆերանսում նաև համաձայնեց, որ ԱՄՆ-ը ունենա ջրատարողությամբ անգլիականին հավասար հզորության գծանալիքին հավատորմ: ԱՄՆ-ի ճշնանա ներքո Անգլիան խզեց դաշինքը Շապուհիայի մետ և ընդունեց, որ վերջինիս գծանալիքին նավատորմը գգալիորեն զիջի ամերիկանին: Ընդունվեց նաև ԱՄՆ-ի առաջարկը՝ Շինասանում վարելու «քաց դռների» և «հավասար հնարավորությունների» քաղաքականություն:

Անգլիայի դժվարությունները արևմտանվրոպական պարտյունների հետ ունեցած հարաբերություններում նույնական կապված էին տնտեսական խնդիրների հետ: Պահպանողականներն Անգլիան նեռու էին պահում Եվրոպական տնտեսական ինտեգրացիայից վախճանալով, որ անդամագրվելով Եվրոպական տնտեսական համագործակցությանը Անգլիան կրոլացմի կապը Համագործակցության երկրների հետ և Կյորցը հեգեսոն ները նրանց նկատմամբ: 1958 թ. Անգլիայի նախաձեռնությամբ ի հակակշիռ «ընդհանուր շոկայի» ստեղծվեց մի նոր խմբավորում՝ «Ազգայի առևտուի եվրոպական ասոցիացիան», որի կազմի մեջ մտան Մեծ Բրիտանիան, Շվեյցարիան, Նորվեգիան, Պորտուգալիան, Դանիան, Ավստրիան և Շվեյցարիան, այսինքն՝ արևմտանվրոպական այն երկրները, որոնք դորս էին մնացել «ընդհանուր շոկայից»: Բայց այն «ընդհանուր շոկայի» հետ մրցակցության մեջ ընկածուն չբռնեց և լուծարվեց: Տնտեսությունը գիտա-տեխնիկական հեղափոխության պահանջներին հարմարեցնելու գործընթացը արդեն 1960-ական թվականների երկրորդ կեսին առաջ բերեց կառուցվածքային տեղաշարժեր արդյունաբերության մեջ և փոփոխություններ բնակչության սոցիալական կազմում, որոնք անդրադան տնտեսական ու քաղաքական պայմանի բնույթի վրա: Ավելացավ քարձը որսկավորում ունեցող քանի վորների թիվը, գիտատեխնիկական աշխատողների ու ծառայողների տնտեսակարար կշիռը: Նրանք իրենց դրությամբ իրեն վարձու աշխատողներ մոտ էին քանի վորներին: Նրանցից շատերը մոտ էին որակալ քանի վորներին նաև վարձատրության չափով: Վերաբաշխվեց քանի վորների թվաքանակը արդյունաբերության ոլորտում, ինչ, ավանդական ճյուղերում՝ տեքստիլ արդյունաբերության, ածխարդյունաբերության մեջ և երկարողային տրանսպորտում այն կրճատվեց իսկ մեքենաշինության մեջ՝ աճեց:

1964 թ. իշխանության գլուխ եկան լեյբորիստները Հ. Վիլսոնի գիտակորությամբ: Այս անգամ նրանք առանձնապես չեն տարիողություն ազգայնացում՝ առաջարկելով սույն պետականացնել պողպատաձուլական արդյունաբերությունը և պետությանը հանձնել ջրամատակարությունը: Բայց լեյբորիստները խոստանում էին արմատական փոփոխություններ հարկային քաղաքականության մեջ և արդյունաբերության արդիականացում: Արտաքին քաղաքականության բնագավառում նրանք պաշտպանում էին գինարարման, միջուկային գեներ չտարածելու, Աֆրիկայում, Լատինական Ամերիկայում և Կենտրոնական Եվրոպայում ատոմագերծ գոտիներ ստեղծելու, ուղմական ծախսերի կրճատմա-

98

կարգախոսներ: Ընտրություններում լեյբորիստները շահեցին ձայների ավելի քան 44 տոկոսը, բայց պաղամենուում ունեին ընդամենը չ ձայնի առավելություն: Դա չեր ապահովում լեյբորիստների համար կայուն մեծամասնություն պաղամենուում և նրանք գնացին ժամանակից շուտ ընտրությունների: 1966 թ. մարտի արտահերթ ընտրությունները նրանց տվեցին արդեն 94 ձայնի հուսալի մեծամասնություն:

Հ. Վիլսոնի կառավարությունը չկարողացավ ամրողացնել իրականացնել իր նախընտրական ծրագիրը: Միայն ՅՕ-ական թվականների վերջին նվազվեց արդյունաբերական արտադրության աշխուժացում: Պահպանվեց վճարման հաշվեկշռի խրոնիկական պակասորդը (դեֆիցիտը): Նկրճատվեցին ուղմական ծախսերը, շարունակվում էր կապիտալների հոսքը արտասահման, որը բարդացնում էր ներքին կապիտալ ներդրումների համար միջոցներ հայցայթելու խնդիրը: Դրա փոխարեն աճեցին ամերիկան կապիտալ ներդրումները Անգլիայում, որն այս տեսակետից երկրորդ տեղում էր (Կանադայից հետո): Լեյբորիստները ազգայնացրեցին և մետաղուրգիայի ձեռնարկությունները՝ պետության ձեռքում կենտրոնացնելով պողպատի արտադրության 90 տոկոսը:

Հ. Վիլսոնի կառավարությունը արտաքին քաղաքականության մեջ նույնական չեղավ հետևողական լեյբորիստների նախընտրական ծրագիրը կատարելիս: Նա անվերապահուեց պաշտպանեց ԱՄՆ-ի զինված միջամտությունը Վիետնամում, «սև գնդապետների» վարչակարգը Հունաստանում և գեներ տրամադրեց Խորակին՝ 1967 թ. հունիսի հորակարարական պատերազմի ժամանակ: Հարավային Ռուբեգիայում Յան Սմիթի ուսախտական վարչակարգի նկատմամբ վարելով թղթության քաղաքականություն, Անգլիան փաստորեն նպաստում էր նրա ամրապնդմանը: Խորախուական դրանցից Յ. Սմիթը 1970 թ. գարնանը Հարավային Ռուբեգիայում հոչակիլեց Հարավ-Աֆրիկայի Հանրապետությունը: Բրիտանական կառավարությունը շրջանակությամբ վերաբերմունք ունեին նաև Հարավ-Աֆրիկայի Հանրապետության ուսախտական վարչակարգի նկատմամբ և այսուղ կարեր դեր ուներ այն իրողությունը, որ այդ երկրում մերդկան ամենամեծ օտարերկրյա կապիտալը անգիտական էր:

Իր նախկին գաղութներից մեկում նավուով հարուստ Նիգերիայում Անգլիան հրահրում էր ցեղամիջյան ընդհարումների (թրայքալիզմ), առաջնորդվելով «քածանի՛ր, որ տիրեն» կայսերապետական սկզբունքով:

1960 թթ. վերջին Անգլիան հայտնվեց նոր ծանր պրոբլեմի առջև՝

դա Օլտերի հարցն էր: 1968 թ. նոկտեմբերին Լոնդոնի քայլեցին քաղաքացիական իրավունքների համար պայքարողների ընդհարումները ուսինանության հետ, որոնք շուտով ընդգրկեցին ամբողջ Օրթերը: 1922 թ. Խոլանդիայից անջատված այս հյուսիսային մարզում անձիացիների նպատակալաց քաղաքականության հետևանքով տեղի են ունեցել լորչ ժողովրդագրական փոփխություններ: Բնիկները՝ կաթոլիկ խոլանդացիները կազմում են բնակչության 1/3-ը, իսկ 2/3-ը՝ բողոքականներ են՝ մեծ մասմբ շոտլանդացիներ և ուկրացիներ: Այս պայմանը հյուսիսացիները դարձել են փոքրամասնություն իրենց իսկ հողով, որը բռնակցվել է Անգլիային: Անգլիան, նրանց նկատմամբ վարչում է խորականության քաղաքականություն: Խոլանդացիները Օլտերի համեմատաքար չուներ և բողոքականների համեմատությամբ արհամարդական և իրավագործ մասն են: Անգլիան հաստուկ դիտավորությամբ տնտեսական արտոնություններ, լավագույն հողերը և յայն իրավունքները էր շնորհում բողոքական վերաբնակիչներին՝ նրանց գայթելով և տեղում ամրապնդելու համար: Այս նորի վրա էլ ծագեց Օլտերի կաթոլիկ բնակչության պայքարը քաղաքացիական իրավունքների համար, որը զուտ կրոնական պատերազմ չէ և ունի նշանակալից ազգային ու սոցիալական երանգավորում: Անգլիայի կառավարությունը որոշեց գիշումների չգնալ և ամեն գնով ճնշել կաթոլիկների պայքարը և պահպանել Օլտերը իրու Միացյալ թագավորության անդամն մաս և ի պատասխան այդ քաղաքականության Խոլանդիայի պատագության հանրամտական գաղտնի բանակ ընդհատակյա կազմակերպությունը ծավալեց ահարենքական գործողություններ, որոնք ներկայում տեղադրություն են Անգլիայի տարածքը: Ոչ պահպանողականների կոշտ քաղաքականությունը և ոչ էլ լեյբորիստների կեղծ լիբերալ մոտեցումը չեն կարողացել լուծել Օլտերի հարցը և այն շարունակում է մնալ որպես Մեծ Բրիտանիայի առավել մեծ, թե ներքին, և թե արտաքին քաղաքական պրոբլեմ:

1970 թ. ընտրություններում պահպանողականները շահեցին ձայների 45,5 տոկոսը, որը նրանց տվեց 330 մանդատ (լեյբորիստների 287-ի դիմաց) և կառավարությունը գլխավորելու իրավունքը: Նոր կառավարության նախագահը դարձավ Է. Հիթը: Պահպանողականները չկարողացան արդյունաբերությունը հանել լճացումից, զավել սղաճը և գործազրկության աճը: Մեաց շրուծված Օլտերի խնդիրը: Է. Հիթի կառավարության առավելի նշանակալից քայլը եղավ Անգլիայի 100

եվրոպական տնտեսական համագործակցության («ընդհանուր շուկայի») մեջ մտնելը:

1974 թ. ընտրությունները առավելություն շտվին ոչ պահպանողականներին և ոչ էլ լեյբորիստներին: Բայց նույն թվականի նոկտեմբերին վաղաժամկետ ընտրություններում լեյբորիստները բացարձայ մեծամասնություն ստացան և Հ. Վիլսոնը նորից գիտավորեց կառավարությունը: Սղանը հաղթահարելու նրա փորձերը շոշափելի արդյունքի շնացրին, դրա հետ մեկտեղ աճեց գործազրկությունը, սովորեց սոցիալական հակասությունները և 1976 թ. Անգլիան Վիլսոնը հրաժարական տվեց: Նրան փոխարինեց լեյբորիստական կուսակցության նոր պարագանիք՝ Զ. Քաջագիանը: Նրա տնտեսական քաղաքականությունը նպատակամղված էր երկրի ֆինանս-տնտեսական վիճակը կարգավորելուն, սակայն բյուջեի սոցիալական կարիքների համար կատարվող ծախսների կրածառնակ հաշվին: Միաժամանակ աճում էին գները, 1978 թ. գործազրկները թիվը հասավ 1,5 միլիոնի: Լեյբորիստներին նետապնդում էին անհաջողությունները նաև արտաքին քաղաքականության բնագավառում կապված նվրոպայում նեյբորնային գենք տեղաշխատը: ԱՄՆ-ի ծրագրի պաշտպանության, Օլտերում և Հարավային Իռօքելիայում իրադրության բարդացման հետ: Եվ 1979 թ. ընտրությունների ժամանակ պահպանողականները կարողացան հմտորեն օգտագործել լեյբորիստների դժվարությունները և իշխանության գոլու գալ: Վարչապետի պարտականությունները ստանձնեց մասնագիտությամբ քիմիկու Մարգարետ Թետչերը (ուներ նաև իրավաբանական կրթություն): Անգլիայի և ողջ Արևմուտքի պատմության մեջ առաջին կառավարության դեմք մտն կանգնեց իին գործիչ, որին հաստատականության համար անվանեցին «երկաթաւ լեյի»: Մ. Թետչերը խորապես համոզված պահպանողական էր, թեև չուներ ազնվական ծագում (նպարավաճառի դուստը էր) և արհամարհանքով էր վերաբերվում լեյբորիստների սոցիալական համարվող պահպանին ու գործողություններին: Նա հայտարարում էր, որ «հակակոռանիզմն իր արյան մեջ է» և իր առջև խնդիր էր դրել «կանգնեցնել Անգլիայի սողոք դեսպատակում»: Թետչերը հանդես եկավ իրու Մանդիան «դասական կապիտալիզմի հիմունքներին» վերաբերձնելու երդվալ կողմնակից: Դա ենթադրում էր տնտեսության պետական հատվածի լրիվ և անվերապահ ապազգայնացում «ձեռնարկությունները մասնավոր մարդկանց վաճառելուց գոյացած միջոցներով պետք է մարեին պետական պարուը», ոչնչով չսահմանափակված մասնավոր ձեռնարկություն և տնտե-

սույնան մեջ պետության դերի իշեցում նվազագույնի, սոցիալական կարիքների համար կատարվող հասկացումների կրծառում, արհմիությունների իրավունքների սահմանափակում և այլն: Այս սկզբունքները հիշեցնում են գրեթե նոյն ժամանակ (1980 թ.) ԱՄՆ-ում իշխանության գործի նկած նախագահ Ռ. Ռեյգանի տնտեսական քաղաքականության համակարգը, որը հայտնի դարձավ «ռեյգանումիկա» անունով: Իր ամբողջ կառավարման ընթացքում Թետչերը մնաց հավատարիմ իր համոզունքներին և հետևողական կենսագործեց իր սկզբունքները: Արտաքին քաղաքականության մեջ Թետչերը վերստին հաստատեց Անգլիայի ԱՄՆ-ի գլուխվոր դաշնակցի համբավը, թեև նա խնդիրական իմաստով ինքնուրույն քաղաքագետ էր ու գործի:

Մեծ Բրիտանիան
80—90-ական թվա-
կաններին

Մ. Թետչերը վարչապետի պաշտոնում մնաց մինչև 1990 թ., այսինքն՝ երեք ժամանակամիջոց, որը բացադրի դեպք էր Անգլիայի պատմության մեջ: Իր ներքին և արտաքին քաղաքականությամբ նա ժողովրդավարություն նվաճեց իր երկրում և նրանց դուրս, թեև նրա հարաբերությունները թագումուն եղիսարեթ 2-րդի հետ հեռու էին համակրանքի հարաբերությունները լինելուց: Մեծ տերությունների ներկավարները Թետչերի ներ հաշվի էին նատում իրու շրջահայաց և հեռատես գործի: Նրա ներքին և արտաքին քաղաքականությունն այնպիսի հետք է թողել Անգլիայի պատմության մեջ, որ այն բնույթում են «քետչերիզմ» հասկացությամբ:

Թետչերի առաջին կառավարության առաջին քայլերը ապացուցեցին, որ պահպանողականները իշխանության գործի են կանգնել հաստակամորեն և երկար ժամանակով:

1982 թ. Ֆոլկենդյան (Մալվինան) կղզիների համար պատերազմն Արգենտինայի դեմ շովինիստական մոլոցք բորբոքեց Անգլիայում, որը Թետչերը կարողացավ հմտորեն օգտագործել: Հայթանակն այդ պատերազմում և Արջիպելագի վրա Անգլիայի գաղութային տիրապետության վերականգնումը խիստ նպաստեցին Թետչերի ու նրա կառավարության հեղինակության քարձացմանը, դիրքերի ամրապնդմանը և ազդեցին 1983 թ. ընտրությունների երքի վրա: Այդ ընտրություններում պարտություն կրելուց հետո լեյքորիստները որոշեցին հիմնովիճ վերանայել իրենց ծրագիրը: Կուսակցության նոր պարագումը՝ Նիլ Քիննորը գնաց խաղաղահրական, հակառագմական կարգախոսները ընգծելուն՝ պահանջելով Անգլիայից դուրս տանել ամերիկյան հրթիռները և ընդունել «ոչ միշուկային» պաշտպանության դոկտրինան, որը նշանակում

էր Մեծ Բրիտանիայի միակողմանի միշուկային գիմայթափում: Ավելի ուշ՝ 1989 թ. լեյքորիստները փոփոխության ենթարկեցին իրենց ներքին քաղաքականության ծրագիրը, որտեղ նրանք առաջ բաշեցին սոցիալական քաղաքականությունը ընդլայնելու, Էկոլոգիայի, գիտությունն ու մշակույթը զարգացնելու խնդիրները: Կուսակցությունն իր նպատակն էր հոչակտության կառավարմանը, բայց ոչ սոցիալիզմը, ինչու և նոր ծրագիրը ազգայնացման հարցում նվազագույնից այն կողմ չեր անցնում և հանաչում էր համերաշխության գործադուլների արգելումը, որոնք նաև նաև կազմադում էին երկրի ողջ տնտեսական կանքը: Լեյքորիստները նին խորհրդանշիչը կարմիր դրոշը փոխարինեցին նոր խորհրդանշիչով՝ կարմիր փարղով: Անգլիական հասարակության միջին խավերին նասցեագրված այս ծրագիրը լեյքորիստներին հաջողություն բերեց 1989 թ. ամռան և 1990 թ. մայիսի տեղական ընտրություններում: Նրանք դուրս եկան առաջին տեղը և համոզված էին, որ հաջող պարագանեական ընտրություններում պահանջվել են հաղթանակը: 1988 թ. լեյքորիստներից անջատված աջ թևը՝ արյուն կոչված սոցիալ-դեմոկրատները և լիբերալները միաձուվելով կազմեցին Սոցիալ-լիբերալ դեմոկրատական կուսակցությունը, որն ընտրություններում կարողացավ ստանալ ձայների մինչև 11 տոկոսը: Սակայն պառակմաննական ընտրություններում ընդդիմությունը շհասավ իր նպատակին, չնայած Թետչերի կառավարության դժվարություններին և պահպանողականների շարքերում եղած տարածայնություններին, որոնք ի հայտ եկան Թետչերին կուսակցության ղեկավար վերընտրելիս: Տնտեսական ընդհանուր աճն ակներան էր, սակայն շատերը գտնում էին, որ Թետչերի օրոր մարդիկ սկսել են ապրել «ավելի հարուստ, բայց ավելի վատ»: Բայն այն է, որ Թետչերի տնտեսական իրերականիքի հետևանքով ավելի էր խորացել հասարակության ընեղացումը: Տնտեսական զարգացման հետանքարը 1987—1988 թթ. անկումից հետո, աղաճի պայմաններում թվում էր մուաց: Հայտարարության ծովում արդունաբար հավաթը, որը Անգլիային օգնեց, հատկապես Բրիտանական կայսրության վիլուգումից հետո, զգայի չափով լուծել վատելանընորի խնդիրը, համաշխարհային շուկայում հասկը գների անկման պատճառով այլև մեծ արդյունավետություն չուներ: Երկիրը դժվարությամբ էր տանում անող ուղմական ծախսերի բեռոք:

Թետչերի քաղաքականության նկատմամբ դժգոհությունն արտահայտվեց 1988—1989 թթ. տեղի ունեցած գործադուլներում: Բայց «եր-

Կարյա լեղին» ըմբռկեց և անցավ հարձակման գործադրությունների դեմ: Հիմնական պողոքի նոր ալիքից, Թետչերը փոփոխության ենթարկեց: «Գլխահարլի» մասին օրենքը: Այս հարկը մոնիցիպալիտետները գնածում էին 18 տարին լրացած յուրաքանչյուր քնակչից և հավաքված միջոցները ծախսում էին հասարակական ծառայությունների համար՝ աղքանավորում, կարգ ու կանոնի պահպանում, տեղական գործադրությունների ֆինանսավորում և այլն: Եթե նախկինում «Գլխահարլի» գանձում էին ամբողջ ընտանիքից՝ հաշվի առնելով նրա կազմը, եկամուտները, քնակարանի կամ տան արժեքը, ապա նոր օրենքը բոլորի համար սահմանում էր հավատարաշափ, որից տուժում էին բազմամարդ ընտանիքները, բայց շահում մասնակոր տների միակնակ հարուստ քնակիչները: Նոր օրենքը պետք է լրացներ տեղական կարիքների համար հանուավարական հատկացությունների կրճատման հետևանքով գոյացած պակասորդը:

Օգուստով նոր օրենքի ընձեռած հնարավորություններից մոնիցիպալիտետները սահմանում էին զյուսիարկի բարձր չափեր: Դա տեղի բաց բողոքի ցուցների և հանրահավաքների տարեր քաղաքներում, որոնց դեմ սկսեցին կիրառել տափիկանական ուժեր: Գործը հասավ կատարի ընդհարությունների ցուցարարների ու ուսուկանության միջև, ինչպես Լոնդոնում, որտեղ բողոքի ցուցին մասնակցեց 200 հազար մայրէ: Տրաֆալգարյան հրապարակում ցուցը վերածվեց անհնար մաս ցուցարարների ու ուսուկանության միջև: Ուսուկանները գործում էին մահակթերով, ցուցարարները նրանց վրա նետում էին շեր և աղյուսներ, վառում ավտոմեքենաները, շարդում խանութների ցուցափեղերը, հարձակվում շքեղ նագնակած մարդկանց վրա: «Տրաֆալգարի հակառակարտը», ինչպես գնահատեց այդ իրադարձությունը անգիտական մամուլը, նման չեր Լա-Մանշի լաստանավների նավաստիների՝ 1988 թ. մայիսի և շուապ օգնության աշխատողների՝ 1989 թ. վերջի գործադրություններին: Անգլիայի քաղաքական կուսակցությունները և միջնև նկա գլխահարլի հակառակորդների ֆեղերացիան այն դատապարտեցին իրեն խովհանություն:

Թետչերի կառավարության դժվարությունները, որոնք կապված էին սոցիալական բողոքի պողոքումների հետ, լրացնում էին նորանդական հանրապետական բանակի ահարեկչական գործողությունները՝ արդեռ բուն Անգլիայի տարածքում: Կառավարությունը դրան պատասխանում էր «պետական ահարեկչության» սատկացումով: «Անհարեկչական կանոնադելման մասին» օրենքը փաստորեն կիրավում էր անկախու-

թյան իոլանդական մարտիկների հետ հաշվենարդար տեսնելու համար: Անգլիայի ներքին դրությունը ապականում էր նաև նախկին բրիտանական կայսրության տիրույթներից ներգաղթողների: Բուքը Անգլիա, որը ոչ միայն ուժեղացնում էր երկրի քնակչության էթնիկական խայտարկությունը, այլև տեղիք էր տախու ազգային ու ուսայական անկարգությունների:

Անվիճելի էր նաև թետչերիզմն ամրապնդող լուրջ գործուների առկայությունը: Գործադրությունների դեմ պայքարում կառավարությունը հաղողող էր դուրս գալիս իր անփում կեցվածքով: Միաժամանակ կենսամակարդակի ընդհանուր աճը, «արհմիությունների եամուլության» դեմ տարվող բարոզչությունը, միջին խավի հզորացումը թողարքին տրել-յունիտնատական շարժումը, որը եղել և մնում էր պահպանողականների գլխավոր ախոյանի՝ լեյքրիտական կուսակցության հենարանը: 1980 թ. տրել-յունիտների բրիտանական կոնգրեսում ուներ իր շարքերում 12,2 մլն անդամ, 1984 թ.՝ 9 մլն, իսկ 1890 թ. նրա անդամների թիվը պակասել էր ևս 1 միլիոնով:

Թետչերի քաղաքականությունն 80-ական 90-ական թվականների սահմանագծում նոյնական դրսուրեց պկույթան և միջազգային քաղաքական վճռորոշ հարցերին նորովի մոտենալու հատկություններ, թեև նա ունեցավ զան անհեռատես վրիպումներ: Հարավ-Աֆրիկյան Համագույնության նկատմար պանտեղ տիրող ապարտեհողի վարչակարգի պատճառով պատժամիջոցների կիրառելու: օրինակ, նավթամթերքների մատակարարումը դադարեցնելու հարցում Թետչերը առաջնորդվում էր Անգլիայի շահերով, որն առաջին տեղում էր այսուեղ ներդրված կապիտալների ծավալով: Պատժամիջոցները հարփածում էին անգլիական անդրազգային մոնոպոլիաների շահույթներին, ինչու և Թետչերը Համագործակցության երկրների կոնֆերանսում դեմ դուրս եկավ դրանց՝ պատճառաբանելով, թե պատժամիջոցներից իրը տուժում է Հարավ-Աֆրիկյան Համագույնության քնակչությունը: Բայց նա մնաց մենակ: Նամիբիայի անկախության ճանաւումը, աշունենալու, բուն Հարավ-Աֆրիկյան Համագույնությունում ծավալված իրադարձությունները՝ Հարավային Աֆրիկյան ազգային կուսակցության առաջնորդ Նելսոն Մանդելայի ազատումը բանտից և նախագահ Լեկիերիկի կառավարության՝ ապարտեհող վերացնելուն միտված քայլերը ստեղծեցին հարավ-աֆրիկյան պրոբլեմի լուծման այլ հնարավորություններ, որոնք մեղմեցին Անգլիայի դիրքի հանդեպ եղած քացանական անդրադարձը:

1990 թ. փետրվարին Անգլիան և Արգենտինան պայմանավորվեցին վերականգնել Ֆոլկլենդյան պատերազմի պատճառով խզված դիվանագիտական հարաբերությունները: Պահպանողականների դիրքերն ամրապնդվեցին նաև կենտրոնական ու արևելյան Եվրոպայում և հենց Խորհրդային Միությունում սոցիալիզմի կառուցման խորհրդային մոդելի կրասի և ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքով, քանզի հաստատեցին նրանց հակակոմունիտական, հակախորհրդային կանխագուշակությունները և Արևոտքը ամենաանհվանադրին ճանապարհով ստացավ այն, ինչին հույս չուներ հասնել իր համատեղ տնտեսական, քաղաքական և ռազմական հզորությամբ: Ահա թե ինչո՞ւ Թետշերն առանձնահատուկ հարգանք էր տածում դեպի Մ. Գորբաչովը, որի հետ բոլոր պաշտօնական և անպաշտու հանդիպումներն անցնում էին սրտագին փոխըմբռնման մթնոլորտում:

Թետշերը մինչև վերջ մնաց որպես ԽԱՏՕ-ի հզորության ամրապնդման ջատագով՝ դիտելով այն որպես միջազգային լարվածության թուլացմանը նպաստող գործոն: Նա միջուկային գենքը համարում էր խաղաղությունն ամրապնդող, համաշխարհային աղետը կանխարգելող միջոցը և դեմ էր միջուկային լիակատար գինարարին: Հակառակ ԽՍՀՄ-ի պնդումների, նա չիամաձայնեց իշեցնել բրիտանական միջուկային հզորության մակարդակը, եթե ԽՍՀՄ-ը և ԱՄՆ-ը որոշեցին ոչնչացնել իրենց՝ Եվրոպայի տարածքում տեղակայված միջին հեռահարույան միջուկային գենքը:

Եջս ամենով հանդերձ, ոժեղանում էր ընդհիմությունը Թետշերի կառավարմանը Անգլիայում և հակասությունները պահպանողական կուսակցության ներսում, հառկապես, եվրոպական ինտեգրացիայի հետագա խորացման առնչությամբ: Եջս հանգամանքները ստիպեցին Մ. Թետշերին 1990 թ. պաշտօնաթող լինել: Կառավարության դեկավարի պաշտոնը ստանձնեց պահպանողական կուսակցության նոր դեկավար՝ Զոն Միջորդը, որը հիմնականում հետևում էր իր նախորդի ներքին և արտաքին քաղաքական գծին: Նա հավանություն տվեց երկու Գերմանիաների միավորմանը, հանդես եկավ Մասատրիխուի համաձայնությունների պաշտպանությամբ՝ հանում եվրոպական ինտեգրացիայի հետագա խորացման: Անգլիական զորքերի մասնակցությունը Պարսից ծոցի պատերազմին (1991 թ.) էլ ավելի սերտացրեց Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի «առանձնահատուկ» հարաբերությունները:

Զ. Մեջորի կառավարությունը մեծ նշանակություն էր տալիս ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Ռուսաստանի դաշնության և անկախություն

հոչակած հանրապետությունների հետ հարաբերություններին, զորավոր էր դրանցում այնպիսի արմատական բարենորոգումների, որոնք հիմնովին արմատախիլ կանեն նախկին սոցիալիստական տնտեսական կառուցվածքները և կոմունիստական հիմնարկություններն ու գաղափարախոսությունները: Ռուսաստանին և ԱՊՀ մյուս պետություններին Արևմուտքի ցուցաբերած օգնությանը Մեջորի կառավարությունը համաձայն էր մասնակցել այնքանով, որքանով այդ բարենորոգումները կհամապատասխանեն վերոհիշյալ չափանիշին:

Չուն Մեջորը Թետշերի կառավարության մեջ գրադերել էր Փիանաների նախարարի պաշտոնը և ուներ կառավարությունում աշխատելու որոշակի փորձ, մասնավորապես տնտեսության դեկավարման խմառով: Դառնարով վարչապես նա բանակցություններ սկսեց Եվրոպական համագնքի հետ ավելի սերտ միություն ստեղծելու հարցի շորջը՝ ներառյալ Եվրոպական միասնական տարադրամ ստեղծելու խնդիրը: Նրա կառավարությունը կարևոր դեր խաղաց 1991 թ. Պարսից ծոցի պատերազմում իր մասնակցությամբ հակաֆրաքսն կուպիցիային: Նրա օրոք 1993 թ. տեղի ունեցան դարի խոշորագույն կառուցելուից մեջ՝ Անգլիայի և Ֆրանսիայի միջև Լամանշի մեղուցի տակով անցկացված թուենի փորձարկումները, ինչ 1994 թ. այն բացվեց երկարուղային և ավտոմոբիլային երթևեկության համար:

Անգլիայի տնտեսական զարգացմանը 90-ական թթ. երկրորդ կեսին բնորոշ էր հարաբերական կայունությունը: Ազգային համախառն արտադրանքի աճի առավել բարձր ցուցանիք (3,8 տոկոս նախորդ տարվա համեմատությամբ) նկատվեց 1994 թ., մնացած տարիներին այն տատանվում էր 2-ից 2 և կես տոկոսի միջև: Մինչև ինչ 1993 թ., ի տարբերություն Ֆրանսիայի, Գերմանիայի և Խորվաթիայի, չգրանցվեց բացասական արդյունքը: Գործազրկությունը 1995 թ. 4-րդ եռամյակում երկրի աշխատումի 8,6 տոկոսն էր կազմում, նախորդ տարվա 9,4 տոկոսի փոփարեն, և զգալիորեն ցածր էր Ֆրանսիայում և Խորվաթիայում եղած մակարդակից: 1996 թ. աշնանը նախընտրական արշավի ժամանակ «Ենյի թելեգրաֆ» լրագրում տպագրված հոդվածում Մեջորը պնդում էր, թե իր կառավարման օրոք Անգլիան հասել է այնպիսի տնտեսական հաջողությունների, որ ի վիճակի է իր տնտեսության հիմքի վրա կառուցել «մեկ երկրի եվրոպական շուկա», որը հրապորիչ կիմնի նաև արևելանվրոպական երկրների համար: Իբրև իր կառավարման արդ-

Դաշտ Մեջորը առանձնացնում էր Մեծ Բրիտանիայի արդյունաբերական արտադրության աճի առավելագույն, իսկ գործազրկության և վագագույն նակարգակը եվրոպական մուս երկրների համեմատությամբ:

Հնայած դրան, արդեն մասնակի ընտրությունների ժամանակ սարգ էր դառնում, որ պահպանողականները իրենց հեղինակությամբ սկսել էին գիշել լեյբորիստներին և հաջորդ պաղամենտական ընտրություններում նրանց հաղթանակը դրված էր լորջ վտանգի տակ: Գյանապր պատճառը պետության եկամուտները ավելացնելու նկատառությունով հարկերի հշանակալից բարձրացումն էր 1995 թ. ապրիլին և տնտեսության պետական հատվածի սահմանափակումը: Եվ, իրապես, 1997 թ. մայիսի 1-ին տեղի ունեցած ընտրություններում պահպանողական կուսակցությունը շահաջախիչ պարտություն կրեց: Լեյբորիստները, որոնք 18 տարի շարունակ ընդդիմության մեջ էին, տարան խոշոր հաղթանակ՝ ապահովելով իրենց համար բացարձակ մնամանություն համայնքների պալատում (493 մնադատ): Նոր վարչապետ դարձավ Լեյբորիստական կուսակցության առաջնորդ Էնտոնի Բելը, արտաքին գործերի նախարար՝ Ռոբին Կուլը: Ընտրություններում երկրորդը պահպանողականներն էին, երրորդ տեղում էր լիբերալ-դեմոկրատական կուսակցությունը, որը տուեղծվել է նախկին լիբերալ կուսակցության և լեյբորիստներից անջատված թվի միավորումից:

Այսպիսով, Անգլիան առայժմ, ըստ էության, դեռևս չի կրոցրել երկրութական համակարգ ունեցող երկրի համբավը: Պահպանողական կուսակցության պարտության հետևանքը եղավ առաջնորդի փոփոխությունը: Եռափուլ ընտրություններում Մեջորը պարտություն կրեց և կուսակցության առաջնորդի տեղը գիշեց ՅԵ-ամյա Ուիլյամ Հեյգին: Երրորդ փուլից առաջ Հեյգի օգտին արտահայտվեց Թեսչերը, որը և կանխորոշեց պահպանողականների առաջնորդի ընտրության ելքը:

Նոր կառավարության իշխանության սկզբունք, 1997 թ. հունիսի 1-ից, Մեծ Բրիտանիան, 1984 թ. Թեսչերի կողմից շինական կառավարության հետ կնքած համաձայնության հիման վրա, 156 տարվա տիրապետությունից հետո Զինատանին վերաբարձրեց Հոնկոնգ գաղութը այն պայմանով, որ շինացիները առնվազն 50 տարվա ընթացքում անփոփոխ են թողմելու Հոնկոնգի կապիտալիտական կարգերը: Այն Զինատանի Ժողովրդական Հանրապետության կազմում կլինի Սինգանի հատուկ շրջանը: Հոնկոնգի Զինատանի վերաբարձրները հանդիսավոր արարողության ժամանակ Մեծ Բրիտանիան ներկայացնում էր գահաժառանգ Զառագործը:

1997 թ. Մեծ Բրիտանիայում տեղի ունեցած ամենաաղմկու իրադարձությունը գահաժառանգ Զառագործի և նրա կնոջ՝ Ուելսի իշխանությի Դիանայի ամուսնապուծությունն էր, որից քիչ ժամանակ անց՝ նոյն թվականի օգոստոսի 31-ին Դիանան զոհվեց ավտովթարից իր մոտիկ ընկերոջ՝ եգիպտացի միլիարդատեր Շոդի Ալ Ֆայեդի հետ, Փարիզի կենորնում՝ Ալլա կամքջի մոտ:

Մեծ Բրիտանիայի համար իբրև ծանրագույն ներքին, միաժամանակ և արտաքին քաղաքական խնդիր է մնում Օլյուերի հարցը: 1997 թ. սեպտեմբերի վերջին Բելֆաստի Մյորմոնթ դրակում սկսվեցին բանակցությունները գրեթե 30 տարի շարունակվող ընդհատումներից ու արյունահեղություններից հետո, որոնք խել են ավելի քան 3200 մարդկային կազմը: 1969 թ. մկանած հակամարտությանը վերջ դնելու խորհրդաժողովին մասնակցում են տաս քաղաքական կուսակցություններ, այդ թվում Խողանդիայի հետ միավորվելու շատագով կաթոլիկական Շին կուսակցությունը և Օլյուերի ներկա կարգավիճակը պահպանելու կողմնակից բողոքական յունիտական կուսակցությունը, ինչպես նաև Մեծ Բրիտանիան և Խողանդիայի Հանրապետությունը: Մասնակիցները ծրագրել են համաձայնության հասնել և գինաված ընդհարումներին վերջ դնել 1998 թ. մայիսին: Սակայն բանակցություններում լորջ տեղաշարժեր դեռևս չկան: Եթե չհաջողվի համաձայնության հասնել, ապա Օլյուերում կապիտանվի 1974 թ. հաստատված ուղղակի կառավարումը Լոնդոնից և Խողանդական հանրապետական գաղութի ազատագրական բանակ կազմակերպությունը կշարունակի ահաբեկչական գործողությունները անգիտացնի ների դեմ:

Հայերը Անգլիայում

Մեծ Բրիտանիայում առաջին համայնքները ձևավորվել են 19-րդ դարի 30-ական թթ. Լոնդոնում և Մանչեստրում: 1876 թ. Մանչեստրում կառուցվել է առաջին հայկական եկեղեցին: Առաջին համաշխարհային պատերազմից հետո Թուրքիայից, Իրանից, Կովկասից և Հնդկաստանից գաղթած փոքրաթիվ հայեր բնակություն են հաստատել բրիտանական կղզիներում: 1919 թ. Լոնդոնում բնակվում էր 300 հայ: Այսուղ է 1923 թ. կառուցվեց և Սարգիս եկեղեցին, որը եղալ երկրորդ Մանչեստրի և Երրորդություն եկեղեցոց հետո:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հայերի թիվը Մեծ

Բրիտանիայում ավելացավ (2 հազար 1946 թ.): Հետագայում, համայնքը համալրվեց և հիմա էլ շարունակում է համալրվել գլխավորապես Մերձավոր Արևելքից և Երանից եկած հայերով: 1980-ական թթ. սկզբներին Մեծ Բրիտանիայում բնակչության ըստ 15 հազար հայ, հիմնականում ծառալողներ, բանվորներ, արհեստավորներ, առևտուականներ, գիտականներ, բժիշկներ, արվեստագետներ և նրանց ընտանիքի անդամները: Կան նաև մեծամարուստներ: Գաղութը դեկավարում է Համայնքային վարչությունը: Ներկայում գործում են հայկական դպրոցներ, երեք եկեղեցի, ՀՔԸՄ մասնաճյուղ, մշակութային միություններ ու կազմակերպություններ: Մշակութային կյանքի կենտրոնը Լոնդոնի Հայ տունն է, որը գործում է 1962 թ. և կազմակերպում է դասախություններ, հասերգներ, հայ մշակույթին ու գործիչներին նվիրված հանդեսներ, ցուցադրում հայկական շարժանկարներ, ունի գրադարան:

Մեծ Բրիտանիայի հայ գաղութը փոքրաթիվ է, բայց ակտիվ և կենտրոնակ, սերտ կապերի մեջ է Հայաստանի դեսպանության հետ, որը բացվել է Լոնդոնում Անգլիայի կողմից Հայաստանի Հանրապետությունը ճանաչելուց հետո: Անցյալում Մեծ Բրիտանիայի հայ գաղութի ճամաչված դեմքերը շատ ջանքեր են ներդրել, որպեսզի Անգլիայի պետական գործիչներին, հասարակականությանը և ականավոր դեմքերին հաղորդակից դարձնեն Հայ Դատին, նրանց հասցենն հայ ժողովորդի պահանջների և ազգային իդեալի արդարացնությունը: Նրանց հաջողվել է Հայ Դատի արդարացի լուծման գործին մասնակից դարձնել առանձին նշանակոր գործիչների, ինչպես Անգլիայի վարչապետ Վ. Գլատսոնը, պետական գործիչ, իրավաբան և պատմաբան Զ. Բրայսը, աշխարհահոչակ պատմաբան Ա. Թոյներին: Սակայն, ընդհանուր առմամբ, առաջնորդվելով իր երկրաբաղական շահերով և ձգտելով Թուրքիան օգտագործել ընդդեմ Ռուսաստանի, Անգլիան բացասական դիրք է գրավել Հայ Դատի նկատմամբ, և պատասխանառու է դրա արդարացի լուծումը ձախողելու համար: Մեծ Բրիտանիայի թուրքամետ գիծը ակնառու է և մեր ժամանակներում: Ծիշտ է, Անգլիայի կառավարությունը անհապաղ արձագանքեց 1988 թ. դեկտեմբերյան երկրաշրմին Հայաստանում և ցույց տվեց նյութական ու բարոյական օգնություն: Նա, մասնավորապես իր միջոցներով Գյումրիում կառուցեց դպրոց, որը կրում է հայ ժողովրդի մեծ քարեկամ Բայրոնի անունը և որի բացման արարողությանը ներկա գտնվելու համար Գյումրի ժամանեց վարչապետ Մ. Թետչերը: Սակայն Արցախի հիմնահարցում Անգլիայի պաշտոնական շրջանները

ԵԱՀԽ-ի շրջանակներում պաշտպանում են Առյօնեշանի տարածքային ամբողջականության և սահմանների անխախտելիության թեզը, մերժելով արցախահայության ինքնորոշման իրավունքը: Անգլիան մինչև իսկ արեց հասուն վերապահում, ընդգծելով, որ ճանաչում է Հայաստանի Հանրապետությունն առանց Լեռնային Ղարաբաղի, ըստ երևույթին, նկատի ունենալով Հայաստանի Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի 1989 թ. դեկտեմբերի 1-ի համատեղ որոշումը Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը միավորելու մասին: Այդ դիրքորոշումը, իմիջիալոց, բացատրվում է նաև անգլիացիների հետաքրքրությամբ դեպի աղբեկանական նավթը, ինչը պարզ դարձավ, եթե Մ. Թետչերը, արդեն պաշտոնաթող լինելուց հետո, այցելեց Բաքրու: Միաժամանակ, ժամանակակից անգլիական հասարակության մեջ կան դեմքեր, որոնք հանդես են գալիս որպես Հայ Դատի և նրա բաղկացուցիչ մասը հանդիսացող Արցախի հիմնախնդրի պաշտպաններ, ինչպես պատմաբաններ և հայագետներ Դեմքի Մ. Լանգը (մահ. 1991 թ.), Քրիստոֆեր Զ. Ուոքը, և, անշուշտ, լորդերի պալատի փոխհոգունակ, բարոնուհի Քերոլայն Քորսը: Այս անսպառ եռանդի, մարդկային մեծ առաքինությունների տեր կիմ գործիչը, որին արցախահայնը դարձրել են Ստեփանակերտի պատվագոր քաղաքացի, ոչ միայն անձնության կերպով պաշտպանում է ղարաբաղյան հարցում հայ ժողովրդի արդարացի իրավունքները միջազգային սասպարեզում, այլև պարբերաբար այլեցում է Արցախ՝ թերելով մարդասիրական օգնություն և իր բարոյական աջակցությունը արցախահայության արդարացի պայքարին:

Ֆ Բ Ա Ն Ս Ի Ա

Ֆրանսիան երկու համաշխարհային պատերազմների միջև
ընկած ժամանակաշրջանում (1918—1939 թթ.)

Առաջին համաշխարհային պատերազմը շափականց թանձ նատեց Ֆրանսիային: Նրա մարդկային կորուստները կազմում էին 2 մլն սպանված և հաշմկած: Դա այն ժամանակների համար անողի թիվ էր, եթե մահավանդ նկատի ունենանք, որ ազգը կորցրել էր հիմնականում աշխատուակ և ինքնավերատարության համար պիտանի անդամների: Վերջին հանգամանքը առանձին կարևորություն էր ստանում ֆրանսիացի ազգի համար խրոնիկական դարձած բնական աճի պրոբլեմի պատճառով:

Ծանր էին նաև Ֆրանսիայի զորթական կորուստները: Տաս առավել զարգացած արդյունաբերական դեպարտամենտներն ավերվել էին և քայլայվել: Եվրոպայի համեմատ վաշխառու երկիրը դարձել է ԱՄՆ-ի և Անգլիայի պարտապանը: Նրա պետական պարտքը կազմում էր ազգային հարատության կեսը: Արդյունաբերական արտադրանքը կրճատվել էր ավելի քան 40 տոկոսով և շարունակեց նվազել մինչև 1922 թ.:

Պատերազմի հետևանքով Ֆրանսիայի տնտեսության մեջ տեղի ունեցած կարևորագույն փոփոխությունը կապիտալների տեղաշարժն էր վարկայինց դեպի արտադրության ոլորտը, շնայած ֆրանսիական կապիտալիզմը դեռևս զգալի չափով պահպանում էր իր վաշխառուական բնույթը:

1919—1920 թթ. տնտեսական դժվարությունների հողի վրա ուժեղացան սոցիալական ընդլայնումները: Ռեկոնվիլրսիայի ճգնաժամը համակել էր նաև Ֆրանսիան: Պատերազմի ավարտի հետ կապված կրճատվում էր նաև ուազմական արտադրությունը, աճում էր գործազրկությունը, իսկ զորացրվածները համայում էին գործազրկների քանակը:

Դաշտակարգային պայքարի ակտիվացումը հետևանք էր նաև Ռուսաստանում տեղի ունեցող հեղափոխական իրադարձությունների ազդեցության: Ժ. Կլեմանտի կառավարությունը 1919 թ. ապրիլին պալյամենտում դեկրետ անցկացրեց 8 ժամյա աշխատանքափն օրվա մասին: Ծառ ձեռնարկություններում բարձրացվեց աշխատավարձը, արհմիություններն իրավունք ստացան կողեւուիկ պալմանգրեր կնքել

ձեռնարկատերերի հետ: Բայց դա չկոտրեց սոցիալական ընդլայնումների ալիքը: 1920 թ. գործադրության շարժումը հասավ իր բարձրակետին: Մեծ արձագանք առաջ բերեց երկարությանների ընդհանուր գործադրությը, որը սկսվեց 1920 թ. փետրվարի 23-ին և տևեց մի քանի շաբաթ: Երկարությաններին միացան մետաղորդները, հանքափորները և հավահանգստային բանվորները: Կառավարությունն անցավ հարձակման: Բոնությունները (արհմիությունների ձախ դեկավարների դատավարություն՝ պետական դավաճանության մեջադրանքով, երկարությանների զանգվածային լոկատուններ) մեծ հարված հասցրին արհմիություններին. Օրանց անդամների թիվը նվազեց գրեթե 3 անգամ:

Բանվորական շարժման ակտիվացման պայմաններում սոցիալիստական կուսակցությունը (ՍՖԻՕ) պառակտվեց: 1920 թ. դեկտեմբերի վերջին սոցիալիստական կուսակցության Թորի համագումարում սոցիալիստական կուսակցության ձախ թևն անջատվեց և ձևավորվեց որպես Ֆրանսիայի կոմունիստական կուսակցություն:

Ֆրանսիան ճգնում էր օգտագործել Գերմանիայի նկատմամբ ձեռք բերած հաղթանակը և իր հեգեմոնիան հաստատել Եվրոպայում: Նրա գլխավոր կովանը բանակն էր, որը խոշորագույնն էր մայրցամաքում: Ֆրանսիայի հեգեմոնիայի հանապարհին եղած առաջին լորջ խոշընդուռը՝ Գերմանիան հանված էր չարքից: Բայց մնում էր Անգլիան՝ Ֆրանսիայի դաշնակիցը պատերազմում, բայց նաև ախտյանը աշխարհի ետպատերազմյան վերաբանման խնդրում և եվրոպական գործերում: Ընդ որում, Անգլիայի գենը ֆրանսիական հավակնությունների դեմ դարձյալ Գերմանիան էր, և եթե Ֆրանսիան Վերակարում ճգնում էր հնարավորին չափ շատ թույացնել Գերմանիան, ապա Անգլիային պետք էր Գերմանիան, որը լիներ բավականաչափ ուժեղ Ֆրանսիայի հավակնությունները չեղոքացնելու համար: Միայն ֆրանս-գերմանական մըրցակցությունը Եվրոպայում թույ էր տախի Լոնդոնին հանդես գալ հաշտարար դատավորի դերում: Արդեն Վերակարի կոնֆերանսում դրսելուրվեցին ֆրանս-անգլիական հակասությունները: Ֆրանսիան պահանջում էր իրեն միացնել Սաարի ածխավազանը, և Հունաս գետի ձախ ափի գերմանական այլ հողեր, ճգնում էր Արևելյան Եվրոպայի փոքր պետություններից հակագերմանական բլոկ ստեղծել, որը ձևացեր Գերմանիայի վրա արեւելքից, որպեսզի նրան հետապնդեր հարկադրաբար երկու հակասում կուվելու ուրվականը:

1921 թ. նա ուղման դաշինք կնքեց Լեհաստանի հետ, իսկ 1921—1922 թթ. ստեղծվեց արտիկ կոչված փոքր Անտանտը՝ Զեխտ-

պղկակիայի, Հարավստավիայի և Ռումինիայի ռազմաքաղաքական դաշինքը, որը կոչված էր նաև լինելու «սանհիտարական կորդոն»։ պատճեց Խորհրդային Ռուսաստանի դեմ հեղափոխությունը դեպի Եվրոպայի երկրները արտահանելու ճանապարհին։

Վերսալան պայմանագրի համաձայն Ֆրանսիան ետ ատացակ էլզաս և Լոթարինգիան և իրավունքը 15 տարով շահագործելու Սաարի ածխահանքերը։ Անգլիայի հետ միասին Ֆրանսիան բաժանեց պարտված Գերմանիայի և Թուրքիայի գաղութները։ Նա ձեռք բերեց Միջիայի, Լիբանանի, Տոդոֆի ու Կամերունի մի մասի մասնակտները։ Ռազմատուգանքի շափը՝ 132 մլրդ մարկ, որը պետք է վճարեր Գերմանիան և որի ՀՀ տոկուր ստանալու էր Ֆրանսիան, սահմանվեց հետո։ ԱՄՆ-ը և Անգլիան մտադիր չէին, թույլ տալ Ֆրանսիային շափից ավելի ուժեղանալ Գերմանիայի թուլացման հաշվին, իսկ Գերմանիան ձգտում էր օգտագործել դաշնակիցների միջև եղած հակասությունները, որպեսզի ձախողի Վերսալի պայմանագրի կատարումը և նվազեցնի ռազմատուգանքի շափը։ Անգլիացիներն այս հարցում օգնում էին Գերմանիային։ Ֆրանսիայի հայրենասեր ազգայնական, շրջանները շատ դժգոհ էին Անգլիայի երկդիմի քաղաքականությունից։ Վարչապետ Ռ. Պուանկարեն չէր քաշվում քացանյայտ արտահայտելու այդ դժգոհությունը և պատրաստ էր ինքնուրույն քայլերի, որպեսզի Գերմանիային ծնկի բերի ռազմատուգանքների վճարման հարցում։ Լորարինգիայի երկարի հանքարարի մշակման համար անհրաժեշտ էր Ռուրի քարձորուակ ածովիը, որը Ֆրանսիան ցանկանում էր ստանալ ռազմատուգանքի դիմաց։ Գերմանիան համառում էր՝ գիտենալով, որ Ֆրանսիայի հավակնությունները դրույթ չեն գտնում Անգլիային, որն, ի դեպ, դեմ չէր նաև թույլ տալ, որ Ֆրանսիան գնա արկածախնդրության և վերջնականապես վարկաբեկի իրեն։

Գերմանիան ծնկի բերելու մտադրությամբ Ֆրանսիան որոշեց ժամանակավորապես օկուպացնել Ռուրը և 1923 թ. հունվարի 11-ին ֆրանս-թեղիական գործերը մտան Ռուր։ Գերմանիայի կառավարությունը հայտարարեց պասիվ դիմադրություն։ Ռուրում կանքը դադրեց, հանքահրերը կանգ առան, դրսից բերված ածխահատներով գործը կարգի գցելու վրաները արդյունք չտվին։ Ռազմատուգանքի դիմաց ածխի մատակարարումները խիստ կրճատվեցին։ Ֆրանսիայում մետալուրգիական գործարանները փակվեցին, ավելացավ գործազրկությունը։ Ռուրի օկուպացիայի վրա կատարված ծախսերի պատճառով ֆրանկն

արժեգորկեց։ Պուանկարենի կառավարության քայլը իսկական արկածախնդրություն դուրս եկավ։

Եվ, այնուամենայնիվ, ռազմատուգանքներն իրենց դերը ունեցան Ֆրանսիայի տնտեսության վերականգնման գործում, իմարկե, այլ գործների գուգորդմամբ։ 1924—1929 թթ. Ֆրանսիան, ինչպես և մյուս կապիտալիստական երկրները, ապրեց տնտեսության կայունացում։ Նա Գերմանիայից ստացավ որպես ռազմատուգանք 8832 մլն մարկ ուկով, միացրեց Լոթարինգիայի հանքաքարը Սաարի քարածխի հետ, տեխնիկապես վերակառուցեց ծանր արդյունաբերությունը, վերականգնեց ամերիկացի դեպարտամենտները և դրանց շնորհիվ արդյունաբերության զարգացման տեսակերպ առաջ անցավ Անգլիայից ու Գերմանիայից։ Կայունացման տարիներին գրեթե մեկ ու կես անգամ ավելացավ արդյունաբերական արտադրանքը։ Կայունացման տարիներին ավելացան սպառագինությունների արտադրությունը (Ֆրանսիան զենք էր վաճառում Արևելյան Եվրոպայի երկրներին), պերճանքի առարկաների արտադրությունը, որոնց սպառումը կենսամակարդակի բարձրացման հշան էր։ Տերսի արդյունաբերության որոշ ճյուղեր այդպես էլ դուրս չեկան լացումից և չկարողացան վերականգնել հախապատերազմյան մակարդակը։ Արտադրության ու կասիտայի համակենտրոնացման ուժնացման հետ մեկտեղ շարունակում էին իրենց գործունեությունը արհեստագործական ձեռնարկությունները, որոնք մեծ թիվ էին կազմում։ Մասք հողատիրական գյուղատնտեսությունը, չնայած ընդհանուր տնտեսության կազդյուրմանը, ապրում էր խրոնիկական ճգնաժամ։

Երկրի տնտեսությունը և ֆինանսները վերաբերում էր «Երկու հարյուր ընտանիքներ» մեծահարուստների խոմքը (Վանդելերը, Ռուտշիդերը և որիշները), որն ավելի ու ավելի էր սկրտածում պետության հետ՝ ուժնացնելով իր ազդեցությունը երկրի մերքին և արտաքին քաղաքականության վրա։

Բարձրանուում էր նաև աշխատավորական լայն զանգվածների քաղաքական ակտիվությունը և ազդեցությունը Ֆրանսիայի համար կարևոր իրադարձությունների զարգացման վրա։ Դրա վկայությունն է 1924 թ. պատղամնետական ընտրությունները, որոնք հայթանակ բերեցին ուղիկաների և տղիալիաների բլոկին, այսպես կոչված «ձախ կարտելին» ուղիկաների դեկալար է։ Երիտյի գիտավորությամբ։ Ըստրաշավի ծամանակ ձախերի բլոկը խստացավ քաղաքական լայն ներում, գների հիեռում, հարկ դնել կապիտայի վրա, ճանաչել Խորհրդային Միությունը։ Նոր կառավարությունը գլխավորեց Է. Էրիոն։ Սոցիալիս-

Աերը հրաժարվեցին մասնակցել դրամ՝ սոցիալական բարենրոգում և երի հարցում ուղիկալների հետ ունեցած տարածայնությունների պատճառով՝ լինելով ուղիկալներից ավելի ուղիկալ: Երիոյի կառավարությունը կատարեց նախընտրական խոստումների մի մասը՝ մասնակի ներում շնորհվեց, 1924 թ. հոկտեմբերին Ֆրանսիան ճանաչեց ԽՍՀՄ-ը և դիվանագիտական հարաբերություններ հաստատեց նրա հետ: Բայց Երիոյի երկրորդ կառավարության՝ կապիտալի վրա հարկ դնելու փորձը տապալվեց՝ հանդիպելով տնտեսության կատարի դիմադրությանը: Դրան գումարից ֆինանսական ճգնաժամը, որը սրվեց Սիրիայում և Մարտկույթ Ֆրանսիայի մղած գաղութային պատերազմի պատճուռով: Սննատը անվտանգություն հայտնեց Է. Երիոյի կառավարությամբ և նա ստիպված էր հրաժարական տալ՝ 1926 թ. հունիսին:

Սակայն իր կառավարման հենց սկզբում Երիոն դիմեց քայլերի՝ վերջ տալու համար Ռուի կոնֆյիլտին: Նա համաձայնեց գերմանական հարցի վերաբերյալ միջազգային կոնֆերանսի հրավիրմանը՝ հուսալով ելք գտնել Ռուի արկածախնդրությունից: Կոնֆերանսը տեղի ունեցավ 1924 թ. հուլիսին Լոնդոնում և որոշեց Ֆրանսիական զորքերը դուրս բերել Ռուից: Ռազմատուգանքների հարցի կարգավորման համար կազմեցին մինչենորդական համաձայնողով՝ ԱՄՆ-ի Աերկայացուցի նախագահությամբ: Անգլիայի և ԱՄՆ-ի բանկերը Գերմանիային 800 միլի մարկի փոխառություն տրամադրեցին: Լոնդոնի կոնֆերանսի որոշումները նշանակում էին Ֆրանսիայի արտաքին քաղաքական դիրքերի թուլացում և վկայում էին Եվրոպայում իր հեգեմոնիան հաստատելու նրա ջանքերի ձախողումը: Այս ուղղությամբ հաջորդ քայլը եղավ Լոկարնոյի կոնֆերանսը 1925 թ., որտեղ Ֆրանսիան, Բելգիան և Գերմանիան փոխարձ ճանաչում էին միմյանց միջև եղած սահմանների անձնությունը: Ինքնին հասկանայի է, որ նման պայմանագրի անհրաժշտությունը բխում էր Գերմանիայի ապագա ագրեսիվ նկատմամբ վախից, որը Աերշնում էր ԱՄՆ-ի և Անգլիայի քաղաքականությունը Գերմանիայի հանդեպ: Արդեն կային նախանշաններ, որ այդ քաղաքականությունը տանում է դեպի Գերմանիայի ռազմաքաղաքական ներուժի, ուստի և ուսանչի նեարավարության վերականգնում (Լոնդոնի կոնֆերանսը: Դառնեսի պահի ընդունումը):

Այդ իրական վախի պայմաններում Ֆրանսիան Լոկարնոյում իր անվտանգությունը կախման մեջ դրեց երաշխավորներից: Մյուս կողմից, իր դաշնակիցների՝ Զեխուլովկակիայի և Լեհաստանի՝ Գերմանիայի հետ ունեցած սահմանների ապահովության երաշխիքներ նա չստացավ:

Թերևս այդպես էր պեսոք ագրեսիայի ուղին դեպի արևելք բաց պահելու համար: Այսպես Լոկարնոյի համաձայնագիրը Ֆրանսիայի և Բելգիայի հրական անվտանգության փոխարեն տվեց խիստ կասկածելի երաշխիքներ: Լոկարնոն միաժամանակ հարված հասցրեց Եվրոպայում հեգեմոնիայի համար կարող էր խոսք լինել, եթե Ֆրանսիական հավակնություններին: Ի՞չ հեգեմոնիայի մասին կարող էր խոսք լինել, եթե Ֆրանսիան ոչ միայն ընդունակ չէր թելադրել իր կամքը պարտված ախոյանին, այլև ինքն էր ստիպված հարմարվել նրա համար ընդունելի պայմաններին: Լոկարնոն օգնեց նաև Գերմանիային դորս գալու պարտության մղավանշից և ուժեղացնելու իր դիրքերը: 1926 թ. նրան ընդունեցին Ազգերի լիգայի մեջ: Մասնավորապես, Ռուի արկածախնդրության տապալման ֆունդ վրա Լոկարնոն ակնբախ նահանջ էր Ֆրանսիական դիվանագիտության համար, որը սկսել էր կերակրվել անորչներով:

**Բրիտ-Քելլոդի
պակտը**

Լոկարնոյի համաձայնագրի լույս աշխարհ գալը գալիք չափով կարված էր Արիստիկ Բյուլանի անվան հետ, որը զբաղեցրեց Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարի պաշտոնը 1925 թ. մինչև 1932 թ. հունվարը և պաշտոնաթող եղավ մահվանից մի քանի շաբաթ առաջ՝ չտևենելով իր քաղաքականության պոտողները, որոնք ի հայտ եկան 1930-ական թվականներին: Բյուլանի անվան հետ էր կարված նաև մեկ այլ միջազգային քաղաքական ակտ, որը պետք է դառնար հերթական օդակը Գերմանիայի կողմից նոր պատերազմի սահմազերծումը նախապատրաստող իրադարձությունների շիրայում: Բայց այս անգամ դրան պետք է մասնակցեր ԱՄՆ-ը, որը, ինչպես և Վիլսոնի օրոք, ակտիվորեն միջամտում էր Եվրոպայի գործերին և ֆինանսական միջոցառումներու նախատում Գերմանիայի ռազմա-արդյունաբերական ներուժի վերականգնմանը: Նոր պայմանագրից ստրագրվեց Փարիզում 1928 թ. օգոստոսին, և ստացավ Բրիտ-Քելլոդի պակտ անվանումը Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարի և ԱՄՆ-ի պետական քարտուղար Քելլոդի անունով, որի կառավարությունը ընդունել էր Ֆրանսիայի հրավերը մասնակցելու պակտին և որի ջանքերով պակտը դարձավ բազմակողմանի և ոչ զուտ Ֆրանս-ամերիկյան պայմանագրի, ինչպես նախադես առաջարկել էր Ֆրանսիան: Բրիտ-Քելլոդի պակտը ստորագրեցին 15 տերություններ: Նրա առաջին հոդվածում ապօռ էր, որ պակտի մասնակիցները «իրենց փոխհարաբերություններում հրաժարվում են պատերազմից իրոն ազգային քաղաքականության գործիքից», երկրորդ հոդվածը գտնում էր, որ բոլոր տարածայնությունները և կոն-

Փիկտները ամկախ իրենց բնույթից և ծագումից պես է լուծեն միայն խաղաղ միջոցներով։ Ա. Բրիանի պակտի առորագրումը բնույթագրվեց որպես «նոր տարեթիվ մարդկության պատմության մեջ»՝ քրանչակացիներին կերակրող հերթական անորոշող, քանզի նոր փաստաթուղթը չէր պարունակում խաղաղությունը փրկելու որևէ իրական երաշխիք։ Խնչակու ապացուցեցին Բրիանի մասից հետո ծավածված իրադարձությունները, պատերազմից իբրև ազգային քաղաքականության միջոցից հրաժարվելու խոստումը ավելին չէր, քան հանդիսավոր հայտարարություն, որը Գերմանիային թույլ էր տախու բթացնել միջազգային աշակարգությունը և շեղեւ ուշադրությունը Գերմանիայի ինքնավերագինություն։ Այդ իսկ պատճառով Բրիան-Քելլոդի պակտը նոր հարված էր Ֆրանչիայի ազգային շամերին։

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը Ֆրանչիան Յ-ական թթ. սկզբն: Ֆաշիստական հեղաշրջման փորձի ձախողություն: Ծողովքրդական ճակատի կառավարություն (1936 թ.)

Համաշխարհային ճգնաժամը միահյուսեց 1930 թ. աշնանը և շարունակվեց մինչև 1936 թ. ներառյալ, այսինքն՝ սկզբեց աշեխի ուշ, քան մյուս կապիտալիստական երկրներում, բայց և ուշ ավարտվեց: 1936 թ. որոշ վերելիքից հետո երկիրը 1937 թ. նորից հայտնվեց ճգնաժամի մեջ: 1932 թ. արդյունաբերական մակարդակը հախանգնաժամայինի համեմատությամբ նվազեց 31 տոկոսով: Արդյունաբերական ճգնաժամը միահյուսեց ագրարայինի հետ: 1929 թ. համեմատությամբ երկու անգամ կրճատվեց արտաքին առևտուրը: Լիովին գործազորիկ էր 2,3 մլն մարդ: Իշխանության դեկի մոտ միմյանց փոխարինող կառավարությունները կանգնած էին անհաջարեկի թվացող սոցիալական խնդիրների առջև: Բնորոշ է, որ ամենից ավելի տուժեց թերև արդյունաբերությունը: Սննդամիջության գները շատ էին ընկել, բայց պարենի հսկայական պաշարներ չեին իրացվում, աբնքան որ ընկել էր ամենալայն զանգվածների գնողունակությունը: Ճգնաժամը մեծ հարված էր բանվոր դասակարգին և գյուղացիությանը, բայց նրանից տուժեցին նաև միջին խավերը, ծառայողները և մտավորականությունը: Սոցիալական պայքարը չէր սահմանափակում բանվորների՝ հանքագործների, մետաղագործների, տեքստիլագործների գործադրությունը: Դրան մասնակցում էին նաև մասն առևտրականները, արհեստավորները, մտավորականները, կանայք, երիտասարդությունը: Գյուղացիական հոգումներ էին տեղի ունենում երկորի հարավում:

Ծողովքրդական շարժման խորացումը ֆրանչիական հաս-

րակության առավել հետադեմ շրջաններում ծնեց վախ ապագայի համեմատ: Պաղամենտական վարչակարգը թփում էր նրանց ոչ պիտածի տնտեսական և քաղաքական ճգնաժամից դուրս գալու համար և ելքը տեսնում էին ֆաշիստական բռնատիրության հաստատման մեջ: Խոշոր բորժուազիայի ֆինանսական օժանդակությամբ կազմակերպվեցին ֆաշիստական խմբագրուուներ՝ «Մարտական խաչերը», «Ֆրանչիստները», «Հայրենասիրական երիտասարդությունը»: Ֆաշիստական կազմակերպությունները, օրինակ, «Մարտական խաչերը» կապեր ունեին ուսիկանության և կառավարական հիմնարկների հետ: Ա. Տարդիեի և Պ. Լավայի կառավարությունների քաղաքականությունը նպատակվոր ուսիկանության և կառավարական հիմնարկների հետ: Ա. Տարդիեի որը առանձնեց կառավարության դեկավարի պաշտոնը 1929 թ., Ֆրանչիայի դժվարությունների պատճառը համարում էր կենտրոնական իշխանության թույլությունը և պառամենտական կարգի անկայունությունը և առաջարկում էր վերանայել սահմանադրությունը և ընդապնդել գործադիր իշխանության իրավունքները: «Մարտական խաչեր» կազմակերպությունը գգտում էր պաղամենտական վարչակարգը տապալել բռնի ճանապարհով: 1936 թ. Տարդիեի կառավարությունը հրաժարական տվեց: Տարդիեից հետո իշխանության դեկն անցավ նախկին սոցիալիստ, ապագա միլիոնատեր Պիեռ Լավայի ձեռքը: 1929—1932 թթ. քաղաքական անկայունության պատճառով փոխվեց 8 կառավարություն: Դրանք հիմնականում աջակողմյան կուսակցությունների երկայացուցիչներից էին կազմված: Բայց 1932 թ. պաղամենտական ընտրությունների առաջին շրջափուլը ցուց տվեց, որ ձախակողմյան ուժերի դաշինքը՝ «ձախ կարտելը» հաղթանակի մեծ հնարավորություն ունի: Անարենկված ֆաշիստները երկրորդ շրջափուլի նախօրյակին, 1932 թ. մայիսի 6-ին կազմակերպեցին հանրապետության նախագահ Պ. Շումերի սպանությունը՝ ուսւ սպիտակգվարդիական տարագիր Գորգուլովի ձեռքով, հույս ունենալով օգտագործել այն ձախակողմյան ուժերի դեմ: Բայց նրանց հաշվիները շարդարացան: Ընտրություններում հաղթանակ տարավ «ձախ կարտելը» և ուղիկանների ու ուղիկալ սոցիալիստների դեկավար է. Էրիոն գրանցեց վարչապետի պաշտոնը: Էրիոյի կառավարությունը պաշտոնավարեց 1932 թ. հունիսից մինչև 1934 թ. փետրվարը: Նա չկարողացավ թերևացնել բանվորների ու միջին խավերի դրությունը և առողջացնել ֆինանսները: Կառավարության անհաջողություններից փորձեցին օգտվել ֆաշիստները: 1933—1934 թթ. ֆաշիստական հեղաշրջման վտանգը դարձավ իրական: Ֆաշիստներին ոգե-

շնչում էր Հիտլերի հաջողությունը Գերմանիայում: Սակայն ֆրանսիական, ֆաշիզմն ուներ իր առանձնահատկություններ: Շնայած հարվածային խոշոր շոկատների առկայությանը, Ֆրանսիայում ֆաշիստական շարժումն ավելի թույլ էր, քան Գերմանիայում և Խոտափայում, քանզի Ֆրանսիայում տնտեսական և քաղաքական զարգացման պայմաններն այլ էին: Նա ուներ գաղութային կայսրություն վիթխարի տարածքներով և Այդուական պաշտոններով: Ուստի և տնտեսական ճգնաժամը նա կարող էր մեղմել գաղութների հաշվին: Համաշխարհային պատերազմից հետո ֆրանսիական իմպերիալիզմը այնքան շրովացավ, որքան գերմանականը և ֆաշիստական բռնատիրությունը նրա համար իր իշխանությունը պահպանելու ծայրահետ անհրաժեշտ միջոց չէր, մանավանդ, որ միջին խավերը չէին տեսել անսպիսի կոսիտ սեփականազրկում, ինչպես Գերմանիայում և շրարձան զանգվածային տցիալական հենարան ֆաշիզմի համար՝ խարված նրա դեմագոգիայով: Ֆրանսիան առաջին համաշխարհային պատերազմից դորս էր եկել հրայրանակով, նրա համար չէր դրված ուսանչի հարցը և չկար այն շովինիստական մոլորը, որը կարողանային օգտագործել ֆաշիստները: Ի տարբերություն Խոտափայի և Գերմանիայի, ֆաշիստական շարժումը Ֆրանսիայում պառակտված էր տարբեր, միմյանց հետ մրցակցող խմբավորումների, որոնց մեծ մասը հենցում էր աջ կուսակցությունների և կաթոլիկ եկեղեցու վրա: Զանգվածների շրջանում ֆաշիստների ազդեցության թուլությունը բացատրվում էր նաև հրանով, որ հրանց դեկալարության մեջ մասնակցում էին ֆինանսական օլիգարխիայի ներկայացուցիչները, ինչպես «Կոմիտ դը Փորժ» խոշորագույն միավորման նախագահ Ֆրանսուա դը Վանդելը և Փարիզի միացյալ բանկի տնօրեններից մեկը՝ Էռնեստ Մերսիեն, կամ ազնվական ծագում ունեցող կոմս դը Լա Ռոռը, «Մարտական խաչեր» կազմակերպության պարագություր, որը գաղութային գորքերի նախկին գնդապետ էր: Ֆաշիզմի դիրքերի թուլությունը բացատրվում էր վերջապես, հրանով, որ Ֆրանսիան հեղափոխական, հանրապետական և ժողովրդավարական մեծ ավանդությունների երկիր էր, որը ոչ մի կերպ չէր կարելի առել Գերմանիայի և Խոտափայի մասին: Ֆրանսիայում հակաֆաշիստական ուժերը ավելի հզոր ու կենսունակ դորս եկան բանկոր դասակարգի, գուղղացիության և միջին խավերի համախմբման ու միասնության շնորհիվ, որը ձեռք բերվեց տցիալիստների, կոմունիստների ու ուղիկալների միասնական գործողություններով:

Սոցիալիստների և կոմունիստների միասնական գործողությունները

գործադույն սկսվեց: Բայց ապատամբները չունեին ընդհանուր միասնական ճակատ: Աչերն էլ նատած չեն ձեռքները ծալած: Նրանք բավականաշահ գտն էին և կատավարության նիստերից մեկում էքերտի սուպարկությամբ աշ սոցիալ-դեմոկրատ նուկեն ստանձնեց ապատամբությունը մեշտու պարտավորությունը, հայտարարելով. «Ձև որ ինչ որ մեկը պեսոք է դառնա արյունառուշ շուն»: Հունվարի 8-ին նուկեն ուժերը մերիստեցին Բեռլին և գրավեցին այն կետերը, որոնք ապատամբները վերցրել էին վերահսկողության տակ: Բեռլինում ապատամբությունը պարտություն կրեց: Ակնեցին հետապնդել ԳԿԿ-ի ակտիվ գործիչներին: Կ. Լիբկենիստը և Ռ. Լյուբենմրուրգը անցան ընդհանուր: Բայց շոտով նրանց հայտնաբերեցին և հունվարի 15-ին ծաղր ու ծանակի նեթարկելոց հետո սպանեցին: Նուկեն ուժերին հաջողվեց ապատամբներին շարդէ նաև Հու-Վենտֆալ ան արկրամատում, Բրեմենում և այլ քաղաքներում: Ապատամբությունը ճնշվեց: Բեռլինում ապատամբությունը ճնշելոց մի շաբաթ անց՝ հունվարի 19-ին կայացած ազգային ժողովի ընտրություններում հաղթանակ տարան ապատամբության դեմ համար նկած նկած կարմիր բանակ, միջոցներ ձեռնարկելոցին բորժուազիային զինառափակելու համար, պարենի պաշարները բռնագրավվում էին և բաժանվում բանվորներին: Սակայն մայիսի 1-ին նուկեն ուժերը մերիստեցին Մյունիստն և Բավարիայի խորհրդային հանրապետությունը ընկալվ: Ե. Լինենին դատեցին և մահապատճի նեթարկեցին 1919 թ. հունիսի 5-ին:

Նոյեմբերյան հեղափոխությունը իր բնույթով մնաց իրեն բորժուադատությունը և Գերմանիայում հաստատեց բորժուական պառակտնենտական հանրապետություն՝ ճանաչվեցին ժողովրդի դեմոկրատական իրավունքնեն ու ապատությունները, ճանավորական, ընդհանուր ընտրական իրավությը: Սակայն իրենց ոժը պահպանեցին գերմանական ալյանսությունը՝ ֆեոդալական ժամանակներից եկող յունկերական հողատիրությունը և

յունկերության ազդեցությունը պետական ապարատում, զինվորականության դերը և միջինարդիստական տրամադրությունները, չնայած Գերմանիան տանով էր տվել պատերազմը: Այս հանգամանքներն էլ պետք է կարևոր դեր խաղային նոյեմբերյան հեղափոխությունից ծըս-ված հանրապետության հետագա ճակատագրություն:

Գերմանիան Վերսալ-
յան պայմանագրի կա-
պանքների մեջ

Ռ. Զերշիլը իր «Երկրորդ համաշխարհային պա-
տերազմը» հուշագրությունների առաջին գրքում
գրում է, որ երբ Ֆրանսիայի մարշալ Ֆոշին
հայտնեցին Վերսալյան հաշտության պայմանա-
գիրը ստորագրելու մասին, նա մարդարեարար նկատեց, որ դա հաշ-
տություն չէ, այլ զինադադար բան տարով: Մարշալ Ֆոշը զարմանա-
լիորեն ճշգրիտ դորս նկավ նաև «զինադադարի» ժամանակամիջոցը
կունելու իմաստով: Հականակի է, որ այն, ինչ հաղթանակած ՍՅունա-
տի երկրներին ներկայանում էր իրեն հաշտություն, պարտված Գեր-
մանիայի համար ավելին չէր, քան «զինադադար», որը թույլ էր տալու
ժամանակ շահել նորից ուրիշ կանգնելու և ուսանչի համար: Շայդեմա-
սի կառավարությունը շցանձրացավ ստորագրել հաշտության պայմանա-
գիրը իրեն Գերմանիային պարտադրված թելադրանք և նրամարական
տվեց: Նոր կառավարությունը սոցիալ-դեմոկրատ Բաուերի գլխավորու-
թյամբ ստորագրեց այն: Պայմանագիրը ստորագրվեց Վերսալի պալա-
տի Հայելիազարդ դահլիճում 1919 թ. հունիսի 28-ին: Դա խորհրդանշա-
կան էր՝ այդ օրը լրանում էր Սարանոյի սպանության հիմքերորդ տա-
րերաձը: Նույն թվականի հուլիսի 9-ին Գերմանիայի ազգային ժողո-
վը վավերացրեց պայմանագիրը:

Վերսալյան պայմանագրով Ֆրանսիան հետ ստացավ Եվրասը և
Լորարինեգիան և Սաարի ածխահանքերը շահագործելու իրավունք: Գերմանիան հանաչեց Լեհաստանի անկախությունը և զիշեց նրան
Պոզնանը, Վերին Սիլեզիայի մի մասը, Արևելյան Պրուսիայի շրջաննե-
րը: Լեհաստանը ստացավ նաև Արևելյան Պոմերիան, որը նրան թույլ
տվեց ուղիղ ելք ունենալ դեպի Բալթիկ ծով: Գերմանիան տարածքա-
յին զիջումներ արեց նաև Բելգիային ու Դանիային և պարտավորվեց
նարգել Ավստրիայի ինքնիշխանությունը (սովերենությունը):

Վերսալյան պայմանագրով Գերմանիան կորցրեց իր տարածքի
1/10-ը և բռնոր գաղութները:

Սակայն դրանով չէին սահմանափակվում Գերմանիայի կորուս-
տերը: Գերմանիան և նրա դաշնակիցները բացառապես մեղավոր ճա-
նաչվեցին իրեն պատերազմը սանձազերծողներ և պետք է փոխա-

տուցեին դրա համար: Գերմանիայի վրա դրվեց ուազմատուգանք, թեև
հաղթողները չկարողացան համաձայնության հասնել դրա ընդհանուր
չափի և յորպաքանչյուրին հասանելիք բաժնի վերաբերյալ: Գերմանիա-
յին պարտադրվեցին սահմանափակումներ ուազմական բնագավառում.
այնուև վերացվում էր ընդհանուր զինապարտությունը (բանակը պետք
է կազմավորվեր կամավոր հավաքագրման միջոցով), արգելվում էր
ունենալ ստորքի նավատորմ, գծանավեր, ծանր հրետանի, տանկեր,
դիրիժարներ և ուազմական ավիացիա: Գերմանիային թուլատրվում էր
ունենալ 6 գրահակիր հավ, 6 թերու հածանավ և 12 հականականիր՝
15 հավ. ընդհանուր անձնակազմով: Նրա բանակի թվաքանակը չպետք
է անցներ 100 հազար մարդուց: Վերացվում էր գիշավոր շտաբը և զին-
ված ուժերի խմբիրը համարվում էր «Ընդրին կարգի պահպանումը»:
Հունու գետի երկու ափերի երկայնքով ստեղծվում էր պաղապահմակա-
նացված գոտի:

Այս պայմանները շատ ծանր էին Գերմանիայի համար և անխո-
սափելիորեն պետք է ծնեին Վերսալի ճիրամներից դորս արծնելու
ձգուու: Բայց ճիշտ չէր ինի ասել, թե Վերսալյան պայմանագիրը Գեր-
մանիային լիովին գրկեց նոր պատերազմի պատրաստվելու հնարավո-
րությունից: Գերմանական իմպերիալիզմի հիմքերը պահպանվեցին.
երկրի ուզմատնեսական պոտենցիալը չվերացվեց, այլ միայն սահ-
մանափակվեց՝ ընդանելիքու և միջիտարիզմը վերածնվու իրական հնա-
րավորություններով, նաև ավանդ, որ Անտառական համար Գերմանիան
մնում էր իրեն պատճեց բոլշևիզմի տարածման դեմ և բոլշևիզմը Ռու-
սաստանում տապալելու միջոց: Այդ պատճառով, եթե գերմանացինե-
րից պահանջվեց վերացնել ամրությունները արևմտյան սահմանի եր-
կարությամբ, ապա արևելքում դրանք մնում էին անձեռնմխելի: Ավե-
լին, դեռևս 1918 թ. նոյեմբերին կոմպիենյան զինադադարի պայման-
ներով (12-րդ նոյվածով) գերմանական գորքերը պետք է մնային Ռու-
սաստանում այնքան ժամանակ, քանի դեռ դաշնակիցները դա կհամա-
րելին անհրաժեշտ: Նոր պատերազմի նախապատրաստվելու իրական
հետանկարը կապված էր նաև այն բանի հետ, որ մոնուպիլիաները և
յունկերությունը պահպանեցին իրենց դիրքերը, իսկ պատերազմի հա-
մար հատուցման ամբողջ ծանրությունը ժողովրդի վրա գցելով Գեր-
մանիայի ուազմատենչ շրջանները հնարավորություն էին ստանում երկ-
րում ծավալել լայն քարոզչական աշխատանք հանում Վերսալի ճիրան-
երից ազատազրկելու, միջիտարիզմը վերականգնելու և ուսանչի հա-
մար:

1919 թ. հուլիսի 31-ին Գերմանիայի ազգային սահմանադիր ժողովը Վայմար քաղաքում ընդունեց հանրապետության Սահմանադրությունը, որը ուժի մեջ մտավ օգոստոսի 11-ին: Գերմանիան հոչակվեց բորժուադեմոկրատական հանրապետություն: Սահմանադրությամբ հայտարարվեցին խոսքի, ժողովների, միությունների, մամուլի ազատություն և ընդհանուր ու հավասար ընտրական իրավունք: Սահմանադրության առաջին խմբ հոդվածում նշվում էր, որ «պետական իշխանությունը ելնում է ժողովրդից», հոչակվում էին «աշխատանքի պաշտպանության», «մարդուն վայել գոյության ապահովման» և այլ սկզբունքներ: Կառավարությունը կազմվում էր օրենսդիր իշխանության մարմնի՝ ուղյանագի կողմից և պատասխանատու էր նրա առջև: Բայց մյուս կողմից ուղյանագի իրավունքները սահմանափակվում էին երկրորդ պալատի՝ ուղյանագի իշխանության և հանրապետության նախագահի իրավասություններով: Ուղյանագի կազմված էր երկրամասերի ներկայացուցիչներից, վերահսկող մարմին էր՝ օժովակ վետոյի իրավունքով:

Զևականորեն վայմարման հանրապետությունը համարվում էր պատյամենտական: Սակայն Սահմանադրությամբ գործադիր իշխանության ղեկավարին՝ նախագահին ընձեռված արտակարգ լայն իրավունքները նրան ընդունակ մոտեցնում էին նախագահական հանրապետությանը: Այսպէս, հանրապետության նախագահը նշանակում ու ազատում էր կանցկան (կառավարության նախագահին) ու նախարարներին, կարող էր ցրել ուղյանագը և նշանակել նոր ընտրություններ: Նա գիմնազ ուժերի գլխավոր նրանաւատարն էր և Գերմանիան ներկայացնում էր արտասահմանում: Սահմանադրության 48-րդ հոդվածը նախագահին իրավունք էր տալիս նրապարակել արտակարգ դեկրետներ, եթե խախտվել է «հասարակական անվտանգությունը» և կառավարել դրանց օգնությամբ, հարկադրել բոլոր միջոցներով, կիրառել նաև բռնի ուժ, դադարեցնել սահմանադրության նորվաճների գործողությունը: Նախագահը ընտրվում էր տղարով՝ ընդհանուր քվեարկությամբ, ինքնիշխան էր՝ անկախ պառամենտից, փաստորեն օժովակ պատասխանադիր անդամական պատրաստության մեջ: Կայսեր իշխանության վերացումը հետո հանրապետության նախագահը ձեռք էր բերում յուրատեսակ սահմանադրական ինքնակալի իրավալինակ: Վայմարյան սահմանադրության այս

առանձնահիտկություններն եւ հետագայում հեշտացրեցին իշխանության անցումը Հիտլերին և ֆաշիստական դիկտատորայի հաստատումը:

Նորատեղծ հանրապետության գոյության սկզբնական շրջանում, սակայն, պայմանները բավարար չէին ինքնակալական կարգերի վերաբերյալ սահմանադրության հայտարարության համար: Այդ պատճառով էր արելապրուսական լուները Կապահի խոռվությունը 1920 թ. մարտին անհաջողության մատնվեց:

Սակայն շարունակվեց պայքարը Վերսալյան հաշտության վերացման և բանվոր դասակարգի ձեռք բերած սոցիալական նվաճումները վերացնելու հարցի շուրջը: Եթե 1921 թ. Լոնդոնի կոնֆերանսում դաշնակիցները սահմանեցին ուղմատուգանքի չափը՝ 132 մլրդ. ոսկի մարկ և վերջնագործական ձևով ներկայացրեցին Գերմանիայի՝ սպառնալով օկուպացնել Ռուրը, Գերմանիայի կառավարությունը այն շնորհնեց և հրաժարական տվեց: Բայց նոր կառավարությունը կանցկան է. Վիրտի գլխավորությամբ ընդունեց վերջնագիրը: Միաժամանակ Վիրտը և արտաքին գործերի նախարար Վ. Ռատենաուն վերցրին Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերությունների զարգացման կուրս, մի կողմից Անտանտի տերություններին ահարենքու և ավելի գիշող դարձնելու, իսկ մյուս կողմից, Ռուսաստանի շոկան օգտագործելու միտումով, որը կինշտացներ ուղմատուգանքի վճարումը, մանաւագանդ, որ Անտանտի երկրները բաղարական նկատառումներով հրաժարվել էին այդ շոկայից: 1921 թ. մայիսի 6-ին ուղմատուգանքների վերաբերյալ վերջնագիրը ստանալու հաջորդ օրը Գերմանիան Ռուսաստանի հետ պայմանագիր ստորագրեց առևտորի վերականգնման վերաբերյալ: Խակ 1922 թ. ապրիլի 16-ին, Զենովյայի կոնֆերանսի ժամանակ, ստորագրվեց Ռուսապալոյի պայմանագիրը:

Վիրտի կառավարության քաղաքականության դեմ ծավալվեց կատաղի պայքար: 1921 թ. օգոստոսին սպանեցին Մ. Էրցբերգերին, որը ստորագրել էր Կոմպինենի գինադադարը, 1922 թ. ամռանը ահարենքության զոր դարձավ Վ. Ռատենաուն: Ռազմատուգանքների վճարման համար աշխատավորների հաշվին միջոցներ հայթայթելու քաղաքականության մեջնախառն վատթարացմուն էր ներքնախավերի նյութական վիճակը: Միաժամանակ դրանով ձգտում էին համընդհանուր զարույթի մթնոլորտ ստեղծել 1922 թ. երկրորդ կեսին Ռուրի ձեռնարկատերերը, որոնց սատար էին ունաշխատական ուժերը, սկսեցին սարտադիր կանցկան պայմատուգանքների վճարումը: Կանցկեր ի. Վիրտի

կառավարությունը ստիպված էր հրաժարական տալ և իշխանությունն անցավ Կունոյի, այսպես կոչված, «գործարար կարիքնետին»:

1923 թ. հունվարի 11-ին իբրև ուզմատուգանքների վճարումը Գերմանիայի կողմից սարսուածի ենթարկելու դեմ ուղղված քայլ ֆրանս-թելգիական գործերը օկուպացրին Ռուրի: Կունոյի կառավարությունը պատասխանեց «պասիվ դիմադրություն» գործելակերպով: Ռուրի օկուպացումը առաջ բերեց խոր տնտեսական և քաղաքական ճգնաժամ, որը Գերմանիայի տարրեր քաղաքական ուժերը, հատկապես հակառակ բեռներում գտնվող ծայրահեղականները ձգուում էին օգտագործել իրենց ծրագրերի իրականացման համար: Գերմանիայի կոմկուսը ծրագրում էր Ռուրի կոնֆլիկտը օգտագործել սոցիալիստական նեղափոխություն իրականացնելու, «բանվոր-գյուղացիական կառավարություն» հաստատելու համար: Բայց կյանքն ապացուցեց, որ կոմունիստների գործելակերպը կառուցված էր սխալ հաշվարկների վրա: Միայ էր 1923 թ. ծավալված գործարուղյան հզոր ալիքը մեկնաբանել սոսկ իբրև ներքին իշխողների դեմ ուղղված շարժում, իբրև արտադրության շեշտակի անկման, գործագրկության արագ աճի և լայն զանգվածների կյուրական վիճակի անկման համար հանցավորների: Բոլոր այս աղետների գիտավոր ալբյուրը, հենց բանվորական զանգվածների համար, Ռուրի օկուպացիան էր, մասնակներ, որ գիտավոր օկուպանուր Ֆրանսիան էր՝ «պանդական թշնամին», որը Գերմանիայից խել էր եղանակը և Լոյսարինգիան, տիրացել Սաարի ածխահանքերին և հիմա ցանկանում էր ուզմատուգանքների միջոցով նրա երակներից քամել արյունը՝ գերմանացներին մատնելով սովոր ու աշբատության: Այս իրողությունները մեծ սնունդ էին տալիս հակաֆրանսիական ազգայնական քարոզչությանը և «Հայրենիքը վտանգի մեջ է» ու «Ազգային միակորուս» պատգամախոսները պարարտ նոյ գտան հենց բանվորական շրջաններում, մասնակներ, որ դրան նպաստում էին ԳՍԴԿ և արհմիությունները: Կունոյի կառավարության «պասիվ դիմադրության» քաղաքանությունը նոյնպես պաշտպանություն էր գտնում բանվոր դասակարգի որոշակի զանգվածների կողմից, քանի որ կառավարությունը ֆինանսավորում էր այդ քաղաքականությունը ոչ միայն Ռուրի ձեռնարկատերներին վարկեր տրամադրելու միջոցով (արտադրությունը և երկաթուղու աշխատանքը դադարեցնելու համար), այլև նպաստ էր վճարում բանվորներին, որոնք հրաժարվում էին աշխատել օկուպանտների համար: Այսպիսով, 1923 թ. գործադրության շարժումը չէր կարելի

ամբողջովին հանգեցնել սոցիալական բողոքի ցուցի, անտեսելով, որ այն նաև ազգայնական զգացմունքների պողոթկում էր:

Կոմունիստների սխալ հաշվարկի արդյունք էր 1923 թ. հոկտեմբերին է. Թելմանի գլխավորութամբ Համբուրգում ծագած բանվորների ապատամբությունը, որը պարտություն կրեց: Եվ նոյն թվականի նոյեմբերին կոմկուսը հայտարարվեց օրենքից դորս: Ծիշու չե զանգվածներին սոցիալիստական հեղափոխության մեջ ներքաշելու կոմկուսի քաղաքանության ձախողումը բացատրել ԳՍԴԿ և ոեփորմիտական արհմիությունների «ղավաճանությամբ»: Գերմանիայի ներքին և արտաքին քաղաքական իրավիճակի տեսանկյունից նման գործելակերպը արկածախնդրություն էր: Բացաված չէր, որ կոմունիստների հաջողության դեպքում պատերազմից «հոգնածությունն» արդեև թորախած Անտանը չբավարարվեր Ռուրի օկուպացումով և զինված ներխուժմամբ վերականգնելու իրադրությունը:

Պարտություն կրեց նաև ծայրահեղական մյուս ընեռում դարանակալած ուժի՝ իշխանությունը գրավելու փորձը՝ հիտլերյան «գարեջրացին խոռվությունը» Մյունիսենում: Խաչիստական դիկտատորյան հաստատման համար պայմաններ դեռևս չկային: Գերապատվությունը տրվեց այն գործելակերպին, որը ձգուում էր պահպանել սահմանադրական կարգերը և դրանց շրջանակներում ժամանակավորապես ուզմական դիկտատորա հաստատելով երկիրը շուրջ բերել Ռուրի ճգնաժամի հետևանքով ծագած բարդ իրադրությունից: Այդ պատճառով Կունոյի կառավարությունը հեռացավ ասպարեզից և նրան փոխարինելու եկավ Գ. Շտրեգմանի «մեծ կուլիցիայի» կառավարությունը, որը արտահայտում էր նկուս պաղամնենուական քաղաքականության կողմնակիցների տրամադրությունները: Շտրեգմանը գտնում էր, որ Վերսալի վերահայտնաը և Գերմանիայի նզորության վերականգնմանը կարելի է հասնել նորը խուսափակման քաղաքականությամբ: Երկրի ներսում նա լայն կոմպրոմիսների կողմնակից էր՝ իր կառավարության մեջ ընդգրկեց ոչ միայն բուրժուական կուսակցությունների ներկայացուցիչներին, այլև սոցիալ-դեմոկրատներին: Շտրեգմանը շարունակեց պասիվ դիմադրությունը, սակայն ձգուում էր կայունացման համեմ առանց արտակարգ լիազորությունների: Բայց այսպես կառավարել չհաջողվեց: 1923 թ. սեպտեմբերի 26-ին կառավարությունը ստիպված եղավ վերացնել «պասիվ դիմադրությունը» և ուզմական արտակարգ դրություն մտցնել: Հոկտեմբերի սկզբին Շտրեգմանի սկզբին սոցիալ-դեմոկրատների կառավարական տվեց: Նոր կառավարությունը, որը դարձյալ գլխավո-

րում էր Ծորեզմանը, ստացավ արտակարգ լիազորություններ: Եվ թեև 1923 թ. հոկտեմբերին ֆինանսատնտեսական ճգնաժամը հասավ իր գագաթնակետին, ոչ կոմունիստներին և ոչ ել ֆաշիստներին շիածողութեա օգտագործել այն՝ իշխանության հասնելու համար:

Տնտեսական կայունացումը և ազգայնական ուժերի ամրապնդումը

1923 թ. վերջին ամիսներին դադարեցվեցին ուզմատուգանքի վճարումները: Այդ կապակցությամբ ընդունվեց «Դառնեսի պլանը» ըստ որի, ուզմատուգանքայն վճարումնարի շափշ սահմանվեց 1924/1925 թ. 1 մլրդ. մարկ ոսկով, այնուհետև դրանք ավելանալու էին: Վճարումների համար գանձում էին հարկեր և տուրքեր զանգվածային սպառման առարկաներից, պահումներ էին արդում ձեռնարկությունների և երկաթուղիների շահույթներից, որը չեր կարող նորից չխթանել հակավերսալյան տրամադրությունները բնակչության ամենալայն զանգվածների շրջանում և հող չստեղծել շովինիստական, ուսանշիստական ուժերի հաջողության համար, մանավանդ, որ պետական բյուջեն, ույսիսբանքը և երկաթուղիները դրվում էին միջազգային ուզմատուգանքային հանձնաժողովի վերահսկողության տակ: Միաժամանակ ԱՄՆ-ը և մյուս տերությունները համաձայնեցին Գերմանիային փոխառություններ տրամադրել: 1924—1929 թթ. Գերմանիային տրամադրվեց ավելի քան 10 մլրդ մարկ երկարաժամկետ և 6 մլրդ-ից ավելի կարճաժամկետ վարկ, որը թույլ տվեց մոդեռնացնել արդյունաբերությունը նոր տեխնիկական հիմքի վրա և բուռն կերպով զարգացնել երիտասարդ ճյուղերը՝ էլեկտրատեխնիկան ու քիմիան: Այս ամենը, կառավարության միջոցառությունների հետ մեկտեղ ոչ միայն թույլ տվեց կայունացնել տնտեսությունը, այլև նպաստեց Գերմանիայի ուզմատունաբերական ներուժի վերականգնմանը, որը նյութական հիմք էր ստեղծում նոր պատերազմ սահմանադրելու և ուսանշի համար: 1928 թ. արդյունաբերական արտադրանքի թողարկումն արդեն գերազանցեց 1913 թ. մակարդակը: Զուգահեռաբար կայունացավ բանվորների տնտեսական դրությունը և կրաստեց գործազրկությունը:

Սակայն 1927 թ. արտադրության աճի տեսակերը դանդարձեցին, սկսեց աճել գործազրկությունը, հիմնական կապիտալի նորոգման գործընթացը մոտենում էր իր ավարտին և, հետևաբար, ընկել էր արդյունաբերական սարքավորումների պահանջարկը: Առկա էին տնտեսական ճգնաժամի նախանշանները, ճգնաժամի, որը ընդգրկելու էր ողջ կապիտալիստական աշխարհը և արտադրության բոլոր ճյուղերը: Հա-

մաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքները շատ ծանր եղան Գերմանիայի համար, արդյունաբերական արտադրանքը կրճատվեց մոտ երկու անգամ, գործազրկությունների թիվը հասավ 5—6 միլիոնի: Հարյուր հազարավոր մասը տնտեսատերեր սնանկացան, աճեցին զյուղացիների պարութերը բանկերին և կալվածատերերին: Այլու դասակարգային պայքարը և երկիրը բացահայտ բռնատիրական միջոցներով կառավարելու տրամադրությունները դառնում էին ակնհայտ: Անում էր ֆաշիզմի վտանգը:

Գերմանիան ֆաշիստական վարչակարգի պայմաններում

Ֆաշիզմի իշխանության դեռևս 1919 թ.: Գերմանաց հաշվենարդարը գովիր գալը (1988 թ.) ֆաշիզմի իշխանիայի հետ նպաստավոր պայմաններ էր առաջադրում այդ ծայրամեջ հետադիմական, շովինիստական և ցեղապահտական շարժման տարածման համար: Ֆաշիզմի ծննդավայրը դարձավ Բավարիան: Մյունիսենյան գարեջրատերը դարձան ֆաշիզմի բուժարանները: Ֆաշիստական շարժման մեջ միջանց հետ մրցակցում էին տարբեր ուզմականացված և քաղաքական խմբավորումներ: Նրանցից մի քանիսը դադարեցրին իրենց գոյությունը, մյուսները՝ միաձուվեցին 1925 թ. ձևավորված Գերմանիայի նացիոնալ-սոցիալիստական բանվորական կուսակցության մեջ, որը գլխավորում էր Ադոլֆ Հիտլերը: Ծնունդով նա Ավստրիայի Բրաունաու քաղաքից էր, մասնակցել էր առաջին համաշխարհային պատերազմին: Այդ քաղաքական արկածախնդիրը եղանդուն գործունեություն ծավալեց Գերմանիայում 20-ական թթ. իրադարձությունների ժամանակ: Նրա կուսակցությունը ֆինանսավորում էին Ռուբր մագնատները, խոշոր կապիտալ ներկայացներ՝ Բորգիգը, Տիանենը, Ստիննենը և ուրիշներ: Պրուսիան պրոֆեսիոնալ գինվորականությունը սկզբում մեծ կասկածամտությամբ էր վերաբերվում Հիտլերին և նրա կուսակցությանը: Սակայն հետագայում փոխեց իր դիրքորոշումը և անցավ նրան ծառայելուն, ֆաշիզմի մեջ տեսնելով այն քաղաքական ուժը, որը ընդունակ էր իրականացնել ուսանշը: Իր «Մայն կամպֆ» («Խմ պայքարը») գրքում Հիտլերը շոշափում էր ուսանշի հարցը, առաջադրում Գերմանիայի համաշխարհային տիրապետության ցնորական գաղափարներ: Այն ամ-

բողջովին ներթափանցված էր մարդատյացության ու ցեղապաշտության ոգով:

Քաղաքական թվականների վերջին տնտեսական ճգնաժամի իրադրության մեջ նացիոնալ սոցիալիստները ազգային և սոցիալիստ դեմագոգիայի շնորհիվ սկսեցին ակնբախ նաջողորդություններ գրանցել իրենց օգտին: Նրանք ամենուրեք հանդիս էին զայիս Վերսալյան պայմանագիրը անհապաղ վերանայելու կոչով, իբրև «վիթավորված գերմանացի ազգի» շահերի երդվալ պաշտպաններ: Դրանով նրանք աշխատում էին արդարացնել իրենց անվանման առաջին («նացիոնալ») մասը: Եթե ի հայտ եկալ ուղմատուգանքների վերաբերյալ նոր՝ «Յունի պլանը» և դրվեց նամբարպեսի, նացիոնները քարոզական մեծ արշալ կազմակերպեցին դրա դեմ: Ծիշու է, նամբարվելի արդյունքներով «Յունի պլանը» չմերժվեց, բայց Հիտլերի կուսակցությունը ամրապնդեց Գերմանիայի ազգային շահերի անվերապահ պաշտպանի համբավը և 1930 թ. սեպտեմբերի ընտրություններում, ստանալով 6,5 մլն ձայն, դարձալ ույսատագի երկրորդ ֆրակցիան (ԳՄԿ-ից հետո): Ինչ վերաբերում է կուսակցության անվանման երկրորդ մասին՝ «սոցիալիստներ»-ին, ապա հիտլերականները հոչակում էին «Ընդհանուր քարիքը բարձր է մասնավորից» պատգամախոսը, պահանջում էին «արդարացի» աշխատավարձ, գործադրկության վերացում և բանվորների մասնակցությունը կապիտալիստների շահույթներին: Միաժամանակ գերմանացի աշխատավորի աղետակի վիճակը նացիոնալ-սոցիալիստները բացատրում էին հրեաների գործունեությամբ, որոնք ներթափանցել էին Գերմանիայի կյանքի բոլոր բնագավառները և տիրացել գերմանացի ազգի հարստություններին: «Կորչի հրեական ֆինանսակապիտալը», գործում էին նրանք և ամբողջ երկրով մեկ բորբոքում անզուսա հակասեմիտիզմ՝ նախապարատելով հրեական ջարդերը սկզբում Գերմանիայում, ապա օկուպացված Եվրոպայի երկրներում: Գերմանիայի համաշխարհային տիրակալության գաղափարը Հիտլերը և նրա համայնքներն ու գաղափարակիցները հիմնավորում էին գերմանացիների իբրև արիական բարձրագույն ուսանի միակ ներկայացուցիչները լինելու մասին ցեղապաշտական խավարամոլությամբ, հայտարարելով, որ նրանք կոչված էին իշխուկ աշխարհի վրա և ապրել լիարյուն կյանքով ի հաշիվ մյուս ժողովուրդների, որոնք իբրև ստրոկներ պետք է ծառայեն գերմանացիներին: Այս գաղափարակիտությունը, որքան էլ որ անհեթեթ էր, մարդատյաց ու զարդելի, գերմանացու, մասնավորապես, երիտասարդ գերմանացու մեջ բորբոքում էր սահման շնանաշող ատե-

ություն որիից մողովուրդների նկատմամբ, մթագնում նրա գիտակցությունը, դարձնում նրան սաղիստ ու մարդասպան: Այս ոգով նացիստները դաստիարակում էին գերմանացիներին վաղ հասակից՝ սկզբում դպրոցական «Երիտասարդ ազգ» կազմակերպությունում, այնուհետև, երիտասարդական «Հիտլերյան երիտասարդություն» և «Գերմանացի աղջկների միություն» կազմակերպություններում: Նացիոնալ սոցիալիստները գյուղացիներին խոստանում էին հող ի հաշիվ կալվածատերերի և նրանց բանկային պարտքերի վերացում, մասն բուժուազիային՝ էժան վարկ և մասն առևտորի վրա ճնշող հանրախանությների ոչնչացում, ծառայողներին և պաշտոնյաներին՝ աշխատավարձի բարձրացում, պրուական զինվորականությանը՝ վերածնված հզոր գինված ուժեր, որոնք կզգան նրա կարիքը:

Առաջին հայացքից կարող էր թվալ, որ հիտլերականների քարոզչությունն ուղղված էր խոշոր կապիտալի դեմ հօգուտ ստորին և միջին խավերի: Սակայն դա արվում էր միանգամայն նպատակալաց, որովհետև քաշիզմին պետք էր նվազել զանգվածային սոցիալական բազա: Այդ պատճառով էլ նա դիմում էր ներքնախավերին և մասն բուժուազիային՝ շարաշանելով նրանց գգուությունը: Եվ շովինիտական, ցեղապաշտական սոցիալական դեմագոգիան հասավ իր նպատակին: Հիտլերականների եւսից գնացին ոչ միայն մասն բուժուազիան, այլև բանվոր դասակարգի որոշակի մասը: Մաշիզմի գաղափարախոսությունը ներթափանցեց ընտանիքը, դպրոցը, փողոցը, համակեց բնակչության բոլոր խավերին: Սակայն Հիտլերը գիտեր, որ իր կուսակցության և նրա ծրագրի հաջողությունը կախված էր խոշոր մոնոպոլիստական կապիտալի դիրքից: Նա մտադիր չէր նեղացրել Գերմանիայի կարգերը հանուն աշխատավորական զանգվածների: Իր արտաքին քաղաքական արկածախնդրությունն իրականացնելու համար նրան պետք էր համախմբել գերմանացի ազգը, հասնել ազգային հաշտության ու համերաշխության: Նրա ցեղապաշտական տեսությունը գերմանացիներին չէր բաժանում և չէր հակադրում միմյանց ըստ սոցիալական հատկանիշի և գերմանացի աշխատավորի թշվառության պատճառը, ըստ նրա, գերմանացին չէր, թեկուզ մեծահարուստ, այլ հրեան և Վերսալը:

Եվ Փաշիստները թիւ շանթեր չգործադրեցին Գերմանիայի խոշոր կապիտալի ներկայացուցիչների, առաջին հերթին, Ռուրի մագնատների հետ մերձնեալու համար, օգտագործելով հակակոմունիստական քառոզությունը, խոստանալով Գերմանիայում արմատախիլ անել մարքսիզմը և այլն: Հիտլերի նվաճողական ծրագրերը միանգամայն համա-

հոնչ էին Գերմանիայի մոնոպոլիաներին, տնտեսության ուղղմականացումը, սպառագինությունների արտադրության աճը խոստանում էր նրանց ներքին շուկայի իրավիճակից անկախ, պետության գանձարանից ֆինանսավորվող լայն սպառում և մեծ շահույթներ: Ունվանչի բաղարականությունը խոստանում էր ոչ միայն վերաբարձեղ Գերմանիայի զաղութերը, այլև նոր տաշրածքներ ու շուկաներ Անգլիայի ու Ֆրանսիայի գաղութային կայսրությունների հաջլին, Ռուսաստանում և այլոր: Եվ ֆաշիզմի ու խոշոր կապիտալի դաշինքը տեղի ունեցավ՝ նացիոնալ սոցիալիստական կուսակցության գանձարկող սկսեցին ներհուել վիրժարի գումարներ, որոնք պետք էին բարողության և այլ նպատակներով ընտրաբշավներ կազմակերպելու համար:

Մյունիսան «օպերեցրատնային խոռվության» ժամանակ պարություն կրած ֆաշիստները մտադիր էին իշխանությունը զավել սահմանադրական նախապարհով՝ օգտագործելով Վայմարյան հանրապետության ընձեռությունները, այդ իսկ հանրապետությանը վերջ տալու համար: Եվ այստեղ մոնոպոլիստական կապիտալի հետ նրանց դաշինքը տվեց իր պատուելու 1932 թ. հուլիսին տեղի ունեցած ույիստագի ընտրություններում նացիոնալ-սոցիալիստները ստացան 13,7 միլիոն ձայն: Դա բավարար թվով մանդատներ չէր ապահովում ույիստագում կառավարության ղեկը ստանալու համար: Բայց ընտրությունները խորացրեցին Վայմարյան հանրապետության գգնաժամը:

Հաջորդ ընտրությունները 1932 թ. հոյեմբերին դարձյալ հաջողություն չքերեցին ֆաշիստներին: Ավելին, հովհանն ընտրությունների արդյունքների համեմատությամբ նրանք կորցրեցին 2 մլն ձայն, մինչդեռ ԳՍԴԿ հավաքեց 7 մլն քվե և 3 մլն ձայն ստացավ ԳԿԿ (700 հազարով ավելի, քան հոյիսին): Կոմունիստների և սոցիալ-դեմոկրատների ստացած քվեները միասին գրեթե այնքան էին, որքան հոյիսին նացիոնալ-սոցիալիստների ստացած ձայնները: Ուստի նոյեմբերյան ընտրությունները ահազանգի նշանակություն ունեցան Գերմանիայի առավել հետադիմական շրջանների համար, քանզի գործողությունների միասնության դեպքում սոցիալ-դեմոկրատները և կոմունիստները կարող էին փակել ֆաշիզմի նախապարհը: Խոշոր արդյունաբերողները և բարձրաստիճան գինուրականության զգալի մասը Հինդենբուրգին հղած ուղերձներով պահանջում էին Հիտլերին նշանակել ուստականցներ: Եվ ֆելդմարշալ Պ. Ֆու Հինդենբուրգը, որի Վայմարյան հանրապետության նախագահ ընտրվելը (ընդհանուր քվեարկու-

թյամբ) 1925 թ. արագացրել էր միլիտարիզմը վերածնունդը Գերմանիայում, վերստին նախագահ ընտրվեց 1932 թ. ապրիլին սոցիալ-դեմոկրատների աջակցությամբ՝ հավաքելով 19,3 մլն ձայն Հիտլերի ստացած 13,4 մլն ձայնի դիմաց: 1933 թ. հունվարի 30-ին նա Հիտլերին նշանակեց Գերմանիայի կանցլեր:

Եթե Հինդենբուրգը իր մոտ կանչեց կանցլեր գեներալ Շլայխերին և հայտնեց նրան պաշտոնանել անելու և կանցլերի պաշտոնը Հիտլերին հանձնելու իր որոշման մասին ու պետական քայլությունը, թե չգիտե արդյոք դրանից հետո կզարդ երկնքում, Շլայխերը նկատեց, որ այդ քայլը կատարելուց հետո ֆելդմարշալը հազիվ թե հայտնվի երկնքում:

Գերմանիան ֆաշիզմի իշխանության տակ

Ֆաշիզմը իշխանությունը զավելց Գերմանիայի համար ներքին և արտաքին չափազանց բարդ պայմաններում: Համաշխարհային տնտեսական ճգնաժամամբ ծանր հետևանքները մեծ պատերազմում կատարյալ պրտություն կրած և ուղղացնաբների բերի տակ կրած երկու համար, գործադրության արագ աճը, սովոր, տառապանքները ֆաշիստներին թույլ տվեցին ազգային ու սոցիական դեմագոգիկ բարողությամբ ու խոստումներով իրենց նույնից տանել գերմանացիների ճընշող մեծամասնությանը: Եվ, այնուամենայնիվ, ֆաշիզմի վտանգը կառելի էր կանչարգելու, եթե դրան չհանգարեցին մի շարք պատճառներ, որոնցից առավել կարևոր են.

1. Գերմանիայի ազգաբնակչության մեծամասնությունը կազմող և բաղարականապես առավել ակտիվ բանվոր դասակարգի պառակտվածությունը: Նրա մի մասը գնում էր սոցիալ-դեմոկրատների, մյուսը՝ կոմունիստների նույնից: Պառակտված էին նաև բանվորական արհմիությունները: ԳՍԴԿ-ը և ԳԿԿ-ը չեն վատահում միմյանց և չկարողացան նաև գործողությունների միասնության: Կոմունիստական շարժման մեջ իշխում էր Սուսինի առաջադրած այն թեկնը, որ հեղափոխության Յ-րդ փոլում, եթե այն դուրս է գալիս մի երկրի սահմաններից և դառնում է համաշխարհային, գլխավոր հակառակորդ սոցիալ-դեմոկրատիան է, որի դեմ կոմունիստները պետք է ուղղեն իրենց հիմնական հարվածը: Այս հիմնադրույթը ոչ միայն խանգարում էր կոմունիստների և սոցիալ-դեմոկրատների միասնական հակաֆաշիստական նախա-

ստեղծմանը, այև սոցիալ-դեմոկրատներից ստիպում էր գործողությունների ձմբանորդքան վերաբերյալ կոմոնինատների առաջարկություններին վերաբերվել անվատահությամբ, իբրև սրատեհապաշտություն: Միաժամանակ Գերմանիայում ընթացող գործընթացներին համանման երևություններ՝ միակուսակցական համակարգի հաստատում, մարդու իրավունքների և ազատությունների վերացում, ամբողջատիրություն, անհատի պաշտամունք և ոչնչով չափանակական բացարձակ դիկտատորայի հաստատում, համաշխարհային տիրակալության պահանջեր՝ կոմոնիզմի աշխարհի մասշտաբով հայշանակի միջոցով, տեղի էին ունենում պրոլետարիատի դիկտատորայի երկրում Խորհրդային Միությունում, որը չեր կարող չզգաւուցնել գերմանական սոցիալ-դեմոկրատներին: Բանն այն է, որ ԳԿԿ առաջարկում էր ոչ թե պարզապես ֆաշիզմի վայսեգի չեղորացում՝ Վայմարյան հանրապետական վարչակարգը ֆաշիստական ամբողջատիրությունից փրկելու համար, այլ իբրև միակ այլընտրանք՝ սոցիալիստական հեղափոխություն և պրոլետարիատի դիկտատորայի հաստատում, այսինքն՝ պահանջում էր Գերմանիայում ներդնել այն, ինչ տեղի ուներ Խորհրդային Միությունում: Ս.-Դ.-ին առաջարկվում էր ընտրություններուն 2 ամբողջատիրական վարչակարգերի միջև: Այդ պատճենով սոցիալ-դեմոկրատիայի համար, որպես «փոքրագոյն չարիք» մնում էր Վայմարյան հանրապետական վարչակարգի պահպանումը: Նա չեր կարող ընդունել կոմոնինատների՝ «Փաշխատական կամ խորհրդային Գերմանիա» հարցադրումը, քանի խորհրդային կարգերի հաստատումը Գերմանիայում կեշանակեր ամբողջատիրություն, կոմ կուսի միակուսակցական դիկտատորա, որն անպայման կհանգեցներ նիմոնական հարվածի մասին ստալինյան թեզի իրագործմանը և Գերմանիայում պրոլետարիատի դիկտատորայի առաջին գործողությունը կիհներ հենց սոցիալ-դեմոկրատիայի վերացումը, հավանաբար, նաև ֆիզիկական հաշվեհարքար սոցիալ-դեմոկրատների հետ: Այսպիսի, կոմոնինատները սոցիալ-դեմոկրատներին առաջարկում էին ստորագրել իրենց մասնակի դատավճիռը, որին հրանք գնալ չէին կարող: Անա թե որտեղ է գաղտնիքը սոցիալ-դեմոկրատիայի «դրավաճանության», որը տասնամյակներ շարունակ թմբկահարվում էր խորհրդային գրականության մեջ: Ֆաշիզմի իշխանության գոլոս գալուց հետո միայն 1935 թ. հոկտեմբերին ԳԿԿ Բրյուսելի կոնֆերանսը հանեց պրոլետարիատի դիկտատորայի և Խորհրդային Գերմանիայի համար պայքարի լոգունը և իբրև մերձակա նպատակ առաջ քաշեց ֆաշիզմի վարչակարգի

տապալումը և դեմոկրատական ազատությունների ու իրավունքների վերականգնումը: Բայց արդեն ոչ էր:

2. Խոշոր մոնոպոլիստական կապիտալը այլև անկարող էր կառավարել բորժուա-դեմոկրատական պաղամենտական միջոցներով և գնաց բացահայտ, անսպող անաբեկչական բռնատիրություն հաստատելու ողիով, ինչպիսին էր ֆաշիստական դիկտատորան: Միաժամանակ ֆաշիզմն էր ընդունակ իրականացնել Գերմանիայի վերառագվականացման և ուսանշի ծրագիրը, որը փայտայում էին մոնոպոլիստներն ու գեներալիստները: Փաստ է նաև, որ կոմկուսի սոցիալիստական հեղափոխության կոչերը ճշմարտանման էին դարձնում «կոմոնինատական վլունգի» վերաբերյալ խոշոր բորժուազիայի և նրա շահերն արտահայտող բաղաքական ուժերի բարձրացրած աղմուկը:

3. Վայմարյան հանրապետության վարչակարգը ենթարկվել էր էական փոփոխությունների. նա շատ ավելի նման էր նախագահական, քան պաղամենտական հանրապետության և կառավարփում էր փաստորեն նախագահական արտակարգ դեկրետների միջոցով: Այսպես, Հինդենբուրգով հրապարակել էր 1930 թ. 5, 1931 թ.՝ 44 և 1932 թ. արդեն 66 արտակարգ դեկրետ: Մինչդեռ ոպիստագը գրեթե զրկվել էր օրենսդրական իրավասությունից՝ 1932 թ. նա միայն 5 օրենք ընդունեց: Հանրապետական վարչակարգերում չափազանց մեծ լիազորություններ ունեցող նախագահներին հաճախ անկանում են «հանրապետական միապետներ», քանզի նման դեպքերում մինչև անձնիշխանությունը և բռնատիրությունը միայն մի քայլ է, հատկապես պաղամենտական դեմոկրատիայի ավանդությներ չունեցող երկրում, ինչպիսին էր Վայմարյան Գերմանիան, որը ֆաշիզմի հայշանակից ընդամենը մեկ և կես տասնամյակ առաջ էր հրամեցած տվել բացարձակ միապետությանը:

4. Արևմտաեվրոպական դեմոկրատական երկրների վերաբերմունքը դեպի գերմանական ֆաշիզմը հակասական էր և երկրիմի: Անգլիայի և Ֆրանսիայի պետական գործիչները հասկանում էին, որ Գերմանիայում ֆաշիզմի իշխանության գոլոս գալու նվազային կենտրոնացումը ստեղծվում է նոր պատերազմի օջախ: Բայց նրանք հոյս ունեին արագորեն վերածնվող և նզորացող գերմանական միլիտարիզմի հարվածը ուղղել դեպի Արևելյան՝ Խորհրդային Միության դեմ և ապագա պատերազմը վերածնվող կենաց ու մահու գոտեմարտի երկու ամբողջատիրական պետությունների միջև, ձերբագատվել ոչ միայն Գերմանիայից, այլև բուշկազմի վտանգից:

Ֆաշիստական դիկտու-
տուրան Գերմանիայում Հիտլերը ստացավ ռայխսկանցերի պաշտոնը,

եթք նացիոնալ-սոցիալիստները չունեին անհրա-
ժեշտ մեծամասնություն ռայխստագում: Հիտլերի
կողմանական կառավարության մեջ նրանք ունեին 4 ներկայացոցից, գրե-
թե երեք անգամ ավելի քիչ, քան բորժուական կուսակցությունները:
Իսկ նրանց պետք էր վերացնել Վայմարյան հանրապետության քաղա-
քական համակարգը և փոխարինել այն ֆաշիստական բռնատիրական
պետական մեծամիջումը՝ վերսից ներքի: Սահմանադրական հանա-
պարհով հասնել այդ նպատակին անկարելի էր, քանզի դրա համար
ռայխստագում պետք էր ունենալ մասնակցությունը 2/3-ը, որը նացիստները
չունեին: Եվ նրանք որոշեցին ցրել ռայխստագը, հուսալով նոր ընտրու-
թյուններում շահել այդ մեծամասնությունը: Նախագահական հրամա-
նագրով ռայխստագը ցրվեց և նոր ընտրությունները նշանակվեցին
1933 թ. մարտի 5-ին: Սակայն փետրվարի վերջին պարզ դարձավ, որ
նացիոնալ-սոցիալիստները նոյնինչ ահաբեկման և ստրանի միջո-
ցով չեն կարող հասնել վճռական հաղթանակի ընտրություններում և
ֆաշիստները դիմեցին ահակոր սադրիչ քայլ՝ 1933 թ. փետրվարի
27-ին հրուենեցին ռայխստագի շնչերը, հանցանքը բարդելով կոմունիստ-
ների վրա: Նոյնինչ այդ մթմուրտում հիտլերականներին չհաջողվեց
վճռական հաղթանակ տանել ընտրություններում և ստանալ սահմանա-
դրական ճանապարհով կառավարությանը արտակարգ լիազորություն-
ներով օժտելու համար անհրաժեշտ մանդատների 2/3-ը: Նրանք հա-
վաքեցին 17,2 մլն ձայն (43,9 տոկոս), ավելի քան 22 մլն ընտրողներ
քվեարկեցին ֆաշիստների դեմ, որոնցից 12 մլն ավելին՝ հօգուտ
ԳՍԴԿ-ի և ԳԿԿ-ի: Այս ժամանակ նացիստները կոմունիստներին գրկե-
ցին պատգամավորական լիազորություններից և մարտի 23-ին ռայխս-
տագում անցկացրեցին Հիտլերի կառավարությանը արտակարգ լիազո-
րություններ տպու օրենքը: Կառավարությունը դուրս բերվեց ռայխս-
տագի հսկողությունից և ստացավ օրենքներ հրապարակելու իրավունք: Այս օրենքը իրավական հիմք դարձավ Վայմարյան քաղաքական հա-
մակարգի վերացման համար:

Մարտի 14քին ձեռքակալվեց ԳԿԿ-ի առաջնորդ Էռնեստ Թելմա-
նը, որը տասնմեկ և կես տարի զնդանում անցկացնելուց հետո սպան-
վեց ֆաշիստների ձեռքով: Կոմունիստական կուսակցությունն արգելվեց: Շուտով արգելվեցին նաև ԳՍԴԿ և արմիմությունները, հազարա-
վոր կոմունիստներ ու սոցիալ-դեմոկրատներ ենթարկվեցին խոշտան-

գումարերի և սպանվեցին: Ֆաշիստները իշխանությունը գալթելուց հե-
տո, ընդամենը 5—6 տարվա ընթացքում համակենտրոնացման ճամ-
բարենքը նետեցին ավելի քան մեկ միլիոն մարդ: Մոլեգնում էին ՍՍ
պահոնդական շոկատները (schutz-Staffel քաղից) և գետապոն (Geheime Staatspolizei) քաղերից: Բոշժժուական կուսակցությունները
հայտարարեցին ինքնալուծարման մասին, հաստատվեց միակուսակցա-
կան համակարգ՝ նացիոնալ-սոցիալիստական կուսակցությունը մնաց
իրեն միակ քաղաքական ուժը Գերմանիայում: Հինդեմիրովի
մահից հետո 1934 թ. Հիտլերը միացրեց նախագամի և ույիսկանցել-
րի պաշտոնները և ամբողջ իշխանությունը կենտրոնացնելով իր ձեռ-
քում դարձավ դիկտուարով՝ ցման «Փյուրեր և ույիսկանցելեր», որի «գե-
րագույն կամքին» էին ենթարկված բոլորը և ամեն ինչ: Գերմանիայի
կյանքում սկսվեց նրա պատմության ամենախավարամու և այրունալի
շրջանը: «Խոռվարար գրքերը» այրելուց գոյացած խարուկները և գի-
շերային ջահաներենը դարձան Գերմանիայի բնանկարի ամենաբնորոշ
և սովորական ատրիբուտները: Հիտլերը անզուա արշավ սկսեց առա-
շադեմ մտավորականության դեմ: Նրանցից շատերը, հատկապես
հրեաներ, ստիպված էին հեռանալ Գերմանիայից, մյուսները նետվե-
ցին բաները և համակենտրոնացման ճամբարները: Հետադեմ մտա-
վորականները իրենց ծառայությունն առաջարկեցին ֆաշիզմին, սկսե-
ցին գաղափարական և «գիտականորեն» արդարացնել ու հիմնավորել
մոլի շոլինիզմի, ցեղապահության ու տեսորի վար-
չակարգը, տարիողել գերմանացի ազգի «մեծության» «ազնվացեղու-
թյան», «քացախկության» շինու գաղափարները, արվեստն ու գրա-
կանությունը սկսեցին գոլերգել Փյուրերի «մեծությունը», որին վերա-
գրվում էր գերմանացի ազգի փրկիչի դեր և առաքելություն: Հիտլերյան
Գերմանիայի առողջայի ամենաբնորոշ երկույթներից մեկը դարձան
հրեական շարդերը:

Ռայխստագի հրդեման գործով դատավարությունը ենելի ունե-
ցավ Լայպցիգում: Մինչ այդ ձերբակալվել էր այն ժամանակ Գերմա-
նիայում գտնվող բոլղարացի կոմունիստ և կոմիսաներնի գործադիր
կոմիտեի անդամ Գեորգի Դիմիտրովը, որին էլ ենթարկվել էր ույ-
խատագը հրդեման մեղադրանքը: Դատավարությունը հանդես եկան
Գյորինգը, երկրորդ նացիոնալ սոցիալիստը՝ Հիտլերի հետո, և քարոզ-
չության նախարար Գերեկը: Սակայն դատարանը արդարացրեց Դի-
միտրովին, որը ռայխստագի հրկիզման մեղադրաներ անվանեց իրենց՝
ֆաշիստներին: Հաշվեհարդար տեսելով քաղաքական կուսակցություն-

ների և արհմիությունների հետ և, ընդհանրապես, վերջ դնելով Վայ-մարյան հանրապետությանը, ֆաշիստները ձեռնամուխ եղան տնտեսության ռազմականացմանը: Ֆյուրերի մերձավոր գիակիցները՝ Գյուրինգը, Գերելսը, Հիտլերը և մյուսները դարձան մոնոպոլիաների փայտերեր: Արդյունաբերական ձեռնարկությունները բաժանվեցին «ռազմական տեսակետից վճռականների» և «ռազմական տեսակետից կարեվորների» որոնք առաջին հերթին էին վարկավորվում, մատուկարարվում հումքով, բանվորական ուժով: Ստորև 18 խոշորագույն մոնոպոլիաների ներկայացուցիչներից բաղկացած գերմանական տնտեսության գլխավոր խորհուրդ՝ Կրուպի գլխավորությամբ, որը պետք է կառավարեր տնտեսությունը: Սա ֆաշիստական պետության և մոնոպոլիաների սերտաճանան ամենաակերախ վկայությունն էր. արդյունաբերության ճյուղերի գլուխ կարգվեցին «ֆյուրերներ» և յուրաքանչյուր կապիտալիստի վերապահվեցին պետական իշխանության ներկայացուցիչ լիազորություններ, ձեռնարկության տերը կոչվում էր «ֆյուրեր», իսկ ձեռնարկության բանվորները «ֆյուրերի անձնակազմ», ձեռնարկատերի դեմ ամեն մի եկությ դիտվում էր իրեն եկությ պետության դեմ և դաժանորն ճնշվում էր: 100 հազար մարդից պակաս կայիտալ ունեցող լնկերությունները վերացվեցին: Դա կապիտալի բռնի համակենտրոնացում էր հօգուտ խոշոր մոնոպոլիաների: Սնանկացած մանր ու միջին ձեռնարկատերների զայրությը ֆաշիստները ուղղում էին ուրիշ ժողովուրների դեմ:

«Ժառանգական կալվածքների» մասին օրենքով հիտլերականները արգելեցին 6,5 հեկտար և ավելի հող ունեցող գյուղացիական տնտեսությունների բաժանումը. դրանք ժառանգաբար անցնում էին ավագ որդուն: Մյուս զավակները պետք է ծառայեին ՍՍ-ի, գետապոյի կամ բանակի շարքերում իրենց ապագան կապելով պատերազմի և օտար երկրների զայթնան ու կողոպտման հաշվին հարստանալու հետ:

Երկամյա աշխատանքային պարմարկ մտցվեց 18-ից 25 տարեկան երկան երիտասարդների համար: Նրանք ուսանում էին և զինվորական գործ էին անցնում հատուկ ռազմականացված ճամբարներում: Ռազմական ծախսերը 1933—1939 թթ. ավելացան 10 անգամ կազմելով պետության բյուջեի 58 տոկոսը: Խնդիր էր դրված չորս տարում բանակը և տնտեսությունը պատրաստել նոր պատերազմ սանձազերծելու համար: 1939 թ. կեսերին ֆաշիստական վերնախավին այս խնդիրը թվում էր արդեն կատարված: Հիտլերականները մտցրին ընդհանուր զինապարտություն, ծավալեցին ռազմածովային և ռազմաօդային ճա-

վատորմների շինարարություն, Հունոսի ապառազմականացված գոտի մտցրին զորքեր: Այս ամենը նշանակում էր Վերապյան պայմանագրի ունահարում:

Ֆաշիստական Գերմանիայի ազրեսիվ գործողությունները բաժանվեցին 2-րդ համաշխարհային պատերազմի նախորդ:

Ծուտով Գերմանիան անցավ ուղղակի ագրեսիվ գործողությունների: 1938 թ. զավթեց Ավստրիան՝ «անշլյուս» («միացման») անվան տակ: Նացիստները հանդիս էին գալիս պատմական գերմանական հողերը միավորողների դերում: Այս պատրվակով Հիտլերը դրեց Զեխուլովակիյ՝ Գերմանիային սահմանակից և առավելացն գերմանացիներով բնակեցված Սուդետական մարզի հարցը: Հիտլերը անարեկում էր, ապառնում պատերազմով, եթե անհապաղ Սուդետական մարզը չհանձնվեր Գերմանիային: Ազրեսորին «խաղաղեցնելու» և խաղաղությունը փրկելու պատրվակով 1938 թ. սեպտեմբերի 29-ին Մյունիսենում Անգլիայի վարչապետ Ն. Չեմբերլենը, Ֆրանսիայի վարչապետ Է. Թալային և Խուպլիայի բռնակալ Բ. Մուսոլինին Հիտլերի հետ ստորագրեցին համաձայնագրի Սուդետական մարզը Գերմանիային անցնելու վերաբերյալ: Փոխարենը Անգլիան և Ֆրանսիան Գերմանիայի հետ ստորագրեցին հոչակագրեր միմյանց դեմ պատերազմելուց հրաժարվելու վերաբերյալ: Մյունիսենյան գործարքը համգեցրեց Զեխուլովակիյի իրեն անկախ պետության վերացմանը, որովհետև Հիտլերը չբավարարվեց Սուդետական մարզով և 1939 թ. մարտին զավթեց ամբողջ Զեխուլովակիան: Կարծես թե հիտլերյան բանակների հետագա արշավի ուղին գծված էր. Գերմանիան շարժվում էր դեպի արևելք. դեպի ԽՍՀՄ-ի սահմանները: Մյունիսենյան «խաղաղարարներին» թվում էր, թե իրենց ծրագիրն իրականացնում է և հետու չէ այն ժամանակը, երբ գերմանական նացիզմը և խորհրդային կոմունիզմը կրախվեն կատաղի գոտեմարտում ու կոչնչացնեն միմյանց: Բայց նրանք չարաչար սիալվում էին, արևելքում արդեն մտորում էին հիտլերյան ագրեսիայի ալարը Արևմուտքի դեմ շուր տարու մասին: Հաշվարկը պարզ էր. անհրաժեշտ էր, որ Գերմանիան, Անգլիան և Ֆրանսիան ընդհարվենին երկրորդ համաշխարհային պատերազմում և փոխադարձաբար ոչնչացնեին միմյանց: Նման ելքը ոչ միայն կփրկեր Խորհրդային Մյուլյունը Գերմանիայի հետ բախվելու վտանգից, այլև կիանգեցներ կոմունիզմի հայթանակին Եվրոպայում, գուցե և աշխարհում, որովհետև լենինիզմը սովորեցնում էր, որ համաշխարհային պատերազմները կապիտալիստական պետությունների միջև ծնում են կա-

պիտակիմի ընդհանուր ճգնաժամեր, որոնցից էլ մշտապես ծագում են հեղափոխություններ: Հետևաբար, թե՛ մյունիսենյան գործարքը և Հիտլերին, դեպի արևելք մղելու Արևմտությի քաղաքականությունն ամրողական վերցրած և թե՛ Խորհրդային Միությունում պատրաստվող դրան համարժեք պատասխանը միայն դարձնում էին իրական երկրորդ համաշխարհային պատերազմի սանազերծումը: Հիտլերյան դիվանագիտությանը մնում էր ճարպկորեն օգտագործել այս հակամարտության ընձեռած հնարավորությունները:

Հիտլերյան ագրեսիան զապելու իրական ցանկության բացակայությունն ինչպես Արևմտություն, այնպես էլ Արևելքում դիվանագիտական խաղի վերածեց 1939 թ. ամուսնը տեղի ունեցած անգործական-խորհրդային բանակցությունները Մոսկվայում, որոնք ի սկզբանե դատապարտված էին ձախողման: Բանակցությունների վերջին ըրջանում Խորհրդային Միությունը իր պարտնյունների թիկունքում կազմելի մեջ էր Փաշիստական Գերմանիայի հետ: 1939 թ. օգոստոսի 23-ին ԽՍՀՄ-ը ստրագրեց չհարձակման պակտ Գերմանիայի հետ՝ 10 տարվա ժամկետով: Չհարձակման պակտի կետերից մեկում ասված էր, որ կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում էր չմիանալ երրորդ երկրի կամ երկրների խմբի, ընդուն մյուս կողմի: Այսպիսով, հիտլերյան դիվանագիտությունը կորզեց Խորհրդային Միության համաձայնությունը՝ չմիանալ Անգլիային ու Ֆրանսիային, եթե վերջիններս հարգելին իրենց պայմանագրային պարտավորությունները Լեհաստանի նկատմամբ և գերմանական ագրեսիայի դեպքում օգնության հասնելին երան:

Չհարձակման պակտը հշանակում էր կտրուկ շրջադարձ Կրեմլի արտաքին քաղաքականության մեջ և ոչ առանց որոշակի նվաճողական նկրտումների, որոնք իրենց արտացոլումը գտան Խորհրդային Միության արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Վ. Մոլոտովի և Գերմանիայի արտաքին գործոց նախարար ի. Ռիբենտոպի ստորագրած գաղտնի արձանագրության մեջ:

Այդ փաստաթղթի տեքստում ասված էր. «Գերմանիայի և Խորհրդային Միջև չհարձակման մասին պայմանագրի ստորագրման առջիվ ներքոստորագրման լիազորված ներկայացուցիչները խստ գաղտնի գրուցների ժամանակ քննարկեցին Արևելյան Եվրոպայում իրենց շահերի համապատասխան ոլորտները սահմանագատելու հարցը:

1. Բայթյան պետություններին (Ֆինլանդիային, Էստոնիային, Լատվիային, Լիտվային) պատկանող տարածքներում տարածքային

քաղաքական փոփոխությունների դեպքում Լիտվայի հյուսիսային սահմանը պետք է ներկայացնի երկու երկրների՝ Գերմանիայի և ԽՍՀՄ-ի շահերի ոլորտների սահմանը:

2. Լեհական պետությանը պատկանող տարածքների տարածքային կամ քաղաքական փոփոխության դեպքում երկուսի՝ Գերմանիայի և ԽՍՀՄ-ի շահերի ոլորտները պետք է բաժանվեն մոտպորապես Նարեկ, Վիլյա և Սան գետերով անցնող գծով:

Այն հարցը՝ արդյոք երկու կողմերի շահերը անկախ լեհական պետության պահպանումը կրածնե՞ն ցանկալի, ինչպես պետք է որոշվեն այդ պետության սահմանները, կարող է որոշակիորեն լուծվել մետագա քաղաքական իրադարձությունների ընթացքում:

Բոլոր դեպքերում երկու կառավարություններն այդ հարցը կլուծեն բարեկամական փոխըմբռնման միջոցով»:

Այս Արձանագրությունը, որի խկությունը այլևս որևէ կասկած չի հարուցում, Արևելյան Եվրոպայի բաժանման համաձայնություն էր և արևելյան պետությունների անկախության մահվան դատավագիոր:

Երկու երդվալ թշնամիները, չնայած Փաշիզմի կատաղի հակակումնեմիզմին և բոլշևիզմի անսահման ատելությունը դեպի Փաշիզմը, շատ արագորեն ու հեշտությամբ լեզու գտան Եվրոպայի և մարդկության ճակատագրի համար օրհնական պահին մեծապես խթանելով երկրորդ համաշխարհային պատերազմի սանազերծմանը: Դրանում մեծ դեր խաղացին երկու ամբողջատիրական վարչակարգերի ընդհանրությունները:

Գերմանիան երկրորդ համաշխարհային
պատերազմի տարիներին

(1939—1945 թթ.:

Երկրորդ համաշխարհային պատերազմը սկսվեց ֆաշիստական Գերմանիայի հարձակումով Լեհաստանի վրա: 1939 թ. օգոստոսի վերջերին հիտլերականները ձեռնարկեցին սաղրիչ գործողություն Լեհաստանի դեմ. լեհական զինվորական համագենատ հագած եւսականների մի խումբ հարձակվեց Գերմանիայի սահմանամերձ Գլայխից քաղաքի ուղղվածանի վրա: Այս սադրանքը ներկայացնելով իրեն Գերմանիայի դեմ լեհական բանակի գործողություն, գերմանական բանակը 1939 թ. սեպտեմբերի 1-ին ներխուժեց Լեհաստան:

Համարձակի եկած լեհական կառավարությունը, որը դեռևս մորթիզացիա չէր կատարել, թշնամու 57 դիվիզիաների, 2500 տանկերի և 2000 ինքնաթիռների դեմ ուներ սուկ 320 տանկ, 377 ինքնաթիռ և 39 թույլ զինված դիվիզիա: Նա չկարողացավ կազմակերպել պատշաճ դիմադրություն: 1939 թ. սեպտեմբերի 17-ին լեհական սահմանն անցան խորհրդային բանակները և գրավեցին Սրլամտյան Ռուբախնայի և Արևմտյան Բելոռուսիայի տարածքը: Խորհրդային զորքերի ներխուժումը լեհաստան դաշույն էր՝ խրված օրինական վիճակում գտնվող լեհաստանի թիկունքը: Պարտված լեհաստանը բաժանվեց Գերմանիայի և ԽՍՀՄ-ի միջև: Դա լեհաստանի չորրորդ բաժանումն էր, որը, ինչպես և նախորդ երեք բաժանումները, տեղի ունեցավ Ռուսաստանի մասնակցությամբ: Լեհաստանի բաժանումը, որը վավերացվեց 1939 թ. սեպտեմբերի 28-ին ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև կնքված «Բարեկամության և սահմանների մասին սահմանագրով, չհարձակման պակտին կից գաղտնի Արձանագրության իրացումն էր: Հայ իս, ԽՍՀՄ-ը երկրորդ համաշխարհային պատերազմին մասնակցում էր 1939 թ. սեպտեմբերի 17-ից, երբ ներխուժեց լեհաստան և ոչ թե 1941 թ. հունիսի 22-ից, երբ Գերմանիան հարձակվեց ԽՍՀՄ-ի վրա: Կովկասի լեհաստանի դեմ, Խորհրդային Միությունը անողողակիրեն կուլում էր նաև Անգլիայի ու Ֆրանսիայի դեմ, որոնք, ի կատարումն լեհաստանի նկատմամբ իրենց դաշնակցային պարտավորության, դեռևս սեպտեմբերի

3-ին պատերազմ էին հայտարարել Գերմանիային և պատերազմը դարձել էր համաշխարհային:

Պատերազմի սկզբից ևել ԽՍՀՄ-ը զորավիճ էր Գերմանիային և ոչ միայն իրու գործակից Լեհաստանի օկուպացման ու բաժանման գործում, այլև արդեն փաստ դարձած համաշխարհային պատերազմի պայմաններում իր արտաքին քաղաքականության ընդհանուր ուղղվածությամբ: Դրա վկայությունն է սեպտեմբերի 28-ի պայմանագրի հետ միասին ստորագրված «Խորհրդային և գերմանական կառավարությունների հայտարարությունը, որտեղ ասված էր, որ պայմանագրով վերջնականապես կարգավորելով լեհական պետության անկման հետևաբարով ծագած հարցերը, կողմերը դրանով իսկ ստեղծեցին ամուր հիմք երկարաժան հաղաղության համար Արևելյան Եվրոպա ու մ»: Պարզ վում է, որ դրան խանգարում էր անկախ Լեհաստանի գործությունը: Աչնութեան, պահանջվում էր, որ Անգլիան և Ֆրանսիան անհապաղ դադարեցնեն պատերազմը Գերմանիայի դեմ: Հակառակ դեպքում «կիսատարության այն փաստը, — ասվում էր հայտարարության մեջ, — որ Անգլիան և Ֆրանսիան պատասխանատվություն են կրում պատերազմը շարունակելու համար»: Եվ Գերմանիան ու ԽՍՀՄ-ը պարտավորվում էին պատերազմը շարունակելու պարագայում միմյանց հետ կրնառությանը անել անհրաժեշտ միջոցառումների մասին: Սա հիտլերյան Գերմանիայի դիվանագիտության անվիճելի հաջողությունն էր: Ընդ որում, նա ստեղծում էր հապատակոր պայմաններ ԽՍՀՄ-ի դեմ հետագայում պատերազմ սկսելու համար ոչ միայն ապագա թշնամու գգոնությունը բթացնելու միջոցով, այլև տարածքային առումով և հենց ԽՍՀՄ-ի օգնությամբ:

Լեհական պետության անկումից առաջ ԽՍՀՄ-ը չուներ ընդհանուր սահման Գերմանիայի հետ և անմիջապես բախվելու հնարավորություն: Եվ եթե անգր-ֆրան-խորհրդային բանակցությունները դեմ առան այն հանգամաքին, որ լեհաստանի դաշնակիցները՝ Անգլիան և Ֆրանսիան չկարողացան նրանից համաձայնություն կորցել թույլ տալու խորհրդային բանակներին անցնել լեհաստանի տարածքով Գերմանիայի դեմ ուղարկան գործողությունները ծավալելու համար, ապա լեհաստանի վերացմամբ չքացավ այն վիթխարի բուժերը, որը ընկած էր ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև: Գերմանիան արդեն կանգնած էր խորհրդային սահմանների վրա և նրան մնում էր անհրաժեշտ պատրաստությունից հետո անցնել այդ սահմանը:

Գերմանական բանակի
հաջողությունները
Եվրոպայում և Սփրի-
կայում պատերազմի
սկզբնական շրջանում

Գերմանիային պատերազմ հայտարարելուց հետո Անգլիան և Ֆրանսիան վճռական գործողությունների չդիմեցին և բացարձակապես ոչնչով շթեթևացրեցին իրենց դաշնակցի՝ Լեհաստանի օրիսական վիճակը: Գերմանական բանակները անարգել օկուպացնում էին Լեհաստանը, կողպտում նրա հարստությունները, զանգվածաբար ոչնչացնում բնակչությանը, առավել աշխատունակներին բռնությամբ տեղահանում էին և քշում Գերմանիա՝ ստրկական աշխատանքի: Պատերազմի և ֆաշիստական օկուպացիայի հետևանքով զոհվեց ավելի քան 6 մին լեն: Իսկ արևմուտքում, որտեղ գերմանական 23 դիվիզիաների դեմ կանգնած էին 110 ֆրանսիական և 5 անգլիական դիվիզիաներ տեղի ուներ դիրքային փոխհրաձգություն, որը ստացավ «տարօրինակ պատերազմ» անվանումը: Այն տևեց 1939 թ. սեպտեմբերից մինչև 1940 թ. մայիսը: Լեհաստանի օկուպացումը նրա դաշնակցներին թվում էր ձեռնուու, քանի դրանով Հիտլերը իր համար ուղի էր հարթում դեպի Խորհրդային սահմանները: Արևմուտքում դեռևս չեն կորցրել ֆաշիստական Գերմանիայի ագրեսիան Խորհրդային Միության դեմ ուղղելու հոլով:

ԽՍՀՄ-ի հետ միասին Լեհաստանը բաժանելուց հետո Գերմանիան սկսեց եռանդագին պատրաստվել լայնամասշտար հարձակողական գործողությունների արևմուտքում: 1940 թ. ապրիլի 9—10-ը գերմանական բանակները օկուպացրին Դանիան և Նորվեգիան: Մեկ ամիս անց նրանք առանց պատերազմ հայտարարելու անցան Բնելգիայի, Հոլանդիայի, Լյուքսեմբուրգի սահմանները և Բելգիայի ու Լյուքսեմբուրգի վրայով շրջանցելով Մաժինոյի պաշտպանական գիծը, ֆրանսիացիների համար անսպասելի տեղից (Մաժինոյի գիծը ընդհատվում էր այս տեղ, որտեղ սկսվում էր ֆրանս-լյուքսեմբուրգյան և ֆրանս-բելգիական սահմանը) Աերխուժեցին Ֆրանսիա: Հյուսիսային ուղղությամբ նրանք դուրս եկան Լա Մանշի ծովեկերը և Դյունկերկ քաղաքի մոտ պաշտելով անգլ-ֆրանսիական զորքերին, սեղմեցին նրանց ծովին: Անգլիան էքսպեդիցիոն կորպուսի և ֆրանսիական ոժերի մի մասին հնարավոր եղավ Եվրոպացներ բրիտանական կողմերը: Դրանցից հետո գերմանական զորքերը զարգացրին հարձակումը Փարիզի ուղղությամբ և շուրջով գրավեցին Ֆրանսիայի մայյոքաղաքը: 1940 թ. նույնի 22-ին Ֆրանսիան անձնատուր եղավ: Անգլիան մնաց մենակ հիտլերյան Գերմանիայի դեմ:

Հիտլերի կարգադրությամբ մշակվեց Անգլիան գրավելու պլան,

որը ստացավ «Ծովայուծ» ծածկագրային անվանումը: Սակայն շուտով Հիտլերը հրաժարվեց Անգլիա Աերխուժելու մտադրությունից և որոշեց նախապատրաստվել Խորհրդային Միության վրա հարձակվելու համար: Պատճառն այն էր, որ ուզմական մասնագետների կարծիքով Անգլիա Աերխուժելու համար Գերմանիան պետք է մորիլիզացներ իր ողջ նավատորմը, այդ թվում Աերքին ջրերում լողացող նավերը, մինչդեռ գրեթե լիովին պահպանված անգլիական թագավորական օդային ուժերը կարող էին կա Մանչը անցնելիս ջրասույզ անել գերմանական նավերի գգալի մասը՝ դրանց վրա գտնվող կենդանի ուժի հետ միասին: Մեծ կորուսների անխուսափելիության հանգամանքը ստիսեց Գերմանիայի դեկավարությանը հետաձգել «Ծովայուծի» իրականացումը, իսկ հետագայում պատերազմը արևելյան ուզմականացում բոլորվին անկարելի դարձրեց վերադարձը այդ ծրագրին:

1940 թ. սեպտեմբերի 27-ին Գերմանիան, Խոալիան, Շապոնիան Բելյինում ստորագրեցին «Եոյակ պակտը» և ֆաշիստական տերությունների Բելյին-Հռոմ-Տոկիո առանցքը վերջանապես ստացավ քաղաքական ու դիվանագիտական հաստատում: Շապոնիան ճանաչում էր Գերմանիայի և Խոալիայի «ղեկավար դերը» Եվրոպայում, իսկ Գերմանիան ու Խոալիան՝ Շապոնիայի «ղեկավար դերը» Արևելյան Ասիայում: «Եոյակ պակտն», արսարիք ազդեցության ուրուտների բաժանելու ընդհանրացլած ծրագիր էր: Միաժամանակ «առանցքի» երկրները պարտավորվում էին օգնել միջմանց բոլոր միջոցներով, այդ թվում ուզմական, և նաև այն դեպքում, եթե նրանցից որևէ մեկը պատերազմական վիճակի մեջ գտնվի դեռևս չկովող որևէ պետության հետ: Հասկանալի է, որ պակտի մասնակիցները նկատի ունենան ԽՍՀՄ-ը և ԱՄՆ-ը: Հյուսիսմերձերին «Եոյակ պակտին» միացան Ռումինիան, Հունգարիան և Բուլղարիան: 1941 թ. ապրիլին Գերմանիան օկուպացրեց Հարավսլավիան և Հունաստանը: Այսիւս, մինչև ԽՍՀՄ-ի վրա հարձակվելը ֆաշիստական Գերմանիան բռնազարդեց գրեթե ողջ Արևմտյան, Կենտրոնական և Հրավային Եվրոպան:

1941 թ. առաջին կեսին պարտություն կրող խոալիան գործերին օգնության հասած գերմանական բանակները գեներալ Ռոմելի հրամանատարությամբ հաջողությունների հասան հան Հյուսիսային Աֆրիկայում գրավեցին Կիրենական ու Լիբիան և Աերխուժեցին Եգիպտոսի տարածքը: Մինչև ԽՍՀՄ-ի վրա հարձակվելը ֆաշիստական Գերմանիան բռնազարդեց գրեթե ողջ Եվրոպան՝ տիրանալով նրա բնական

և մարդկային ուժի պաշարներին: 1941 թ. նա իր տրամադրության տակ ուներ շուրջ 32 մլն տոննա պղղաստի և 400 մլն տոննա քարածիի արտադրության հզորություն: Գերմանիայի արդյունաբերության մեջ աշխատում էր եվրոպական երկրներից բռնությամբ տարված ավելի քան 3 մլն մարդ: ԽՍՀ-ի վրա հարձակվելու պահին Գերմանիան գենքի տակ ուներ 7,4 մլն մարդ:

Պատերազմի սկզբնական շրջանում Եվրոպայի և Հյուսիսային Աֆրիկայի ուղղմաբեներում գերմանական բանակի անընդմեջ հաջողությունները ստեղծեցին նրա անսպարտելիության առանձինը: Այս ամենը Հիտլերին մղեցին իրականացնելով դեռևս «Մայն կամպֆում» փայփայած իդել՝ պատերազմը խորհրդային Միության դեմ: Բայց այդ պատերազմն էլ կանխարոշեց Գերմանիայի պարտությունը երկրորդ համաշխարհային պատերազմում:

Հիտլերը նախապես փորձեց լիովին մեկուսացնել ԽՍՀՄ-ը: Գերմանիայի հարձակումից մեկ ու կես ամիս առաջ Նորվեգիայից Սանդիհա թռով նացիստական կուսակցության գծով «Փյուրերի» տեղակալ Ռուդոլֆ Հեսսը, ըստ երևույթին համոզելու Սանդիհային և նրա միջոցով ՍՍՀ-ին միանալու Գերմանիային ընդուն ԽՍՀՄ-ի: Անգլիացիները պարաչուով Անգլիայում վայրէցք կատարած ֆաշիստական պարագին բանտ նատեցրեցին, բայց գաղտնի պահեցին նրա «առաքելության» նպատակը:

Գերմանիայի հարձակումը ԽՍՀՄ-ի վրա և խորհրդային ժողովրդի Հայրենական մեծ պատերազմի սկզբը

«Բարբարոսա» պլանով հիտլերյան Գերմանիան ծրագրում էր ԽՍՀՄ-ի դեմ վարել կայծակնային պատերազմ («Քյիցերիդ»), մի բանի ամսում հիմնականում ոչնչացնել խորհրդային զինված ուժերը, գրավել Մոսկվան ու Լենինգրադը, օկուպացնել Խորհրդային Միության եվրոպական մասը մինչև Ուրալ: Գերմանական ուժերին հաջողվեց կարճ ժամանակամիջոցում գրավել Ուկրաինան, Բելոռուսիան, Մերձբալթիկան, Ռուսաստանի արևմտյան մարզերը և դուրս գալ Մոսկվայի մատուցները: Անուելի էին Խորհրդային Միության մարդկային ու հյութական կորուսները:

Սակայն պատերազմի հենց առաջին փուլում, շնայած գերմանական բանակի աղմկալի հաջողություններին, պարզ դարձավ, որ «կայծակնային պատերազմը» ձախողվել է: Հիտլերականները չկարողացան գրավել Մոսկվան, պաշարված Լենինգրադը և 1941 թ. դեկտեմբերին Մոսկվայի տակ առաջին լուրջ պարտությունը կրեցին: Հենց պատերազ-

մի սկզբին հիմք դրվեց հակաֆաշիստական կոալիցիային, երբ Անգլիան և ՍՍՀ-ը անցան Խորհրդային կողմը: Կոալիցիայի կազմակերպումը ավարտվեց 1942 թ. հունվարի 1-ին, երբ 26 պետությունները, որոնք իրենց անվանեցին «միավորված ազգեր» ստորագրեցին դաշնակցային հոչակագիրը: Դա նշանակում էր Գերմանիայի և նրա դաշնակցների ուղման-քաղաքական մեկուսացում:

1942 թ. ամունը Գերմանիան այլևս անկարող էր հարձակումը վերսկսել ուղղմանակատի ամբողջ երկայնքով: Հունիսի 29-ին գերմանական բանակները հարձակման անցան Սովորված հարավ՝ հարավ-արևելյան ուղղությամբ և օգոստոսի 23-ին Ստալինգրադից հյուսիս-արևմուտք դուրս եկան Վոլգա գետը ու հասան Կովկասի նախալեռներին: Սակայն հոյեմբերի 19-ին

Ստալինգրադի մոտ խորհրդային զորքերը անցան հակամարձակման և շրջապատեցին ու ջախչախնեցին գերմանական 22 դիվիզիա: Դա գերմանական բանակի խոշորագույն պարտությունն էր երկրորդ համաշխարհային պատերազմում, որից հետո նա այլևս ուշի չեկավ: Նախաձեռնությունը կրկին իր ձեռքը վերցնելու մի բանի անհաջող փորձերից հետո գերմանական բանակը սկսեց նահանջել խորհրդային զորքերի պարբերական հարվածների մերքը: 1942 թ. կեսերից մինչև 1943 թ. մարտի վերջը արևելյան ուղղմանակատում ջախչախնեց 100 գերմանական դիվիզիա:

Ստալինգրադյան հաղթանակը շրջադարձ էր երկրորդ համաշխարհային պատերազմում, արմատական բեկման սկզբը: Դրանով սկսվեց գերմանական բանակի մայրամուտը: Երկրորդ խոշոր պարտությունը գերմանացիները կրեցին 1943 թ. ամունը Կորսկի ճակատամարտում, որն էլ ավարտեց արմատական բեկմանը: Այդ հաղթանակը վերաճնեց խորհրդային զորքերի ընդհանուր ստրատեգիական հարձակման ուղղմանակատի ամբողջ գծով մեկ՝ Վելիկի Լուկից մինչև Սև ծով, որի արդյունքը եղավ գերմանական բանակի նահանջը մինչև Դնեպրը: Նարմիք բանակն ազատագրեց օկուպացված տարածքերը՝ ընդուած մինչև ձախափնյա Ռուսականական Կիևով հանդերձ:

Գերմանա-ֆաշիստական զորքերի պարտությունը Ստալինգրադի և Կորսկի մոտ ցնցեց ֆաշիստական բրոկը: 1943 թ. հունվարին Գերմանիայում հայտարարվեց «ստոալ մորիլիզացիա»: Բայց փոխել պատերազմի նկատմամբ չհթացը շնչողվեց: Գերմանիայում ուժադացան հակաֆ-

շխառական տրամադրությունները զինվորականության և պետական աստիճանավորների որոշակի մասը, ակնեց մտորել Հիտլերին դավադրաբար, ընդհուպ մինչև ֆիզիկապես ոչնչացնելով ասպարեզից հեռացնելու և Անգլիայի ու ԱՄՆ-ի հետ անջատ հաշտության հասնելու պլանները: Ծանր հարված էր Խտալիայի դուրս գալը պատերազմից, որը հնարավոր չեղավ կանխել գերմանական զորքերի ներխուժումով Խոտալիա և նրա տարածքի մի մասի զավթումով: Արևելյան տերությունների հետ անջատ հաշտության ծածով պլաններ կային և փորձեր էին արվում Գերմանիայի դաշնակից երկրների կառավարական շրջաններում՝ Եվրոպայում: Ֆաշիստական բյուկի ճգնաժամը զնարկ դառնում էր ակնրախ և ամեսանի: Միևնույն ժամանակ ուժեղանում էր դիմադրության շարժումը Գերմանիայի բռնազարյացած երկրներում: 1944 թ. դիմադրության շարժման մեջ հաշվվում էր մինչև 500 հազ. զինված մարտիկ Ֆրանսիայում, 500 հազար՝ Խոտալիայում, 300 հազար՝ Հարավսկավայրում, 75 հազար՝ Հունաստանում, 70 հազար՝ Ալբանիայում: Հատկապես ուժեղ էր դիմադրության շարժումը Ֆրանսիայում, որը միավորում էր 16 կազմակերպություններ, այդ թվում կոմունիստներին, սոցիալիստներին, քրիստոնյա դեմոկրատներին և ձախ ռադիկալներին, Խոտալիայում, որտեղ միավորված էին վեց հակաֆաշիստական կուսակցություններ՝ կոմունիստական, սոցիալիստական, քրիստոնեա-դեմոկրատական, լիբերալ «Աշխատանքի դեմոկրատիա» կուսակցությունները և Հարավսկավայրում, որտեղ գլխավոր կազմակերպող և ղեկավարող ուժը կոմիսան էր:

1944 թ. օգոստոսին ԽՍՀՄ-ի գրեթե ամբողջ տարածքն արդեն ազատագրված էր հիտլերյան զավթիչներից: Խորհրդային զորքերը մտան Ռումինիա, Չեխովովակիա, Լեհաստան, Հունգարիա, մոտեցան Գերմանիայի սահմաններին: Ալիսկաց Փաշչուտների բռնազավթած երկրների ազատագրումը: 1944 թ. հունիսին երկրորդ ճակատի բացումից հետո դաշնակիցները ազատագրեցին Ֆրանսիան և Գերմանիայի սահմաններին մոտեցան արևմտյան:

Գերմանացիներին ոչինչ չտվեց Արդենյան օպերացիան 1944 թ. դեկտեմբերին, քանզի արևելյան ռազմածակառում 1945 թ. հունվարի 12-ին խորհրդային զորքերի ձեռնարկած ընդհանուր հարձակումը, որը տեղի ունեցավ դաշնակիցների խնդրանքով, ի շիք դարձեց Արդեններում գերմանական ուժերի ձեռք բերած ժամանակավոր հաջողություն:

1945 թ. ապրիլի կեսերին խորհրդային զորքերը հասան Բեղլին

արվարձանները, իսկ արևմուտքից դաշնակիցները հասան էլլրա գետին՝ Բեռլինից արևմուտքը: Ապրիլի 16-ին սկսվեց Բեռլինի օպերացիան, իսկ ապրիլի 30-ին խորհրդային բանակի ստորաբաժանումները գրոհով գրավեցին ույսատագի շենքը: 1945 թ. մայիսի 8-ին Գերմանիան անձնատուր եղավ: Պատերազմը Եվրոպայում մոտեցակ ավարտին: Հիտլերյան բախտախնդիրները քաջ հավատալով, որ պատերազմը վաղուց տանով է տրված, այնուամենայինվ, շարունակեցին դիմադրությունը մինչև Բեռլինի յուրաքանչյուր տունը և փողոցը՝ իրենց ժողովրդին բերելով նորանոր աղետներ, պատճու դաշնալով ավերիչ ուժակոծությունների օդից ու ցամաքից և տասնյակ հազարավոր անմաստ զոհերի:

1945 թ. մայիսի 8-ին Բեռլինի Կարլսհորստ արվարձանուուն ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչների առջև ֆաշիստական Գերմանիայի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ ֆեղմարշալ Կեյտելը ստորագրեց Գերմանիայի անվերապահ անձնատուր լինելու ակտը:

Գերմանիան տանով տվեց պատերազմը: Ֆաշիզմը, որը իշխել էր Գերմանիայում շուրջ 12 տարի (1933—1945 թթ.) զախչախվեց: Եվրոպան համակած դարչնագույն ժամանակաշրջան էր, որը անլոր տառապանքներ, մասի ու ավելածություն էր պատճառել մայրցամաքի ժողովուրդներին, վերջ գտավ:

Հիսուսը և Գերեզման իրենց ընտանիքներով ինքնապահ եղան
թույն ընդունելով: Մյուս Փաշխտական պարագուխները ձերբակալվե-
ցին: Դյորինքը ինքնապահ եղավ բանտում՝ թունավորելով իրեն: Մյուսներին Նյուրբերգի միջազգային առյանի դատավճռով մարտապատ-
ժի ենթարկվեցին:

Գերմանիայի բաժանումը: Գերմանական երկու պետությունների՝ Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության և Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության կազմավորումը և երանց գաղացման տարրերը ուղիները

կանացնել և ապանացիֆիկացնել՝ այնտեղից Փաշիզմը վճռաբար արմատախիլ անելու միջոցով, անել ամեն ինչ, որ Գերմանիան այս երրեք չսպառնա իր հարևաններին, գերմանացի ժողովրդին հնարավորություն տալ կառուցելու խաղաղաւեր, դեմոկրատական միանանական պետություն։ Համաձայնեցվեց Գերմանիայից ուղմատուգանք գանձելու հարցը։

Հետպատերազմյան Գերմանիան բաժանվեց չորս օկուպացիոն գոտիների՝ խորհրդային (արևելյան մասը), ամերիկյան, անգլիական, ֆրանսիական (արևմտյան մասը): Համապատասխանաբար չորս օկուպացիոն գոտիների բաժանվեց նաև Բեռլինը: Սյու գոտիներում միանչև միացյալ գերմանական պետության ստեղծումը, որին դաշնակիցները պարտավորվեցին ամեն կերպ սատար լինել, պետք է կառավարեին համապատասխան երկրների ուղղմական իշխանություններ:

ԽԱՅՄ-Ը իր օկուպացիոն գոտում մկնեց իրականացնել սոցիալ-տնտեսական և քաղաքական միջոցառումներ, որոնք, դուրս էին գալիս Պոտսդամի որոշումների շրջանակներից և ակնհայտորեն տանում էին դեպի Գերմանիայի այդ մասի խարթրդայնացում: 1945—1946 թթ. վերացվեց խոշոր կալվածատիրական հողատիրությունը: Հողի ընդերքը, խոշոր արդյունաբերական ձեռնարկությունները, բանկերը, հայտարարեցին ժողովրդի սեփականություն, այսինքն՝ խվեցին մասնավոր սեփականատերներից, ըստ Եռլյան, պետականացվեցին, թեև պետությունը դեռևս պաշտոնապես չէր հռչակվել: 1946 թ. ապրիլին Կոմունիստական և սոցիալ դեմոկրատական կուսակցությունները միավորվեցին Գերմանիայի սոցիալիստական միասնական կուսակցության մեջ:

(ԳԱՄԿ) և այդ նոր քաղաքական ուժը խորհրդացին բանակի և կառավարող զինվորական վարչության հովանու Աերքո դեկանար դիրք գրավեց Արևելյան Գերմանիայի քաղաքական կյանքում:

Գերմանիայի արևմտյան մասում ԱՄՆ-ը, Անգլիան և Ֆրանսիան իրականացնում էին հակադիր քաղաքականություն: Նրանք չխարիսկեցին խոշոր կապիտալի դիրքերը և մտադիր չէին Գերմանիայի իրենց կողմից վերահսկող մասը լիովին ապառազմականացնել: Եվրոպայում ծավալված իրադարձությունների ֆոնի վրա նրանք այդ մասը դիտում էին իրրև պատճեց ընդդեմ կոմունիզմի հետագա առաջխաղացման դեպքի Արևմտյան Եվրոպա: 1946 թ. դեկտեմբերի 2-ին ԱՄՆ-ը և Անգլիան միավորեցին իրենց օկուպացիոն գոտիները, այսուհետև նրանց միացվեց Փրանսիական օկուպացիոն գոտին: 1948 թ. այս երեք գոտիներում անցկացվեց անշատ դրամական ռեֆորմ և արևմտագերմանական մարկն առանձնացավ արևելագերմանականից: Խորհրդային կողմը բոլոր այս միջոցառումները որակում էր իրրև Գերմանիայի պառակտման գործողությունները, թեև դրանք պատասխանն էին Գերմանիայի արևելյան մասում իրականացվող և խորհրդային տեսակետից անհրաժեշտ միջոցառումներին: Արևմտյան տերությունները ձգուում էին ամեն կերպ պահպանել Գերմանիան կապիտալիստական հասարակարգի շրջանակներում, ԽՍՀՄ-ը ձգուում էր այն մերանել՝ «սոցիալիստական անքարի» մեջ: Այլ կերպ ասած, երեկով դաշնակիցները միասնական Գերմանիայի ապագայի հարցին մոտենում էին իրենց ուրույն և միմյանց հակադիր սոցիալ-քաղաքական հայեցակետից՝ առանց հաշվի առնելու, որ դա տանում է դեպի Գերմանիայի պառակտում: Գերմանիան դարձավ «սառը պատերազմի» կիզակետ Արևելքի և Արևմուտքի միջև:

1949 թ. սեպտեմբերին Գերմանիայի արևմտյան մասում ստեղծվեց Գերմանիայի Ֆեռներատիկ Հանրապետությունը (ԳՖՀ), որի կառավարության գլուխ կանգնեց 1945 թ. հիմնադրված քրիստոնեա-դեմոկրատական միություն կուսակցության ղեկավար Կ. Ադենաուերը: Քիչ անց՝ 1949 թ. հոկտեմբերի 7-ին արևելյան մասում խորհրդային օկուպացիոն գոտում հոչակվեց Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունը (ԳԴՀ): Խորհրդային զինվորական վարչության իրավասությունները հանձնվեցին ԳԴՀ-ի կառավարությանը: Խշհանության գլուխ անցան ԳՍՄԿ-ի ղեկավարները (Վ. Պիկը՝ հանրապետության նախագահ, 0. Գրունվոլը՝ ժամանակավոր կառավարության վարչապետ): Այսպիս,

հետպատերագմյան Գերմանիան բաժանվեց երկու, հակադիր ուղղություններով զարգացող պետությունների: Երբև առանձին միավոր մնաց Բեռլինը՝ բաժանված Արևելյան և Արևմտյան հատվածների, որոնք դարձյալ զարգանում էին հակադիր ուղղություններով, քանզի Արևելյան Բնոլինը դարձավ ԳԴՀ մայրաքաղաքը:

❖ ԳՖՀ վրա տարածվեց «Մարշալի պլանը» և նրա հիմնահատակ ավելիված տնտեսությունն սկսեց արագորեն ուրիշ կանգնել: 1950 թ. վերջին վերականգնվեց տնտեսության հախալատնագմյան մակարդակը: 1965 թ. ԳՖՀ արդեն առաջին տնտեսական տերությունն էր արևմտյան Եվրոպայում՝ նրա արդյունաբերական արտադրանքի ծավալը նույնքան էր, որքան Ֆրանսիայինը, Խոսլիայինը, Բելգիայինը, Հոլանդիայինը և Լյուքսեմբուրգինը միասին վերցրած: ԳՖՀ տնտեսությունը արագ զարգացում ապրեց 1960-ական թթ. սկզբին, երբ կանցելը էր Աղենաուերի կառավարության մեջ տնտեսության համարար Լյուդվիգ Էրհարդը: 1968 թ. ազգային համախառն արտադրանքով ԳՖՀ կապիտալիստական աշխարհում զիջում էր միայն ԱՄՆ-ին և Շապոնիային, իսկ 1970 թ. արդյունաբերական արտադրանքի և արտահանության ծավալով երկրորդն էր կապիտալիստական աշխարհում և զիջում էր միայն ԱՄՆ-ին:

1950 թ. արևմտյան տերությունների թուլտվությամբ ԳՖՀ սկսեց ստեղծել իր բանակը, սակայն ուստիկանական կազմավորումների անվան տակ: 1950 թ. նա դարձավ Եվրոպական խորհրդի, 1951 թ. ախճի ու պղպատի Եվրոպական միավորման անդամ: ԳՖՀ ընդունեցին նաև Եվրոպական տնտեսական համագործակցության («ընդհանուր շուկա») մեջ, որտեղ նա դարձավ տնտեսական ամենահզոր տերությունը: 1954 թ. Փարիզի համաձայնագրով մանաշվեց ԳՖՀ ինքնիշխանությունը (սուվերենությունը), թեև արևմտյան տերությունները իրենց վերապահեցին նրա քաղաքականությունը վերաբնիկելու իրավասությունը, ընդուույ մինչև այնուեղ «արտակարգ դրություն» հայտարարելու իրավունքը: Այդ նույն համաձայնագրերի միման վրա ԳՖՀ ընդգրկվեց ՆԱՏՕ-ի մեջ:

Չորրություն գործընթացներ տեղի ունեցան ԳԴՀ կյանքում: 1950 թ. սեպտեմբերին նա դարձավ Տնտեսական փոխօգնության խորհրդի (ՏՓԽ) անդամ, իսկ 1955 թ. մայիսին անդամագրով Վարչավայրի պակտին: Գերմանիայի պատակտման հետևանքով նրա արևելյան մասը զրկվեց քաղաքական գումարով և առանձին մասաւոր մերժման համարից, որոնք

ԳՖՀ տարածքում էին: Սականդաբար Գերմանիայի արդյունաբերագլուխություններով զարգացող պետությունների մասը մասը մշտապես մատակարարել է նրան գյուղատնտեսական արտադրանք և աշխատուժ: Հումքի և վառելանյութի պակասը լորջ խնդիրներ դրեց ԳԴՀ տնտեսության առջև: Սակայն Խորհրդային Միության հումքի բազայի վրա հնարավոր եղավ այնուղիւ ստեղծել սոցիալիստական երկրների չափանիշով բարձր զարգացած մեքենաշինություն և բիմիական արդյունաբերություն: Սչբի էր ընկնում նաև օպտիկական արտադրությունը նշանավոր կարլ Ցայս ֆիրմայի հիմնած վրա և ավանդույթներով: ԳԴՀ համարվում էր բարձր զարգացած երկիր սոցիալիստական աշխարհում, թեև նրա արտադրության և առևտի մակարդակը շատ զիջում էր ԳՖՀ-ին, որը իր արտադրանքի քանակով, տեսականիով և որակով հաստատում տեղ էր զբաղեցրել համաշխարհային շուկայում:

Գերմանական երկու պետությունները կանգնած էին մի շարք արտաքին քաղաքական խնդիրների առջև: Դրանք վերաբերում էին նրանց տնտեսական ու քաղաքական հարաբերություններին միմյանց հետ, արևմտյան տերությունների հետ, ԽՍՀՄ-ի ու նրա դաշնակից պետությունների հետ, որոնք երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ դարձել էին գերմանական ազգեստիայի զոհը:

❖ ԳԴՀ-ի ԳԴՀ-ի հարաբերությունները Կ. Աղենաուերի, Լ. Էրհարդի և Կ. Կիգինգերի կառավարությունների օրոք, այսինքն՝ մինչև 1969 թ. ընտրությունները, երբ իշխանության ղեկը գտնվում էր Քրիստոնեական-դեմոկրատական միություն (ՔԴՄ)—Քրիստոնեական սոցիալական միություն (ՔՍՄ) կուսակցությունների դաշինքի ձեռքին, գերմանական երկու պետությունների հարաբերությունները անընդհատ խորացող լարվածության բնույթ ունեին՝ չնշին ելեւշներով: | Լարվածության խորացման արդյունքներից էր Բնույթի պատի կառուցումը և ԳԴՀ-ի հետ սահմանների վերահսկության ուժեղացումը, որ իրականացրեց ԳԴՀ-ն 1961 թ. օգոստոսին Վարչավայի պայմանագրի պետությունների, առաջին հերթին ԽՍՀՄ-ի դրդմամը:

❖ 1961 թ. օգոստոսի 12-ի լուս 13-ի գիշերը ԳԴՀ-ի ազգային բանակի զորանական իսկական գերմանական ճշտապահությամբ ձեռնամուխ եղան ԳԴՀ համարաների խորհրդի օգոստոսի 12-ի որոշման իրագործմանը՝ սահմանային արգելափակումներ կառուցելու վերաբերյալ, որպեսզի դադարեցվի փախստականների հոսքի դեպի Արևմտյան

Բեղլին: Փակվեցին ավելի քան 80 փողոցային անցումներ, որոնք տանում էին դեպի քաղաքի արևմտյան մասը, բայց մնացին 13 ստոգիշ-անցագրային կետեր: Օգոստոսի 14-ին ընդհատվեց Բեղլին ու փոստային կապը Բեղլինի երկու հատվածների միջև, դադարեցվեց եղումուտը բրանդեմբուրգյան դարպասով: Օգոստոսի 15-ից արգելվեց ավտոմոբիլային երթեւեկությունը: Այդ օրը տեղի ունեցավ փախստականների առաջին ընդհարումը ստոգիշ-անցագրային կետի պահակախմբի հետ: Մինչև օգոստոսի 17-ը ապաստեցին երեք երկարուղագիշեր, որոնք տանում էին Արևմտյան Բեղլին, իսկ հաջորդ օրը սկսեցին ժամանակավոր արգելափակոցների փոխարեն կանգնեցնել բետոնե պատր: Մինչև օգոստոսի 22-ը կառուցման աշխատանքները հիմնականում ավարտվեցին, իսկ մինչև այդ պահը ստոգիշ-անցագրային կետերի թիվը կրճատվել էր գրեթե կիսով չափ:

Պատի ընդհանուր երկարությունը 155 կիլոմետր էր, որից 43,1 կիլոմետր անցնում էր քաղաքի երկու մասերի, իսկ 111,9 կիլոմետրը Արևմտյան Բեղլինի և ԳԴՀ-ի միջև: Բարձրությունը գրեթե 2 մետր էր, հաստությունը մոտ 30 սանտիմետր: Ամբողջ երկարությամբ ձգված էր փաղար: Պատի կառուցումից հետո փախստականների հոսանքը նվազեց եթե 1961 թ. սեպտեմբերին տեղի էր ունեցել փախուստի 14821 փորձ, ապա դեկտեմբերին միայն 2420 փորձ: Պատի կառուցումից հետո գրանցվեց 324 զոհ, որից 122-ը անմիջապես պատի մոտ: Բեղլինի պատի կառուցումը ուղղակիորեն հակասում էր մարդու իրավունքների վերաբերյալ հանրահայտ միջազգային կոնվենցիաներին:

1969 թ. ԳՖՀ-ում իշխանության գլուխ եկալ Գերմանիայի սոցիալ դեմոկրատական կուսակցության (ԳՄԿ) և Ազգային Դեմոկրատական կուսակցության (ԱԴԿ) կուսակցիան ԳՄԿ դեկավար Արևմտյան Բեղլինի նախկին բուրգոմիստր (քաղաքագոլուխ) Վ. Բրանդտի գլխավորությամբ: ԳՖՀ արտաքին քաղաքական կյանքում սկսվեց նոր փուլ, որը պատմության մեջ մտավ իրեն «նոր արևելյան քաղաքականություն»: Վ. Բրանդտի անվան հետ կապված այդ քաղաքականությունը ցուցաբերեց սկզբունքորեն նոր մոտեցում միջազգային հարաբերությունների հարցերին: 1969 թ. ԳՖՀ ստորագրեց միջուկային գենք չտարածելու պայմանագիրը, որով նա պարտավորվեց միջուկային գենք չստեղծել, որի արտադրությունը արևմտագերմանան բարձր գիտական ու արդյունաբերական ներուժի պայմաններում անդեմի խնդիր չեր: ԳՖՀ քանակցություններ սկսեց ԽՍՀՄ-ի և ԼԺՀ-ի հետ ուժ

գործադրելուց հրամարվելու հարցի շուրջ: 1970 թ. օգոստոսի 12-ին Խոսկվայում ԳՖՀ-ի միջև կնքվեց պայմանագիր Խվրոպայում պատերազմից հետո հաստատված սահմանների անխախտելիության վերաբերյալ: Նոյն թվականի դեկտեմբերին ԼԺՀ-ն և ԳՖՀ Վարշավյում համաձայնության եկան փոխադարձ հարաբերությունների կարգավորման հիմունքների հարցի շուրջը: 1971 թ. սեպտեմբերին ԽՍՀՄ-ը, ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան պայմանագիր ստորագրեցին Արևմտյան Բեղլինի հարցի կարգավորման վերաբերյալ: Նոյն թվականի դեկտեմբերին այդ հարցի առջիվ համաձայնագրերը ստորագրվեցին ԳԴՀ-ի և ԳՖՀ-ի, ԳԴՀ-ի և Արևմտյան Բեղլինի սենատի միջև: 1971 թ. սեպտեմբերին Վ. Բրանդտ-Լ. Բրենդեն հանդիպման ժամանակ կողմերը փոխարժեումնան հասան խորհրդա-արժմըտագերմանական բազմակողմանի հարաբերությունների հետագա գրգացման շուրջը:

ԳՖՀ-ի Բունդեստագը 1972 թ. մայիսին վավերացրեց ԽՍՀՄ-ի և ԼԺՀ-ի հետ կնքված պայմանագրերը: Վ. Բրանդտի «նոր արևելյան քաղաքականությունն» իր բարերար ազդեցությունն ունեցավ գերմանական երկու պետությունների հարաբերությունների գարգացման վրա՝ 1972 թ. դեկտեմբերի 21-ին Բեղլինում ստորագրվեց ԳՖՀ-ի և ԳԴՀ-ի հարաբերությունների հիմունքների վերաբերյալ պայմանագիրը: Դա արմատական շրջադարձ էր գերմանական երկու պետությունների հարաբերություններում: Միայլ կլիներ ասել, թե «նոր արևելյան քաղաքականությունն» հավերժացնում էր Գերմանիայի բաժանումը: Ըստիական սոցիալիստական երկրների հետ հարաբերությունների նորմալացմանը ստեղծվում էր փոխադարձ վատահության միջնորոտ, ուղի էր հարթվում Գերմանիայի ոչ հիվանդագիրն, խաղաղ վերամիավորման համար, վերջ էր տրվում ԳՖՀ ագրեսիվ մտադրությունների, բռնությամբ ԳԴՀ-ն կուլ տալու և ուսանչի մասին նրա պլանների վերաբերյալ առանող պնդումներին: «Նոր արևելյան քաղաքականության» իրականացման գործում մեծ լումա ներդրեց ԱԴԿ դեկավար, փոխկանցեր և արտաքին գործերի նախարար Հ.-Դ. Գենշերը:

1974 թ. մայիսին Վ. Բրանդտը հեռացավ ֆեդերալ կանցլերի պաշտոնից: Նրան փոխարինեց ԳՄԿ նախագահի տեղակալ և Բրանդտի կառավարության մեջ Փինանսների նախարար Հ. Շմիդտը: Նրա օրոք «նոր արևելյան քաղաքականությունը» մնաց ուժի մեջ: Արևմտյում ԳՖՀ-ն կարողացավ կարգավորել իր հարաբերությունները հա-

ունան պետությունների հետ: Ֆրանսիայի հետ դրանք կարգավորեցին դեռևս Կիզինգերի օրոք: Իրականում մեծ դեր խաղաց գեներալ դը Գոլը: Խնդիրը միայն ֆրանս-գերմանական ավանդական հակամարտությունը չէր, որ զալիս էր դարերի խորքից, այլ նաև Ֆրանսիայի տնտեսապես հետ մնալը ԳՖՀ-ից, որը խանգարում էր Ֆրանսիայի հեգեմոնիայի հաստատմանը և վրապական մայր ցամաքում, որը դը Գոլը ձգտում էր փոխադուցել Ֆրանսիայի ռազմական հզորությամբ, հատկապես միջուկային գեներով, որը նա ուզում էր դարձնել Եվրոպայի պաշտպանության պատվարը: Գերմանիան զրկված էր միջուկային գեներով ունենալու իրավունքից և, հետևաբար, դը Գոլը ձգտում էր այդ ճանապարհով ձեռք բերել Ֆրանսիայի համար գերակշիռ վիճակ: Սրբամտագերմանական քաղաքագետները, գիտակցելով իրենց դիրքի այդ թուլությունը, այնուամենայնիվ, կարողացան հնտորեն ապահովել ԳՖՀ-ի համար պատշաճ տեղ միջազգային հարաբերություններում՝ Եվրոպայում և աշխարհում: Ավելին, ռազմական ծախսերի սահմանափակումը, որը պարտադրված էր ԳՖՀ-ին, խելամտորեն օգտագործվեց նրա կողմից (նույն արեց Շապոնիան) տնտեսության մեջ մեծ ներդրումներ կատարելու, քայլազգած տնտեսությունը վերականգնելու, հիմնական կապիտալը նորոգելու և արդիականացնելու, արտադրության նոր ճյուղեր և արտադրանքի նոր տեսակետ ստեղծելու վրա, որոնք կապված էին գիտատեխնիկական հեղափոխության հետ:

Ինչ վերաբերում է ԳԴՀ-ի հարաբերություններին իր հարևանների հետ, ապա այստեղ կարգավորիչը գաղափարական գործոններն էին, որոնք վեր էին դասվում Գերմանիայի վերամիավորման հիմնախնդրից: Բոլոր դեպքերում ոչ ԳՖՀ-ի հետ ունեցած հարաբերություններում, ոչ Սրբամութիւնի կամ երրորդ աշխարհի հետ ունեցած կապերում ԳԴՀ ինքնուրույն գիծ չէր վարում և հանդես էր գալիս իբրև խորհրդային քաղաքականության կցորդը:

«Նոր արևելյան քաղաքականության» պատուին ըշշափելի էին նաև կանցելը Հ. Կոլի օրոք, որի կառավարությունը ՔԴՄ/ՔՍՄ և ԱԴԿ-ի կողմից է: Բայց հենց Կոլի կառավարման շրջանին բաժին ընկան ամենանշանակալից փոփոխությունները հետպատերազմյան Գերմանիայի կյանքում: Դրանք կապված են սոցիալիստական համակարգի ճնշածամի հետ Կենտրոնական և Հարավ-Արևելյան Եվրոպայում, որը վճռականորեն անդրադառ ԳԴՀ-ի և ողջ գերմանացի ժողովրդի ճակատագրի վրա: ԳԴՀ-ն անվիճելիորեն առաջատար դիրք էր

գրավում սոցիալիստական երկրների մեջ իր տնտեսական զարգացման մակարդակով և բնակչության կենսամակարդակով, թեև զգալիորեն հետ էր մնում ԳՖՀ-ից: Բայց այնուղետ խեղդված էին մարդու իրավունքներն ու ազատությունները: Եթե հայրենիքի վերամիավորման և միասնական ազգային պետության վերականգնման խնդիրը ԳՖՀ-ում համարվում էր բնականոն հարց և ամեն ոք կարող էր ազատորեն քննարկել այն, ապա ԳԴՀ-ում դա հավասարազոր էր պետական հանգագործության, որի համար պատժում էին: Կյանքի ավելի դժվարին պայմանները և քաղաքացիական ազատությունների բացակայությունը ստիպում էին շատերին կյանքը վտանգի ենթարկելով անցնել Արևոտյան Բեռլինի կամ ԳՖՀ սահմանը: ԳԴՀ-ն ոչ գյուղացիության կոռակրացման և ոչ էլ արդյունաբերության սոցիալիստականացման ասպարեզում չպատճենավորեց սոցիալիզմի կառուցման ստալինյան մոդելն ամբողջությամբ: Եվ, այնուամենայնիվ, տնտեսության սոցիալիստական զարգացման արագացումը հանգեցրեց 70—80-ական թթ. ԳԴՀ տնտեսության արդյունավետության անկման: Նա չէր կարողանում բավարարել սեփական պահանջները և սարքավորումներ ու արդյունաբերական ապրանքներ էր գնում կապիտալիստական երկրներից, հատկապես ԳՖՀ-ից: Բացասական հաշվեկշիռ ունեցող արտաքին առևտությը հանգեցրեց արտաքին մեծ պարտքի գոյացմանը: Ընկերում էր դրամի արժեքը, որովհետև բնակչության ունեցած դրամի զանգվածը չէր ապահովում ապրանքներով: Առող թանկության պայմաններում ծաղկում էր ստվերային տնտեսությունը, ոժեղանում էին դրամաշրջառությունը, կաշառակերությունը, շարաշանումները: Այն ժամանակ, երբ ԽՍՀՄ-ում կրոնականության կոսակցության դեկավարությունը, ճանաչելով համանման երևույթների և տնտեսական լճացման առկայությունը, հոչակեց վերակառուցման քաղաքականությունը, արևելագերմանական դեկավարությունը ԳՍՄԿ Կենտրոնի գլխավոր քարտուղար է: Հոնեկուրի գլխավորությամբ շարունակեց կառած մնալ վարչակիրամայական սոցիալիզմի ստալինյան մոդելին: Անցյալում էլ ծողովորական դժգոհությունը վարչակիրամայական սոցիալիզմից հանգեցրել էր զանգվածային ելույթների (օրինակ 1953 թ. հունիսին), որոնք ճնշվել էին խորհրդային զորքերի օգնությամբ: ԳԴՀ-ի զորքերը խորհրդային ուժերի հետ միասին 1968 թ. ապրիլին ճնշեցին ապատամբությունը Չեխովալվակիայում, որը հայտնի է «Պրահայի գարուն» անունով:

Բուն ԳԴՀ-ում 70—80-ական թթ. ԳՍՄԿ ուժեղացրեց իր մենաշնորհային դիրքը պետական և հասարակական կյանքի բոլոր ոլորտ-

Աերում խիստ մեծացավ պէտական անվտանգության մարմինների դեքս: Այլ քաղաքական կուսակցությունների գոյությունը կոչված էր պարզապես ատեղնելու կենդ քաղաքական պլուրալիզմ՝ (բազմակուսակցականության) տպավորություն, քանի որ նրանք ամեն կերպ հարմարվում էին ԳՍՄԿ քաղաքական կուրսին:

Սակայն ԳԴՀ-ի հասարակական քաղաքական կյանքի զարգացման համար անհետևանք չէին կարող անցնել ԽՍՀՄ-ում, ԼԺՀ-ում, Զեխունությանում, Հունգարիայում ընթացող խմորումները: 80-ական թվականների կեսերից աշխուժացավ քաղաքացիական իրավունքների պաշտպանության շարժումը, որը հետզհետեւ վերածվեց շարժման ուղղված ԳՍՄԿ իշխանության մենաշնորհի դեմ, հանուն դեմոկրատական ազատությունների և իրավական պետության ստեղծման:

Փողովրդական հեղափոխությունը ԳԴՀ-ում: 1989 թ. աշնանը ԳԴՀ-ից դուրս՝ Հունգարիայում տեղի ունեցավ իրադարձություն, որը բախտորոշ հետևանքներ ունեցավ ողջ գերմանացի ազգի համար: Հունգարիան բացեց սահմանն Ավստրիայի հետ և Հունգարիայում գտնվող ԳԴՀ-ի հազարավոր քաղաքացիներ անցան Ավստրիա, իսկ այնտեղից ԳՖՀ: Մինչև 1989 թ. վերջը ԳՖՀ անցան 200 հազար գերմանացիներ: Դրան զուգահեռ ԳԴՀ-ի քաղաքներում տեղի ունենում զանգվածային ցույցեր: Ողջախոհ գերմանացիները իրավամբ գտնում էին, որ ԳՖՀ անցնելը եկը չէ, որ այդպես չեն կարող վարվել 17 մլն արևելյան գերմանացիները: Ուստի ցույցերի մասնակիցները պահանջում էին տնտեսական և քաղաքական բարենրոդումներ անցկացնել հենց ԳԴՀ-ում: Մինչդեռ ԳՍՄԿ ղեկավարությունը է, Հունեկների գլխավորությամբ հրաժարվում էր երկխոսելուց զանգվածների հետ և գերադասում էր ոստիկանության ու բանակի ուժով ճնշել ժողովրդական ելույթները: Բայց այս անգամ նրան զորավիգ չէին խորհրդային զինված ուժերը, որոնք տեղաբաշխված էին Արևելյան Գերմանիայում: 1989 թ. հոկտեմբերին Հունեկները ստիպված հեռացավ իր գրաված բոլոր պաշտոններից, բայց չհաջողվեց վերջ տալ խորացող քաղաքական ճգնաժամին:

1989 թ. նոյեմբեր-դեկտեմբերին ժողովրդական շարժման ճնշման տեղի ունեցան մեծ փոփոխություններ, ժողովրդական պահանջ նըստաշանը սահմանադրությունից հանեց ԳՍՄԿ ղեկավար դերի մասին հոդվածը՝ ճանապարհ հարթելով իսկական բազմակուսակցականու-

թյան հաստատման և ԳՍՄԿ մենաշնորհային իշխանության վերացման համար: Նոր կառավարության մեջ մտած արդեն դեմոկրատական կուսակցությունների ներկայացուցիչների, բացվեց Արևմտյան Բնողության հետ ԳԴՀ-ի սահմանը՝ 339 ամսի գոյատևելուց հետո բնադրվեց Բնողության պատր: ԳԴՀ-ի և Արևմտյան Բնողությին սահմանադրության գունդող առողջացանցագրային բոլոր կետերով ազատ անցումն արտոնվեց 1989 թ. նոյեմբերի 9-ին: 1996 թ. նոյեմբերի 9-ին նշվեց պատի անկման 7-րդ տարեդարձը: 1990 թ. հունվարի 22-ին ԳԴՀ-ի սահմանապահները սկսեցին քանդել պատր: Արևմտյան Բնողությին սենատի որոշմամբ պատի որոշ հատվածներ 1,3 կիլոմետր երկարությամբ պահպանվեցին իբրև պետական հուշարձան: Դրանք նկարագրվել են 21 երկրների 118 նկարիչների կողմից: Քանդված պատի բեկորները շատերը պահում են որպես հուշանվերներ:

Այս իրադարձությունների մթնոլորտում ԳՍՄԿ արտակարգ համագումարը որոշեց վերջնականացնելու խգել ստալինականության հետ: ԳՍՄԿ նախկին ղեկավարությունը է: Հունեկների գլխավորությամբ ճանաչվեց մեղավոր իշխանությունը շարաշահելու և ժողովրդի դեմ հանցագործությունների գործելու մեջ: Փոխվեց կուսակցության անվանումը՝ այն վերանվանվեց դեմոկրատական սոցիալիզմի կուսակցություն (ԴՍԿ):

«Կոր սեղանի» կոնֆերանսում քաղաքական կուսակցությունները այդ թվում ԴՍԿ-ն համաձայնեցին անցկացնել ազատ ընտրություններ, որոնք կայացան 1990 թ. մարտին: ԳԴՀ-ի բնակչության մեծամասնությունը մերժեց սոցիալիզմը և հանդես եկավ շոկայական հարաբերությունների օգտին: Ստեղծվեց նոր կառավարություն, որի կազմի մեջ մտած քրիստոնյա դեմոկրատական, լիբերալ դեմոկրատական և սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ներկայացուցիչները: Վարչապետի պաշտոնը զբաղեցրեց քրիստոնյա-դեմոկրատ Լոթար դը Մեյզերը: Իշխանության եկած նոր քաղաքական ուժերն արդեն ձեռնամուխ եղան Գերմանիայի վերամիավորման նախապատրաստման գործընթացին:

1990 թ. հուլիսի 1-ին ուժի մեջ մտավ ԳԴՀ-ի և ԳՖՀ-ի միջև պետական պայմանագիրը տարադրամային, տնտեսական և սոցիալական միության մասին, որը վավերացվեց երկու պետությունների պառլամենտների կողմից: Արևմտյան պայմանական մարկը դարձավ ԳԴՀ-ի դրամը: Նոյն թվականի օգոստոսի 31-ին երկու Գերմանիաների ներկայացուցիչները ստորագրեցին միավորման վերաբերյալ իրենց

ուրույն պայմանագիրը, որտեղ մարմնամասնում էին միավորման գլխավոր ասպեկտները, այդ թվում սոցիալական և իրավական համակարգերը: Այդ պայմանագիրն ուժի մեջ մտավ 1990 թ. հոկտեմբերի 3-ին՝ Հ. Կոլը շարունակեց գործել որպես միացյալ Գերմանիայի կանցլեր: Դեկտեմբերին տեղի ունեցան միացյալ Գերմանիայի առաջին ընտրությունները: Բունդեստագում տեղերի մեծ մասը շահեց Քրիստոնեական դեմոկրատական միությունը և Ազգայի դեմոկրատական կուսակցության հետ կոլայիշա կազմելով ձևավորեց կառավարությունը: Միացյալ Գերմանիան պահպանեց ԳՖՀ անվանումը, քանզի կահպանվեց նրա ֆեդերալ կառուցվածքը: Որոշվեց ժամանակավորապես մայրաքաղաք թողնել Բոննը և հետագայում այն տեղափոխել Բեռլին:

Հոմելվերը, որը ծանր հիվանդ էր քաղցկելով, դատի տրվեց: Բայց ապաստան գտավ Խորհրդային Միությունում և ապա տարագրվեց Չի-լի՝ իր դատեր մոտ:

Գերմանիայի վերամիավորման համար միջազգային իրավական պայմանները ստեղծվեցին Գերմանիայի վերաբերյալ վերջնական կարգավորման մասին պայմանագրով, որը ստորագրեցին Մոսկվայում ԽՍՀՄ-ի, Ա.Ս.Ն.-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, ԳՖՀ-ի և ԳԴՀ-ի արտաքին գործերի նախարարները 1990 թ. սեպտեմբերի 12-ին: Այսպես, վերջնականապես կարգավորվեց գերմանական հարցը՝ երկրորդ աշխարհամարտի ավարտից ի վեր չկարգավորված առավել բարդ և պայտունակ հարցերից մեջը: Միավորված Գերմանիայի առջև ծառացել են մի շարք բարդ խնդիրներ, որոնք աստիճանաբար լուծվում են: Դրանք կապված են երկու երկու մասերի տնտեսական նակարդակի համարթման, կենսամակարդակների մերձեցման, դրամաշրջանառության կարգավորման, ապրանքների և ծառայությունների գների նույնացման, արևելյան մասում՝ գործազրկության նվազեցման և բնակչության աշխատանքով ապահովելու, կրթական համակարգի միասնականացման և այլ կենսական հարցերի հետ:

Գերմանիայի վերամիավորումը համաշխարհային պատմական նշանակություն ունեցող փաստ է, որը վերստին հաստատում է, որ անկարելի է որևէ ժողովորի ազգային իշենքը և համազգային ձգտումները սպանել գաղափարախոսական կամ սոցիալ-դասակարգային գործների առաջնության և որոշիչ լինելու մոտիվներով: Կարելի՝ եր, արդյոք հավերժ բաժանված պահել մի ազգ, որը հավկան էր վճռելու աշխարհի ճակատագիրը և թեկուզ իբրև պատիժ այդ հավակնության համար: Եվ միթե՞ դա չէր սպառնում ծնել մի նոր համաշխարհային

արհավիրք: Այնուհետև, այն հողմացրիվ է անում պետությունների տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության միջազգային իրավական սկզբունքը անխախտ դոգմա դարձնելու փորձները, ինչպես վարկում են հենց Եվրոպայի անվտանգության ու համագործակցության խորհրդակցության անդամ-պետությունները Արցախի պարագայում մերժելով արցախահայության ինքնորոշման օրինական իրավունքը: Գերմանիայի վերամիավորման փասոր ապացուցում է, որ շատ ավելի կենսունակ է և օրինաչափ ինքնորոշման իրավունքը, որը ճանաչված է ՄԱԿ-ի կանոնադրության առաջին հոդվածի երկրորդ կետով և բազմաթիվ այլ միջազգային իրավական փաստաթյուրով:

Գերմանիայի վերամիավորումից հետո ավելացավ գործազրկությունը: Ընդ որում, եթե Արևմտյան Գերմանիայում գործազրկելու բանակը կազմել է 1991 թ. աշխատումի ընդհանուր թվի 5 և կես, 1993 թ. 7,3, իսկ 1994 թ. 8,4 տոկոսը, ապա 8րելյան Գերմանիայում այն հասել է համապատասխանաբար՝ 10,8, 15,1 և 15,7 տոկոսի:

1992 թ. սկսվեց տնտեսական ուժեղ համանջ և միայն 1994 թ. մեպենքերից այն սկսեց սրահիվել անկումային վիճակից:

Գերմանիայի տնտեսական դժվարությունները բացարկվում էին ոչ միայն արևմտուքի արդյունաբերական զարգացած երկրներում տեղի ունեցած ընդհանուր տեղատվությամբ, այլև վերամիավորման ծնած բարդություններով: Դրանք կապված էին գերմանական երկու պետություններում եղած սոցիալ-տնտեսական և քաղաքական հակառակություն տարբերությամբ և առաջարկելու մակարդակների, տարբեր ճյուղային կառուցվածքների, կյանքի որակի ու կենսամակարդակների տարբերության հետ: Գերմանիայի ներքին իրավիճակի բարդացման պատճառներից էր նաև ներգաղթը, որի դեմ բողոքում էին Անոնացիաները և մյուս աշակողմյան ուժերը, ինչու և 1993 թ. Բունդեստագն ընդունեց ներգաղթը և անմանափակությունը:

Գերմանիային է պատկանում համաշխարհային արտահանության շուրջ 10 տոկոսը, այսինքն՝ նույնքան, որքան Ա.Ս.Ն.-ի և Շապոնիայի բաժիններն են, թեև նա ունի չորս անգամ ավելի պակաս բնակչություն, քան Ա.Ս.Ն.-ը և երկու անգամ ավելի պակաս, քան Շապոնիան: Այդ փաստն ինքնին վկայում է, որ Գերմանիայի տնտեսությունը կողմնորոշված է դեպի արտաքին շուկան և դա դրսնորվեց նաև արտադրության անկումից հետո սկսված վերականգնման փուլում: Բացի դրամից, ներքին պահանջարկի ծավալը փոքր է երկրի արտադրական հնափա-

Վորությունների համեմատությամբ: Ներքին շոկան սահմանափակում էին նաև այլ գործոններ, ինչպես հարկերի ավելացումը և զբաղվածության, խիստ կրծատումը, որոնք, բնականաբար, բացասաբար են անդրադառնում բնակչության գնողունակության վրա: Զբաղվածության կրծատումը հետևանք է նաև Արևմտյան Գերմանիայում մշակող արդյունաբերության մեջ կատարված կառուցվածքային փոխիշությունների: Այս պայմաններում բնականոն է թվում, որ գործազրկությունը շահունակեց աճել մինչև իսկ տնտեսության անկման փուլից դուրս գալու պայմաններում:

Գերմանիան, իրեն Արևմտյան Եվրոպայի հզորագույն տնտեսական տերությունը, առանձնահատուկ տեղ ու դեր ունի Մասատրիխտի որոշումների իրականացման հարցում: Դեռևս 1971 թ. մշակված Վերըների պյանով Արևմտյան Եվրոպայի վեց երկրներ պետք է ստեղծին տնտեսական և դրամական միություն: Գործընթացը պետք է ունենար երեք փուլ: 1992 թ. Մասատրիխտի պայմանագրով այս պյանը վերակենդանացվեց Գերմանիայի և Ֆրանսիայի հախաձեռնությամբ: Գերմանիան հաստատապես գնում է դեսիֆ արևմտանվրուպական ինտեգրացիան և միասնական տարածքամի ստեղծումը: Առաջմն Բունդեսբանկը գիտափոր դերակատարն է դրամական քաղաքականության մեջ Եվրոպայում և մարկի, իրեն դրամանիշի, շատ թե թիշ կայունությունը բացատրվում է երկրի տնտեսական բարգավաճ վիճակով:

1997 թվականի դեկտեմբերի 12-ին Եվրամիության գագաթաժողովում, Լյուքսեմբուրգում, Գերմանիայի անմիջական նախաձեռնությամբ Թուրքիան Եվրամիության թեկնածու պետությունների ցուցակից հանելու որոշում կայացվեց: Դրա հետևանքով սրվեցին ոչ միայն թուրք-գերմանական, այլև գերմանա-ամերիկյան հարաբերությունները: Գերմանիան ՆԱՏՕ-ի դեսիֆ արևելք ընդդանվելու կրղմանից է: Բայց չնայած դրան, նրա հարաբերությունները Ռուսաստանի հետ լավ են: Դա յուրատեսակ պատասխան է Գերմանիայի վերամիավորման հանելիք Ռուսաստանի ցուցաբերած դրական վերաբերմունքին, որն այս հարցում ուներ վառորոշ նշանակություն:

Մյուս կողմից, ՆԱՏՕ-ի ընդարձակումը ամրապնդեց Գերմանիայի դիրքերը Արևելյան և հարավ-արևելյան Եվրոպայում: Եվրամիությանը մասնակցելու Թուրքիայի ցանկությունը մերժելու նախաձեռնությունը անխուսափելիորեն ուժեղացնելու է Գերմանիայի հետինակությունը Բալկանյան երկրներում, բայց մահմետական Բունիայից, և Ռումի-

նիայում: Անվիճելի է, որ Գերմանիան որոշակի ազդեցություն ունի նաև Ականդինավիայում, Մերձալիքիկայում և Ուկրաինայում: Այս ամենը սպառնալիք է ԱՄՆ-ի իշխող ներկայությանը Եվրոպայում: Եվ այսուղի Գերմանիայի ու Ռուսաստանի շահերը համբենում են:

Սրցախի հարցում Գերմանիայի կառավարությունը հարում է ԵԱՀԽ-ի դիրքորոշմանը: 1993 թ. ի վեր երկողմ համաձայնության շրջանակներում նա Ադրբեյջանին տրամադրել է 18,5 մլն. դոլար: Բայց Հայաստանի Հանրապետության հետ Գերմանիայի դիվանագիտական հարաբերությունները, որոնք հաստատվել են դեսպանությունների մակարդակով, ընթանում են բնականու հունով, թեև տնտեսական բնագավառում համագործակցությունը հեռու է բավարար լինելուց

Հայերը Գերմանիայում

Գերմանիայի հայկական համայնքը մշտապես եղել է փոքր՝ բաղկացած հիմնականում մտավորականներից և ուսանողներից, որը բացատրվում է, առաջին հերթին, Հայ դատի հարցում այդ պետության բացահայտ թուրքամետ քաղաքականությամբ, հատկապես 1-ին աշխարհամարտի և հայոց Մեծ Եղեռնի ժամանակ, որի համար կայզերական Գերմանիան ուղղակի հանցավոր էր: Այդ փոքր համայնքը անցյալում չի եղել կազմակերպված, համախմբված և աչքի չի ընկել ագգային կանքով:

Հայերի ներկուը Գերմանիա (ԳՖՀ և Արևմտյան Բելզին) ոժեղացալ Մերձավոր ու միջին Արևելքում բոնկած քաղաքական գնճամամի հետևանքով (քաղաքացիական պատերազմը Լիբանանում, իսլամական հեղափոխությունը Իրանում): Եվրոպա գալոթած իրանիայի գաղի մասը հաստատվեց Արևմտյան Գերմանիայում և Արևմտյան Բելզինում, մասամբ նաև Հողանիայում ու Ծվերիայում: Բուն Հայաստանից Գերմանիա են արտագաղթել ԽՍՀՄ-ի փլուզումից և Հայաստանի անկախության հոչակումից հետո ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր կացության հետևանքով, փոքր թվով նաև խառն ամուսնությունների պատճառով:

Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանի տվյալներով փախատականի կարգավիճակ ստանալու համար այդ պետության կառավարությանը դիմած մարդկանց թվով Հայաստանի քաղաքացիները 7-րդ տեղում են: Սակայն

նույն դեսպանի վկայությամբ Գերմանիայում հաստատվող հայաստանցիների թիվը գնալով աճում է: 1996 թ. համեմատությամբ 1997 թ. նրանց թիվն ավելացել է 3500-ով: Սակայն ներգաղթի կանոնները Գերմանիայում շատ խիստ են: Պաշտոնական տեսանկյունից «Գերմանիան վերաբնակեցման քաղաքականություն վարող երկրի չե»: Այդ պատճառով, չափազանց դժվար է փախատականի կարգավիճակ ստանալու: Դրա համար պետք է ունենալ հիմնավոր քաղաքական պատճառաբանություններ, ինչու և փախատականների միայն 2 տոկոսն է կարողանում ապացուել, որ իր հայրենիքում եղել է քաղաքականապես հետապնդված անձ: Այս իսկ պատճառով Հայաստանից եկածների մեծ մասը չի կարողանում ստանալ հայցվող կարգավիճակը և, հետևաբար, Գերմանիայում օրինականորեն ապրելու ու աշխատելու իրավունքը: Դա նրանց խանգարում է լիարժեք ներգրավվելու Գերմանիայի հայ համայնքի մեջ և մասնակցելու նրա կյանքին ու ազգանվեր գործունեությամբ:

ԻՏԱԼԻԱՆ

Խոտական 1918—1939 թթ.

Խոտական առաջին համաշխարհային պատերազմից հետո առաջին
տարիներին
(1918—1922 թթ.)

Սուածին համաշխարհային պատերազմում հաղթանակած պետությունների թվում էր նաև Խոտական: Վերասահ հաշտության կոնֆերանսում Խոտակայի վարչապետ Օղանդոն ընտրվեց կոնֆերանսի փոխնախագահ և մտնում էր այս պես կոչված «մեծ քառյակի» մեջ՝ Լոյդ Զորչի, Վիլսոնի և Կիեմանսովի հետ միասին: Սակայն ականա Խոտական իրեն գգում էր «պարտված հաղթողների մեջ»: 1915 թ. միանալով Անտառին, նա հույս ուներ ավարը բաժնեկիս ստանալ հյուսիսում Տրենտինու և Հարավային Տիրող, արևելքում Տրիեստ, Խոտական և Դալմացիան:

Սակայն Անգլիայի և Ֆրանսիայի դիմադրության պատճառով, որոնք ամենին շահագրգուված չեն ուժեղացնել Խոտակայի դիրքերը Միջերկրականում, Խոտական ստացավ գրեթե ամբողջ Խոտրիան՝ Տրիեստի, Պոլայի և Գորիցիայի հետ միասին, հետագայում նաև Ֆիումեն, Դալմացիայի մի քանի ափամերձ կղզիներ, սակայն ոչ բուն Դալմացիան:

մացիան: Մինչդեռ Խոտական բավականաչափ տուժել էր պատերազմից՝ տալով 700 հազար սպանված: Ավելի քան 1 միլիոն մարդ դադար հաշմանդամ: Երկրի հյուսիսային քերքառատ մասը ամայացել էր ուազմական գործողությունների հետևանքով: Պատերազմական ծախսերի հետևանքով պետական ներքին պարտքը հասավ գրեթե 50մլրդ լիրայի (1919 թ.): Խոտական մեծ գումար էր պարտք պատերազմում իր դաշնակիցներին: Միաժամանակ պատերազմական կարիքները զարկ տվին արդյունաբերության զարգացմանը՝ Խոտական ագրարային երկրից դարձավ ագրարային-ինդուստրիալ երկիր: Հատկապես զգալի էր մետաղորդիական, մեքենաշինական և քիմիական արդյունաբերության զարգացումը: Սակայն պատերազմի վայրություն հանգեցրեց ներքին շոկայի տարողութակության կրածումն, խզվեցին արտաքին առևտրական ավանդական կապերը: 1920 թ. ծայր աղավ ֆինանսատնտեսական ճգնաժամ: 1919 թ. գործազուրկների թիվը հասավ գրեթե 400 հազարի: Զորացրվածները, ամենաբար աշխատանք նարել, համալրում էին գործազուրկների բանակը: Տգնաժամի հետևանքները առանձնապես ծանր էին քաղաքային բնակչության համար: Ծայր աստիճանի սրվեց դասակարգային պայքարը: 1919—1920 թթ. տեղի ուներ հեղափոխական ճգնաժամ Խոտակայում: Սուակել Աշամակալից դասակարգային գոտումարտերը ծավալվեցին երկրի հյուսիսում: Մետաղորդիական, տեքստիլ և նավաշինական արդյունաբերության մեջ բանվորները զավթեցին ձեռնարկությունները: Գրաված շենքերի վրա բարձրացրեցին կարմիր դրոշներ: Մի քանի շաբաթ շարունակ բանվորներն էին կառավարում ձեռնարկությունները իրենց հերթակարության մարմինների՝ ֆարիկա-գործարանային խորհուրդների միջոցով, շարունակում էին արտադրանք տալ: Գյուղացիները սկսել էին բռնագրավել կալվածատիրական հողերը: Խոտական բանվորական և սոցիալիստական շարժումը զարգանում էր նաև Հոկտեմբերյան հեղափոխության և դրան հետևած հեղափոխական իրադարձությունների ազդեցությամբ: Դա է վկայում դասակարգային պայքարի սրման հետևանքով Խոտակայի սոցիալիստական կուսակցության ներսում ծագած ճգնաժամը: Աջ ուժորմիտական թվը Տուրատիի գյուղակորությամբ պաշտպանում էր պառլամենտական և արհմիութենական պայքարի գործելակերպը, իսկ ձախակրպյանները պահանջում էին հեղափոխական անհապաղ գործողություններով գրավել իշխանությունը և հաստատել պրոլետարիատի դիկտուտորա: Նրանք էլ 1921 թ. հունվարին կիվորնոյում տեղի ունե-

ցած համագումարում դուրս եկան սոցիալիստական կուսակցությունից և ստեղծեցին Խոտայի կոմունիստական կուսակցությունը:

1920 թ. սեպտեմբերին սկսվեց բանվորական շարժման ամենամը: Կառավարությունը գնաց զիջումների՝ Աշխատանքի ընդհանուր կոնֆերացիայի (ԱՀԿ) հետ ստորագրած համաձայնագրով արդյունաբերողները պարտավորվեցին բարձրացնել աշխատավարձը, բանվորներին խոստացան աշխատավարձ վճարել այն ժամանակամիջոցի համար, որի ընթացքում երանք տիրել էին ձեռնարկություններին, և բընություն չգործադրել: Նույն արդյունաբերողների համաձայնությամբ կառավարությունը խոստացավ օրենք անցկացնել ձեռնարկությունների բանվորական վերաբնկողության մասին: Փոխարենը բանվորները դադարեցրեցին ձեռնարկությունների գրավումը և գրավածները վերադարձեցին տերերին:

1919—20 թթ. հեղափոխական ճգնաժամը Խոտայի արդյունաբերողների և կալվածատերերի շրջանում առաջ բերեց վախ «կարմիր վտանգի» հանդեպ և սկսեցին փրկությունը տեսնել պետության ֆաշիստականացման մեջ: «Ֆաշիզմ» անվանումը ծագել է խոտերներ ֆաշիոնիկ, միավորում բառից, որն իր հերթին ծագել է լատիներներ «ֆասցիս» բառից (հոումեական լիկուրները իրենց ձախ ուսին կրում էին ճիպունների խորհռած ֆասցիս, որի մեջ դրված էր կացին, իբրև իշխանության խորհրդանիշ): Ֆաշիստներն իրենց կազմակերպություններն անվանում էին «ֆաշիտի կոմբատիններո» («Պայքարի միություններ»), որոնք հավաքագրվում էին պապասակալարգայնացված տարրերից, գորացրված զինվորներից ու սպաներից: Նրանցից ել կազմակույտ էին ֆաշիստների զինված հրուակախմերը՝ «սևշապիկավորների շոկատները»: Ֆաշիստների պարագլուխ («դուչեն») Բենիտո Մուտուլինին էր, որը մասնակցել էր պատերազմին: Նա սկզբում իրեն համարում էր սոցիալիստ, բայց անցնելով ֆաշիստական շարժման գլուխ կատաղի պաքար ծավալեց սոցիալիստների դեմ: Միաժամանակ նա գրավվում էր սոցիալական դեմագոգիայով, իր շարժումը հայտարարելով «հակարությունական»: Ֆաշիստները հանդես էին գալիս «հոդը գյուղացիներին», «կորչեն բռոտու բորժուազիան և ազգի շահագործողները» պատգամախոսներով: Սակայն 1921 թ. Մուտուլինին արդեն ջատագովում էր «աշխատավոր բորժուազիայի» օգտակար դերը Խոտայի կյանքում: 1921 թ. աշնանը ֆաշիստներները ընկացնեցին սոցիալիստական պատահանքում, սուսանդունությունում էին գործում աշխատավայր կուսակցությունների գործում:

Ֆին ուգրմական կազմակերպության՝ ֆաշիստական միջիցիայի, պատրաստվելով գրավել իշխանությունը:

Հաշիստների իշխանության գլուխ անցնելը
(1922 թ.)

Ֆաշիստները իրենցը հարվածի ալարն ուղղեցին արհմիութենական կազմակերպությունների, կոմունիստական ու սոցիալիստական կուսակցությունների դեմ: Նրանց ահարեկական գործողությունները քաղաքական վայրերում և Պոգոսի հովտի գյուղական վայրերում անհրաժեշտ հակահարված չէին ստամում: 1921 թ. ամունը նախկին ուղամաճակատային հակաֆաշիստները սկսեցին ստեղծել «ժողովրդական խիզախների» ջոկատներ՝ ֆաշիստական շարդարարներին զավելու համար: Սակայն դրանց համարձակ գործողությունները աշակցություն չէին գտնում քաղաքական կուսակցությունների՝ մասնավորապես կոմունիստների և սոցիալիստների կողմից: Սոցիալիստական կուսակցությունը 1921 թ. օգոստոսին ֆաշիստների հետ կնքեց «խաղաղեցման պակտ» բռնություն գործադրելուց ձեռնապահ մնալու և քաղաքացիական պատերազմից խոսակելու համար, դառնալով խարեւայության գործ: Կոմկուսի դեկանական խոսում էր սեփական մարտական ջոկատներ ստեղծելու մասին, բայց իր կուսակցության գլխավոր խնդիրը համարում էր ոչ թե ֆաշիզմից պաշտպանվելը, այլ հեղափոխության նախապատրաստությունը:

Նման պայմաններում ֆաշիստները դառնում էին ավելի ու ավելի ինքնավտան և արդեն լրջորեն խորհում էին իշխանությունը գրավելու մասին: 1922 թ: հոկտեմբերի 24-ին ֆաշիստական կուսակցության Նեապոլի համագումարում Մուտուլինին վերջնագիր ներկայացրեց կառավարությանը՝ պահանջելով վեց նախարարական տեղ գործադրի իշխանության կազմում: Վարչապետ Ֆակուն ազգային հարցի լուծումը: Այն ժամանակ Մուտուլինին կոչ արեց ֆաշիստներին հոկտեմբերի 28-ին կազմակերպել «արշավ դեպի Հռոմ»: Սև վերնաշապիկավորների գորացուները շարժվեցին մայրաքաղաքի վրա: Վիկտոր Էմանուել Յ-րդ թագավորը հրամարվեց պաշարողական դրություն հայտարարել ու զորքերը մտցնել Հռոմ, իսկ հոկտեմբերի 29-ին Մուտուլինին հրավիրեց զրադաշտներ կառավարության դեկանակարի պաշտոնը: Պալամենտում «դուչեն» կառավարությունը ստացավ վատահության քվե, դեմք քվեարկեցին միայն կոմունիստները, սոցիալիստները և հանրապետականների մի մասը:

Խոտական Փաշխատա-
կան Վարչակարգի
պայմաններում
(1922—1939 թթ.)

Մուսոլինիի կառավարությունը մինչև 1924 թ. վերջը կուպիցիոն էր: Բայց 1922—1924 թթ. նա ձեռնարկեց մի շարք միջոցառումներ՝ ամրապնելու իր բռնատիրական իշխանությունը: Շրջանցելով սահմանադրությունը Մուսոլինին ստեղծեց «Փաշխատական մեծ խորհրդ», որը պատրամենտ մտցնելուց առաջ քննարկում էր բոլոր դեկրետներն ու օրենքները և վերահսկում կառավարության գործունեությունը: Ֆաշխատական «ազգային անվտանգության կամավոր միջիցիան» ճանաչվեց իրավաբանորեն և հանձնվեց կառավարության դեկավարի հրամանատարությանը: Այսպես, սկզբանիկավորները ներգրավվեցին պետական համակարգի մեջ: Ընդդիմադիր ուժերի դեկավարներին սպանեցին Փաշխատ ամարելիչները: 1926 թ. նոյեմբերին Մուսոլինի դեմ անհաջող մահափորձից հետո օրենքից դուրս հայտարարվեցին բոլոր կուսակցությունները և կազմակերպությունները, բացի Փաշխատականից: Վերացվեց մամուլի ազգատությունը, ընդհանուր ընտրությունները: Պառամենտական վարչակարգը դադարեց գոյություն ունենալ: Մուսոլինին ինքն էր նշանակում կառավարության անդամներին: Վերջիններս պատասխանատու էին միայն «դուչեի» առջև: Մուսոլինին կառավարում էր իր հրապարակած դեկրետ—օրենքների միջոցով: Թագավորը իրեն ձևականորեն պետության գործի՝ պարզապես քողածածկությունը էր Փաշխատական բռնակալի անքածան և միահեծան իշխանության համար:

Մուսոլինին երեսպաշտորեն հանդես էր գալիս իրեն «հասարակական բարգավաճման», ընդհանուր բարեկեցության ջատագով, անհատի աշխատանքը հոչակեց որպես «հասարակական պարտը»: Խոտակայում ներքին սոցիալական հակասությունները նաև հայտարարում էր երկրում բնական պաշարների պակասի արդյունքը: Դա ստիպում էր խոլացիներին միմյանց կոկորդից պատառ փախցել, որը և նենգամուրեն ներկայացվում է իրեն դասակարգային պայքար,— ասում էր նա: Եվ Մուսոլինին ելքը գտնում էր Խոտակայի համար «կենսատարծություններ» նվաճելու մեջ:

Այս գաղափարախոսությունը իր գործնական մարմնավորումն էր գտնում Փաշխատ բռնակալի ագրեսիվ արտաքին քաղաքականության մեջ: Մուսոլինին հայտարարում էր, որ առաջին համաշխարհային պատերազմից հետո Խոտական պատշաճ հատուցում չստացավ և հավատիցնում, որ ինքը մտադիր է Միջերկրական ծովը դարձնել «Խոտական լիճ»: Նա իրեն համարում էր Հոռոմի կայսերապետական քաղա-

քականության շարունակողը: 1934—1935 թթ. Խոտական ավարտեց Լիբիայի գաղութացումը, որը սկսել էր 1911 թ., և 1935—1936 թթ. զավթեց Եթովպիան: 1939 թ. մայիսի 9-ին Մուսոլինին Խոտական հոչակեց կայսրություն: Եթզ Խապանիայում սկսվեց Փաշխատական խոռվությունը հանրապետական կառավարության դեմ՝ 1936 թ. հունիսին, Խոտակայի և հիտլերյան Գերմանիայի զինված ուժերը ներխուժեցին Խապանիա և խոռվարար գեներալ Ֆրանկոյին օգնեցին տապալելու հանրապետական կարգերը Խապանիայում: Սա կարևոր փուլ եղավ Եվրոպայի երկու Փաշխատական վարչակարգերի մերձեցման համար: 1936 թ. հոկտեմբերին ստորագրված բաղարական համագործակցության համաձայնագրով կյանքի կոչվեց «Բեռլին—Հռոմ առանցքը»: Համաձայնագրով Միջերկրական ծովը համարվում էր Խոտակայի շահերի ոլորտ, իսկ Խոտական ճանաչում էր Գերմանիայի իրավունքը Կենտրոնական Եվրոպայում հաստատելու «նոր իրավիճակ»: 1937 թ. հոկտեմբերին Խոտական միացավ «հակակոմինտերնական պակտին» որը մեկ տարի առաջ ստորագրել էին Գերմանիան և Ծապոնիան: Դեկտեմբերին Խոտական դուրս եկավ ազգերի լիգայից:

1938 թ. սեպտեմբերի վերջին Մուսոլինին մասնակցեց Մյունիսենյան գործարքի կնքմանը, իսկ 1939 թ. օկուպացրեց Ալբանիան: Եռանդագին նախապատրաստվելով մեծ պատերազմի Խոտական և Գերմանիան 1939 թ. մայիսի 22-ին ստորագրեցին «պողպատ պակտը», որով պարտավորվեցին պատերազմի դեպքում պաշտպանել միմյանց «ցամաքում, ծովում և օդում»: Սա արդեն ուզմաքաղաքական դաշինք էր, որի ագրեսիվ երթունը խոստովանեց հենց ինքը՝ Մուսոլինին, անվանելով այն «նվաճման և ոչ թե պաշտպանության գենքը»:¹

Խոտական երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին
(1939—1945 թթ.)

Խոտական գորքերը
եվրոպական և աֆրիկ-
յան ուսումնաբերում

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Ֆրանսիայի համար օրինական պահին, 1939 թ. հունիսի 10-ին, երբ գերմանական բանակները մոտենում էին Փարիզին և Պ. Ռեյմոնդի կառավարությունը պատրաստվում էր լրել մայրաքաղաքը, Խոտական պատերազմ հայտարարեց Ֆրանսիային՝ նպատակ ունենալով գրավել Կորսիկան, Սավոյան, Նիցան և Թունիսը: Խոտական ոչ այնքան վատա-

Եր իր ուժի նկատմամբ, որքան ոգեշնչված Գերմանիայի հաղթանակով և համոզված Ֆրանսիայի պարտության անխոսաւիճակության մեջ: «Միջազգային շնագալյը» (այդպես անվանում էին Խոտալիային) հոյս ուներ, օգտվելով Գերմանիայի հաղթանակից, պատառ փախցնել Ֆրանսիայի հաշվին: Ֆրանսիայի անձնատությունից երկու օր անց՝ 1940 թ. հունիսի 24-ին զինադադար Կնքվեց Խոտալիայի և Ֆրանսիայի միջև: 1940 թ. սեպտեմբերի 27-ին Բեռլինում Գերմանիան, Խոտալիան և Շաստիան ստորագրեցին Եոյակ պակտը՝ երեք Փաշիստական տերությունների ուսումնաբարձրական դաշինքը:

Սակայն դաշնակիցները՝ Խոտալիան և Գերմանիան նաև մրցակիցներ էին, որոնք իրենց ուրուց պլաններն ունեին Հարավարևելյան Եվրոպայի նկատմամբ: 1940 թ. հոկտեմբերի 28-ին Խոտալիան, առանց նախապես Գերմանիային տեղյակ պահելու, օկուպացրած Ալբանիայի տարածքից հարձակվեց Հունաստանի վրա: Սակայն հունական բանակը կարողացավ պարտության մատնել ագրեսորին և եռ շպրտել Ալբանիայի տարածքը: Եվ եթե Գերմանիան չներխուժեր Հունաստան, ապա հոյսները, հավանաբար, կշախախին խոտալացիներին Ալբանիայի տարածքում: Սակայն ապրիլի սկզբին գերմանական զորքերը մտան Հարավալյան և Հունաստան: Հունաստանն անձնատուր եղավ, որը և փրկեց խոտալացիներին շախախումից: Խոտալական բանակը 1941—1944 թթ. մասնակցեց նաև Հարավալյանի օկուպացմանը: 1941 թ. հունիսին, երբ Գերմանիան ոխտադրժորեն հարձակվեց Խորհրդային Միության վրա, Խոտալիան նույնպես պատերազմի մեջ մտավ ԽՍՀՄ-ի դեմ և Արևելյան ուսումնական ուղարկեց իր 8-րդ բանակը: 1942—1943 թթ. ձմռանը, Սոտալինգրադի ճակատամարտում, խորհրդային զորքերը գերմանական զորքերի հետ մենաշեղ շախախեցին խոտալացիներին:

Խոտալական բանակը մասնակցում էր նաև հյուսիս-աֆրիկյան ուսումնաբարձրականին: Այսուղեւ Խոտալիան նախ փորձեց գրավել Անգլիայի գաղութները: 1940 թ. հունիսի սկզբին խոտալացիները զավթեցին Բրիտանական Սովորին, Քենտարի և Սուրիանի մի մասը: Լիբիայի տարածքից նրանք ներխուժեցին Եգիպտոս և շարժվեցին Սուեզի ջրանցքի ուղղությամբ: Բայց 1940 թ. դեկտեմբերի սկզբին անգլիացիները անցան ճականարձական և Խոտալիայի զորքերը դուրս շարժեցին Եգիպտոսից: Մինչև 1941 թ. գարունը խոտալացիներին վտարեցին Բրիտանական Սովորին, Քենտարին, Սուրիանից, խոտալական Սովորին և Երիտրեայից, իսկ մայիսի 18-ին՝ խոտալական զորքերի մնացորդները

անձնատուր եղան անգլիացիներին: 1942 թ. հոկտեմբերի վերջին անգլիական 8-րդ բանակի գրամականը հարձակման անցան Եգիպտոսում էլ Ալամեյն քաղաքի մոտ, իսկ նոյեմբերի 8-ին անգլուամերիկյան խոշոր ուժեր այդ դուրս եկան Հյուսիսային Սֆրիկայի ծովեզերքում Մարտոկոյում և Ալժիրում, որոնք գտնվում էին ֆրանսիական (Վիշիի) կառավարության զորքերի հակողության մերքը: Այսպիսով, գերմանահայտական ուժերը հարկադրված էին պաշտպանվել Հյուսիսային Սֆրիկայի թե Արևելքում, թե Արևմուտքում: Վիշիի կառավարության զորքերը կարճառն դիմադրությունից հետո անցան անգլիացիների կողմը: Անգլո-ամերիկյան ափհանան մասին տեղեկանալով, գերմանահայտական զորքերը նոյեմբերի 11-ին օկուպացրին Ֆրանսիայի հարավային մասը և Վիշիի կառավարությամբ օգնությամբ զորքեր տեղափոխեցին Թունիս: Սակայն Սֆրիկայի հյուսիսում գերմանահայտական ուժերի դրույթունը գնալով դառնում էր անհուսալի: Նրանք վերցված էին արցանի մեջ՝ արևելքից հարձակվում էր անգլիական 8-րդ բանակը, արևմուտքից՝ գեներալ Էյքենհաուների հրամանատարությամբ զործող անգլո-ամերիկյան ուժերը: 1943 թ. մայիսի սկզբին նրանք խոտալագերմանական զորքերին շրջապատեցին Բոն թերակղզում՝ Թունիսի հյուսիս-արևելքում և ստիպեցին անձնատուր լինել: 1943 թ. կեսերին Խոտալիան արդեն կորցրել էր իր բանակը արևելյան ուսումնականում, պարտվել Հյուսիսային Սֆրիկայում: Ֆաշիստական վարչակարգը հայտնվել էր ծանր կացույան մեջ: Երկրի ներսում ուժեղանում էր խոկաֆաշիստական շարժումը: Կենսատարածություններ նվաճելու Մուսլիմի քաղաքականությունը արկածախնդրություն դրուս եկավ՝ Խոտալիան ոչ միայն չկարողացավ նվաճել նոր զաղութեներ, այլև կորցրեց ունեցածը: Ֆաշիստական վարչակարգի ճգնաժամը ավելի քան ակընթարակ էր և խոտալական հասարակության վերնախավը, բարձրատիճանան գինվորականության մի մասը հասկանալով, որ առանցքի տերությունների պարտությունը սույ ժամանակի հարց է, միակ ելքը տեսնում էին «բախտախնդիր» «դուչեին» զրիաբերգու մեջ, որպեսի փրկեն իրենց: Եվ անմ ֆաշիստ պարագուխների և բանակի ղեկավարության մի մասը իրականացրեցին պետական հեղաշրջում՝ 1943 թ. հունիսի 25-ին Մուսլիմի իշխանությունից նեռացվեց և կայսերական կայսերական օժանդակեց նաև արքունիքը: Նոր կառավարության նախագահ կարգվեց գլխավոր շտաբի նախկին պետ, մարշալ Բադուլյան, որը պաշտոնական հայտարարեց Գերմանիայի կողմում պատերազմը շարունակելու մասին, բայց գաղտնի բանակցությունների մեջ մտավ անգլո-ամե-

Իիկյան հրամանատարության հետ՝ զինադադար կնքելու նպատակով։ Զինադադարը կնքվեց սեպտեմբերի 3-ին, բայց պայմանավորվածության համաձայն այդ մասին հայտնեցին սեպտեմբերի 8-ին՝ անգլո-ամերիկյան զորքերի ափինանումից հետո, որոնք Միջիխայից մտան հարովային Խոտափիա։ Որպես պատասխան գերմանացիներն օկուպացրեցին Խոտափիայի գգավի մասը։ Այդ հոդերում կազմավորվեց Խոտալական հառավարություն՝ Մուսոլինի գլխավորությամբ, որին կալանավայրից առևանգել էին գերմանական պարաչուտիստները։ Բաղովոյի կառավարությունը գտնվում էր անգլո-ամերիկյան գորքերի օկուպացրած մասում։ Նա էլ հայտարարեց Խոտափիայի անձնատոր լինելու մասին և պատերազմ հայտարարեց Գերմանիային։ Այսպիսով, հիտլերյան Գերմանիայի գլխավոր դաշնակիցը լրեց «առանցք» և միացավ հայտաշիտական կողմիցիային։ Դա ֆաշիստական բրոկի քայլայման սկիզբն էր։ Խոտափիայի՝ գերմանացների օկուպացրած մասում ծավալվեց դիմադրության շարժումը, որը իր մեջ ներառավ վեց կուսակցությունների, այդ թվում կոմունիստներին, սոցիալիստներին և քրիստոնյա դեմոկրատներին, որոնք պետք է դառնային ետպատերագմյան Խոտափիայի քաղաքական կյանքի գլխավոր գործող ուժերը։ 1944 թ. ամռանը լայն թափ ստացավ պարտիզանական շարժումը։ 70 հազար հայենասերներ կրկնում էին պարտիզանական բանակի շարքերում։ Բոլոր պարտիզանական ջոկատները միավորվեցին ազատության կամավորների կորպուսի մեջ։ 1945 թ. գարնանը արդեն 200 հազար մարտիկ ունեցող պարտիզանական բանակը անցավ Վճռական հարձակման։ Միաժամանակ Հյուսիսային Խոտափիայի խոշորագույն քաղաքներում բռնկվեց հակաֆշիստական ազատագրություն։ Մայիսի 2-ին Հյուսիսային Խոտափիայի գտնվող գերմանական զորքերն անձնատուր եղան։ Մուսոլինին և մյուս ֆաշիստական պարագուխները մահապատճի ներարկվեցին։

Ազգային ազատագրական պայքարում, ինչպես և Ֆրանսիայում, Հարավալավիայում և Հունաստանում ամենամեծ ավանդը ներդրել էին կոմունիստները։ Նրանց կազմակերպած գարիբարդիական ջոկատներում կրվում էր 153 հազար պարտիզան կամ պարտիզանների ընդհանուր թվի գրեթե երկու երրորդը։ 70 հազար զոհված հայրենական ավելի քան 42 հազարը կոմունիստներ էին։ Կոմունիստների ակտիվ մասնակցությունը դիմադրության շարժմանը շեշտակի քաղաքական կյանքում։

Խոտափիան 1945—1998 թթ.

Դաշնակիցները և
Խոտափիայի հարցի
կարգավորումը

Պուտսդամի կոնֆերանսի որոշմամբ ստեղծվեց Արտաքին գործերի նախարարների խորհուրդ (ԱԳՆ), որը պետք է զբաղվեր Խոտափիայի, Ռումինիայի, Բուլղարիայի և Ֆինլանդիայի հետ հաշտության պայմանագրեր կազմելով։ ԱԳՆ-ի 1945—1946 թթ. նատաշրջաններում քննարկվեց նաև Խոտափիայի հարցը։

Հաշտության պայմանագրից Խոտափիայի հետ ստորագրվեց 1947 թ. փետրվարի 10-ին։ Խոտափիայի սահմաններն Ալպերում աննշան փոփոխություն կրեցին հօգուտ Ֆրանսիայի, Հունական Կրայան, բացառությամբ Տրիեստի, վերամիավորվեց Հարավալավիային, Դոդեկանեզյան կղզիներն անցան Հունաստանին։ Տրիեստը հարակից մարզով հոչվեց ազատ տարածք ՄՍԿ-ի հովանու ներքո, սակայն 1954 թ. կնքված խոտալ-հարավալավական պայմանագրով նոր արևմտյան մասը՝ Տրիեստ քաղաքի հետ անցավ Խոտափիային, արևելյան մասը՝ Հարավալավիային։

Խոտափիան կորցրեց իր բոլոր գաղութները, որոնցից Լիբիան անկախացավ 1951 թ. դեկտեմբերի 24-ին, Էրիտրեան միացվեց Եթովպիային, Սոմալիի տարածքը 10 տարով հանձնվեց Խոտափիայի խնամկալությանը։ Խոտափիան պարտավոր էր ԽՍՀՄ-ին, Ալբանիային, Հունաստանին և Հարավալավիային վճարել ուղմատուգանք՝ 360 մլն դրամի չափով։

Միապետության վերացումը և հանրապետության հռչակումը

Երկրորդ համաշխարհային պատերազմում Խոտափիայի կորուստներն ավելի քիչ էին, քան առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ։ 450 հազար սպանված և անհայտ կորած։ Բայց

Հյութական վճարը շատ ավելի մեծ էր, ո բովինու ուղմական գործողությունները ընդգրկեցին ողջ Ասենինյան թերակղզին։ Պատերազմից հետո Երկրի տարածության դրությունը ծայրատիճան ծանր էր։ Երկրի քաղաքական կյանքում ազդեցիկ էին այն ուժերը, որոնք մասնակցել էին դիմադրության շարժմանը և հակաֆշիստական պայքարին։ Կոմունիստները և սոցիալիստները։ Բուրժուական կուսակցություններից առավել ուժեղ էր կաթոլիկական քրիստոնեադեմկրատական կուսակցությունը, որը ստեղծվել էր 1944 թ.։ Ետպատերագմյան

Խոտալիայի ներքին կյանքին բնորոշ էր ժողովրդական զանգվածների քաղաքական մեծ առկտիվությունը: Որոշակի դեր ունեին անգլո-ամերիկյան օկուպացիոն ուժերը: Բացի դասնից, Հյուսիսային և Հարավային Խոտալիաների քաղաքական զարգացման մակարդակները տարրելում էին միմյանցից: Հյուսիսը անցել էր երկարամյա ազգային ազատագրական պայքար և եղել էր պարտիզանական շարժման կենտրոնը: Ուստի այստեղ շատ ավելի շոշափելի էր ձախակողմյան ուժերի ազդեցությունը: Զոր չէ, որ օկուպացիոն իշխանությունները Հյուսիսում ուղամական դրություն մտցրին՝ ձգտելով վերացնել դիմադրության շարժման ժամանակ կյանքի կոչված իշխանության մարմինները: Մինչդեռ երկրի հարավային և կենտրոնական մասերը ազատագրել էին դաշնակցները և զրաքիզ էին հիմ իշխանությունների այն ներկայացուցիչներին, որոնք հրաժարվել էին Սուստիմիից և համագործակցել անգլո-ամերիկյան օկուպացիոն ուժերի հետ:

Քաղաքական ուժերի այսպիսի հարաբերակցության պայմաններում ծավալվեց պայքարը Խոտալիայի պետական կառուցվածքի հարցի շուրջը: 1946 թ. հունիսի 2-ին տեղի ունեցած հանրաքվեն, որի ժամանակ խոտալացիների մեծամասնությունն արատիայովեց միավետության դեմ և նոյն թվականի հունիսի 18-ին Խոտալիան հոչակվեց հանրապետություն: Միաժամանակ տեղի ունեցած Սահմանադիր ժողովի ընտրությունները: Ձախակողմյան ուժերը նվաճեցին Սահմանադիր ժողովի տեղերի 45 տոկոսը: Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցությունը եկեղեցու աշակցությամբ շահեց ձայների 35 տոկոսը: Կաթոլիկների պարագուի դե Գասպերին գլխավորեց Առակազմ կուլիցիոն կառավարությունը, որի մեջ մտած քրիստոնեական դեմոկրատները, կոմունիստները, սոցիալիստները, հանրապետականները և «անկախականները»: 1947 թ. հունվարին դե Գասպերին այցելեց ԱՄՆ, որտեղ նրան խոստացան 100 մլն դոլարի փոխառություն և Խոտալիան ընդգրկել ամերիկյան օգնության ծրագրի մեջ, եթե քրիստոնեա դեմոկրատները դադարեն համագործակցել կոմունիստների հետ:

Նոյն հունվարին պատակտվեց սոցիալիստական կուսակցությունը և նրա աշակողմյան թվը Զ. Սարագատի գլխավորությամբ կազմեց նոր կուսակցություն, որը 1952 թ. անվանեցին Խոտալիան սոցիալ-դեմոկրատական կուսակցություն:

Սահմանադիր ժողովի ընդունած նոր սահմանադրությունն ուժի մեջ մտավ 1948 թ. հունվարի 1-ից: Այն բնութագրում էր Խոտալիան իրեն

աշխատանքի վրա հենվող հանրապետություն և հոչակում էր քաղաքական համոզմունքների, խոսքի, խղճի, մամուլի, ժողովների, անձի ազատություն, բնակարանի անձեռնմխելիություն, սահմանում էր աշխատանքի և աշխատանքի համեմատ վճարման, արհմիութենական գործունեության ազատության և գործադրովի իրավունքների մասին դրույթներ: Հանրապետության հոչակումից հետո սահմանադրության ընդունումը ժողովրդավարության կարևոր հայթանակն էր:

Խոտալիայի սոցիալ-տնտեսական զարգացումը 1945—1950 թթ.

Քրիստոնեա-դեմոկրատ դե Գասպերին գլխավորեց Խոտալիայի կառավարությունների քաղաքականությունը ամերիկացիները: 1947—1950 թթ. կերպած խալա-ամերիկյան պայմանագրերը նպատականդիված էին երկու երկրների մերձացմանը տրաբեր բնագավառներում: 1948 թ. Խոտալիան ընդգրկվեց «Մարշալի պլանի» ոլորտը և երեք տարիա ընթացքում ԱՄՆ-ից ստացավ 1,5 մլրդ դոլարի ապրանք: Նորոգվեց արդյունաբերության սարքավորումը: 1949 թ. ապրիլին Խոտալիան անդամագրվեց ՆՍՕՏ-ին: Նրա տարածքում տեղադրվեցին ամերիկյան ուղմական բազաները: 1950 թ. հունվարի 27-ին Խոտալիան կառավարությունն ԱՄՆ-ի հետ ստորագրեց պաշտպանության նպատակով փոխադարձ օգնության և ամերիկյան զենքի մատակարարման մասին համաձայնագիրը: Կորեական պատերազմի ժամանակ Խոտալիան ստարում էր ԱՄՆ-ին:

Խոտալիայի ներքին քաղաքական իրադրությունը մնում էր անկայուն և խառնված: 1949 թ. հունիսի 14-ին մահափորձ կատարվեց կոմկուսի գլխավոր քարտուղար Պ. Տոլյատիի դեմ: 1949 թ. տեղի ունեցած բանվորների, գյուղացիների և բարերակների բազմաթիվ ընդհարումները ուսինկաների հետ:

Կառավարությունը մերժեց արհմիությունների առաջ քաշած «Աշխատանքի պլանը», որը նախատեսում էր ոեֆորմներ քաղաքում և զյուղում, պետության ակտիվ միջամտություն տնտեսությանը՝ գործադրկությունը վերացնելու, աշխատավորների դրույթունը բարելավելու նպատակով, Խոտալիայի հարավի արդյունաբերական զարգացում: Կառավարությունը հուլիս ուներ երկրի տնտեսական վիճակը շտկել, «Մարշալի պլանի» օգնությամբ: Ընդունվեց օրենք ագրարային ոեֆորմի մասին: Հարավային Խոտալիայի և Միջիլիա կղզու լատիֆոնդիաների զգակի մասը վերացվեց: Մտեղծվեց «Հարավի ֆոնդ»՝ Հարավային Խոտալիայի արդյունաբերության զարգացումը արագացնելու համար: Խոտալիան

հասարակությունը ձախանում էր: Դա էր պատճառը, որ 1951 և 1952 թթ. կայացած մունիցիպալ ընտրություններում ձախ կուսակցությունները ավելի շատ ձայն ստուգան, քան 1948 թ., իսկ քրիստոնեական դեմոկրատները կորցրին մոտ 4 մլն քվե:

Սրբեա 1950—1951 թթ. իտալական արդյունա-
Տեղաշարժեր Խոտալիայի բերությունը վերականգնեց նախապատերազմյան
սոցիալ-տնտեսական մակարդակը: Հաջորդ տասնամյակում արդյու-
նաբերական արտադրանքի միջին աճը կազմեց
իտալական տնտեսական 10 տոկոս: Խոտալիայի արդյունաբերությունն այդ
հրաշք

Սրբադրանքի 3/4-ը սկսեց տալ վերամշակող արդյունաբերությունը, որտեղ ամենից ավելի էր զգալի գիտատեխնիկական հեղափոխության շունչը: Առանձնապես արագորեն զարգանում էին մեքենաշինությունը, քիմիական արդյունաբերությունը և ավտոմոբիլաշխնությունը: Արդյունաբերությունը հասավ զգալի գերակշության գյուղատնտեսության մկանությամբ և դա այն դեպքում, երբ գյուղատնտեսական արտադրությունը նույնպես մեծ վերելք ապրեց: Խոտալիայի տնտեսությունը որակական թոփք ապրեց, տեղի ունեցավ այն, ինչ անվանեցին «տըն-տնտեսական հրաշք»:

50-ական թթ. սկզբին ավարտվեց իտալական արդյունաբերության մոդեռնացումը: Գիտատեխնիկական հեղափոխությունը Խոտալիան դիմավորեց կազմ ու պատրաստ, զարկ տպով նախարիմայի, Էլեկտրոնիկայի, ավտոմատիկայի զարգացմանը: Խոտալիայի տնտեսական զարգացման համար նախատարկու եղավ Խոտալիայի անդամագրվելը Եվրոպական տնտեսական համագործակցությունը («Ընդհանուր շոկային»): Համապատասխանաբար ստեղծվեց զարգացած ենթակառուցվածք՝ տրանսպորտ, կառավագային համակարգ, մասնագիտական կրթություն, զարգացավ զբուաշրջիկությունը (առանձին տարիներ ընդունում էին մինչև 30 մլն զբուաշրջիկ), կառուցվեցին ժամանակակից ավտոնանապարհեր: Դրանցից ամենակարևորը «Արևի ավտոուղին» է, որը հյուսիսից հարավ կորում անցնում է ողջ Ապենինյան թերակղզին: Աշխատումի հմանության շնորհիվ Խոտալական արդյունաբերությունը հաջողությամբ մրցակցում էր Եվրոպական շոկայում: Խոտալիայի տնտեսական աննախադեպ առաջընթացին նպաստեց նախ ուղմական ծախսերի ցածր մակարդակը: Ենտեսական վերելքը, կենսամակարդակի բարձրացումը մեղմեցին սոցիալական հակասությունները: Սակայն 1957 թվկանից սկսած նորից մկանության բանվորական ու արհմիտ-

թենական շարժման վերելք, որը կապված էր ոչ միայն տնտեսական պահմաջների հետ, այլև ուղղված էր Խոտալիայում ատոմային մարտագլխիկներ ունեցող հրթիոնների տեղակալման դեմ 1959 թ. գործադրություններին մասնակցեց 5 մլն մարդ:

1950-ական թվականների Խոտալիայի քաղաքական կյանքի համար ամենաբռորդը հաճախակի կառավարական ճգնաժամերն էին: 1955—1960 թթ. մեկը մյուսին փոխարինած հինգ կառավարությունները գլխավորում էին չափավոր քրիստոնեական դեմոկրատները: Դրանք երբեմն կուպիցիոն կառավարություններ էին՝ սոցիալ-դեմոկրատների կամ լիբերալների մասնակցությամբ: Սակայն նրանցից և ոչ մեկը ընդունակ չեղավ հասնել ներքին վիճակի կայունացման: 1960 թ. երկամյա ճգնաժամից հետո կազմվեց միակուսակցական կառավարություն՝ աջ քրիստոնեական դեմոկրատաց Ֆ. Տամբրոնիի գլխավորությամբ, որը պատգամավորների պալատում վատահորթյան բյեկ ստացավ նեոֆաշիստների ձայների շնորհիվ: Այս համագործակցությունը թանձկ նաև նույն Տամբրոնիի կառավարությանը: Ֆաշիզմի վերացման դեմ դուրս եկան խոտալիայի լայն զանգվածներ և Տամբրոնին ստիպված էր հրաժարական տալ: Նույն կառավարության նոր դեկավարը՝ Ա. Ֆանֆանին պաշտոնապես դատապարտեց նեոֆաշիզմը, որի ակտիվացմանը մկանեց քաղաքական անկայունության նոր շրջան:

Ներքին քաղաքական կայունության հարցը եղել է Խոտալիայի ծանրագույն խնդիրը ետպատերազմյան ողջ ժամանակաշրջանում: Մինչև իսկ «տնտեսական հրաշք» ցեցող արդյունքները չկարողացան վերօնականապես լուծել այդ խնդիրը: Սպատագրությունը հետո ներքաղաքական պայքարը գնում էր Խոտալիայի ետպատերազմյան զարգացման ուղիների շորջը, ձախակողմյանները՝ կոմունիստները և ձախ սոցիալիստները պահանջում էին մերժել «Մարշալի պլանը» և Խոտալիան դուրս բերել տնտեսական քայլայի ածությունից ու ապահովել նրա հետագա զարգացումը, սոցիալական հարցերի լուծումը սեփական ուժերով՝ խոչըն կապիտալի ազգայնացման, սեփականության բռնագրավումների, կալվածատիրական հողատիրության վերացման, տնտեսության կենտրոնացման և պետության տնտեսական դերի կորուկ բարձրացման միջոցով: Արտաքին քաղաքականության մեջ նրանք առաջարկում էին չմըտնել «ՆԱՏՕ-ի» մեջ, հրաժարվել ուազմաքաղաքական հարցերուն ԱՄՆ-ի հետ համագործակցել, վերացնել ամերիկան ուազմական բազմաերը Խոտալիայի տարածքում և բարեկամության ու համագործակցության հա-

բարերություններ հաստատել ԽՍՀՄ-ի և սոցիալիստական համակարգի մյուս երկրների հետ:

Աջակողմյան և ցենտրիստական ուժերը՝ քրիստոնեա-դեմոկրատները, աչ սոցիալիստները և լիբերալները առաջարկում էին Խովհայի տնտեսական վերականգնման ու զարգացման գործում ապավիճել ամերիկյան օգնությանը («Մարշալի պլան») առանց վախենալու, որ դա կհասցնի Խովհայի «ատրիացմանը» ԱՄՆ-ի կողմից, և արևմտակիրոպական երկրների հետ քաղաքական համագործակցությունը («Ընդհանուր շուկա»): Արտաքին քաղաքականության բնագավառում անդամակցել ԽՍՀՕ-ին և մասնակցել Արևմտութիւն ու զամանակակիր ծրագրերին՝ Խովհայի համար ընդունելի պայմաններով, միաժամանակ պահպանելով բնականո՞ւ հարաբերություններ սոցիալիստական երկրների հետ:

Կյանքն ապացուցեց, որ վերջին մոտեցումը, որն, ի վերջո, հայտանակեց, ճիշտ էր, քանի մասնավոր ձեռներեցության վրա հենվող շուկայական տնտեսությունն ավելի ընկալումակ դուրս եկավ գիտաւոխնիկական հեղափոխության նկատմամբ, որը և ապահովեց բնական պաշարներով աղքատ, երբեմնի թույլ զարգացած Խովհայի տնտեսական ռոփշը՝ դարձնելով նրան ժամանակակից, առաջավոր ու հարուստ երկիր: Եվ, այնուամենայնիվ, խովհական կոմոնիստական կուսակցությունը պատերազմից հետո և մինչև 80-ական թվականների վերը մնում էր իրեն Խովհայի քաղաքական կյանքի ամենաակտիվ և ծանրակշիռ գործուներից մեկը և վերաբերմունքը դեպի կոմոնիստական ամենաակարևոր խնդիրներից մեկն էր երկրի բոլոր քաղաքական ուժերի համար՝ քրիստոնեական դեմոկրատներից ու սոցիալիստներից մինչև Շենֆաշիստները: Կոմոնիստական կուսակցությունն անվիճելի հենդինակրթյուն էր վայելու քանակոր դասակարգի և նրա արհմիությունների շրջանում, ընտրություններում շահում էր ձայների ավելի քան մեկ քառորդը և նրա հետ չին կարող հաշվի չնատել: Դա բացատրվում է նրանով, որ կոմոնիստները եղել են դիմադրության շարժման զիավոր ուժը, ետպատերազմյան շրջանում անձնուրաց պայքարում էին սոցիալական խնդիրների լուծման համար, գլխավորում էին խաղաղության կողմնակիցների շարժումը՝ հանուն համաշխարհային միջուկային աղեստի բացառման, սկզբունքային և անաշառ դիրք գրավեցին Ստալինի անձի պաշտամունքի ընեադասության հարցում, երևորթը բացատրելով ԽՍՀՄ-ում տիրող ամբողջատիրական կարգերով, պաշտպանում էին պայախորհությունը սոցիալիստական երկրներում և անվերապահորներ

222

հանդեւ էին գալիս այլախտներին հալածելու դեմ, դատապարտում էին Խորհրդային Միության կողմից Արևելյան և Կենտրոնական Եվրոպայում հակակրտունիստական երությները զինված ուժով ճնշելու գործողությունները: Կոմկուսի դերի բարձրացմանը նպաստեց նաև այն հանգամանքը, որ 1960-ական թթ. երկրորդ կեսին նրա գլխավորած Աշխատանքի համընդհանուր կոնֆեդերացիան կարողացավ հասնել գործողությունների միասնության մյուս երկու խոշորագույն արհմիությունների՝ Կայուղիկ աշխատավորների արհմիութեանկան խաղական կոնֆեդերացիայի և Սոցիալ-դեմոնկրատական աշխատանքի խոական միության հետ: Սակայն կոմոնիստական, սոցիալիստական և կաթոլիկական հոսանքների միջև համագործակցության հասնելու կոմկուսի առաջարկը, իբրև Խովհայն հարաբերական-քաղաքական ճգնաժամից դուրս բերելու միջոց, այդպես էլ մնաց անկատար:

Խովհայի Անրիին քաղաքական կյանքը ապակայունացնող մյուս գործոնը սոցիալիստների պառակտումներն էին, որոնք համախ առընչվում էին կոմոնիստաների հետ համագործակցելու հարցին: 1953 թ. սոցիալիստների աջ թևը Պ. Նենիի գլխավորությամբ հրամարվեց կոմկուսի հետ գործողությունների միասնության պակտից: 1963 թ. նոյեմբերին սոցիալիստները մտան Ա. Մորոյի ձախցենտրիստական կառավարության մեջ: Այդ պատճառով սոցիալիստական կուսակցության ձախ հոսանքը 1964 թ. հունվարին անջատվեց և ստեղծեց պրունակական միասնության խովհական սոցիալիստական կուսակցությունը: 1969 թ. սոցիալիստական կուսակցությունից անջատվեց նրա ծայրահեղ աջ թևը և ստեղծեց ուժիւար սոցիալիստական կուսակցությունը (հետագայում վերանվանվեց խովհական սոցիալ-դեմոնկրատական կուսակցություն):

Քաղաքական դրության ապակայունացման գործում իրենց դերն ունեն ոչ միայն Շենֆաշիստները («աչ ազգայնականներ»), այլև ճյուղավորված մաֆիան, որը ներթափանցել էր կառավարական հարկարածինները, և ահարեկչական խմբավորումները («կարմիր բրիգադները») որոնք իրականացնում էին դաժան ահարեկչական գործողություններ նաև պետական գործիչների դեմ:

Խովհայի Անրիին քաղաքական կյանքի համար առավել կարևոր գործոններից մեկը մշտապես եղել է կաթոլիկական եկեղեցին: Մուսլիմիի Փաշիստական վարչակարգը իր հարաբերությունները եկեղեցու հետ կազմակիրեց 1929 թ. Պիոս 11-րդ պապի հետ կնքած Լատերանյան կոնկորդատով (կրոնական համաձայնագրով), որով Վատիկանը

223

ճանաչվում էր ինքնիշխան պետություն, կաթոլիկությունը հայտարակում էր Խոպհայի պետական կրոնը և հանձնարարում կրոնական կրթությունը բոլոր դպրոցներում: Դրանով Մուսողինին իր համար ապահովեց պապի աջակցությունը: Պատերազմից հետո, 1949 թ. հունիսի 14-ին Վատիկանը հատուի դեկրետ հրատարակեց կոմիտսի անդամներին և գրանց օգնողներին բանադրանքի հետարկելու մասին: 1958 թ. պապ ընտրվեց Հովհաննես 23-րդը, որն ուներ գյուղացիական ծագում և մտածելակերպով տարբերվում էր իր հախորդից՝ պահպանողական արիստոկրատ, թուներ հակակոմունիտան և «սառը պատերազմի» կողմանից Պիոս 12-րդից: Նա որոշեց փոխներ Վատիկանի քաղաքականությունը, դարձնել այն ճկուն և իրապաշտական: 1961 թ. Հովհաննես 23-րդը հրապարակեց «Մատեր էտ մագիստրա» («Մայր և խրատուն») կոնդակը, որը արձագանք էր իրավական հասարակությանը հուզող հարցերին: Պապը հաստատելով մասնավոր սեփականության անձնումինիդրությունը, քննադատում էր նաև կապիտալիզմի դաժանությունն ու անարդարությունը. հանդես էր գալիս տնտեսությանը պետության միջամտության և «հասարակական սեփականության» օգտին: Մահկանց թիւ առաջ՝ 1963 թ. Հովհաննես 23-րդ պապը հրապարակեց «Պացեն ինտերիի» («Խաղաղություն աշխարհին») կոնդակը, որտեղ կոչ արեց կրօնատեղ սպառագինությունները և պահպանել խաղաղությունը: Նույն կոնդակում պապը գտնում էր, որ կաթոլիկները և «այլախոհները» կարող են մերձաւալ:

Զանազան քաղաքական ուժերի, հոսանքների և գործուների բախումն գործներացում հնարավոր չեր կայունացնել ներքին իրադրությունը և դա չհաջողվեց ոչ «ձախ կենտրոնի» կոպիտիայի կառավարություններին՝ 60-ական թվականներին և ոչ էլ 70-ական թվականներին իշխող «աջ կենտրոնի» ուժերին, որոնք «ուժեղ» կառավարություն ունենալու հապատեկով ուժեղացնում էին լարվածությունը՝ ծայրահեղականների՝ ներփաշխատների և կոմունիտների ընդհարումները՝ ուսինական միջոցներով «կարգ ու կանոն» հաստատելու համար:

Խոպիտիայի մերժին ու արտաքին քաղաքական վերջին համարական կրթությունը բոլոր դպրոցներում պարզ արդարացնում էր անօթևանների հարցը, ներգաղթածների խնդիրը:

Քաղաքական անկայունության կողքին շարունակվում էր Խոպիտիայի տնտեսական վերելքը, չնայած արտադրության պարբերական վայրէցքներին (օրինակ, 1960 թ. արդյունաբերական արտադրանքի աճը հասալ ունկորդային չափի՝ 15 տոկոսի, իսկ 1971 թ. նշանավորվեց մեծ անկումով): 80-ական թվականների վերջին և 90-ական թվականների սկզբին արագործն աճեց տնտեսության մասնավոր հատվածը և, հատկապես, ի հաշիվ մաճը և միջին ձեռնարկությունների կենսունակության: Նրանք ոչ միայն մրցունակ դուրս եկան շուկայում, այլև հաճախ ավելի ընկալունակ գիտատեխնիկական հեղափոխության հանդեպ: Դա հնարավոր դարձավ կոռպերացման շնորհիվ, որը թույլ տվեց միավորել շանթերը նոր, բարձր արտադրողական տեխնիկա և տեխնոլոգիա կիրառելու հարցերում: Բավականաշատ մկուն և կենսունակ դուրս եկան հաև պետական խոշորագույն կոնցենը՝ ԷնԻ-Ա, որը միավորում է Էներգետիկայի, քիմիայի և մեքենաշնուրքան բնագավառների 350 ընկերություն և ԽՈՒ-Ա (արդյունաբերական վերակառուցման հետխոտությ): Եղելով մրցակցության պահանջներից, հրանք իրենց ներքակա ֆիրմաներին ընձեռնեցին ինքնուրունություն, իրենց արտադրությունը պրանակուրելու հնարավորություն, իրենց բաժնետոմսերի տարածում մասնավոր սեփականատերերի միջև: Պետական և մասնավոր հատվածների զուգորդումը թույլ տվեց խոսափել մենաշնորհացումից և մրցակցությունը դարձեց զարգացման խթան: Դա խթանց արտադրության աճը և 80-ական թվականների վերջին արդյունաբերական արտադրանքի ծավալով Խոպիտիան դուրս եկավ 5-րդ տեղը:

Քաղաքական կյանքում պահպանեց անկայուն վիճակը՝ կառավարական ճգնաժամերի հաճախակիության խոպական չգերազանցված ֆենոմենը, չնայած 1987 թ. հունիսի ընտրություններից հետո առաջվա պես կառավարում էին քրիստոնեական դեմոկրատները, սակայն, այլ կուսակցությունների մասնակցությամբ: Պահպանեց նաև սոցիալախոհների ակտիվ դերը:

Տնտեսական պահպանավոր կացության հետ մեկտեղ շարունակում են գոյություն ունենալ այնպիսի սոցիալական պրոբլեմներ, ինչպես գործազրկությունը, անօթևանների հարցը, ներգաղթածների խնդիրը: Ներգաղթի հարցում խոպական օրենսդրությունը շատ ավելի պակաս լիբերալ է, քան Անգլիայի և Ֆրանսիայի օրենսդրությունը, որոնք յորինակ բարոյական պարտը ունեն իրենց համակին գաղութների առջև

և չեն կարող շատ խստապահանջ լինել այդ գաղութներից ներգաղթողների հանդեպ: Խոտայիան չունի նման պրոբլեմ և հարուցում է շատ խոշողութեան ներգաղթողների առջև: Զնայած քաղաքացիություն առանալու հարցում գոյություն ունեցող գրեթե անհաղթահարելի դժվարություններին, Խոտայիայում ապրում է 100 հազար եկվոր: Սակայն Մասսարիխտի որոշումները և Արևմտան Եվրոպայի հետագա ինտեգրացումը կատայի Խոտայիային այդ հարցում դառնալ ավելի լիքերալ: Գործադրության շարժումը նույնական մնում է իրու Խոտայիայի ներքին կյանքին բնորոշ երևոյթներից մեկը (1990 թ. մարտին բնունատար ավտոմեքենաների տերերի և վարորդների գործադրությունը գրեթե մի շարաթկազմակունեց երկրի տնտեսական կյանքը):

Մաֆիայի դեմ պայքարը ևս ներքին քաղաքական կյանքի կարևորագույն խնդիրներից է: Բ. Կրաքսիի կառավարության օրոք այդ պայքարը ուժեղացավ: Սակայն չնայած բազմից կայացած դատավարություններին մինչև օրս մաֆիան արմատախիլ չի արվել: Առաջին պես նրա գլուխվոր օշախը մնում է Սիցիլիան: 1988 թ. հոկտեմբերին դատապարտվեցին ճահիկն վարչապետ Ա.դր Մորոյի սպանությանը մասնակից «կարմիր բրիգադների» անդամները, առկայն ձախ ահաբեկչությունը շարունակում է գործել:

80-ական թվականների վերջին նշանակալից ելույթներից ևն Խոտայիան կոմկուսի կյանքում տեղի ունեցած անցուղարձերը, որոնք կապված էին ԽՍՀՄ-ում Մ. Գորբաչովի հոչակած «վերակառուցման», դրա պատճառների, դրա հետ կապված հարցերի, կոմունիստական ամբողջատիրության կործանման հետ ԽՍՀՄ-ում և Արևելյան ու Կենտրոնական Եվրոպայի սոցիալիստական երկրներում, ինչպես նաև սեփական սիստերի քննադատության հետ: Վիճակն էլ ավելի սրբիկ ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքով:

Դեռևս 1989 թ. Խոտայիայի կոմկուսի դեկավարությունը առաջարկեց Վերանայել կուսակցության ստրատեգիան, տակտիկան, կազմակերպական հիմքերը և դրա հիման վրա ստեղծել ձախ ուժերի մեծ կուսակցություն: Արևմտյան կոմկուսներից ամենաբազմամարդը (1988 թ. մարտին՝ 1,5 մլն անդամ) թուղարկել էր, մկան էր արտահուք նրա շարքերից:

1990 թ. մարտին կոմկուսի արտակարգ համագումարը քննարկեց շատ սկզբունքային հարց: պահպանել հին կարգավիճակը՝ բարելավելով կանոնադրությունն ու ծրագիրը կամ էլ դառնալ «դեմոկրատական» ու ժողովրդական քաղաքական կազմակերպություն»՝ բաց բոլոր առաջադեմ ուժերի, այդ թվում կաթոլիկականների համար, նոր անվանումով 226

և «գաղափարական կուսակցության» գաղափարի հաղթահրումով: Երկրորդ առաջարկի օգտին արտահայտվեցին կուսակցության գլխավոր քարտուղար Ա. Օկետոն, դեկավարության մեծամասնությունը և համագումարի պատգամավորների 67 տոկոսը:

1991 թ. սկզբին Խոտայիայի կումոնիստական կուսակցությունը դադարեց գոյություն ունենալուց: Ստեղծվեց Զախ ուժերի դեմոկրատական կուսակցություն:

Արտաքին քաղաքականության մեջ տեղաշարժերը կապված են, «սառը պատերազմի» ավարտի և «խորհրդավիճ սպառնալիքի» վերացման հետ, հանգամանքներ, որոնք ինքնին ստիպում են վերանայել Խոտայիայում ամերիկյան բազմաթիվ գոյության անհրաժեշտության փաստարկները և ոժեղացնում հակապատերազմական տրամադրությունները:

Միշուկային գենքի կրծատման վերաբերյալ պայմանագիրը վերաբերում էր նաև Խոտայիային, որի տարածքում տեղակայված էին ամերիկյան միջուկային հրթիռներ: 1989 թ. դեկտեմբերին Մ. Գորբաչովը այցելեց Խոտայիա, հանդիպումներ ունեցավ նախագահ Ֆ. Կուֆայի, վարչապետ Զ. Անդրեոսիի, պաղամենտականների, գործարար շրջանների ներկայացուցիչների, Հովհաննես-Պողոս 2-րդ պատի հետ: Բանկցությունների արդյունքում առորագրվեց 21 համաձայնագիր: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո այդ պայմանագիրների միայն այն մասը մնաց ուժի մեջ, որոնց ժառանգործը իրեն կճանաչի Ռուսաստանյան Խաչությունը: Սակայն բուն Ռուսաստանում տիրող ներքին քաղաքական անկարությունը այդ համաձայնագրերի ճակատագիրը այժմ դարձնում է անորոշ: Դեռ այն ժամանակ Խոտայիաները հեռատեսրեն գգուշավոր էին և կամածամտորեն էին վերաբերվում գորբաչովյան «վերակառուցման» հաջողությանը, շատ համաձայնագրեր ճակերպում էին իրքն «հայտարարություն մտադրությունների մասին», «արձանագրություն մտադրությունների մասին» և նորանք չսխալվեցին:

Տնտեսության անկումը 90-ական թվականների 1-ին կեսին և գործազրկության աճը բնորոշ էր նաև Խոտայիայի համար: Վերականգնումը սկսվեց 1995 թ. մարտ ամսից: Սակայն նոյն թվականի 4-րդ եռամյակում գործազրկությունը թվով (աշխատութիւն ավելի քան 12 տկոսը) Խոտայիան առաջ էր անցել Ա.ՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից և Գերմանիայից: Այդ տարիներին Խոտայիայում իշխանության գրույն կանգնած էին քրիստոնեական դեմոկրատները, որոնք գլխավորում էին

կառավարությունը 1987—1992 թթ., իսկ 1992 թ. կազմեցին կուալիցիոն կառավարություն, որի մեջ զբաղեցնում էին պաշտոնների մեծ մասը:

Խոտափան մասնակցեց Իրաքի դեմ մղված պատերազմին: Արտաքի քաղաքականության բնագավառում և անում էր հավատարիմ արևմտյան սկզբունքներին և արժեքներին: Բայց նրա միջազգային համբավը շարունակում է մնալ միաժամանակ ճրանով, որ առաջվա պես մնում է իրեն այս երկիրը, որտեղ մոլեգնում է մաֆիան, կաշառակերությունը, կոռուպցիան, որտեղ հանցագործ կառուցները սերտաճակ են պետական ապարատի հետ: 1996 թ. զոյեմքերին Հռոմի վճռաբեկ դատարանը կաշառակերության մեջադրանքով հիմք և կես տարվա բանտարկության դատապարտեց նախկին վարչապետ, առջախատական կուսակցության առաջնորդ Բենիտո Կրաքսին, որը փախել է երկրից և պատասխ է գույք թունելում: Խոտքը վերաբերում է 90-ական թվականների սկզբին Կրաքսիի ստացած բազմամիջիարդ կաշառուներին իր «կուսակցության կարիքների համար»: Կաշառուների դիմաց Կրաքսին պետք է ԱՄ-ի ապահովագրական ընկերությանը օգնել ձեռք բերելու Էնի պետական հենքարգետիկ կոնցենտրի շորոշ 140 հազար աշխատողներին ապահովագրելու անշահի շահավետ գործարքը: Կրաքսիի հետ միասին երկարատև քանուարկության և դատապարտվել այդ խարդախ գործարքի և 9 բարձրատիճան մեջսակիցներ: Վճռաբեկ դատարանի որոշման հիմք վրա Խոտափայի արդարադատության նախարարությունը թունիսի կառավարությունից պահանջում է հանձնել Կրաքսին: Սակայն սոցիալիստների առաջնորդը շարունակում է պնդել, թե ինքը անմեղ է և իր դեմ կազմակերպված քրեական գործը հետապնդում է քաղաքական նպատակներ:

Կաշառակերության և իրենց կուսակցությունները ապօրինի ֆինանսավորելու մեջ մեջադրվում են նաև Խոտափայի երկու այլ նախկին վարչապետներ՝ Առնորդ Ֆորլամին, որը կառավարությունը գլխավորել է ընդամենը յոթ ամիս՝ 1981 թ. և Զիրիակը դե Միտան, որը վարչապետի պաշտոնը վարել է 13 ամիս՝ 1988—1989 թթ.: Նրանց հետ կրատվեն նաև վեց գործամոլներ: Երկու վարչապետներն են, չնայած իրենց կարծատն պաշտոնակարությանը հասցեի են վերցնել իրեն կաշառը և պետական բյուջեից շրջել հարցուր հազարավոր դոլարների հասնող գումարներ:

Հայերը Խոտափայում

Խոտափայում հայերի առկայության մասին տեղեկություններ կան 6—7-րդ դարերից, իսկ շատ թե քիչ կայուն համայնքներ ձևավորվել են 12-րդ դարի կեսին, երբ Խոտափայի ինն քաղաքներում գործել են 10-ից ավելի հայկական եկեղեցներ: Կիլիկիայի հայոց պետության սերտ հարաբերությունները խաչակիրների և Արևմտյան Եվրոպայի պետությունների ու պապության հետ նպատել են հայերի, մասնավորապես, վաճառականների հաստատմանը Խոտափայում: 14-րդ դ. Խոտափայի քաղաքներում գործել է շորջ 40 հայկական եկեղեցի ու մենատուն: Հավատաքննության մոլեգնության և բոնի կաթողիկացման պատճեռով Խոտափայի հայկական համայնքը քայլավեց, հայերի գգալի մասը ուժացավ: Բայց 17-րդ դ. մկան հայ համայնքները նորից աշխուժացան, սկսեցին ապրել առևտորական և որույն մշակութային կյանքով: 1512 թ. Հակոբ Մեղապարոյ Վենետիկում տպագրեց հայերն առաջին տպագիր գիրքը: Հայ առաջին պարբերականը Խոտափայում լույս է տեսել 1799 թ.:

1717 թ. Վենետիկի Ս. Ղազար կղզում հաստատվեց հայ կաթողիկությունը (ստեղծողի՝ աբբահայր Միհիթարյան միաբանությունը (ստեղծողի՝ աբբահայր Միհիթար Սեբատացու անունով): Միհիթարյան միաբանությունն իր ստեղծման սկզբից առ այսօր զբաղվում է գիտական, գրական և կրթական գործունեությամբ և մեծ ծառայություններ ունի հատկապես հայագիտության, եվրոպացիներին հայոց պատմության ու քաղաքակրթության հետ ծանոթացնելու գործում: «Ի սկզբանե, — ասել է Միհիթար աբբահայրը, — ես և մեր միաբանությունը մեզ նվիրել ենք հայ ազգի լեզվի բարեկալմանը ի փառու Հիսուս Քրիստոսի՝ մեր տիրոջ»: Խոտափայում գործող հայկական կրթական օջախներից հայտնի են Վենետիկի Մուրադ-Մաֆայելյան վարժարանը (գործում է 1836 թ.) և Հռոմի Լուսնյան վարժարանը (գործում է 1883 թ.): Միհիթարյանները 1843 թ. հրատարակում են «Բազմավեպ» ամսագիրը:

1980-ական թվականների սկզբին Խոտափայում ապրում էր շորջ 1800 հայ, գլխավորապես Միլանում, Հռոմում, Վենետիկում, Ջենովայում, Բոլոնիայում, Տորինում: Նրանց հիմնական զբաղմունքներն են արհեստները, առևտուրը, արվեստները: Կան հոգևորականներ և ուսանողներ: Գործում են Միլանի «Խոտափայի հայոց միությունը» և «Խոտափայի հայ մշակութային միությունը» որոնք զբաղվում են հայապահպանության և հայ մշակույթի տարածման հարցերով: Խոտափայում

հայերը վայելում են մեծ հարգաճնք իբրև բանիմաց, գործարար և օրինապահ քաղաքացիներ և նին ու բարձր քաղաքակրթություն ունեցող ազգի, Աերկայացուցիչներ: Խտալացի մասնագետները հայերի համագործակցությամբ նշանակալից գործ կատարեցին հայ ճարտարապետության հուշարձանների ուսումնասիրության ուղղությամբ: 1968 թ. Միջանի պոլիտեխնիկական ինստիտուտում պրոֆեսոր Ազգագո Նովելյանի նախաձեռնությամբ հիմնվեց Հայկական միջնադարյան ճարտարապետության ուսումնասիրության կենտրոն: Նույն թվականին Արմեն և Հակոբիկ Մանուկյան եղբայրները հիմնեցին «Հայ ճարտարապետության վայերագրեր» մատենաշարը: Տպագրում և տպաթում են փոքրիկ ալբոններ գունավոր պատկերներով հայ ճարտարապետության հուշարձանների վերաբերյալ, որանց նկարագրությամբ, չափագրություններով և այլն: Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրում են նաև Հոռմի համալսարանի գրականության ֆակուլտետի միջնադարյան և ժամանակակից արվեստի ինստիտուտում: 1975 թ. Բերգամո քաղաքում Խոսկիայի ճարտարապետների և հայ համայնքի համագործակցությամբ կազմակերպվեց հայ մշակույթի միմսովոյն: Հետագայում դրանք պարբերական բնույթ աստացան և դարձան հայ արվեստի մասին գիտական նատաշրջաններ, որոնք տեղի են ունենում Հայաստանում և Խոսկիայում:

ԲՈԳԱՆԴԱԿԱՒԹՅՈՒՆ

Հեղինակի կողմից

ԱՐՆ

ԱՄՆ-ը 1918—1939 թթ.	5—18+
ԱՄՆ-ը 1939—1998 թթ.	18—63
+Հայերը ԱՄՆ-ում	64—70

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

Մեծ Բրիտանիան 1918—1939 թթ.	70—84
Մեծ Բրիտանիան 2-րդ համաշխարհային պատերազմի տարիներին	85—90
+Մեծ Բրիտանիան 1945—1998 թթ.	91—109
+Հայերը Անգլիայում	109—111

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիան երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակամիջոցում (1918—1939)	112—126+
---	---	---	---	---	---	---	----------

ՖՐԱՆՍԻԱՆԻ ԱՐԼԻՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐԲԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ

Պարիսիերին (1939—1945 թթ.)	126—132
+Ֆրանսիան 1945—1998 թթ.	133—156
+Ֆրանսիան համայնքը	156—159

ԳԵՐՄԱՆԻԱ

Գերմանիան 1920-ական թվականներին	159—173
Գերմանիան ֆաշիստական վաշշակարգի պայմաններում	173—185
Գերմանիան երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939—1945 թթ.)	186—193
+Գերմանիան 1945—1998 թթ.	194—207
+Հայերը Գերմանիայում	207—208

ԻՏԱԼԻԱ

Իտալիան 1918—1939 թթ.	208—218
Իտալիան երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին	218—216
+Իտալիան 1945—1998 թթ.	217—229
+Հայերը Իտալիայում	229—230

ԳԼՈՋՈՅ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԼՅՈՐԱՆ

Հ. Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(1918 թ. մինչև մեր օրերը)

ԱՄՆ, ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՆ, ՖՐԱՆՍԻԱ, ԳԵՐՄԱՆԻԱ, ԻՏԱԼԻԱ

Դատովեր՝ 71:

Տպաքանակ՝ 1000:

«ԱՄԱՐՍԱ» տպարան, Երևան, Տերյան 44: